

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ  
XIX Դ. ՎԵՐՁ – XX Դ. ՄԿԻՋԲ

ՆԱԶԵԼԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

32(55)

Հ-38 ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

42

ՆԱԶԵՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ  
XIX ԴԱՐԻ ՎԵՐՁ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ

2020

ԵՐԵՎԱՆ 2020



ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3  
Ն. 380

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պատ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ա. Բալբաբյան

Նախասարքյան Ն.Ս.

**Ն. 380 Ռուսական Կայսրության քաղաքականությունն Իրանում (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ) / Ն.Ս. Նախասարքյան, - Եր.: Ճարտարագետ, 2020. - 252 էջ:**

Աշխատությունում արհիվային լայնածավալ նյութերի, գիտական և վերլուծական գրականության հիման վրա ուսումնասիրվել են բնեվող ժամանակաշրջանում ռուս-իրանական հարաբերությունների ուզմաբաղադրական, տնտեսական, դիվանագիտական բաղադրիչները: Աշխատանքը նոր մոտեցումներով, հիմնավորված փաստաթղթերով XIX դ. վերջին և XX դ. սկզբին Իրանի նկատմամբ Ռուսական կայսրության վարած քաղաքականությունն ամբողջական և համակարգված ներկայացնելու, պատմական կարևորագույն իրողությունները վերագնահատելու փորձ է:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը, դրույթներն ու եզրահանգումները կարող են հիմք դառնալ Ռուսաստանի և Իրանի պատմության նոր շրջանի ստանդին հիմնախնդիրների ուսումնասիրության, ինչպես նաև կիրառվել դասախոսություններում և քաղաքագիտական հատուկ դասընթացներում:

Գիլքը նախատեսված է արևելագետների, քաղաքագետների, փորձագետների, մրվավորարենյան տարածաշրջանով զբաղվող մասնագետների համար:

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-72-927-5

© Արևելագիտության ինստիտուտ 2020  
© Նախասարքյան Ն.Ս. 2020

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌՆԱԶՄԱՆ ..... 5

**ԳԼՈՒԽ ԱՌԱԶԻՆ**

**ԻՐԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՍՄՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵԱՇԵՐԻ ԾԻՐՈՒՄ ..... 18**

1. Ռուս-իրանական սահմանների ձևավորումը. Ռուսական կայսրության Իրան «խաղաղ ներթափանցման» նախադրյալները ..... 18

2. Ռուսական կայսրության առևտրատնտեսական շահերն Իրանում ..... 28

ա) Մենաշնորհային ներդրումներ ..... 32

բ) Ֆինանսական ներդրումներ ..... 37

գ) Ռուս-իրանական ապրանքաշրջանառությունը և առևտրական հաշվեկշիռը ..... 42

դ) Ճանապարհաշինության ոլորտի ծրագրերը ..... 49

3. Պարսկական կազակական բրիգադը որպես Ռուսական կայսրության քաղաքական ազդեցության լծակ Իրանում ..... 58

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԿ**

**ԻՐԱՆԱԿԱՆ ՆԱԴԻՐ ՌՈՒՍ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ԴԻՄԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՓՈՆԶԱՄԱՋԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 69**

1. Պարսից ծոցի գործնը Ռուսական կայսրության և Մեծ Բրիտանիայի հարաբերություններում ..... 69

2. Իրանի հարցը 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրում. Ռուսական կայսրության իրանական քաղաքականության նոր ուղեգծի ձևավորումը ..... 89

**ԳՆՈՒՆ ԵՐՐՈՐ**

**ՈՌԻՍԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ 1905-1911 թթ. ԻՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅԱՆԸ**..... 113

1. Սահմանադրական շարժման ծավալումը. ռուսական գործոնն Իրանի ներքաղաքական զարգացումներում..... 113
2. Սահմանադրական շարժմանը ռուսական ռազմական միջամտության նախադրյալները..... 121
3. Ռուսական կայսրության ռազմական առաջին ներխուժումն Իրան..... 136
4. Միջազգային իրադրությունն Իրանի շուրջ և Ռուսական կայսրության կողմից Իրանում սահմանադրական վարչակարգի տապալման փորձը..... 150
5. Առաջին աշխարհամարտից առաջ Ռուսական կայսրության կողմից հյուսիսային Իրանի ռազմակալումը և Սահմանադրական հեղափոխության ճնշումը..... 175

**ՎԵՐՋԱԲԱՆ**..... 206

**ԱՄՓՈՓՈՒՄ (անգլերեն)** ..... 212

**ՀԱՎԵԼՎԱԾ**..... 222

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**..... 237

**ԱՂՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**..... 249

**ԱՌԱՋԱԲԱՆ**

Իրանը, շնորհիվ իր տնտեսական զգալի ներուժի և ուրույն ռազմավարական դիրքի, առանձնակի կարևորություն է ունեցել Ռուսական կայսրության արևելյան քաղաքականության ուղեծրում: Ռուսաստանի քաղաքական և տնտեսական հետաքրքրություններն Իրանի նկատմամբ բավականին հին և խորն արմատներ ունեն: Հին սլավոններին Իրանի հետ կապող Վոլգա-Կասպյան ճանապարհը հայտնի էր դեռևս վաղիջական ժամանակներից: Այն ոչ միայն աշխույժ առևտրային տարանցիկ էր, այլ նաև արևմտյան և արևելյան պետությունների միջև միջազգային կապերի հաստատման կարևորագույն ուղի: Թաթար-մոնղոլական արշավանքների արդյունքում (XIII-XIV դդ.) Ռուսաստանի տնտեսական կապերն Իրանի հետ ընդհատվեցին, սակայն 1552 թ.-ին Կազանի, այնուհետև 1556 թ.-ին թաթարական լծից Աստրախանի խանությունների ազատագրումը Ռուսաստանի (Մուկոլյան պետության) համար կրկին ազատ էլք ապահովեց դեպի Կասպից ծով: Այս ժամանակաշրջանից սկսած՝ ռուսական տիրապետության տակ վերջնականապես անցած քաղաքական և տնտեսական մեծ կարևորություն ներկայացնող Վոլգա-Կասպյան ճանապարհը նոր հնարավորություններ ստեղծեց Ռուսաստանի և Իրանի առևտրատնտեսական կապերի ամրապնդման համար: Տարբեր դիվանագիտական առաքելություններ ուղևորելով Իրան՝ ռուսաց ցարերը տևական ժամանակ փորձում էին Մեֆթան շահերից ստանալ առևտրային բարենպաստ այնպիսի արտոնություններ, որոնք վերջիններս շնորհիկ էին անգլիացիներին: Իրանում բրիտանական տնտեսական մրցակցությանը հակազդելու նպատակով՝ դեռևս 1572 թ. ռուսական իշխանությունները սահմանափակեցին Իրանի հետ Ռուսաստանի տարածքով տարանցիկ առևտրի արտոնություններն օտարերկրացիների համար:

Իրանի հետ հարաբերությունները սերտացնելու Մուկոլյան պետության ձգտումը հատկապես կարևորվեց Օսմանյան կայսրու-

թյան քաղաքականության հետևանքով, որը XVI դ. 70-80-ական թթ. օգտվելով Իրանի ռազմաքաղաքական անկումային վիճակից և թուլացումից ընդլայնել էր նվաճողականությունն Առաջատարականում և Այսրկովկաս՝ մտնելով Կասպից ծովին:

XVIII դարասկզբին Ռուսաստանը վերանայեց իր ռազմավարական շահերը Կովկաս-կասպյան տարածաշրջանում: Նրա արտաքին քաղաքական հիմնական նպատակները դարձան՝ Կասպից ծովի ափերին ռուսական տիրապետության վերջնական հաստատումը, արևելյան շուկաներ ռուսական առևտրային կապիտալի ներթափանցումը և Կովկասի նկատմամբ Օսմանյան կայսրության ոտնձգությունների չեզոքացումը: Այս հիմնարար սկզբունքները օրինաչափ դարձան տարածաշրջանում Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերի համար՝ ձևավորելով կայսրության հարավային սահմանների անվտանգային համակարգի առանցքային ուղենիշները: Ղեկավարելով ռուսական առաջխաղացումը և Այսրկովկասի միակցումը Ռուսաստանին ուղեկցվեց ռազմաքաղաքական բուռն զարգացումներով՝ մի կողմից ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների, մյուս կողմից՝ եվրոպական տերությունների հետ աշխարհաքաղաքական սուր մրցապայքարի պայմաններում:

Ղրիմի պատերազմից (1853-1856 թթ.) հետո կայսրության «արևելյան քաղաքականությունը» թևակոխեց որակական նոր փուլ: Կայսրության հիմնական խնդիրը դարձավ՝ Հյուսիսային Կովկասի և Կենտրոնական Ասիայի Ռուսաստանին վերջնական միակցումը, որն ապահովելու էր Մերձավոր և Միջին Արևելքում Ռուսաստանի ռազմաքաղաքական և տնտեսական դիրքերի ամրապնդումը: Կենտրոնական Ասիայի միակցումով Ռուսաստանը հիմնավորվեց Կասպից ծովի արևելյան ափերին և ուժեղացրեց իր ռազմաքաղաքական և տնտեսական խաղող ներթափանցումը դեպի Իրան: Սակայն տարածաշրջանային գերտերության կարգավիճակ ձեռք բերելու Ռուսաստանի հավակնությունները բախվեցին աշխարհաքաղաքական մրցակից Մեծ Բրիտանիայի հակադեղնությունը: Ռուս-անգլիական հակամարտությունը, որը, պատմագրությանը հայտնի է «Մեծ խաղ» («The Great

Game») անվամբ, վերաճեց Իրանում գերակայության և ազդեցության ոլորտների համար մղվող երկատասն մրցապայքարի:

Մենագրության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են XIX դ. վերջի և XX դ. սկզբի ժամանակաշրջանը, երբ Ռուսական կայսրությունն իր արտաքին քաղաքական օրակարգում առաջնահերթություն տալով Իրանում աճող Մեծ Բրիտանիայի ազդեցությանը դիմակայելու խնդրի կարևորությանը՝ սկսեց ընդլայնել իր քաղաքական և տնտեսական ներգրավվածությունն Իրանում՝ տարածաշրջանում ռազմաքաղաքական գերակայության հաստատելու նպատակով: Մենագրությունն ընդգրկում է Իրանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության վերլուծությունը 1912 թ. ներառյալ: Ժամանակագրական նման սահմանների ընտրությունը պայմանավորված է Իրանի Սահմանադրական հեղափոխությանը ռուսական ռազմաքաղաքական միջամտության գործընթացն ավելի ամբողջական ու ավարտուն ներկայացնելու անհրաժեշտությամբ: Աշխատանքն ամփոփվում է Առաջին աշխարհամարտից առաջ Իրանի շուրջ ձևավորված միջազգային իրադրության քննությամբ:

XIX դարավերջն ու XX դարի սկիզբին Իրանի պատմության անհանկանկան ժամանակաշրջաններին է: Այն երկրի քաղաքական կյանքում նշանավորվեց տարածքային մեծ կորուստներով, 1905-1911թթ. Սահմանադրական հեղափոխությամբ պայմանավորված ներքաղաքական բազում ճգնաժամերով, դաշարական արքայատոհմի իշխանության հարաձուլ թուլացմամբ: Նշված ժամանակաշրջանում Իրանն սպրդում էր խորը սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամ. վտանգված էր երկրի ռազմական համակարգը և վարչական կայունությունը: Ղաջարական կառավարությունը գրեթե ամբողջովին կորցնելով քաղաքական և տնտեսական ինքնուրույնությունը, փորձում էր իշխանությունը պահել՝ խուսաճալով անգլո-ռուսական մրցակցության և ներքին հակասությունների միջև: Իրանի բնական պաշարները շահագործելու, նրա ռազմավարական նշանակության ճանապարհները, արտանման և իտմաբային շուկաները վերահսկելու, ներքին գործերին միջամտելու Ռուսական կայսրության և Մեծ Բրի-

տանիայի քաղաքականությունը մեծ հարված հասցրեց Իրանի ինքնիշխանությանը՝ երկիրը մղելով սոցիալ-տնտեսական և ռազմա-քաղաքական խորը ճգնաժամի մեջ:

Աշխատության մեջ ուսումնասիրվում են Ռուսական կայսրության արտաքին քաղաքական օրակարգում Իրանի ռազմավարական դերն ու նշանակությունը, ներկայացվում են Իրանում գերակայության հաստատման ճանապարհին կիրառված տնտեսական և քաղաքական լծակների ձևեր բերման գործընթացի հիմնական գործիքները, միտումներն ու հետևանքները:

Արևիվային երթերի հենքի վրա իրականացված ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր հանելու իրանական խնդրում ռուսական դիվանագիտության ռազմավարությունը, Ռուսական կայսրության և Մեծ Բրիտանիայի միջև Իրանի շուրջ հակազդեցության ձևավորման պատճառներն ու աշխարհաքաղաքական մրցապայքարի խորը հակասությունները:

Աշխատության մեջ Իրանի պատմության ամենակարևորագույն ժամանակահատվածներից մեկի՝ Միջին Արևելքը ազդեցության գոտիների բաժանելու մասին 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրի վերլուծությունը ցույց է տալիս ռուս-բրիտանական բանակցային գործընթացում իրանական գործոնի կարևորությունը, պարզեցնում Առաջին աշխարհամարտից առաջ ռուս-բրիտանական հարաբերություններում առանցքային հարցերը:

Մենագրության էջերում առաձին ուսումնասիրության նյութ է դարձել 1905-1911 թթ. Իրանի Սահմանադրական հեղափոխության հետևանքով ստեղծված ներքաղաքական ճգնաժամում ցարական կառավարության քաղաքականությունը, Իրան ռուսական ռազմական ներխուժման, ապա նաև երկրի հյուսիսային շրջանների Ռուսաստանի կողմից ռազմակալման ենթարկելու պատճառներն ու հետևանքները:

XIX դարավերջին և XX զարսակգրին Իրանի նկատմամբ Ռուսական կայսրության քաղաքականության ուսումնասիրությունն ու համակողմանի վերլուծությունն արդիական է ոչ միայն ուսումնա-

սիրվող ժամանակաշրջանում Իրանի նկատմամբ Ռուսական կայսրության աշխարհաքաղաքական ծրագրերն ու արտաքին քաղաքական օրակարգը վեր հանելու, այլ նաև ժամանակակից միջազգային հարաբերությունների զարգացումները համարժեցորեն գնահատելու համար: Պատմական փորձի արժեքումը հնարավորություն է տալիս խորքայն կերպով ընկալելու ռուս-իրանական հարաբերությունների ժամանակակից խնդիրները՝ անցյալի պատմական փորձը ներկա իրողությունների հետ զուգադրմամբ: Այսօր էլ դիտարկելով տարածաշրջանում Ռուսաստանի և Արևմուտքի միջև ազդեցության ոլորտների համար մղվող պայքարը՝ կարելի է գուզահեռներ անցկացնել հարյուրամյա վաղեմության իրադարձությունների և մերօրյա իրողությունների միջև, որոնցում Իրանը շարունակում է առանցքային դերակատարում ունենալ:

ՀՀ արտաքին քաղաքական կարևորագույն գործընկերներ՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նոր շրջանի պատմության արտաքին հարաբերությունների և տնտեսական հիմնախնդիրների ուսումնասիրությունը գործնական կարևորություն ունի տարածաշրջանային ներկայիս խնդիրների և զարգացումների խորքային գնահատման ու վերլուծության համար: Մերձավոր և Միջին Արևելքում ձևավորված աշխարհաքաղաքական ժամանակակից իրադրության պայմաններում պատմական նախադեպերի համակողմանի և անկողմնակալ ուսումնասիրությունը նպաստում է տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումների և անվտանգային համակարգի առանձնահատկությունների խորքային մեկնությանը:

Աշխատությունը շարադրված է հայերեն, ռուսերեն, անգլերեն ու պարսկերեն լեզուներով՝ տարբերույթ աղբյուրների, տեղեկատվական և վերլուծական գրականության հիմքի վրա: Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուրներ են ծառայել Ռուսաստանի պետական ռազմապատմական արխիվի ֆոնդերում պահվող փաստաթղթերը, տարատեսակ փաստագրական նյութերը, որոնք կազմվել

են Իրանում ռուսական դիվանագիտական և ռազմական առաքելությունների ներկայացուցիչների կողմից և մանրամասն տեղեկություններ են պարունակում այդ երկրի վերաբերյալ: Աշխատանքում օգտագործվել են ռուսական հատուկ գործակալության ռազմատեղեկատվական, ռազմավարական բնույթի նյութեր, որոնք ներառում են Իրանի տարածքային, ռազմական ներուժի, ներքաղաքական գործընթացների մասին տեղեկություններ<sup>1</sup>:

Աշխատանքի աղյուսակազմական հենքում ընկած են ՌԴ ԱԳ նախարարությանը կից՝ Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվի՝ ցարական արտաքին և Իրանին վերաբերող գործերը, որոնք պարունակում են Իրանում ռուսական դիվանագիտական առաքելության և ռուսական արտաքին գերատեսչության միջև նամակագրական հարուստ նյութ՝ հաղորդագրությունների, զեկույցների և հաշվետվությունների տեսքով<sup>2</sup>: Դրանք Մեն Բրիտանիայի, Գերմանիայի հետ մրցակցության, Իրանում Ռուսաստանի քաղաքական և տնտեսական ներգրավվածության, ֆինանսական ներդրումների, հայեցակարգային առաջարկների, ազդեցության գոտիներին վերաբերող նյութեր են: Արժեքավոր տեղեկություններ կան նաև 1905-1911 թթ. Իրանի Սահմանադրական ներպիտության ընթացքի և Առաջին աշխարհամարտին նախորդած իրադարձությունների վերաբերյալ<sup>3</sup>, որոնց համար լրացուցիչ աղբյուր են ռուսական կառավարության «Իրանական հարցերով Հաստիս խորհրդակցության» մատյանները<sup>4</sup>: Նկատենք, որ փաստաթղթերի մի մասը յոթ պրակով հրատարակվել է «Պարսկաստանի իրա-

դարձությունների վերաբերյալ դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուում» դեռևս 1911-1913 թթ.<sup>5</sup>: Օգտագործվել են նաև Ռուսաստանի և արևմտյան տերությունների Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում վարած քաղաքականության վերաբերյալ լույսիկյան կառավարության հրատարակած «Միջազգային հարաբերությունները իմպերիալիզմի դարաշրջանում», փաստաթղթերի ժողովածուի երկրորդ շարքի<sup>6</sup> և «Կարմիր արխիվ» պարբերականի հատորները<sup>7</sup>: Որպես լրացուցիչ աղբյուրներ օգտագործվել են նաև հրատարակված բրիտանական փաստաթղթերի ժողովածուները<sup>8</sup> և Հայաստանի ազգային արխիվի նյութերը<sup>9</sup>:

Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուրներ են ծառայել պայմանագրերի ժողովածուներում հրատարակված ռուս-պարսկական, անգլո-ռուսական, անգլո-պարսկական միջպետական պայմանագրերը, որոնք որոշիչ դերակատարում են ունեցել Ռուսական կայսրության Իրանի նկատմամբ իրականացվող քաղաքականության համար<sup>10</sup>: Տեղեկատվական կարևոր սկզբնաղբյուրներ են ռուս-իրա-

<sup>1</sup> РГВИА (Российский государственный военно-исторический архив), Ф. 446, «Коллекция Военно-учебного архива «Персия»», оп. 1, д. 39, д. 47, д. 48, д. 49, д. 52, д. 53.

<sup>2</sup> РГВИА, Ф. 2000, «Главное управление Ген. Штаба, отдел генерал-квартирмейстера», оп. 1, д. 1022 (1), д. 1022 (2), д. 1022 (3), д. 1022 (4), д. 1032.

<sup>3</sup> АВПРИ (Архив внешней политики Российской Империи), Ф. 144, «Персидский стол», оп. 488, д. 603, д. 3836, Ф. 144, «Персидский стол Б», оп. 489, д. 5776.

<sup>4</sup> АВПРИ, Ф. 144, «Персидский стол», оп. 488, д. 4021, д. 4064, д. 4087, д. 4453, д. 4087, д. 2994.

<sup>5</sup> АВПРИ, Ф. 144, «Персидский стол», оп. 488, «Журналы особых совещаний по персидским делам», д. 2291-2298.

<sup>6</sup> Сборник дипломатических документов, касающихся событий в Персии, выпуск 1-7, С. Петербург, 1911-1913.

<sup>7</sup> Международные отношения в эпоху империализма: документы из архивов царского и временного правительств 1900-1913 гг., серия 2, т. 18, ч. 1, 2, т. 19, ч. 1, 2, М., 1938-1939.

<sup>8</sup> «Англо-русское соперничество в Персии», т. 1 (56), 1933; «К истории англо-русского соглашения 1907 г.», т. 2-3, (69-70), 1935; «К истории Потсдамского соглашения 1911 г.», т. 3 (58), Центральный Архив РСФСР, Исторический журнал «Красный Архив», М., 1933.

<sup>9</sup> British Documents on the Origins of the War, The End of British Isolation, Edited by G. P. Gooch, D.Litt., F.B.A., and Harold Temperley, Litt.D., F.B.A., Vol. I, F.O. Russia, N 18, L., 1927; British Documents on the Origins of the War, Edited by G. P. Gooch, D.Litt., F.B.A., and Harold Temperley, Vol. III, The Testing of the Entente 1904—6, Appendix A, L., 1928.

<sup>10</sup> 2ԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 3, 5, 27, 19, 20, 68; ֆ. 1457, ց. 1, գ. 45:

<sup>11</sup> Collection of Treaties, Engagements and Sanads. Relating to India and Neighbouring Countries, Compiled by C.U. Aitchison, Vol. X, The Treaties, etc. Relating to Persia and the Persian Gulf, Calcutta, 1892; Collection of Treaties, Engagements and Sanads: Relating to India and Neighbouring Countries, Compiled by C.U. Aitchison, Vol. XIII, Calcutta, 1933, Договоры России с Востоком, политические и торговые, собран и издан Т. Юзефович, СПб, 1869, Сборник договоров России с другими государствами 1856-1917 гг., под редакцией Е.А. Адамова, М., 1952; Сборник торговых договоров и других вытекающих из них соглашений, заключенных Россией и иностранными

նական անտորախնայական հարաբերությունների վիճակագրական, պաշտոնական-տեղեկատվական, Իրանի մաքսային, ճանապարհաշինության ոլորտների, զինված ուժերի վերաբերյալ մի շարք արժեքավոր հետազոտությունները<sup>12</sup>:

Իրանում Սահմանադրական հեղափոխության շրջանում տեղ գտած իրադարձությունները վարժեր և հասավիր քննության նպատակով ուսումնասիրվել են Իրանի առաջին Սահմանադրությունը (1906 թ.) և Սահմանադրության լրացումները (1907 թ.)<sup>13</sup>: Արժեքավոր սկզբնաղբյուրներ են նաև իրադարձություններին անմիջական մասնակիցների և ակնատեսների հուշերը և աշխատությունները: Դրանցից են՝ Ռուսաստանի արտգործնախարարներ Ա. Իզվոլսկու և Ս. Սագոմոլվի, ֆինանսների նախարար Յ. Վլիտտեի, ակնավոր ռուս դիվանագետ Ի. Ջինովկի, Ռուսաստանում բրիտանական առաքելության ղեկավար Ջ. Բյուքենենի հուշերը<sup>14</sup>, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Ջ. Բերգոնի (1919-1924 թթ.), Վ. Չիրլիլի, Հ. Վիգհամի, Իրանում ամերիկացի ֆինանսական խորհրդակցան Մ. Շուսթերի աշխատությունները<sup>15</sup>: Առանձնակի կարևորություն է ենթ-

կայացնում 1907-1914 թթ. թագաժառանգ Ահմադ միրզայի ռուս դատարակ Կ. Մամիրովի արխիվացված ձեռագիր հուշերը, զեկույցները, փաստաթղթերը, որոնք 2002 թ. առաջին անգամ տպագրվել են «Պարսից շահի դատարակի գրառումներ» խորագրով գրքում, որտեղ լուսաբանվում են Իրանի հասարակական-քաղաքական, արքունական կյանքի առանցքային շատ իրադարձություններ<sup>16</sup>: Մենագրության համար կարևոր աղբյուրներ են 1905-1911 թթ. Իրանի Սահմանադրական հեղափոխության շրջանում գրված պարսկալեզու աշխատությունները, որոնցից կառանձնացնենք՝ Ահմադ Քասրավիի<sup>17</sup>, Ազամ ալ-Էսլամ Բերմանիի աշխատությունները<sup>18</sup>:

Թեմայի վերաբերյալ հետազոտությունները և վերլուծական գրականությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբի ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում են Իրանում ռուս-անգլիական հակամարտության, իրանական խեղդում Ռուսական կայսրության, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի հետ հարաբերությունների դիվանագիտական պատմությանը, աշխարհաքաղաքական հարցերի քննությանը: Երկրորդ՝ Իրանում Ռուսական կայսրության տեսեսական և քաղաքական ներգրավմության հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններն են: Երրորդ՝ Իրանի նոր շրջանի պատմության և 1905-1911 թթ. Սահմանադրական հեղափոխության հարցերի վերաբերյալ վերլուծություններն են: Իրանի պատմության վերաբերյալ արժեքավոր հետազոտություններ են ակնավոր իրանագետ Վ. Բայրոյայի աշխատությունները<sup>19</sup>: Միջազգային հարաբերությունների համակարգում Ռուսաստանի և զերետությունների հարաբերություններին, ռուսաց դիվանագիտութ-

государствами, под редакцией Н., Верховского, Петроград, 1915. Зонненштрал-Павловский А., Международные торговые договоры Персии, М., 1931.

<sup>12</sup> Бобынин И., Персия, ее экономическое положение и внешняя торговля 1901-1923, Тифлис, 1923. Томар М., Экономическое положение в Персии, СПб., 1895; Мелведел А., Персия. Военно-статистическое обозрение, С.Петербург, 1909, Geoffrey Drake, Russian Affairs, N.Y., L., 1904; The Economic History of Iran 1800-1914, Edited by Ch. Issawi, Chicago and London, 1971.

<sup>13</sup> The Fundamental Law of December 30, 1906, The Supplementary fundamental Laws of October 7, 1907, A Brief Narrative of Recent Event in Persia, Followed by a Translation of "The Four Pillars of the Persian Constitution", trans. by Ed. Brown, L., 1909, Constitutions, Electoral Laws, Treaties of States in the Near and Middle East, Collected by Helen M. Davis, Durham 1953.

<sup>14</sup> Ивовский А. П., Воспоминания, М., 1989. Сазонов С.Д., Воспоминания, Минск, 2002. Витте С.Ю., Воспоминания. Царствование Николая II, 2-е издание, JL, 1924, Зинovieв И.А., Россия, Англия и Персия, С. Петербург, 1912, G. Buchanan, My Mission to Russia and other Diplomatic Memories, L., N. Y., 1923.

<sup>15</sup> Curzon G.N., Persia and the Persian Question, vol. I, II, L., 1966, Chirol V., The Middle Eastern Question or some Political Problems of Indian Defence, L., 1903, Whigham H. J., The Persian Problem: An Examination of the rival positions of Russia and Great Britain in Persia with Some Account of the Persian Gulf and Bagdad Realway, L., 1903, Shuster M., The Strangling of Persia, N. Y., 1912.

<sup>16</sup> Смирнов К.Н., Записки воспитателя персидского шаха: 1907-1914 годы (с приложениями), Подготовил рукописи для публикации И.К. Тер-Оганов, Тель-Авив, 2002.

<sup>17</sup> احمد كسروي، تاريخ مشروطه ايران، با پشتگفتاری از وحيد رضا لده ميگي، چاپ سوم، تهران ۱۳۷۷.

<sup>18</sup> نظام الاسلام كرماني، تاريخ بيداري ايران، بخش اول، بخش دوم، چاپ پنجم، تهران ۱۳۷۷.

<sup>19</sup> Բայրոյայի Վ., Իրանական հարցը ռուս-գերմանական դիվանագիտական հարաբերություններում 1905-1911 թթ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XI, Եր., 1982, Բայրոյայի Վ., Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914 թթ.), Եր., 1974, Բայրոյայի Վ., Իրանի պատմություն, Եր., 2005:

յան հիմնահարցերին է կիրթված հայ պատմաբաններ Մ. Մուրադյանի և Է. Մինասյանի արժեքավոր հետազոտությունը<sup>20</sup>: Այս հարցերի քննությանը նպաստել են նաև խորհրդային հեղինակներ՝ Գ. Բոնդարևսկու, Ի. Բեստուժնի, Ա. Օստալցնայի, Ա. Իզևատևի, Ի. Ասատֆևի, Վ. Խվոստովի, Պ. Եֆրեմովի<sup>21</sup>, Պ. Մուլտատովի աշխատությունը և ակադեմիական մի շարք երթ հրատարակություններ<sup>22</sup>:

Ճամանակակից ռուս հեղինակներից առանձնացրել ենք Բ. Կազարլիտցկու «Օլայրասասային կայսրություն. Ռուսաստանը և աշխարհամակարգը» աշխատությունը<sup>23</sup>: Հետաքրքրություն են ներկայացնում արևմտյան դպրոցի իրանցի հետազոտողներ ֆ. Ֆազեն-կայանցու և արևմտյան դպրոցի իրանցի հետազոտողներ ֆ. Ֆազեն-կայանցու, Շ. Շահնավազի մենագրությունները<sup>24</sup>: Կարևոր են նաև Ջ. Ալբերտ Ռայթի, Ջ. Սիեզայի, Ֆ. Հանսլիի խմբագրությամբ Մեն Բրիտանիայի արտգործնախարար Է. Գրեյի արտաքին քաղաքականությանը կիրթված հոդվածների ժողովածուում հրատարակված

հետազոտությունները<sup>25</sup>: Իրանում Ռուսական կայսրության տեսնական և քաղաքական ներգրավվածության հիմնախնդիրների համակողմանի վերլուծության համար առանձնացրել ենք խորհրդային և արևմտյան մի շարք հեղինակների հետազոտությունները: Իրան ռուսական կապիտալների արտահանման պատմությանն է կիրթված Բ. Անանիչի արխիվային փաստաթղթերով զրկված աշխատությունները, Լ. Կուլագինայի հետազոտությունները<sup>26</sup>: Հատկապես հաջողված են արևմտյան հեղինակներ Մ. Էկսենրի, Պ. Ուալդրոնի հետազոտությունները, որոնք հարուստ են փաստագրական նյութով և խոր վերլուծություններով<sup>27</sup>: Ուշադրություն են արժանի Պարսկական կազակական բրիգադի կազմավորման պատմությանը և գործունեությանը կիրթված Օ. Գրասնյակի, Ն. Ռիխայեայի, Մ. Վիբրոնովի և Մ. Քրոնիի հետազոտությունները<sup>28</sup>: Թեև որոշակի կողմնակա մտնցումներով, սակայն արխիվային փաստաթղթերի բազայով կարևոր տեղեկատվական արժեք է ներկայացնում Պ. Ստրելյանովի (Կալա-

<sup>20</sup> Մուրադյան Մ., Մինասյան Է., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.), Եր., 2005:

<sup>21</sup> Бондаревский Г., "Персидский Залив и Англо-русское соглашение 1907 г.; Проблема провинции", Россия и персидский залив", Спец. бюллетень, N 44, ч III, М., 1964; Бондаревский Г., Багдадская дорога и провинциализм германского империализма на Ближнем Востоке (1888-1903), Ташкент, 1955; Бондаревский Г., Английская политика и международные отношения в бассейне Персидского Залива, (конец XIX-начало XX в.), М., 1968; Бестужев И., Борьба в России по вопросам внешней политики 1906-1910, М., 1961; Осталяева А., Англо-русское соглашение 1907 года, влияние Русско-иранской войны и революции 1905-1907 годов на внешнею политику ирания и на перегруженную европейскими державами, Саратов, 1977; Игнатъев А., Внешняя политика России в 1905-1907 гг., М., 1986; Игнатъев А., Русско-английские отношения накануне первой мировой войны (1908-1904 гг.), М., 1962; Астафьев И., Русско-германские дипломатические отношения (от Портсмутского мира до Потсдамского соглашения), М., 1976; Хвостов, В.М., История дипломатии: Дипломатии в новое время (1871-1914), Т. II, М., 1963; Ефремов П., Внешняя политика России 1907-1914, М., 1961:

<sup>22</sup> Мультигули П., Внешняя политика Императора Николая II (1894-1917), М., Фин, 2013; История внешней политики России конец XIX- начало XX века, (от русско-французского союза до Октябрьской революции), Сахаров А., Игнатъев А., Тютюхин С., М., 1997; История внешней политики России; Вторая половина XIX в., Золотухин М., Мелюхов Г., Рыбаченко Н., М., 1997.

<sup>23</sup> Kagarlitsky V., Empire of the Periphery, Russia and the World System, L., 2008.

<sup>24</sup> Firuz Kazem-Zadeh, Russian and Britain in Persia, 1864-1914. A study of Imperialism, New Haven, L., 1968; Shahbaz Shahnavaz, Britain and the opening up of South-West Persia 1880-1914, A study in imperialism and economic dependence, London and N.Y., 2005.

<sup>25</sup> John Albert White, Transition to Global Rivalry, Alliance Diplomacy and the Quadruple Entente, 1895-1907, Cambridge, 1995; Jennifer Siegel, Endgame: Britain, Russia and the Final Struggle for Central Asia, London and N. Y., 2002; British Foreign policy under Sir Edward Grey, Ed. by Hinsley F.H.L., N. Y., Melbourne, Cambridge University Press, 1977.

<sup>26</sup> Ананичъ Б., Российское самодержавие и вывоз капиталов 1895-1914 гг., (по материалам Учено-исследовательского банка Персии), Л., 1975; Ананичъ Б., Россия и Международный капитал, 1897-1914, Очерки истории финансовых отношений, Л., 1970, The Russian economy and banking system, Boris Ananich, The Cambridge History of Russia, Imperial Russia, 1689-1917, vol. II, Ed. By Dominic Lieven, London School of Economics and Political Science, 2006; Кулагина Л., Россия и Иран (XIX-начало XX вв.), М., 2010; Кулагина Л., К истории Русско-иранских отношений, Иран. История, экономика, культура, М., 2009.

<sup>27</sup> Marvin L. Entner, Russo-Persian Commercial relations, 1828-1914, University of Florida Monographs, Social Sciences, Florida, No. 28, 1965; Peter Waldron, State finances, The Cambridge History of Russia, Imperial Russia, 1689-1917, vol. II, Ed. By Dominic Lieven, 2006.

<sup>28</sup> Красняк О., Становление иракской регулярной армии в 1879-1921 гг., По материалам архивов русской военной миссии, М., 2007; Выборцов М., Персия и ее вооруженные силы, М.- Л., 1928; Рихсиева Н., К истории иранских казачьих частей (по архивным материалам) Востоковедение (интервью с автором, история), сборник научных трудов N 564, Ташкент, Stepan Cronin, Bilding a New Army: Military Reforms in Qajar Iran, War and Peace in Qajar Persia, Implication Past and Present, Ed. by R. Farmanfarmanian, History and Society in the Islamic world, USA&Canada, 2008.

բուխով) 2007 թ. աշխատանքը, որը նվիրված է 1909-1911 թթ. Իրան ռուսական եերխումման ընթացքում այնտեղ գործուղված ռուսական ռազմական զորամիավորումների թվաքանակի և տեսակների հարցերին<sup>29</sup>:

1905-1911 թթ. Իրանի Սահմանադրական հեղափոխությանը և այդ շարժմանը հայերի մասնակցության վերաբերյալ խեղիքների քննությանն են նվիրված հայ պատմաբաններ Հ. Բերբերյանի, Եր. Արախամյանի, Հ. Սիմոնյանի<sup>30</sup>, հայ հեղափոխական կուսակցությունների պատմագիրներ Ա. Կիսուրի, Մ. Վարանյանի և Եփրեմ խանի կենսագիր Հ. Էլմարի աշխատությունները<sup>31</sup>: Ատենախոսությունում Իրանի Սահմանադրական շրջանի վերաբերյալ տարբեր հարցերի մեկնաբանությանը մեծապես նպաստել են Ջ. Արաբաջյանի, արևմտյան իրանցի հեղինակներ Ջ. Աֆարիի, Խ. Չաքերիի, Ռ. Ղոզլի, Մ. Բոնարդարյանի հետազոտությունները<sup>32</sup>: Ուշադրության են արժանի նաև Ա. Լամբտոնի, Լիքի Քեդդի, Ռ. Սաքյանիևի, Ջ. Փլարքի աշխա-

տությունները<sup>33</sup>, ինչպես նաև խորհրդային հետազոտող Մ. Իվանովի և հետխորհրդային շրջանում լույս տեսած Ե. Դորոշենկովի ռուս-նասիրությունները<sup>34</sup>:

Օգտվելով առիթից՝ խորին երախտագիտություն և հայտնում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գործընկերներին, մասնավորապես Իրանի բաժնի վարիչ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահան Բայրուրյանին՝ արժեքավոր խորհուրդների համար, ինչպես նաև Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Մաֆրատյանիև՝ զրից տպագրությանն աջակցելու համար:

<sup>29</sup> Стрелниов (Калабухов) П., Казави в Персии 1909-1918. М., 2007.

<sup>30</sup> Berberian H., Armenians and the Iranian Constitutional Revolution of 1905-1911: The Love for Freedom Has No Fatherland, Westview Press, 2001, Abrahamian Er., Iran between Two Revolutions, Princeton, Princeton, New Jersey, 1982, Abrahamian Er., A History of Modern Iran, Cambridge University Press, 2008, Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք II, Եր., 2003, գիրք III, Եր., 2009:

<sup>31</sup> Էլմար Հ. (Հովսեփ Հովհաննիսյան), Եփրեմ, Թեհրան, 1964, Կիսուրի Ա., Պատմություն Մ.Ղ. Չչական Կուսակցության, Կ. Ա. Պիլյուր, 1962, Վարանյան Մ., Հ.Յ.Ղաչանկցյանի Պատմություն, Կ. Ա. Թեհրան, 1981:

<sup>32</sup> Arabadzisz Z., Iran, Власть, реформы, революция (XIX-XX вв.), М., 1991; Afary J., Social Democracy and the Iranian Constitutional Revolution of 1906-1911, A Century of Revolution Social Movements in Iran, Social movements, Protest and Contention, vol. 2, ed. J. Foran, Minneapolis, 1994; Afary J., The Iranian Constitutional Revolution: Grassroots Democracy, Social Democracy, and the Origins of feminism, N. Y., 1996; Afary J., Armenian Social Democrats, the Demokrat Party of Iran, Reformers and Revolutionaries in Modern Iran, New Perspectives on the Iranian left, ed. Stephanie Cronin, N.Y., 2004, Chaqeri C., Introduction to iobe Armenians of Iran: A Historical Pursual, The Armenians of Iran, The paradoxical of a Minority in a Dominant Culture: Articles and Documents, ed. by Chaqeri C., Cambridge, Massachusetts, 1998, Годс Пеза М., Иран в XX веке. Политическая история, (перевод с английского Джэура Н.М.), М., 1994, Bonakdarian Mansour, Britain and Iranian Constitutional Revolution 1906-1911; Foreign Policy, Imperialism and Dissent, N. Y., 2006.

<sup>33</sup> Lambton A., Qajar Persia, Eleven Studies, L., 1987, Keddie R. Nikki, Iran, Religion, Politics & Society, Collected Essays, L., 1980; Keddie Nikki, Yann Richard, Roots of Revolution: An Interpretive History of Modern Iran. New Haven, 1981, James D. Clark, The Constitutional movement and Russian intervention in Tabriz 1907-1911, Iranian-Russian encounters, Empires and revolutions since 1800, Ed. By Stephanie Cronin, N.Y., 2013.

<sup>34</sup> Иванов М., Иранская революция 1905-1911 годов, М., 1957, Дорошенко Е., Шитское духовенство в двух революциях 1905-1911 и 1978-1979 гг., М., 1998.

**ԻՐԱՆ ԴՌՈՒՄԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՐԿԱՆ,  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏԱՏԵՄԱԿԱՆ ՇԱՀՆԵՐ ԾԵՐՈՒՄ**

**1. Ռուս-իրանական սահմանների ձևավորումը. Ռուսական կայսրության Իրան «խաղաղ ներթափանցման» եռխաղրը**

XIX դ. սկզբին Ռուսաստանի հարավային սահմանների անվտանգության ապահովման խնդիրը դարձավ կայսրության արևաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը, որի կենսագործման համար Ռուսաստանն անցավ տարածքային ձեռքբերումների Իրանի կազմում գտնվող Անդկովկասում<sup>35</sup>: Այսրևովկասի միակցումը Ռուսաստանին ընթացավ ռազմաքաղաքական բարդ և լարված իրադրության մեջ՝ մի կողմից ռուս-պարսկա-թուրքական պատերազմների, իսկ մյուս կողմից՝ ռուս-անգլո-ֆրանսիական սուր հակամարտությունների պայմաններում: Ռուսաստանի՝ դեպի Արևելք առաջնահարցման հետևանքով պարբերաբար ծագում էին ռազմաքաղաքական բնույթի ճգնաժամեր՝ անխուսափելի դարձնելով ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները՝ էվրոպական տերությունների անմիջական միջամտությամբ<sup>36</sup>:

XIX դարասկզբին Ղազարական արքայատոհմի (1795-1925 թթ.) իշխանության տակ միավորված Իրանը<sup>37</sup> վերածվեց արևմտյան

տերությունների միջև պայքարի ասպարեզի: Իրանի գաղութացման մրցավզովը հիմնականում ծավալվեց աշխարհաքաղաքական վաղնախ մրցակիցներ՝ Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջև<sup>38</sup>:

Հայտնի է որ, Ռուսաստանի քաղաքականությունն Այսրովկասում հանգեցրեց առաջին ռուս-պարսկական պատերազմին (1804-1813 թթ.): Մինչև 1806 թ. ռուսական զորքերը գրավեցին գրեթե ողջ Այսրովկասը՝ բացառությամբ Երևանի և Նախիջևանի խանությունների: 1801 թ. անգլո-իրանական պայմանագրի<sup>39</sup> հիման վրա շախը պահանջեց, որ Մեծ Բրիտանիան Իրանին ցուցաբերի ռազմական օգնություն, սակայն շախի դիմումները մնում էին անպատասխան, քանի որ ծեղված ժամանակշրջանում Մեծ Բրիտանիան Ռուսաստանին հետ հանդես էր գալիս հակաֆրանսիական դաշինքում<sup>40</sup>: Միայն 1809 թ. մարտի 15-ին կնքվեց անգլո-իրանական նոր պայմանագիր, որով Անգլիան ռազմական, ֆինանսական և քաղաքական պարտավորություններ ստանձնեց Իրանի նկատմամբ<sup>41</sup>:

Ու թե՛ն 1810-1812 թթ. ընթացքում բրիտանական կտավարությունը չէր դադարում իր ֆինանսական և ռազմական աջակցությունն Իրանին, ո՛չ այդ օգնությունը, ո՛չ էլ Նապոլեոնի հարձակումը Ռուսաստանի վրա ի վիճակի չէղան փրկել Իրանը պարտությունից: 1813 թ. հոկտեմբերի 12-ին Գուլիստանի պայմանագրով Ռուսաստանին անցան Իրանի կովկասյան տարածքների մեծ մասը՝ Վրաստանը՝ Շոքազայի շրջանով, Իմերեթիան, Գուրիան, Մենգրելիան, Աբխազիան, Ղաղստանը, Ղարաբաղի, Գանձակի, Շեքիի, Շիրվանի, Կերբեղի, Ղուբայի, Բարձիի և Թալիշի պարսկական խանություն-

<sup>35</sup>Սուրաբյան Ա., Սիխանյան Է., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.), Եր., 2005, էջ 238-240, Frederik Coene, The Caucasus. An Introduction, L. & N.York, 2010, pp. 125-12.

<sup>36</sup>Սուրաբյան Ա., Սիխանյան Է., Եզվ. աշխ., էջ 239-242:

<sup>37</sup> Ղազարական արքայատոհմի հիմնադիր Աղա Մոհամմադ-խան Ղազարը 1785-1796 թթ. իր միասնակա տիրապետությունը հաստատեց Իրանի Կենտրոնական և Հյուսիսային նահանգներում, Արևելյան Կովկասում, այնուհետև Քերմանում, Արևմտյան Բելուջիստանում, Միջստանում և Սեյխեդում: Երկրի կենտրոնացման գործընթացը ավարտելուց հետո 1796 թ. Աղա Մոհամմադ-խան Ղազարը իրն Իրանի նորընծա շահ հռչակեց՝ նիմր դեղով Ղազարական թյուրքական արքայատոհմին, որը գտնակալեց շուրջ 130 տարի: Մահմադման տե՛ս նա Ծրագրի արձանագրությունները, 1796-1925 թթ., Եր., 2005, Բարձրագույն դատարանի կողմից արձանագրված, Կոնստանդուպոլիս, 1925, թ. 125-12:

Lambton A., Qajar Persia, Eleven Studies, L., pp. 9-12, Բայրոբյան Վ., Իրանի պատմություն, էջ 400-406, Amen C., История Ирана XX век, М., 2004, с. 29.

<sup>38</sup>Բայրոբյան Վ., Իրանի պատմություն, էջ 408, A. Lambton, Qajar Persia, p. 22:

<sup>39</sup> Narrative Treaty No III, Treaty of Friendship and Alliance Concluded with His Majesty the Shah of Persia, 1801, Collection of Treaties, Engagements and Sanads. Relating to India and Neighbouring Countries, Compiled by C.U. Aitchison, The Treaties, Relating to Persia and the Persian Gulf, Calcutta, Vol. X, 1892, pp. 37-44.

<sup>40</sup> Տե՛ս Բայրոբյան Վ., Իրանի պատմություն, էջ 412-419,

۷۸۷-۷۸۶، دفتر عبدالحمین زین گوی، روزگار، تاریخ ایران از آغاز تا سقوط سلطنت پهلوی، ص. ۷۷-۷۸،

<sup>41</sup> Narrative Treaty No V, Preliminary Treaty Concluded by Sir Harford Jones with the shah of Persia, 1809, Collection of Treaties, Engagements and Sanads. Relating to India and Neighbouring Countries, Vol. X, pp. 45-48.

ները, ինչպես նաև Արևելյան Հայաստանի Լոռիի, Շամշադիի, Ջանգեզուրի գավառները, բացառությամբ՝ Նախիջևանի և Երևանի խառնությունների: Պայմանագրով ռուս վաճառականներն Իրանում ազատ առևտրի իրավունք ստացան, ազատվեցին ներքին մաքսատուրքերից և այլն (հոդվ. IX): Ռուսաստանը Կասպից ծովում ռազմական նավատորմ պահելու բացառիկ իրավունք ստացավ, որից Իրանը և յուրաքանչյուր այլ պետություն զրկվում էին (հոդվ. V)<sup>42</sup>:

Պատերազմի ավարտից հետո ռուս-պարսկական սահմանին վերաբերող պայմանագրի որոշ հոդվածների անհետակ ձևակերպումները Ռուսաստանի և Իրանի միջև մշտական լարվածության պատճառ դարձան, ինչից ակտիվորեն փորձում էր օգտվել Մեծ Բրիտանիան: 1814 թ. նոյեմբերի 25-ին Թեհրանում կնքվեց Ռուսաստանի դեմ ուղղված անգլո-պարսկական նոր պայմանագիր, ըստ որի՝ Իրանը պարտավորվում էր թույլ չտալ իր տարածքով եվրոպական որևէ պետության զորքերի շարժը դեպի Հնդկաստան: Պայմանագրի III հոդվածի համաձայն, Ռուսաստանի և Իրանի միջև սահմանները պետք է որոշվեին Մեծ Բրիտանիայի, Իրանի և Ռուսաստանի միջև ձեռք բերված համաձայնությամբ<sup>43</sup>:

1816 թ. Ֆաթիալի շահի մտա գործուղված արտակարգ և լիազոր դեսպան գնդապետ Ա. Երմոլովին Իրան կատարած դիվանագիտական առաքելության ընթացքում չհաջողվեց հարթել ոչ միայն ռուս-պարսկական սահմանին վերաբերող հակասությունները, այլև Իրանում ռուսական դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու և ռազմագերիների վերաբերյալ խնդիրները<sup>44</sup>:

<sup>42</sup> Трактат заключенный в Гюльстене, 12 октября 1813 г., Договоры России с Востоком, политические и торговые, собранны и издали Т. Юзефович, СПб, 1869, с. 208-214, Appendix N° V, Treaty of Gulistan between Persia and Russia, dated 12<sup>th</sup> October 1813, Collection of Treaties, Engagements and Sanads. Relating to India and Neighbouring Countries, Vol. X, pp. X-XIII.

<sup>43</sup> Treaty N° VII, Treaty Concluded with the Shah of Persia for adjustment of the term of Definitive Treaty of 1812, dated 25-th November 1814, Vol. X, pp. 37-44. مذكر عهد الحسن ۷۳۵-۷۴۰ هـ. زرين كوبه روزگار، تاریخ ایران از آغاز تا سقوط سلطنت پهلوی، ج۱، ص ۷۳۵-۷۴۰

<sup>44</sup> Kulagina J., К истории русско-иранских отношений, Иран, История, экономика, культура, М., 2009, с. 110.

Երկրորդ ռուս-պարսկական պատերազմի արդյունքում (1826-1828թթ.)՝ 1828 թ. փետրվարի 10-ին կնքվեց Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը: Կենտրոնանալով սահմանված ռազմատուգանքի և տարածքային կորստի հարցերի վրա՝ պարսկական կառավարությունը ժամանակին չգնահատեց Ռուսաստանին հատկացրած տնտեսական և քաղաքական այն զիջումների նշանակությունը, որը շուրջ մեկ դար շքադարձային դեր խաղաց Իրանի քաղաքական պատմության մեջ: Պայմանագրի IV հոդվածով հստակեցվեց Ռուսաստանի և Իրանի միջև սահմանը: Բացի այն, որ Ռուսաստանի տիրապետությունն էր հաստատվում նախկինում զրավված տարածքների վրա, նրան անցան նաև Երևանի և Նախիջևանի նահանգները: Ռուս-պարսկական սահմանը որոշվեց Արաքս գետով: VIII հոդվածով, բացի Ռուսաստանից, ոչ մի ուրիշ պետություն չէր կարող ռազմական նավատորմ պահել Կասպից ծովում: Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանը ստացավ առավել բարենպաստության և արտաերկրայնության իրավունք, որով կարող էր Իրանի տարբեր քաղաքներում հյուպատոսություններ հիմնել: Լուծվում էր ռազմագերիների և ավելի վաղ ժամանակներում Այրեղովկասից Իրան տեղահանված ազգերի, այդ թվում՝ հայերի հարցը (XV հոդվ.): Նրանք Պարսկաստանից Ռուսաստան և ազատ անցնելու իրավունք ստացան: Ռուսաստանն Արբաս-Միրզային ճանաչում էր որպես թագաժառանգ (VII հոդվ.) և ընդունում էր դաջարական արքայատոհմի իրավահաջորդության սկզբունքը<sup>45</sup>: Թուրքմենչայում ստորագրվեց նաև ինը հոդվածից բաղկացած ռուս-պարսկական Առևտրական տրակտատը, որի հոդվածների մի մասն արտացոլում էին Գյուլիստանի պայմանագրով

<sup>45</sup> Appendix N° VII, Treaty of Turkmanchai between Persia and Russia, dated 21<sup>st</sup> February 1828, Collection of Treaties, Engagements and Sanads. Relating to India and Neighbouring Countries, Vol. X, pp. XIV-XXXI, Трактат заключенный в Туркменчае, 10 февраля 1828 г., Договоры России с Востоком, политические и торговые, с. 214-227. Այս դրույթը հաստատվել էր նաև Գյուլիստանի պայմանագրի IV հոդվածով, որտեղ ստվում էր, որ Ռուսաստանը պատրաստ է ստատրել և ձևանշակ որպես իրանական գահի իրավահաջորդ այն թեկնածուին, որը շահի կուրից ընտրված կլինի որպես իրանական գահի ժառանգորդ: Под сѣнгомъ Россіи, изд. изд. № 304, А. Lambton, Qajar Persia, p. 14:

հաստատված դրույթներն ու իրավունքները արտահանվող և ներմուծվող ապրանքների համար 5% մաքսատուրք, ռուսահպատակ անտրաքականների համար սահմանվում էր արտաերկրայնության իրավունք, ընձեռնվում էին անտրալիյն լայն հեարավորություններ<sup>46</sup>:

XIX դարի երկրորդ կեսին Ռուսաստանի իրանական քաղաքականությունը միանշաղկե մերձավորարևելյան տարածաշրջանում ևրա ռազմավարական շահերի հետ: Մերձավոր Արևելքում և Մեծովկայան նեղուցներում գերիշխելու Ռուսաստանի հավակնությունները բախվեցին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հակադեցությունը, ինչև ի վերջո հանգեցրեց Դրիմի պատերազմի (1853-1856 թ.) սանձազերծմանը<sup>47</sup>: Արդյունքում պատերազմում պարտություն կրած սնծովյան նավատորմ պահելու իրավունքից զրկված Ռուսաստանը որդեգրեց արտաքին քաղաքականության նոր հայեցակարգ՝ ակտիվացնելով իր հետաքրքրությունները սահմանակից ասիական պետությունների, այդ թվում նաև Իրանի նկատմամբ<sup>48</sup>: Կովկասյան ամբողջ տարածաշրջանի և Կենտրոնական Ասիայի վերջնական միացումը Ռուսաստանին կենսական նշանակություն ձեռք բերեց և դարձավ նրա արևելյան քաղաքականության ուղեծրի բաղկացուցիչներից մեկը: 1857-1861 թթ. ընթացքում Ռուսաստանին միացվեց Հյուսիսային Կովկասը՝ Չեչենիան, Դաղստանը, անուհեան հյուսիս-արևմտյան Կովկասը: Շուրջ երեսուկ տարի տևած կովկասյան պատերազմի ավարտը բարձրագրեց Ռուսական կայսրության միջազգային վարկանիշը: Թիկոսքում ունենալով հարաբերականորեն կայուն Կովկաս՝ Ռուսաստանը զարգացրեց իր նվաճողականությունը Կենտրոնական Ասիայում<sup>49</sup>:

<sup>46</sup> Особый акт заключенный в Туркменчае, 10 февраля 1828 г. (торговле), Договоры России с Востоком, политические и торговые, с. 223-227, Appendix N° VII, Separate Compact (relative to Commerce and Security of Russian and Persian subjects respectively) referred to in Article X of the Treaty of Turkmanchai, dated 21<sup>st</sup> February 1828, Collection of Treaties, Engagements and Sanads, Relating to India and Neighbouring Countries, Vol. X, pp. XIV-XXXI.

<sup>47</sup> Տե՛ս Մուրադյան Մ., Միևայան Է., նշվ. աշխ., էջ 282-332:

<sup>48</sup> Шкунов В., նշվ. աշխ., էջ 26-27:

<sup>49</sup> Покровский И., Кавказские войны и вмазмат Шамиля, 2-е издание, М., 200-, с. 530-540, История внешней политики России, вторая половина XIX в., Золотухин М. Ю., Меликов Г. В., Рыбаченко Н. С., М., 1997, с. 68.

Պետն 1842 թ. սահմանակից ռուսահպատակ խաղաղ բնակչության նկատմամբ թուրքմենական ռազմաշունչ ցեղերի ասպատակություններն ու կոդուպուտները կանխելու նպատակով՝ Ռուսաստանը ռազմական կայան էր հիմնել Կասպից ծովի հարավ-արևելքում գտնվող Աջուրաղե կղզում, որի խնդիրն էր հնագանդեցնել թյվոր-թուրքմեններին և պաշտպանել Կասպից ծով ժամանող ռուսական անտրալիյն նավերը, ինչպես նաև ապահովելու իրանական Աստրաբադի և Մազանդարանի նահանգների հետ ռուսական անտրառտնտեսական շրջանների կապերը<sup>50</sup>:

XIX դարի երկրորդ կեսին թավ հավաքող ռուսական արդյունաբերական խոշոր բուրժուազիան, որը նոր հուսմային և սպառողական շուկաների կարիք ուներ, մեծ հետաքրքրություն սկսեց ցույցբերել Կենտրոնական Ասիայի բնական հարստությունների, հատկապես բամբակի նկատմամբ: Ռուսաստանում առաջ եկան բազմաթիվ նախագծեր, տարատեսակ իրապարակումներ, որոնք հիմնավորում էին Ռուսաստանի և ասիական պետությունների միջև կապերի ընդլայնման անհրաժեշտությունը<sup>51</sup>:

1858 թ. կառավարությունը, ԱԳՆ-ի Արևելյան դեպարտամենտի հետ համատեղ, երեք առաքելություն ուղարկեց Իրան և Կենտրոնական Ասիա. Ն. Խանիկովի գլխավորությամբ՝ գիտական արշավախումբ արևելյան Իրան (Նորասան) և Հերաթ, Ն. Իգնատևի ղեկավարությամբ դիվանագիտական առաքելություն՝ Ռիվան և Բուխարան և Չ. Կալիխանովի գլխավորությամբ՝ արևելյան Թուրքեստան: Դրանք պետք է օգնեին Դեստրբորգին մշակելու հստակ քաղաքական և դիվանագիտական մարտավարություն՝ «տարածաշրջանում Անգլիայի հետ հետագա մրցակցությունը շարունակելու համար»: Հիշյալ առաքելությունների ծրագրերի մեջ էր մտնում նաև անտրառտնտեսական հարցերի քննությունը: Խանիկովի առաքելությունը նպատակ ուներ ծանոթանալու Իրանի ներքաղաքական խնդիրներին, որի կառավարությունը անգլո-իրանական պատերազմում (Հերաթի երկրորդ կոն-

<sup>50</sup> Зинovieв И. А., Россия, Англия и Персия, СПб., 1912, с. 42.

<sup>51</sup> Տե՛ս Մուրադյան Մ., Միևայան Է., նշվ. աշխ., էջ 400-449:

Ֆլիկտ 1856-1857 թթ.) պարտություն կրելուց հետո՝ հետաքրքրված էր Ռուսաստանի հետ մերձեցման հարցում<sup>52</sup>:

Համեմատաբար կարճ ժամանակահատվածում (1865-1873 թթ.) Ռուսաստանն իրեն միացրեց հսկայածավալ Կովկասյի, Բուխարայի և Թիվլիսյի խանությունները: 1867 թ. Տաշքենդ կենտրոնով հիմնվեց Թուրքեստանի նահանգը (գեներալ-նահանգապետություն)<sup>53</sup>: 1881 թ. Ռուսաստան ավարտեց Ախալ-թեբեկյան օազիսի գրավումը: Հիմնվեց Ռուսաստանի Անդրկասպյան նահանգը՝ Աշխաբադ կենտրոնով: Առաջ եկավ ռուսական նոր տարածքների և Իրանի հյուսիսարևելյան նահանգների միջև սահմանագոտու հասակեցման հարցը<sup>54</sup>: 1881 թ. դեկտեմբերի 21-ին Թեհրանում կնքվեց ռուս-իրանական համաձայնագիրը՝ Կասպից ծովի հարակից շրջաններում սահմանագոտման վերաբերյալ: Համաձայնագրում տեղ գտան նաև ռուս-իրանական տնտեսական համագործակցությանը, ինչպես նաև սահմանագոտու ջրային պաշարների օգտագործմանը վերաբերվող հատուկ կետեր<sup>55</sup>: Իրանական Խորասանի նահանգի հյուսիսարևելյան մասը, համաձայնագրի կնքման պահին անմիջապես չէր սահմանակցում Ռուսաստանի միջխախական տարածքներին և բաժանվում էր թուրքմենական ցեղերով բնակեցված Ատեկի և Մերվի օազիսներով: Այդ իսկ պատճառով համաձայնագրում չամրագրվեց Ռուսաստանի և Իրանի սահմանագծից արևելք մինչև Աֆղանստան ընկած սահմանը՝ դառնալով ռուս-անգլիական երկարատև դիվանագիտական առճակատման պատճառ<sup>56</sup>:

Օգտվելով ստեղծված միջազգային բարենպաստ իրադրությունից, որը պայմանավորված էր Մեծ Բրիտանիայում 1880 թ. իշխանության եկած լիբերալների միջխախական հարցում հետընթաց քաղա-

քական կուրսով և «Երեք կայսրերի դաշինքի» (Ռուսաստան, Գերմանիա, Ավստրո-Հունգարիա) վերահաստատման հետ, 1884 թ. մայիսին ռուսներն ավարտեցին Կենտրոնական Ասիայի միակցման գործընթացը՝ վերջնականապես Ռուսական կայսրությանը միակցելով նաև Մերվն ու Ատեկը<sup>57</sup>: Այսպիսով կայսրությունն առաջին անգամ մտնեցավ ընդուրայ Իրանի արևմտյան սահմանների, բրիտանական ազդեցության ոլորտում գտնվող Աֆղանստանին՝ դրանով իսկ հինք դնելով բրիտանական այն թեզին, որ Ռուսաստանը հավակնում է ընդլայնել իր ազդեցության ոլորտները դեպի հարավ՝ Բրիտանական Հնդկաստան: Ոստի Հնդկաստանին «ռուսական սպանակից» պետք է կանցնել Կենտրոնական Ասիայում և Իրանում:

Այս բոլորի տրամաբանական արդյունքը՝ ռուս-անգլիական հարաբերությունների աննախադեպ սրումն էր: 1884-1885 թթ. անգլո-ռուսական հակամարտությունը Կենտրոնական Ասիայում հասավ իր գագաթնակետին, և ռուս-պարսկական սահմանների խնդիրն ընդհանուր ստմամբ միախուլվեց Պամիրում ռուս-աֆղանական սահմանային հարցի հետ: Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը հայտնվեցին պատերազմ սկսելու փաստի առաջ<sup>58</sup>: 1885 թ. երկու պետությունների ռազմական ուժերը բախվեցին Ֆուշչայում՝ խախտելով դեռևս 1873 թ. ձեռք բերված Աֆղանստանի տարածքային ամբողջականության պահպանման վերաբերյալ անգլո-ռուսական համաձայնագիրը: Լոնդոնը շարունակում էր զարգացնել այն տեսակետը, որ ռուսները մտադիր են ծավալել իրենց նվաճողականությունն Իրանի հյուսիսարևելյան սահմանների և Աֆղանստանի ուղղությամբ՝ ապառաջիք ստեղծելով բրիտանական Հնդկաստանի սահմանին<sup>59</sup>: Այսպիսով, տևական ժամանակ թե՛ Աֆղանստանը թե՛ Իրանը շարունակեցին մնալ ռուս-բրիտանական աշխարհաքաղաքական մրցակցության կոնֆլիկտոզեն սուբյեկտները:

<sup>52</sup> История внешней политики России, вторая половина XIX в., кн. 1, т. 2, с. 89-90.

<sup>53</sup> Волков И. В., Региональные аспекты переселенческой политики Царизма в Туркестанском крае: 1867-1917 гг., Бишкек, 2007, с. 4-5.

<sup>54</sup> Ասիական տե՛ս Մանինո Բ., Из истории русско-иранских отношений конца XIX – начало XX века, Ташкент, 1964, с. 24-36.

<sup>55</sup> Ատեկի տեղում, էջ 73-76:

<sup>56</sup> Ասիական տե՛ս Խոստո, Բ., История дипломатии, Дипломатия в новое время (1817-1914), т. II, М., 1963, с. 202-204:

<sup>57</sup> Firuz Kazem-Zadeh, Russian and Britain in Persia, 1864-1914. A study of Imperialism, New Haven and London, 1968, pp. 87-91; Խոստո Բ., կնք. աշխ., էջ 202:

<sup>58</sup> Жюганова О. И., Великобритания на Среднем Востоке XIX-начало XX в., Анализ внешнеполитических концепций, М., 1990, с. 117-119.

<sup>59</sup> Мультилатун П., Внешняя политика Императора Николая II (1894-1917), М., 2013, с. 140-141.

Իրանական ինքրում ռուս-բրիտանական խորացող հակամարտությունը փոքրիշատե կարգավորվեց միայն 1888 թ. ձեռք բերված պայմանավորվածությամբ, որով Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան պարտավորվեցին հարգել Իրանի տարածքային ամբողջականությունը<sup>60</sup>: Այդպիսով, Իրանը վերածվեց Ռուսաստանի և բրիտանական Հնդկաստանի միջև միջանկյալ (բուֆերային) գոտու: Խուսափելով Մեծ Բրիտանիայի հետ քաղաքական նոր բարդություններից և խոչըր դրամական ներդրումներից՝ Ռուսաստանը վերանայեց Միջին Արևելքում հետագա առաջխաղացման մարտավարությունը և նախապատվությունը սկսեց տալ տնտեսական ներթափանցման հայեցակարգին:

XIX դ. 80-ական թվականներից ճորտատիրական իրավունքի վերացմանը հաջորդած կարճատև լճացումից հետո ռուսական արդյունաբերությունը սկսեց զարգացման վերելք ապրել և Ռուսաստանը տարածքային նվաճումների քաղաքականությունից հնարավորություն ստացավ անցում կատարել տնտեսական ներթափանցման քաղաքականությանը: Հաստատվելով Թուրքմենստանում՝ ռուսական անտրապարոյունաբերական շրջանները սկսեցին ավելի մեծ կարևորություն տալ Իրանի հյուսիսարևելյան ճահանգների հուսքային և սպառողական հնարավորություններին: Դրան նպաստեց նաև 1880-1886 թթ. կառուցված Անդրկասպյան երկաթգծը, որն ապահովեց ռուսական տիրույթների կապը Խորասանի վարչական կենտրոն Մեշհեդի հետ և ամրապնդեց այդ շրջաններում ռուսական ազդեցությունը: Ռուսական անտուրն այստեղից դուրս մղեց անգլիականին:

Ռուս-պարսկական վերջնական սահմանը ամրագրվեց 1893 թ. մայիսի 27-ի Ռուսաստանի և Իրանի միջև կնքված համաձայնագրով, որի V հոդվածով հստակեցվեց նաև ռուս-պարսկական սահմանի մնացած հատվածը՝ Բաբա-Ղերմեզից մինչև Աֆղանստան: 1895թ. մարտին Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը միմյանց միջև փոխանակվեցին նաև Պամիրում ազդեցության գոտիների վերաբերյալ նուսաներով, ըստ որի՝ Ռուսաստանի և Աֆղանստանի միջև սահմանը

հաստատվեց Փանջա գետով<sup>61</sup>: Այդպիսով, Իրանն ու Ռուսաստանը սահմանակից դարձան ոչ միայն Կովկասում, այլև Կասպից ծովի արևելյան շրջաններում: Ռուս-իրանական քրային և ցամաքային սահմանն ուներ մոտ 2,5 հազար կմ երկարություն: Այն անցնում էր Կասպից ծովից արևմուտք՝ Արաքսի երկայնքով, Մուղանի տափաստանով դեպի Թալիշյան լեռներ, իսկ Կասպից ծովից արևելք՝ Ասրեկ գետով և Թուրքմենախորասանյան լեռներով<sup>62</sup>:

Ռուս-իրանական սահմանագաղտման ընթացքում հաշվի էկին տևելով սահմանամերձ շրջաններում ապրող բնակչության էթնոկրոնական և կենսակերպային առանձնատկությունները: Առանձին ազգություններ և էթնիկ միավորներ ներկայացնող բնակչությունը հայտնվեց սահմանի տարբեր կողմերում, ինչը բարենպաստ ազդեցություն չունեցավ նրանց քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման վրա<sup>63</sup>:

Ռուսաստանի տնտեսական և քաղաքական շահերից էր բխում Իրանի ամբողջականության պահպանումը: Տնտեսապես և ռազմաքաղաքական առումով թույլ Իրանը վերածվեց միջանկյալ գոտու՝ նվազեցնելով շփման եզրերը ու տարածքային սահմանակցությունը բրիտանական Հնդկաստանի, Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև: Ռուսաստանին ձեռնտու էր Իրանի հետ դրացիական հարաբերությունների պահպանումը: Նախ այն ապահովելու էր ռուս-իրանական սահմանի անվտանգությունը՝ ազատելով սահմանագծին մեծաքանակ զոքք կենտրոնացնելու անհարաժեշտությունից, ապա ակտիվացնելով իր ռազմաքաղաքական և տնտեսական ներկայությունն Իրանում՝ Ռուսաստանը մտադիր էր շահական կառավարությունից ստանալ այնպիսի մենաշնորհային իրավունքներ, որոնցից օգտվում էր Մեծ Բրիտանիան, ինչը հնարավորություն էր տալու ունենալ կախյալ վիճակում հարակից պետություն, որի կառավարող վերնախավի քաղաքականությունը համաձայնեցվելու էր ռուսական շահերի հետ:

<sup>60</sup>Сборник договоров России с другими государствами 1856-1917 гг., под редакцией Е.А. Адамова, М., 1952, с. 284-286.

<sup>61</sup>Кузнецова Л.М., Россия и Иран, (XIX-начало XX в.), М., 2010, с. 94-95.

<sup>62</sup>Նույն տեղում:

## 2. Ռուսական կայսրության առևտրատնտեսական շահերն Իրանում

XIX դարի վերջին Իրանն ապրում էր խորը սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամ. վտանգված էր երկրի ռազմական համակարգը և վարչական կայունությունը: Նման պայմաններում, դաջարական կառավարությունը գրեթե ամբողջովին կորցնելով քաղաքական և տնտեսական ինքնուրույնությունը, փորձում էր իշխանությունը պահել՝ խուսաճավելով երկրում առկա անգլո-ռուսական մրցակցության և ներքին հակասությունների միջև<sup>64</sup>:

Իրանի միջնադարյան քաղաքական և կիսաավտոտական կարգը, խոշոր ավատատերերի անջատողական ձգտումները, անձի և գույքի անապահովությունը, օտարերկրյա տերությունների միջամտությունը ներքին խնդիրների բավականին լուրջ խոչընդոտներ էին, որոնք արգելակում էին այդ երկրի բնականոն զարգացումը: Իրանցիների էթնոդավանական, ցեղային, լեզվական և աշխարհագրական մասնատվածությունը, նահապետական-տոհմատիրական հարաբերությունների մակարդակում գտնվող թշվառ և կիսաթշվառ ցեղերի առկայությունը խոչընդոտում էին երկրի կենտրոնացմանը և ազգային համախմբմանը<sup>65</sup>: XX դարասկզբին ցեղերի առաջնորդները դեռևս շարունակում էին կարևոր դերակատարում ունենալ պետության կառավարման համակարգում, ինչը մեծապես կապված էր տնտեսությունում և բանակում նրանց զբաղեցրած դիրքերով: Չնայած որոշ բարեփոխումների և պետական ապարատի եվրոպականացման առանձին փորձերի՝ Իրանը մնում էր ագրարային թերզարգացած երկիր, որի տնտեսության բնորոշ գծերից էր թույլ զարգացած ազգային կապիտալը:

Օտարերկրյա տնտեսական ու քաղաքական ներթափանցման արդյունքում չկորցնելով դե-յուրե անկախությունը՝ Իրանը դե-ֆակտո

վերածվեց կիսանկախ պետության՝ դառնալով Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի համար ինչպես էծան հումքի, գյուղատնտեսական բնամթերքի արտահանման շուկա, այնպես էլ այդ երկրների արդյունաբերական ապրանքների խոշոր սպառող: Օտարերկրյա կապիտալի ներթափանցման արդյունքում իրանական տնտեսությունը ներթափանցվեց համաշխարհային կապիտալիստական շուկա<sup>66</sup>: Ճամաշխարհային շուկայում Իրանի գյուղատնտեսական բնամթերքի նկատմամբ բարձր պահանջարկը և արդյունաբերական կապիտալի բացակայությունն ի վերջո հանգեցրեց առևտրական (նատկապես վաշխատուական) ազատ կապիտալի կուտակմանը բարձր պաշտոնյաների, հոգևորականության, առևտրային բուրժուազիայի շրջանում, որը հիմնականում ուղղվում էր հողերի ձեռք բերմանը, ինչի արդյունքում արդեն XIX դարի վերջին հողատիրության մեջ հետզհետե մեծ ծավալ էր ստանում մասնավոր սեփականությունը<sup>67</sup>:

Օտարերկրյա տերությունների հետ առևտրաշրջանառության աճի տնայնորդական զուգընթաց փոփոխության էր ենթարկվում նաև Իրանն արտահանվող և ներմուծվող ապրանքատեսակների անվանացանկը: Իրանական գյուղատնտեսության անցավ արտաքին շուկայում բարձր պահանջարկ ունեցող գյուղատնտեսական կուլտուրաների մշակմանը (բամբակ, բրինձ, ափիոն, ծխախոտ և այլն)<sup>68</sup>:

Օտարերկրյա մրցակցությանը չդիմացող արդյունաբերության մեջ կապիտալների հազվադեպ ներդրումները դասապարտված էին անհաջողության: Մաղմուսյին ձևավորման փուլում գտնվող տնտեսության այս բնագավառը չէր կարող մրցակցել Ռուսաստանից և Մեծ Բրիտանիայից ներմուծվող արդյունաբերական ավելի էծան և որակ-

<sup>64</sup> Abrahamian Er., A History of Modern Iran, Cambridge University Press, 2008, pp. 31-33, Abbas Amanat, Pivot of the Universe, Nasir-Al-Din Qajar and the Iranian Monarchy, 1831-1896, Los Angeles, Berkeley, Oxford, p. 417.

<sup>65</sup> Sh. u Lambton A., Qajar Persia, pp. 14-32, 46-47:

<sup>66</sup> محمد تقی اسان الملک سپهر، تاریخ ایران، جلد سوم تهران، ص ۱۱۵۱-۱۱۴۸.

Lambton A., Qajar Persia, pp. 48-49; Арбабджон З., Иран. Власть, реформы, революции (XIX-XX вв.), М., 1991, с. 7-26.

<sup>67</sup> Гореликов С., Иран. Экономико-географическая характеристика, М., 1961, с. 151-152, Годс Реза М., Иран в XX веке. Политическая история, (перевод с английского Джюра И.М.), М., 1994, с. 25-27.

<sup>68</sup> Abrahamian Er., A History of Modern Iran, ևսլ. աշխ., էջ 23-24, Keddie R. Nikki, Iran, Religion, Politics & Society, Collected Essays, L., 1980, pp. 210-211:

յալ ապրանքների հետ: Հետևաբար ուժեղանում էր նաև իրանական երեքինի շուկայի կախվածությունն այդ տերություններից:

XIX դ. երկրորդ կեսից վիզոնների և համապատասխան մասնագետների բացակայության պայմաններում՝ դաջարական կառավարությունը տնտեսության ենթակառուցվածքների գործունեությունը կազմակերպելու և պետական գանձարանի բացասական հաշվեկշիռը լրացնելու նպատակով՝ տնտեսության տարբեր ոլորտներում ներդրումային մենաշնորհային իրավունքներ սկսեց տրամադրել օտարերկրյա տերություններին:

Նապո էյ-Ղին շահի օրոք (1848-1896 թթ.) օտարերկրյա տերություններին տրամադրվող մենաշնորհային իրավունքները մեծ թափ ստացան<sup>66</sup>: Այդ գործընթացը շարունակվեց նաև XX դ. սկզբին: Նշենք, որ մենաշնորհային ներդրումներն (հետագրային գծեր, բակեր, ճանապարհների կառուցում և այլն) ինքնին տնտեսական և քաղաքական սպասնայիք չէին ներկայացնում երկրում բարենորոգումներ անցկացնելու ճանապարհին, եթե իշխանության զույն կանգնած շահը և համայնի իշխող վերնախավը, ինչպես նաև շիա բարձրաստիճան երկրակառուցությունը ավելի նախանձախելիք լինեին իրենց երկրի բարեկեցության և զարգացման հարցում: Նրանց մեծ մասն առաջնորդվելով անձնական շահերով՝ կաշառքի դիմաց պատրաստ էին օտարերկրացիներին գործնականում տրամադրել այնպիսի արտոնություններ և իրավունքներ, որոնք վտանգում էին պետության կարևորագույն ոլորտների լիարժեք ձևավորման հնարավորությունները: Անիրավահավասար պայմանագրեր կնքելով օտարերկրյա տերությունների, մասնավորապես Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի հետ, իրանական կառավարությունն աստիճանաբար կորցրեց նաև ինքնուրույն քաղաքական որոշումներ կայացնելու իրավունքները:

Անցնելով Ռուսաստանի՝ Իրանում տնտեսական քաղաքականության հարցին՝ հարկ է նշել, որ այն ընդհանուր առմամբ կապված էր XIX դ. 60-ական թթ.-ից կայսրության ներսում անցկացվող

տնտեսության արդիականացման քաղաքականության հետ, որի գաղափարական հիմքում սպառողական և հումքային նոր շուկաների կիսճանում էր: Ռուսական առևտրաարդյունաբերական շրջանների համար Իրանը պետք ծառայեր որպես ապրանքահումքային կցորդ և այդ երկիր տնտեսական ենթափասնցումն ակտիվացնելու հարցում ռուսական իշխանությունները որդեգրեցին պետության անմիջական հովանավորության և վերահսկողության ռազմավարությունը: Ցարական կառավարությունը գտնում էր, որ Ռուսաստանի արդյունաբերական աճը, վաղ թե ուշ երան կդարձնի ավելի սրցունակ, ուստի անհապաղ օտարերկրյա կապիտալի հաշվին (խոսքը հատկապես Ֆրանսիայից վերցրած արտաքին փոխառությունների մասին էր), անհրաժեշտ էր առաջատար դիրքեր զբաղեցնել սահմանակից ասիական պետությունների շուկաներում<sup>67</sup>:

1892 թ. «Հարավ-արևմտյան երկաթուղիների» կառավարիչ Ս.Յ. Վլատսն ֆինանսների նախարարի պաշտոնը զբաղեցնելուց անմիջապես հետո ձեռնամուխ եղավ Իրանում ռուսական քաղաքական և տնտեսական հարցերին վերաբերող» Հասուկ խորհրդակցության ստեղծմանը, որին անդամակցում էին պետական գերատեսչությունների ներկայացուցիչները<sup>68</sup>: 1900 թ. Նիկոլայ Բ-ը՝ ի դեմս Վլատսնի, լայն իրավասություններ սահմանեց Ֆինանսների նախարարության համար: Կառավարության աստիճանակարգում երկրի երեքին և արտաքին գործերի նախարարների կողքին, արտոնյալ կարգավիճակ զբաղեցնելով՝ ֆինանսների նախարարը կարևոր դերակատարում ձեռք բերեց նաև երկրի արտաքին քաղաքականության բնագավառում<sup>69</sup>:

<sup>66</sup>Ананьев Б., Гангелл Р., Дубенцов Б., Потолов С., Крижис самодержавия в России 1895-1917, Ленинград, 1984, с. 34-37.

<sup>67</sup>История внешней политики России конец XIX-начало XX века, (от русско-французского союза до Октябрьской революции), ред. Коллектив Емец А., Игнатъев А., Тютюкин С., М., 1997, с. 122.

<sup>68</sup>Peter Waldron, State finances, The Cambridge History of Russia, Imperial Russia, 1689-1917, vol.II, Ed. By Dominic Lieven, London School of Economics and Political Science, Cambridge University Press, 2006, pp. 468-470, Ананьев Б., Гангелл Р., Дубенцов Б., Նշվ. աշխ., էջ 35-38:

Օտարերկրյա պետություններից Մեծ Բրիտանիան առաջինն էր սկսել կապիտալներ արտահանել Իրան և ձեռք բերել մենաշնորհային իրավունքներ: XIX դարավերջին Ռուսաստանը Մեծ Բրիտանիայի օրինակով Իրանի տնտեսության տարբեր ենթակառուցվածքներում մենաշնորհների և այլ տնտեսական գործիքների միջոցով հաստատվելու քայլեր էր սկսել ձեռնարկել<sup>75</sup>: Ռուսական կառավարության անմիջական հովանավորությամբ և վերահսկողությամբ մշակված ռազմավարության մեջ կարևորագույն դերը վերապահված էր իրանական տնտեսության ենթակառուցվածքներում ներդրումների, արտաքին փոխառությունների, մենաշնորհային, մաքսային, հարկային պայմանագրերի միջոցով շարունակական ներթափանցման հայեցակարգին: Ռուսական իշխանությունների կողմից այն դիտվում էր որպես Իրանի հետ առևտրատնտեսական հարաբերություններն ընդլայնելու և Մեծ Բրիտանիային հակազդելու ամենարդյունավետ միջոց:

Ստորև ներկայացված են տնտեսական այն ուղղությունները, որոնցով պայմանավորվեց Ռուսական կայսրության տնտեսական և քաղաքական ներթափանցումն Իրան:

#### ***ա) Մենաշնորհային ներդրումներ***

1860-ական թթ. սկսած՝ Ռուսաստանը փորձեց Մեծ Բրիտանիայի հետ մրցակցել Իրանի հեռագրային ոլորտում<sup>76</sup>: 1860 թ. Ռուսաստանն իր հեռագրային ցանցին էր միացրել Թեհրան-Թավրիզ գիծը, որը հետագայում ընդլայնվեց մինչև Սպահան: 1879 թ. ռուս գործարարները ձեռք բերեցին մենաշնորհային իրավունք Իրանի հյուսիսում՝ Աստարադ և Չիքիշյար քաղաքների միջև հեռագրային գծի կառուցման համար<sup>77</sup>:

1893 թ. Ռուսաստանի վերահսկողության տակ անցավ Աստարայի հեռագրային գիծը: Ռուսական իշխանություններն Իրանում հեռագրային գծերի կառուցման նկատմամբ առանձնակի հեռա-

բրբրություն սկսեցին դրսևորել XX դ. սկզբին: 1907 թ. ռուսական կառավարությունը որոշում կայացրեց Իրանում հեռագրային գծերի կառուցումը իրականացնել սեփական միջոցների հաշվին: Մինչև 1907 թ. Ռուսաստանին էր պատկանում նաև Մեշհեդ-Միսթան հեռագրային գիծը<sup>78</sup>: Ռուսական հեռագրային գործակալները աշխատում էին նաև Ուրմիա, Թավրիզ, Ռեշտ, Թեհրան, Աստարադ, Քաշան, Քերման և այլ քաղաքներում անցիվացիների կողմից շահագործվող հեռագրային կայաններում<sup>79</sup>:

1873 թ. հայազգի ռուսահպատակ խոշոր դրամատեր Ստեփան Լիանոզովը, Թեհրանի տնտեսական առաքելության շջակցությամբ, իրանական կառավարությունից 20 տարի ժամկետով ստացավ Կասպից ծովի հարավային հատվածում և նրա մեջ թափվող բոլոր գետերի ձկնորսական տեղամասերում (Ասթարա գետից մինչև Աթրեկ գետն ընկած հատվածում) ձկան որս կազմակերպելու իրավունք<sup>80</sup>: Չեռնարկությունը գտնվում էր ցարական կառավարության հաստիկ հովանավորության ներքո և համարվում էր ժամանակակից տարվարումներով հագեցած Իրանի խոշորագույն արդյունաբերական ձեռնարկություններից մեկը, որտեղ իրանցի աշխատակիցների մշտական թիվը հասնում էր 4 հազարի, իսկ ռուսահպատակներինը՝ 700-ի<sup>81</sup>:

1889 թ. Լազար Պոլյակովը հիմնադրեց «Պարսկաստանի և Կենտրոնական Ասիայի արդյունաբերական և առևտրական ընկերությունը», որի մասնաձյուղերը գործում էին Թեհրանում, Ռեշտում, Մեշհեդում և այլ խոշոր քաղաքներում: 1890 թ. նա շահից ստացավ նաև 75 տարի ժամկետով ողջ Իրանի տարածքում ապահովագրական

<sup>75</sup> История внешней политики России конец XIX-начала XX века, т.2, с.121-122:

<sup>76</sup> Իրանի հեռագրային ոլորտի մասին տե՛ս The Economic History of Iran 1800-1914, Edited by Ch. Issawi, Chicago and London, 1971, pp.153-154.

<sup>77</sup> Кулагина Л., Россия и Иран (XIX- начало XX в.), т.2, с.131-132.

<sup>78</sup> Մաշխադ-Աստարաբադ (Միսթան) հեռագրային գիծը կառուցվեց 1902 թ.: Այս գիծը 1907 թ. օգոստոսին կնքված Իրանը ազդեցության գոտիների բաժանադր մասին ռուս-անգլիական համաձայնագրից հետո, ռուսական իշխանությունները գիշացին Մեծ Բրիտանիային՝ վախարեղ տասնամյակ Մեշհեդ-Թեհրան հեռագրային գիծը: АВРИИ, ф. "Персидский стол." оп. 488, л. 2293, л. 85.

<sup>79</sup> Кулагина Л., Россия и Иран (XIX- начало XX в.), т.2, с.132:

<sup>80</sup> 1893թ. մենաշնորհի ժամկետն ըրանադրն պես այն երկարաձկնեց մինչև 1925թ.: Новая История Ирана, Христианова, М., 1988, с. 144-145.

<sup>81</sup> Բայրություն Վ., Իրանի պատմություն, տ.2, ս.132, հ.492:

և տրանսպորտային գործի կազմակերպման մենաշնորհային իրավունքը, որի հիման վրա ստեղծվեց «Իրանական ապահովագրական և տրանսպորտային ընկերությունը»<sup>80</sup>: Այս մենաշնորհը նաև Իրանի ողջ տարածքում խճուղային ճանապարհներ կառուցելու լայն հնարավորություններ էր ընձեռում: Ընկերությունը վարկեր տրամադրելու իրավունք ուներ և ազատվում էր հարկերից<sup>81</sup>: «Իրանական ապահովագրական և տրանսպորտային ընկերությունը» կազմակերպեց Կասպից ծովով Իրանի և Ռուսաստանի միջև շոգենավային հաղորդակցություն հիմնելով «Կովկաս և Մերկուրի», «Նադեժդա», «Արևելյան ընկերություն» և այլ ընկերություններ, որոնք հետագայում միավորվելով կազմեցին «Պարսկական տրանսպորտային բյուրոն»: 1902 թ. ընկերությունում առաջացած ֆինանսական ճգնաժամի հետևանքով Ռուսաստանի ֆինանսների նախարար Ս.Յ. Վիտտեի առաջարկով կազմակերպությունն իր բաժնետոմսերը զիջեց պետությանը<sup>82</sup>:

Իրանում Ռուսաստանի ֆինանսատնտեսական և քաղաքական շահերի ամրապնդման ամենաարդյունավետ գործիքը Պարսկաստանի Հաշվավարկային բանկն էր (*Учечно-судный банк Персии*), որի ստեղծման հիմնական նպատակն անգլիացիների հիմնադրած Իրանի Ծախիշահական բանկի (*The Imperial bank of Persia*) գործունեությանը հակազդելն էր<sup>83</sup>: 1890 թ. ռուս գործարար Յակով Պոլյակովը Նասեր էդ-Պին շահից ստացել էր Իրանում 75 տարի ժամկետով բանկ հիմնադրելու մասին մենաշնորհային իրավունք: Պայմանագրի համաձայն՝ բանկն իրավունք ուներ Իրանի ողջ տարածքում վարկային գործարքներ իրականացնել արժեթղթերի, պարտատոմսերի և շարժական գույքի գրավադրման դիմաց, ինչպես նաև կազմակերպել

աճուրդներ<sup>84</sup>: 1891 թ. հիմնադրված Պոլյակովի բանկը գոյատևեց ընդամենը երեք տարի: Գիտակցելով և կարևորելով այդ կազմակերպության տնտեսական և քաղաքական նշանակությունը՝ 1894 թ. ապրիլի Ս. Վիտտեի նախաձեռնությամբ բանկը ևս գնվեց Ռուսաստանի Ֆինանսների նախարարության կողմից և անցավ Ռուսաստանի Պետական բանկի վերահսկողության տակ<sup>85</sup>:

Վերակազմավորված բանկը նշանավորեց Իրանում Ռուսական կայսրության քաղաքականության որակական նոր փուլ<sup>86</sup>: Թեև բանկը համագործակցում էր Իրանում Ռուսաստանի դեսպանատան և հյուպատոսությունների հետ, սակայն գործնականում բացառապես անկախ մարմին էր և ենթարկվում էր Ռուսաստանի ֆինանսների նախարարին, իսկ նրա ղեկավարը համարվում էր նախարարի գործակալը<sup>87</sup>: 1895 թ. սկսած՝ Հաշվավարկային բանկի միջոցով ռուսական իշխանությունները սկսեցին իրականացնել ռուս-իրանական անտրական և ֆինանսական գրեթե բոլոր գործարքները: Աշխատանքը մեկնարկելով 1890 թ. արդեն 1900 թ. բանկը պետական հովանավորության շնորհիվ՝ իր գործունեության սահմանները ընդլայնեց ոչ միայն մայրաքաղաքում, այլև ներկայացուցչական կենտրոններ հիմնեց

<sup>80</sup> Новая история Ирана, Хрестоматия, с. 147, Кулагина Л. М., Россия и Иран, Էջվ. աշխ., էջ 144-146:

<sup>81</sup> Кулагина Л. М., Россия и Иран, Էջվ. աշխ., էջ 147:

<sup>82</sup> Анянич Б. В., Российское самодержавие и вывоз капиталов 1895-1914 гг., (по материалам Учено-судного банка Персии), Л., 1975, с. 73-74.

<sup>83</sup> Տե՛ս և Кулагина Л., Из истории закабаления Ирана английским империализмом (Шихиншахский банк в последнее десятилетие XIX в.), Краткие сообщения Института Востоковедения, М., XIX, 1956, с. 5-7.

<sup>84</sup> Եթե սկզբնական շրջանում բանկը վարկեր էր տրամադրում միայն շարժական գույքի դիմաց, ապա հետագայում լիազորություններ ստացավ գրավի դիմաց ընդունել նաև անշարժ գույք, որի արդյունքում Իրանի հյուսիսային նահանգների ընդարձակ հողատարածքներ անցան նրա ձեռք: Թեև շարիաթով արգելվում էր օտար հպատակներիև անշարժ գույք ունենալ Իրանում, այդուհանդերձ Հաշվավարկային բանկը տարատեսակ միջոցներով օրնադրվում էր նաև ռուս գործարարներիև Իրանի հյուսիսային շրջաններում հողատարածքներ ձեռք բերելու հարցում: Анянич Б. В., Российское самодержавие и вывоз капиталов 1895, Էջվ. աշխ., էջ 15:

<sup>85</sup> The Economic History of Iran 1800-1914, Էջվ. աշխ., էջ 139.

<sup>86</sup> Պարսկաստանի Հաշվավարկային բանկը ի սկզբանե կազմված չի եղել օտարերկրյա և մտանավոր կապիտալի հետ և ֆինանսավորվում էր բացառապես Ռուսաստանի պետական գանձարանի և Պետական բանկի կողմից: Այն գործել է մինչև 1917թ.: The Russian economy and banking system, Boris Ananich, The Cambridge History of Russia, Imperial Russia, 1689-1917, vol.II, Ed. By Dominic Lieven, Cambridge University Press, 2006, p. 405.

<sup>87</sup> Russian Affairs, Geoffrey Drage, New York E.P. Dutton & CO., London: John Murray, 1904, p. 532.

տնտեսական կարևոր նշանակություն ունեցող կենտրոններում՝ Թավրիզում, Ռեշտում, Մեշհերում, Էնգելիում, Ուրմիայում, Լասրաթաբադում, Ղազվինում, Սպահանում: Համապատասխան մասնաճյուղեր հիմնվեցին նաև Բաքվում, Մոսկվայում, Լոնդոն և Աստրախանում<sup>66</sup>:

Ռուսական կառավարությունը բանկի առաջ Իրանից անգլիական ապրանքատեսակները դուրս մղելու, տեղական շուկան գրավելու խնդիր դրեց: Այդ քաղաքականության արդյունքում (1895-1900 թթ.) Ռուսաստանն առաջատար և մենաշնորհային դիրքեր զբաղեցրեց հյուսիսային նահանգներում:

1903 թ. Ռուսաստանում կրկին պետական մակարդակի վրա բարձրացվեց Իրանում ֆինանսատնտեսական քաղաքականության հետագա ընդլայնման հարցը: Թեև 1903 թ. տնտեսական ծրագիրն իր բովանդակությամբ առանձնապես չէր տարբերվում 1895 թ. մտտեցումներից, սակայն այս անգամ խոսքը պետական կապիտալների հաշվին ընդլայնման ավելի մեծ չափերի մասին էր և այդ քաղաքականության որոշիչ դերակատարումը ցարական իշխանությունը նախատեսում էր իրականացնել Պարսկաստանի Հաշվավարկային բանկի միջոցով: 1903 թ. փետրվարին Ռուսաստանի Ֆինանսների կոմիտեն Հաշվավարկային բանկի վերականգնվելուց մասին որոշում ընդունեց, ըստ որի՝ բանկը Ռուսաստանի Պետական բանկի ենթակայությունից անցավ Պետական գանձարանի վերահսկողության ներքո<sup>67</sup>: 1903 թ. բանկն իր ձեռքում կենտրոնացրեց Իրան արտահանվող ռուսական ապրանքների գրեթե բոլոր գործարքները՝ իր վրա վերցնելով ռուս արդյունաբերողների և իրանցի վաճառականների միջև միջնորդությունը: Այն նպաստավոր վարկեր էր տրամադրում նաև ռուսահպատակ և իրանցի առևտրականներին: Ռուս-իրանական առևտրաշրջանառությունում բանկի մենաշնորհային գոր-

ծուներության մասին են վկայում պատվերների արժեքների ցուցանիշները, որոնք 1901թ. 900 հազ. ռուբլուց 1903 թ. հասան 7 141 ռուբլու<sup>68</sup>:

Այսպիսով, ռուսական կառավարությունը աստիճանաբար իր ձեռքում սկսեց կենտրոնացնել իրանական կառավարության կողմից ռուսահպատակ մասնավոր ձեռնարկատերերին տրամադրված մենաշնորհային իրավունքները՝ վերահսկողություն իրականացնելով իրանական տնտեսության մի շարք բնագավառների ֆինանսատնտեսական գործընթացների նկատմամբ:

### բ) Ֆինանսական ներդրումներ

Եվրոպական ճանապարհորդության մեկնելու և գանձարանի պակասորդը լրացնելու նպատակով՝ Լասր էդ-Պին շահի կառավարության կողմից վերցրած մի շարք բրիտանական վարկերի արդյունքում՝ շահական գանձարանը պարտքային կախվածության մեջ էր հայտնվել Մեծ Բրիտանիայից<sup>69</sup>: Լասր էդ-Պին շահի բռնապետական կառավարման շրջանն իր ավարտին հասավ, երբ 1896 թ. գաղտնի կրոնական կազմակերպության անդամ, սեանկացած վաճառական, միրզա Ռեզա Քերմանին սպանեց նրան<sup>70</sup>: 1896 թ. գանձարանը Մոզաֆթար էդ-Պին շահի (1896-1906 թթ.) կառավարման շրջանում օտարերկրյա փոխառությունները, ըստ էության, դարձան իրանական ֆինանսական ոլորտի գրեթե միակ եկամտի աղբյուրը: Նրա օրոք անցկացվող հասարակական հավանություն չվայելող տնտեսական քաղաքականությունը էլ ավելի արագացրեց դաջարական վարչակարգի անկումը<sup>71</sup>:

Իրանական կառավարությանը վարկավորելու գործում Ռուսաստանը մրցակցության մեջ մտավ Մեծ Բրիտանիայի հետ: Իրանում Ռուսաստանի տնտեսական և քաղաքական գերակայության հաստատման համար կարևոր դարձան ցարական պետական գան-

<sup>66</sup> The Economic History of Iran 1800-1914, հշվ. աշխ., էջ 360.

<sup>67</sup> Տ. և Ա. Կանայե Բ. Բ., Российское самозарвание и вывоз капиталов, հշվ. աշխ., էջ 52-56:

<sup>68</sup> Աուլի տեղում, էջ 55-56:

<sup>69</sup> محمد تقی لسان الملك سپهر، تاريخ التواريخ، تاريخ قاجاریه، جلد سوم، ص ۷۲۴-۷۱۰، Chirol V., The Middle Eastern Question or some Political Problems of Indian Defence, L., 1903, p. 51; Geoffrey Drage, հշվ. աշխ., էջ 528:

<sup>70</sup> دکتر عبدالمحسن زرین کوب، روزگار، تاریخ ایران از اغاز تا سقوط سلطنت پهلوی، ص ۷۱۰:

<sup>71</sup> Abrahamian Er., Iran between Two Revolutions, New Jersey, 1982, p. 74.

ձարանից դաշարական կառավարությանը և սեռակացման եզրին գտնվող արքունիքին տրամադրվող դրամական հատկացումները փոխառությունների տեսքով:

1895-96 թթ. ընթացքում Հաշվավարկային բանկն իրանական կառավարությանը տրամադրեց կանխավճարային կարճաժամկետ վարկեր՝ շահական գանձապետարանի պարտավորակների (բարաթ) դիմաց<sup>94</sup>: 1898 թ. աշնանը բանկն իրանական կառավարությանը տրամադրեց ևս 1,5 մլն ռուբլի վարկ, որը սպասարկվելու էր Իրանի հյուսիսային մարզատների և Կասպից ծովում ձկնարդյունաբերության վարձավճարներից ստացվող եկամուտներով<sup>95</sup>: Սակայն այդ գումարը ծախսվեց Մեծ Բրիտանիայից նախկինում վերցրած փոխառությունների մասնակի մարմանը, և շահական կառավարությունը ստիպված էր շարունակել գումարների հայթայթման գործընթացը:

1899 թ. իրանական կառավարությունը փոխառություն վերցնելու հարցով դիմեց անգլիացիներին և ֆրանսիացիներին: Շուտով առաջ եկավ Իրանին համատեղ 60 մլն ֆրանկ այժողոթյամբ փոխառություն տրամադրելու անգլո-ֆրանս-ռուսական մի նախագիծ, որը 1899 թ. գարնանը նախապես հաստատվեց ռուսական կառավարության կողմից<sup>96</sup>: Սակայն նույն թվականի աշնանը համատեղ փոխառության վերաբերյալ բանակցությունները փակուղի մտան՝ մասամբ անգլո-ֆրանսիական քաղաքական մի շարք հակասությունների, մասամբ էլ՝ Աֆրիկայում Մեծ Բրիտանիայի ձեռնարկած լայնամասշտաբ ռազմական գործողությունների հետևանքով: Օգտվելով միջազգային ասպարեզում Մեծ Բրիտանիայի խառնակ կացությունից՝ ցարական կառավարությունն առանձին փոխառություն տրամադրելու նպատակով՝ անցառ բանակցություններ սկսեց շահական կառավարության հետ: Այս առումով Ռուսաստանի կարևոր ձեռքբերումներից էր 1898 թ. նախկին վարչապետ՝ Ալի Ասղար Ամին օս-

Մալյանեի սարդ-ազամի (վարչապետ) պաշտոնում վերահաստատվելու հանգամանք<sup>97</sup>, որով չեզոքացվեցին Շահնշահական բանկի և իրանական կառավարության միջև անգլիական փոխառություն կազմակերպելու միջոցառումները: Ամին օս-Մալյանեն ջանքերի շնորհիվ 1899 թ. վերջին ամիսներին Թեհրանում և Մ. Պետերբուրգում ընթացող բանակցությունների արդյունքում, 1900 թ. հունվարի 29-ին Հաշվավարկային բանկի և շահական կառավարության միջև ստորագրվեց պայմանագիր, որով Ռուսաստանը 75 տարի ժամկետով տարեկան 5% անկասողությամբ Իրանին տրամադրեց 22,5 մլն գումար փոխառություն: Փոխառությունը երաշխավորում էր իրանական մաքսակետերից (բացառությամբ Ֆարսի և Պարսից ծոցի նավահանգիստների մաքսակետերի) ստացվող եկամուտներով<sup>98</sup>:

Ուշագրավ է նշել, որ պետության մաքսային ոլորտում բարեփոխումներ անցկացնելու նպատակով, շահական կառավարությունը Ռուսաստանի միջամտությամբ, մաքսային ոլորտի ղեկավարությունը հանձնեց ռուսական դրածո Բելգիացի Ջոզեֆ Նաուսին: Արդյունքում, բելգիական անձնակազմի 30 անդամներ վերահսկողություն սահմանեցին իրանական մաքսատների վրա<sup>99</sup>: Դա չափազանց կարևոր քայլ էր, որը նպաստակ էր հետապնդում ապահովելու ռուսական փոխառությունների երաշխիք հանդիսացող մաքսային եկամուտները<sup>100</sup>: Մինչև տվյալ փոխառության մարումն իրանական կառավարությունն իրավասու չէր առանց Ռուսաստանի համաձայնու-

<sup>94</sup> نكدر عبدالحمین زین گوب، روزگار، تاریخ ایران از آغاز تا سقوط سلطنت پهلوی، ص ۸۲۷.

<sup>95</sup> Երջինես խիստ ռուսամետ դիրքորոշում էր որդեգրել դեռևս Ասար էլ-Պինի կառավարման վերջին տարիներին՝ բրիտանական առաքելության հետ ունեցած մի շարք տարաձայնությունների պատճառով, որոնք առնչվում էին 1891 թ. շահի կողմից բրիտանական հպատակին ծխախոտային մենաշնորհ տրամադրելու և պետիտետ 1892 թ. Բրանի բարձրաստիճան հոգևորականության և Ռուսաստանի ճնշումների տակ այդ մենաշնորհը չեղյալ հայտարարելու հետ:

<sup>96</sup> Справка о задолженности персидского правительства России, Si u աշխատանքի «Հավելված» բաժնում, Հավելված 1, արդյունք՝ АВПРИ, ф. 144, «Персидский стол», от. 488, л. 4021, ч. 2, л. 240-247:

<sup>97</sup> Geoffrey Drage, ե.շ.վ աշխ., էջ 533:

<sup>100</sup> Keddie Nikki R., Yann Richard, Roots of Revolution: An Interpretive History of Modern Iran. New Haven, Yale University Press, 1981, p. 70.

<sup>94</sup> Анянчик Б. В., Российское самодержавие и вывоз капиталов, ե.շ.վ աշխ., էջ 18-19:

<sup>95</sup> Նույն տեղում:

<sup>96</sup> Kagarlitsky B., ն.շ.վ աշխ., էջ 236; Marvin L. Entner, Russo-Persian Commercial relations, 1828-1914, University of Florida Monographs, Social Sciences, University of Florida Press, Gainesville, No. 28, 1965, Florida, p. 47.

թյան արտասահմանում երկարամյակն արտաքին փոխառություններ կնքել, այն պետք է մարեր նախկինում արված բոլոր պարտքերը, ինչպես նաև իրավունք չուներ իջեցնելու փոխառության երաշխիք հանդիսացող մաքսավճարների սակագները<sup>101</sup>: Փոխառություններ տրամադրելուև գուզընթաց ռուսական իշխանություններն Իրանում ձեռք էին բերում տարատեսակ մենաշնորհային իրավունքներ:

1901 թ. շահական գանձարանը նորից հայտնվեց սեանեկացման շեմին: Նույն թվականի գարնանը Ամլին օս-Սալթանեն բանակցություններ սկսեց վարել Թեհրանում բրիտանական և ռուսական առաքելությունների և բանկերի ղեկավարների հետ: Իրանին 10 մլն ռուբլի փոխառություն տրամադրելու դիմաց 1901 թ. սեպտեմբրին ռուսական կառավարությունն առաջադրեց հետևյալ սկզբունքային պայմանները. 1) ռուս-իրանական առևտրային (մաքսային) նոր պայմանագրի կնքում, 2) իրանական գանձապետարանի վրա Շահնշահական բանկի ազդեցության սահմանափակում, 3) շահի կողմից Թավրիզ-Նագվախ-Թեհրան խճուղային ճանապարհի և Կասպից ծովից Պարսից ծոց նավթային խողովակաշարի կառուցման համար մենաշնորհային իրավունքների տրամադրում: Նշված նավթային խողովակաշարի ռուսական կողմի առաջարկը բարդ խոչընդոտ դարձավ փոխառության վերաբերյալ ռուս-իրանական շուրջ մեկ տարի ընթացող բանակցություններում: Խնդիրն այն էր, որ ցարական կառավարության սուր դժգոհության էր արժանացել 1901 թ. մայիսի 28-ին շահի կողմից անգլոհայտատև Ուլիխամ Նուկա դ'Արսիսին Իրանի նավթային պաշարները շահագործելու վերաբերյալ տրամադրված մենաշնորհը: Ռուսաստանի նավթարդյունահանողները մտավախություն ունեին, որ բրիտանական այս ձեռնարկը մոտ ապագայում կսահմանափակի իրանական շուկայում ռուսական նավթային գործունեության մենաշնորհային արտոնությունները: Հետևաբար, իրանական հերթական փոխառության շրջանակներում ֆինանսների նախարարը իրատեսական էր համարում դեռևս 1884 թ. հայտնի ռուս ինժեներ Ս. Պալաշ-

կովսկու կողմից առաջարկվող՝ կովկասյան սահմանից Պարսից ծոց նավթանուղի կառուցման նախագիծը:

Քարվի նավթաշխարհի ներկայացուցիչները հետաքրքրված չէին Իրանի նավթային պաշարների շահագործման հարցում, ավելին՝ երանք խուսափում էին միջինարևելյան շուկայում իրանական նավթի հնարավոր մրցակցությունից, քանի որ XIX դ. 70-ական թվականներից սկսած հենց ռուսական նավթն էր, որ իր մտոչելություն շնորհիվ Իրանում հաստատուն եկամտաբերություն էր ապահովում<sup>102</sup>: Հնդկաստան և մերձավորարևելյան երկրներ նավթ արտահանելու ռուսական հեռանկարները իրանական կառավարությանը կանգնեցրին բարդ երկընտրանքի առաջ: Բացի այն, որ հերթական փոխառությունը կուժեղացներ Իրանի քաղաքական և տնտեսական կախվածությունը Ռուսաստանից, շահական կառավարությունը սախլված կլիներ խախտել դ'Արսիսին շնորհված նավթային մենաշնորհ պայմանները, ինչը հղի էր Մեծ Բրիտանիային կողմից գործընթացի վրա ինքնուրույն կերպով ներագրելու բարոյություններով<sup>103</sup>:

1901 թ. նոյեմբերի 12-ին Թեհրանի գանձապետարանի ղեկավար անգլիացի Մակմիլանին պաշտոնից հեռացնելու և մաքսային բոլոր վճարները Հաշվավարկային բանկի միջոցով կատարելու իրանական կառավարության պարտավորության դիմաց, Ռուսաստանը որպես կանխավճար շահին տրամադրեց 1 մլն ռուբլու վարկ<sup>104</sup>: Բրիտանացի դիվանագետները քաջ գիտակցելով նշված մենաշնորհի սահմանում արդյունավետ Ռուսաստանի կողմից քաղաքական և տնտեսական արտոնությունների ձեռքբերման հետևանքները՝ այն կանխելու ուղղությամբ կարևոր քայլեր սկսեցին ձեռնարկել: Փետրվարի 13-ին Ս. Պետերբուրգի բրիտանական առաքելության ղեկավար Չ. Սկոթն արտգործնախարար Վ. Ն. Լամադրֆին ներկայացրած հուշագրով բողոքարկեց ռուսական կողմի գործողությունները, որոնք

<sup>101</sup> Geoffrey Drage, *Եզվ. աշխ.*, էջ 531, *Алишери Б. В., Российское самодержавие и вывоз капитала*, *Եզվ. աշխ.*, էջ 25-26:

<sup>102</sup> Considine J., Kerr W., *The Russian Oil Economy*, MA, USA, 2002, p. 18-19, *Алишери Б. В., Российское самодержавие и вывоз капитала*, *Եզվ. աշխ.*, էջ 37-41:

<sup>103</sup> *Алишери Б. В., Российское самодержавие и вывоз капитала*, *Եզվ. աշխ.*, էջ 37-41:

<sup>104</sup> Նույն տեղում:

խախտում էին դ'Արսիի մենաշնորհի վեցերորդ հոդվածը, ըստ որի՝ իրանական կառավարությունը պարտավորվել էր որևիցե այլ երկրի չտրամադրել դեպի երկրի հարավային գետեր և Պարսից ծոցի ավազան տանող խողովակաշար կառուցելու իրավունք: Թեև իրանում բրիտանական առաքելության ղեկավար Ա. Հարդինգը նույնպես ակտիվացրեց շահի վրա ճշումները՝ իրանական կառավարությանն առաջարկելով 100 000 ֆունտ ստեռլինգ վարկ: Դ'Արսի նույնպես պատրաստ էր շահին տրամադրել տարեկան 5%-ով 300 000 ֆունտ ստեռլինգ<sup>105</sup>: Բրիտանական մասնավոր աղյուրներից իրանական կառավարությանը միջոցներ տրամադրելու հավանականությունը՝ Մ. Վիտտեին ստիպեց կառավարել կառավարողի մասին մենաշնորհային պայմանագիրը: 1902 թ. մարտի 15-ին ցարական իշխանությունը խախտեց փոխառությունից իրանական կառավարությանը տրամադրեց 1 մլն ռուբլու վարկ, իսկ ապրիլի 2-ին թողարկվեց տարեկան 5% տոկոսադրույքով, 75 տարի ժամկետով 10 մլն ռուբլի ընդհանուր արժողությամբ փոխառություն՝ 1900թ. տրամադրված փոխառության պայմանագրի ընդհանուր դրույթների համաձայն<sup>106</sup>:

Թեև ռուսական կառավարությունը բրիտանացիների ճնշումների արդյունքում ստիպված էղավ նահանջել իրանական նավթային ոլորտում մենաշնորհային դիրքեր զբաղեցնելու ծրագրերից, այնուամենայնիվ 1900-1902 թթ. ընթացքում շահին տրամադրված փոխառությունների արդյունքում Ռուսաստանին հաջողվեց ամբողջապես ֆինանսական կախվածության մեջ դնել իրանական կառավարությանը և գործնականում վերահսկողություն սահմանել Իրանի հյուսիսային մարսակետերի վրա:

#### ***գ) Ռուս-իրանական ապրանքաշրջանառությունը և անտրադանկան հաշվեկշիռը***

<sup>105</sup> Նույն տեղում:

<sup>106</sup> Справка о задолженности персидского правительства России, Се в «Исторический архив», 2011, № 1, с. 240-247:

Չնայած Թուրքմենչայի պայմանագրով ձեռք բերված առևտրային արտոնություններին և Իրանի հետ անմիջական հարևանությանը՝ մինչև XIX դարի 70-ական թթ. Ռուսաստանին չէր հաջողվում իրանական շուկայում տիրապետող դիրքեր հաստատել<sup>107</sup>: Իրանի հյուսիսային նահանգներում առևտրաշրջանառությունը խթանելու նպատակով XIX դ. ընթացքում ռուսական իշխանությունները պարբերաբար արգելում էին Ռուսաստանի վրայով այլ պետությունների Իրանի հետ տարանցիկ առևտուրը: Այն որոշ ընդմիջումներով գոյատևեց 1820-1883 թթ.<sup>108</sup>: 1883 թ. հունիսի 3-ին ռուսական կառավարությունը վերստին արգելեց այսրկովկասյան տարանցիկ առևտուրը<sup>109</sup>: Այդ արգելքը գործեց շուրջ քսան տարի՝ թույլ չտալով արտասահմանյան ապրանքատեսակների մուտքը Ռուսաստանով Իրան, ինչի արդյունքում Իրանի հյուսիսարևելյան նահանգներում ռուսական արտահանումը մենաշնորհային բնույթ սկսեց կրել<sup>110</sup>: Նշենք, որ Իրանից Ռուսաստան (մասնավորապես Բաթումով) տարանցիկը չփակվեց: Ռուսական տարանցիկով Իրանից արտահանվում էին հիմնականում՝ գորգեր, մետաքսի բոժոժ, ծխախոտ, նուշ, գետնախոշ և բուրդ<sup>111</sup>:

Ռուսաստանի արդյունաբերության արագ զարգացումը, ճանապարհային հաղորդակցության բարելավումը՝ մասնավորապես

<sup>107</sup> Сухоруков С.А., Иран между Британией и Россией, от политики до экономики, СПб., 2009, Алегейя, с. 93-96, с. 173, Русско-иранская торговля в 30-50-е годы XIX века. Сборник документов, сост. Н. Кузанова, М., 1984, с. 7.

<sup>108</sup> Այսրկովկասով ներդաշնակ ապրանքների տարանցիկ առևտուրը թույլատրվել է 1821թ.-1831թ. այնուհետև արգելվել է 12 տարով և կրկին թույլատրվել է 1846-1883 թթ.-ին: The Economic History of Iran 1800-1914, Էշվ. աշխ., էջ 143:

<sup>109</sup> Жалобова, Г. А., Правовое обеспечение российских внешнеэкономических интересов на рубеже XIX XX вв., Правоведение, 2005, № 1, с. 193-207, [http://urist.ucoz.ru/publ/kommercheskoe\\_pravo/zholobova\\_g\\_a\\_pravovoe\\_obespechenie\\_rossijskikh\\_vneshnetorgovykh\\_interesov\\_na\\_rubezhe\\_xix\\_xx\\_vv/22-1-0-994](http://urist.ucoz.ru/publ/kommercheskoe_pravo/zholobova_g_a_pravovoe_obespechenie_rossijskikh_vneshnetorgovykh_vykh_interesov_na_rubezhe_xix_xx_vv/22-1-0-994)

<sup>110</sup> Павлович М.П., (Мих. Вельтман), Империализм и борьба за великие железнодорожные и морские пути будущего, книга первая, часть вторая, изд. Второе, М., 1918, с. 27.

<sup>111</sup> Бобашин Н., Персия ее экономическое положение и внешняя торговля 1901-1923, Тифлис, 1923, с. 255.

անդրկասպյան և այսրկովկասյան երկաթուղիների կառուցումը, նպաստեցին Իրանում ռուսական արդյունաբերական ապրանքների մրցունակության բարձրացմանը: Բացի այդ, ցարական կառավարությունը ամեն կերպ խթանելով Իրան ռուսական ապրանքատեսակների արտահանումը՝ զգալի խթանադրամներ էր վճարում մաքսատուրքերի վերադարձման ձևով՝ հատկապես շաքարի և գործվածքեղեղի արտահանման համար:

XIX դ. վերջին ռուսական իշխանությունների հովանավորչական քաղաքականության շնորհիվ ռուս-իրանական անտրաշրջանառության մեջ արձանագրվեցին համեմատաբար ավելի բարձր ցուցանիշներ: Քննվող ժամանակաշրջանում իրանական գյուղատնտեսական ապրանքների հիմնական գնորդը Ռուսաստանն էր, որն աշխարհագրական և բնաօժիտադրումների հարմարավետության հետևանքով արտաքին անտրի բնագավառում գրադեցրեց Իրանի հիմնական գործընկերոջ դերը: Ռուսաստանի տնտեսական ներթափանցման ակտիվացմանը համընթաց Իրանի հյուսիսային նահանգների հումքային շուկան հարմարեցվեց ռուսական արդյունաբերության պահանջներին: Իրանից Ռուսաստանը ներմուծում էր բամբակ, բրինձ, ձուկ, չորացրած մրգեր, նուշ, կաշի, բուրդ, տնային կենդանիներ, գորգեր և այլն: Ռուսաստանն Իրան էր արտահանում հիմնականում բամբակյա գործվածքներ, շաքար, թեյ, ալյուր, թորած նավթ, երկաթ, ապակյա իրեր, մշակված կաշի և այլն: Ռուսաստանից Իրան արտահանվող ապրանքատեսակների մեծ մասը վաճառվում էր բավականին ցածր գներով<sup>112</sup>: Արդյունքում, ռուսական շաքարը, լուցկին, թորած նավթն Իրանում ավելի էժան էին, քան Ռուսաստանում, ինչն էլ ապահովում էր այդ ապրանքատեսակների բարձր սպառողականությունը<sup>113</sup>:

Յոթ տարվա ընթացքում (1883-1890 թթ.) ռուսական ներմուծումն Իրան 3.6 մլն ռուբլուց հասավ 10.9 մլն ռուբլու: Իրանից Ռու-

սաստան արտահանումը 7.7 մլն ռուբլուց՝ 10.8 մլն, ռուբլու<sup>114</sup>: Հասկանալի է, որ Ռուսաստանն այն եզակի երկրներից էր, որի հետ Իրանը մինչև XX դ. սկիզբն ուներ անտրային դրական հաշվեկշիռ: Թավրիզը, Ռեշտը, Էնզելին, Արդաբիլը, Աստրաբադը խոշոր անտրական այն կենտրոններն էին, որտեղ հաստատվում էին ռուս վաճառականները: Ռուս-իրանական անտրական գրեթե բոլոր գործարքներին ժամդրվում էին Իրանում և Այսրկովկասում հիմնված տարասեակ անտրային տները և ընկերությունները<sup>115</sup>: Աստրաբադականում, Գիլանում, Մազանդարանում, Խոյում և այլուր հիմնված հյուպատոսությունները նախանձախնդրորեն պաշտպանում էին ռուսահպատակ գործարարների և ձեռներեցների շահերն ու հետաքրքրությունները: Շատ հաճախ իրանաբնակ վաճառականները սեփական կառավարության հետապնդումներից խուսափելու նպատակով՝ նույնպես դիմում էին ռուսական իշխանությունների հովանավորչանը<sup>116</sup>: Նրանցում մեծ թիվ էին կազմում նաև հայ վաճառականները<sup>117</sup>: Առհասարակ ռուսական կառավարությունն Իրանում կայսրության տնտեսական ներթափանցումն ակտիվացնելու հարցում մեծ կարևորություն էր տալիս ինչպես ռուսահպատակ, այնպես էլ իրանահպատակ հայ անտրաարդյունաբերական շրջաններին, որոնց հանդեպ կառավարության պաշտոնական սեսակետն արտահայտվում էր հետևյալ ձևաչափով. «Հայերը Պարսկաստանում մեր տնտեսական ազդեցության օգտակար ուղեկիցներն են և միջնորդները անտրում»<sup>118</sup>: Հայ անտրային բուրժուազիային հաջողվեց վճռորոշ

<sup>112</sup> Տե՛ս աշխատանքի «Հավելված» բաժնում, Հավելված 2, 3:

<sup>113</sup> Whigham H. J., The Persian Problem: An Examination of the rival positions of Russia and Great Britain in Persia with Some Account of the Persian Gulf and Bagdad Railway, L., 1903, pp. 352-355.

<sup>114</sup> Сендос Р., Иранская буржуазия в конце XIX-начале XX века, М., 1974, с. 37.

<sup>115</sup> Չնայած իրան, որ վաճառականների Իրանում համարվում էին արտակալ դաս և Մարանի խրախուսում էր անուսուրբ, սակայն գույքի և սննդի տեսպահովության, միասնական ներքին շուկայի բացակայության և երկրի օվտոսեփականության պայմաններում, իրանական վաճառականությունը շատ հուճախաբար կրում էր ոչ միայն ճանապարհների ավազակային հարձակումներ, այլև նահանգապետերի, իշխանության տարբեր դեկավոր օղակների կամայականությունների գոն էր դաժան:

<sup>116</sup> АВВРМ. «Персидский стол», ф. 144, оп. 488, д. 603, л. 60-61.

<sup>112</sup> Geoffrey Drage, նշվ. աշխ., էջ 542:

<sup>113</sup> Գոհաստի Խ., նշվ. աշխ., էջ 225.

դիրքեր գրավել Ռուսաստան իրանական արտահանման այնպիսի կարևոր ճյուղերում, ինչպիսիք էին բամբակը, չոր միզգը, բուրդը, ձկնեղենը, թորած նալթը: Գործարար հասկանելիչների և տեղական շուկայի պահանջումների գերազանց խնացության շնորհիվ՝ նրանց հաջողվեց առաջատար դիրքեր գրառեցնել նաև ռուսական գործվածքեղենի ներմուծման բնագավառում: Եթե մինչև XIX դ. 80-ական թվականները հայ արևարական բուրժուազիայի գործարար կապերը ամուր էին արևմտաեվրոպական ընկերությունների հետ, ապա Իրան ռուսական տնտեսական ներթափանցման ուժեղացումը արդյունքաց նրանք հիմնականում կողմնորոշվեցին դեպի ռուսական արդյունաբերություն: Զգալի չափով հենց հայ առևտրաարդյունաբերական շրջանների եռանդուն գործունեության արդյունքում Ռուսաստանը դարձավ Իրանի գլխավոր առևտրական գործընկերը՝ հաջողությամբ մրցակցելով արևմտաեվրոպական տերությունների հետ<sup>119</sup>:

Իրանի հետ Ռուսաստանի առևտրական հարաբերությունները մինչև 1901 թ. իրավաբանորեն կարգավորվում էին 1828 թ. կնքված Թուրքմենչայի պայմանագրի «Հասուկ ակտի» III հոդվածով<sup>120</sup>, որով սահմանվել էր ներմուծվող և արտահանվող ապրանքների արժեքի համապատասխան (ad valorem) 5% մաքսատուրք թե՛ ռուսական, թե՛ իրանական ապրանքների համար<sup>121</sup>: Իրանին տրամադրվող ռուսական երկրորդ խոշոր փոխառության պայմաններից մեկի համաձայն՝ 1900 թ. «Նեխրանում «Հասուկ ակտի» III հոդվածով գործող մաքսային ռեժիմը վերանայելու նպատակով՝ բանակցություններ սկսվեցին Ռուսաստանի Ֆինանսների նախարարության խորհրդի անդամ Վ.Ց. Գոլուբի և Իրանի մաքսային համակարգի ղեկավարը Ջ. Նատաի միջև<sup>122</sup>:

1901թ. նոյեմբերի 9-ին ստորագրվեց ռուս-իրանական մաքսային համաձայնագիր, որը վավերացվեց և ուժի մեջ մտավ 1903թ.<sup>123</sup>: Նոր համաձայնագիրն Իրանի համար հաստատեց առևտրական հարաբերությունների բացառապես նոր սկզբունքներ: Նախ չեղյալ էր հայտարարվում «Հասուկ ակտի» III հոդվածով սահմանված 5% մաքսատուրքը, ինչպես նաև սահմանափակվում էին ներմուծման ընթացքում և ներքին ճանապարհների զանձվող տարատեսակ մաքսավճարների չափերը: Փոխարենը սահմանվեց մաքսատուրքի սակագների նոր համակարգ՝ արտահանվող և ներմուծվող յուրաքանչյուր ապրանքատեսակի համար հատուկ մաքսատուրքի չափ<sup>124</sup>: Ռուսական 30 ապրանքատեսակից, որոնք կազմում էին Իրան արտահանվող ապրանքների 9/10 մասը, 8 ապրանքատեսակ առհասարակ չէր զանձվելու, 11 ապրանքատեսակ զանձվելու էին ընդամենը 1 դրան սակագնով: Ռուսական արտահանման հիմնական ապրանքների գրեթե մեծ մասի համար սահմանվեց 5%-ից ցածր սակագին: Օրինակ՝ շաքարի համար, որը Իրան ռուսական արտահանման ամենակարևոր ապրանքատեսակն էր և կազմում էր ամբողջ արտահանման ծավալի 1/3-ը, 5%-ի փոխարեն սահմանվեց 3,4% մաքսատուրք, բամբակյա գործվածքների համար՝ 3,7% և այլն<sup>125</sup>: Միաժամանակ Ռուսաստանն սկսվեց Իրանից Ռուսաստան արտահանվող և ռուսական արդյունաբերության համար առաջնային կարևորություն ունեցող այնպիսի ապրանքատեսակների մաքսատուրքից, ինչպես բամբակը և բուրդը: Ռուսաստանին ընձեռնված առևտրային լայն արտոնություններն ամբողջվեցին համաձայնագրի գաղտնի հավելվածում, ըստ որի իրանական կառավարությանն արգելվում էր երկրի որևիցե այլ սահմանում հաստատել ավելի արտոնյալ սակագներ, քան ռուս-իրանական սահմանին է, և առանց Ռուսաստանի համաձայնության կնքել

<sup>119</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Ստեփանյան Մ., Հայ առևտրական բուրժուազիան Իրանի տնտեսական կյանքում, Եր., 1992:

<sup>120</sup> Մինչև Ռուսաստանում հոկտեմբերյան հեղաշրջումը Թուրքմենչայի պայմանագիրը չկորցրեց իր ուժը, բացառությամբ «Հասուկ ակտի» III հոդվածի, որը 1901թ. նոյեմբերի 9-ին փոխարինվեց ռուս-իրանական մաքսային համաձայնագրով:

<sup>121</sup> Зонштрадъ-Писковский А., Международные торговые договоры Персии, М., 1931, с. 177-179, Marvin L. Entner, Russo-Persian Commercial relations, p. 13.

<sup>122</sup> Зонштрадъ-Писковский А., նշվ. աշխ., էջ 166-168:

<sup>123</sup> Заинтересованных в торговле с Сербией вытекающих из них соглашений, заключенных Россией и иностранными государствами, под редакцией, Верховского Н. Петербург, 1915, с. 442-481.

<sup>124</sup> Зонштрадъ-Писковский А., նշվ. աշխ., էջ 183-185, The Economic History of Iran 1800-1914, նշվ. աշխ., էջ 148-149:

<sup>125</sup> Зонштрадъ-Писковский А., նշվ. աշխ., էջ 183-185:

որևիցե միջազգային պայմանագիր, որը կհակասեր 1901 թ. ռուս-իրանական համաձայնագրի դրույթներին<sup>126</sup>: Չնայած սրան, 1903թ. փետրվարի 9-ին Մեծ Բրիտանիային նույնպես հաջողվեց նմանատիպ մարտային պայմանագիր կնքել Իրանի հետ<sup>127</sup>:

Վերը նշված միջոցառումների արդյունքում XX դ. սկզբին Ռուսաստանը մենաշնորհային դիրք զբաղեցրեց Իրան շարքի, թորած նավթի, երկաթի, լուցկու, շինարարական հումքի ներմուծման մեջ: Բավականին կարճ ժամանակահատվածում՝ 1903-1906 թթ. ռուս-իրանական ապրանքաշրջանառությունն աճեց 83%<sup>128</sup>:

Ռուսումնասիրվող ժամանակաշրջանում, Իրանի արտաքին աստիճանաշրջանառության մեջ Ռուսաստանի հաշվեկշիռը 1901-1902 թթ. կազմեց 50%, իսկ 1910-1911 թթ.՝ 70%: Մեծ Բրիտանիայի և Հնդկաստանինը միասին՝ 22%<sup>129</sup>, որի արտահանումը սահմանափակվում էր երկրի հարավային շրջաններից ավելի բանկ, փոքրամասշտաբ և բնածափոխադրման տեսանկյունից ավելի դիմացկուն ապրանքատեսակներով (սփիռնի, արծաթի, մարգարտի, ռետինի, նուշի, խուրմայի և նավթի)<sup>130</sup>: Անգլո-իրանական ապրանքաշրջանառության տեսակարար հաշվեկշիռում մշտապես գերազանցում էր Մեծ Բրիտանիայի ներմուծումն Իրանի<sup>131</sup>:

Ռուսաստանի գերակայությունն իրանական շուկայում ոչ միայն ռուսական կառավարության ձեռնարկած մի շարք արդյունավետ միջոցառումների, այլ նաև աշխարհագրական հարևանության արդյունք էր: Բամբակը, բրինձը և այլ գյուղատնտեսական կուլտուրաները մշակվում էին Իրանի առավել բարեբեր հյուսիսային նահանգներում: Չրերի, նուշի, ձկան, բրդի, կենդանիների, հում կաշվի և այլնի բնածափոխադրումը կլիմայական և վառ ճանապարհների

<sup>126</sup> Նույն տեղում, էջ 186:

<sup>127</sup> Geoffrey Drage, նշվ. աշխ., էջ 537:

<sup>128</sup> Տե՛ս աշխատանքի «Հավելված» բաժնում, Հավելված 2, 3:

<sup>129</sup> Бобынин Н., նշվ. աշխ., էջ 114-204, 233-241:

<sup>130</sup> The Economic History of Iran 1800-1914, նշվ. աշխ., էջ 137:

<sup>131</sup> Geoffrey Drage, նշվ. աշխ., էջ 542-543:

պատճառով փչանում էին և դրանց արտահանումը ավելի հարմար էր Կասպից ծովով, քան Պարսից ծոցով<sup>132</sup>:

Եվրոպական տերությունների և Ռուսաստանի հետ անհամամասն անտուրը բացասաբար էր անդրադառնում իրանական տնտեսության վրա: Երկրում հաճախ էին կրկնվում տնտեսական ճգնաժամերը, որոնց պայմաններում սահմանափակվում էր ազգային կապիտալների կուտակման հնարավորությունը, դժվարանում՝ պետության կողմից օտարերկրյա փոխառությունների և վարկերի դիմաց տոկոսների մարումը: Արձանագրվում էին կտրուկ գնաճեր և աստիճանական տների սեանկացումներ: Չնայած ներմուծման նկատմամբ արտահանման ավելի արագ աճի տեմպերին՝ Իրանի աստիճանային հաշվեկշիռը շարունակում էր մնալ բացասական<sup>133</sup>: Բնական է, որ այս ճեղքվածքը լրացվելու էր արտաքին փոխառությունների և օտարերկրյա տերությունների մենաշնորհներ տրամադրելու հաշվին:

#### **դ) Ճանապարհաշինության ոլորտի ծրագրերը**

Թե՛ Մեծ Բրիտանիան, թե՛ Ռուսաստանը հակազդում էին Իրանում միմյանց երկաթուղային ծրագրերին, քանի որ դրանց շնորհիվ Ռուսաստանը կարող էր թափանցել բրիտանական ազդեցության ոլորտ, իսկ Բրիտանիան՝ ռուսական: Խոչընդոտելով Իրանում երկաթուղաշինությանը՝ այս տերություններն Իրանի տարերային ճանապարհազրկության պայմաններում, մրցակցում էին խճուղային ճանապարհների և ջրային հաղորդակցության ոլորտներում:

1893 թ. Պուլկովների «Պարսկական ապահովագրական և տրանսպորտային ընկերությունը»՝ Ղազվինից Էնզելիի ճոց անվային ճանապարհի կառուցման իրավունք էր ստացել, իսկ 1895 թ. ձեռք էր բերել նաև վերոնշյալ ճանապարհի շարունակությունը դեպի Թեհրան և Համադան կառուցելու իրավունք: Ճանապարհի կառուցման նպատակով հիմնվեց «Էնզելի-Թեհրան ճանապարհային ընկերություն»-ը<sup>134</sup>:

<sup>132</sup> The Economic History of Iran 1800-1914, նշվ. աշխ., էջ 138, Geoffrey Drage, նշվ. աշխ., էջ 543:

<sup>133</sup> Նույն տեղում:

<sup>134</sup> Новая история Ирана, Христоматия, նշվ. աշխ., էջ 147:

1895 թ. ընկերությունը ձեռք բերեց Էնգելիի նավահանգստի բարեկարգման, ինչպես նաև Ղազվի-Չամդան ճանապարհի շահագործման, իսկ 1903 թ. Ռեշտ-Էնգելի ճանապարհի կառուցման և շահագործման մենաշնորհային իրավունք:

Մինչև Մուեզի ջրանցքի բացումը (1869 թ.) անգլիացի ձեռնարկատերերը որոշակի հետաքրքրություններ էին դրսևորում անդրիրանական երկաթգծի կառուցման հարցում, սակայն Հնդկաստանի հետ ջրային հարմարավետ կապ հաստատելուց հետո բրիտանական իշխող վերնախավը փոխեց իր մտադեմքները՝ էիմական նպատակ դարձնելով Իրանի կենտրոնական շրջանները Պարսից ծոցին միացնող ջրային և խճուղային ճանապարհների կառուցումը: Բրիտանական դիվանագիտությունը ջանքեր չէր խնայում Իրանի միակ նավարկելի Քարուն գետի վրա նավարկության մենաշնորհի ստանալու համար: Քարունը Պարսից ծոցից Իրանի կենտրոնական շրջանները ներթափանցելու ամենահարմարավետ ուղին էր: Արաբական ցեղերով բեռնակցված այս շրջանների կառավարիչներին մշտապես հաջողվում էր խաղարկել թուրք-իրանական հակասությունները և գործնականում պահպանել անկախ կարգավիճակ<sup>135</sup>: Այս իրողությունը բավականին դյուրին էր դարձնում անգլիացի դիվանագետների գործունեությունը, որոնք կաշառքների և ճնշումների օգնությամբ, անտեսելով իրանական կառավարության կարծիքը՝ բազում արտոնություններ էին ստանում արաբական ցեղերի առաջնորդներից<sup>136</sup>: 1888 թ. հոկտեմբերին շահը թեպետ պաշտոնապես թույլատրեց Քարուն գետի վրա բոլոր օտարերկրյա անտարանական նավերի նավարկությունը<sup>137</sup>, սակայն կարճ ժամանակ անց օգտվելով Օսցի շրջանում իր ունեցած ազդեցությունից՝ Բրիտանիան դուրս մղեց բոլոր մրցակիցներին և «Լինչ եղբայրներ» ընկերության միջոցով մենաշնորհեց հիշյալ գետի վրա նավարկության իրավունքը<sup>138</sup>:

<sup>135</sup> Lawrence G. Potter, *The Consolidation of Iran's frontier on the Persian Gulf in the Nineteenth Century, War & Peace in Qajar Persia, Implications Past and Present*, Ed. By Farmanfarmaian R., L. & N.York, 2008, pp. 125-126.

<sup>136</sup> АВИРП, «Персидский стол», ф. 144, он. 488, л. 4064, л. 334-335.

<sup>137</sup> «*تذکره عبدالصمد زین کوب، روزگاران، تاریخ ایران از آغاز تا سقوط سلطنت پهلوی، ص ۸۰۹*».

<sup>138</sup> Shahbaz Shahnavaz, *Britain and the opening up of South-West Persia 1880-1914, A study in imperialism and economic dependence*, L. & N.York, 2005, pp. 7-11, Abbas

1872 թ. բրիտանական հպատակ բարոն Յուլիուս դե Մեյթերի ընկերությանն Իրանի ողջ տարածքում երկաթուղային, խճուղային ճանապարհների կառուցման վերաբերյալ տրամադրված մենաշնորհային իրավունքն իրանական կառավարությունը 1873 թ. Ռուսաստանի ճնշումների ներքո՝ ստիպված էր չեղյալ հայտարարել<sup>139</sup>:

Միաժամանակ Ռուսաստանը փորձեց Իրանում երկաթգծերի կառուցման նախաձեռնությունն իր ձեռքը վերցնել: Այս առումով ուշագրավ է կովկասյան երկաթգծի հեղինակներից մեկի՝ ինժեներ բարոն Փոն Յուլյենիակի նախադիմքը, որը 1873 թ. Ռուսաստանի արտոգործնախարար Ա. Գորչակովի աջակցությամբ առաջարկվեց շահին: Այն նախատեսում էր երկաթգծի կառուցել Ջուլֆայի (Ջուլա) օտական սահմանից մինչև Թավրիզ<sup>140</sup>: Թեև երկարատև դիվանագիտական պայքարից հետո 1874 թ., շահը ստորագրեց այն կառուցելու վերաբերյալ թույլտվությունը, սակայն ֆինանսական դժվարությունների և անգլիացիների դիմադրության պատճառով՝ օտական կողմը նախագծին հետագա ընթացք չտվեց:

Այսպիսով, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանն Իրանը մատնում էին տարերային ճանապարհագրության: Նրանք մի կողմից խոչընդոտում էին միմյանց երկաթուղային ծրագրերին, իսկ մյուս կողմից միասնաբար հանդես էին գալիս եվրոպական մյուս պետությունների կողմից՝ դաջարական կառավարության առաջարկվող երկաթուղային նախագծերի դեմ<sup>141</sup>: Այս առումով թերևս բացատրություն էր կազմում 1888 թ. բելգիացիների կողմից կառուցված, ռազմավարական էական նշանակություն չունեցող Թեհրանը Շահ Աբդ ալ-

Amanat, Էշվ. աշխ., էջ 420-422, Экспедиция английского империализма в Иран в конце XIX - начале XX в., М., 1981, с. 43.

<sup>139</sup> Հստ պարմագրի II հոդվածի Մեյթերը իրավունք էր ստանում կառուցել Կասպից ծովը Պարսից ծոցի հետ կապող անդրիրանական երկաթուղի, որի ճրուղավորումները կարող էին միանալ Իրանի սահմանակից պետությունների (այդ թվում նաև Ռուսաստանի), ինչպես նաև Եվրոպա և Հնդկաստան տանող երկաթգծերին: Մենաշնորհի մասին մանրամասն տե՛ս АВИРП, «Персидский стол», 1872, л. 2994, л. 22.34, The Economic History of Iran 1800-1914, Էշվ. աշխ., էջ 177-184.

<sup>140</sup> The Economic History of Iran 1800-1914, Էշվ. աշխ., էջ 185.

<sup>141</sup> Firuz Kazem-Zadeh, Էշվ. աշխ., էջ 130-134, The Economic History of Iran 1800-1914, Էշվ. աշխ., էջ 183, Бодинав М., Էշվ. աշխ., էջ 536:

Ազիմ սրբավայրին կապող 6 մղոն (9,6 կմ.) երկաթուղու ռուեցող երկաթգիծը, որի շինարարությունն իրագործող բելգիական բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի 3/4-ը պատկանում էր ռուս գործարար Յ. Պոլյակովին<sup>142</sup>:

Տնտեսապես ավելի թույլ Ռուսաստանը, որի երկաթուղային շինարարությունն իր երկրում իրականացվում էր օտարերկրյա, մասնավորապես՝ ֆրանսիական կապիտալի շնորհիվ, աշխատում էր հետաձգել լայնահուն երկաթուղային շինարարության գործընթացն Իրանում:

Կարևոր է նշել, որ ռուսական գործարար շրջանների մոտեցումներն Իրանի երկաթուղային ոլորտ կապիտալներ արտահանելու նկատմամբ ևս միանշանակ չէր: XIX դ. երկրորդ կեսից սկսած՝ Մերձավոր և Միջին Արևելքում, հատկապես Իրանում, երկաթուղային շինարարության հարցի շուրջ, Ռուսաստանի արդյունաբերական բուրժուազիան տարբեր խմբերի միջև առկա էին սուր հակասություններ, իրարամերժ տեսակետներ, որոնք անխուսափելիորեն իրենց անդրադարձն էին ունենում Իրանում երկաթուղաշինություն ձեռնարկելու ուղղությամբ ցարական կառավարության որոշումների վրա<sup>143</sup>: Ռուսաստանի ծանր արդյունաբերության ներկայացուցիչները, որոնք սերտորեն համագործակցում էին ֆրանսիական մետալուրգիական կապիտալի հետ, ակնկալում էին բավականին մեծ միջնորդավճարներ ստանալ իրանական երկաթուղային շինարարությունից: Ռուսական սահմաններից մինչև Պարսից ծոց ձգվող անդրիրանական երկաթուղի կառուցելու նպատակով ձեռնարկ չափազանց գայելովիչ էր վերջիններիս համար: Ուստի XIX դ. վերջին կեսից նպատակաուղղված փորձեր սկսեցին ձեռնարկել իրանական կառավարությանից երկաթուղային մենաշնորհային իրավունքներ ստանալու ուղղությամբ: Պատկերն այլ էր թեթև արդյունաբերության առաջա-

տարների շրջանում, որոնք գերազանցապես դեմ էին Իրանի երկաթուղային ոլորտում ներդրումներին, քանի որ ճանապարհագրության պայմաններում երանք կարող էին երկարաձգել հյուսիսիրանական շուկայում ձեռք բերված մենաշնորհային դիրքերը<sup>144</sup>:

Պետև 1887 թ. սեպտեմբերին Թեհրանում ռուսական դեսպանորդ Ն. Ղուզորուկիի դիվանագիտական ճնշումների շնորհիվ շահը գրավոր պարտավորություն ստանձնեց, Իրանում օտարերկրյա ընկերությունների կողմից երկաթուղային և ջրային ճանապարհների վերաբերյալ մենաշնորհները թույլատրել միայն Ռուսաստանի հետ նախապես համաձայնեցնելուց հետո: Մակայն մեկ տարի անց, երբ խախտելով իր իսկ պարտավորությունը, շահը հաստատեց Քարուն գետի նավարկության իրավունքը՝ 1889 թ. փետրվարին Ղուզորուկին շահին ներկայացրեց իր կառավարության նոր առաջարկը, որը կոչված էր հավասարակշռել Քարունի մենաշնորհային իրավունքը: Արդեհ մարտին ռուսական կառավարությունը շահական կառավարությունից գրավոր պարտավորություն ստացավ, որով վերջինս Իրանում երկաթուղիների կառուցման համար հինգ տարի ժամկետով բացարձակ մենաշնորհ էր տրամադրում միայն ռուսական ընկերություններին<sup>145</sup>: Նույն թվականին ռուս հայտնի գործարարներ Խոմյակովը, Կորժը և ինժեներ Պալայշկովսկին իրանական կառավարությունից անմիջապես փորձեցին ստանալ Ռեշտ-Չահբար երկաթգիծ կառուցելու մենաշնորհը, որը նախատեսում էր Ա. Պետերբուրգից ռուսական երկաթուղիներն Իրանի տարածքով կապել Պարսից ծոցին<sup>146</sup>:

Թեև ռուսական իշխանությունները նախազգի նկատմամբ որոշակի ակտիվություն ցուցաբերեցին, սակայն դիվանագիտությունն ընտրեց հարցի լուծման միանգամայն այլ ճանապարհ: Անդրիրանական երկաթգիծը մասնավոր կազմակերպությունների կողմից կառուցմանը դեմ էին կառավարության այնպիսի առանցքային գերատեսչությունների ղեկավարներ, ինչպես արտաքին գործերի նախարար Ն. Գիրսը, Արևելյան դեպարտամենտի տեսրեկ Ի. Ջինովկը և

<sup>142</sup> Томар М., Экономическое положение в Персии, СПб., 1895, с. 102, The Economic History of Iran 1800-1914, հշվ. աշխ., էջ 156:

<sup>143</sup> Ст. у Бестужев И., Борьба в России по вопросам внешней политики 1906-1910, М., 1961, с. 67-69.

<sup>144</sup> Նույն տեղում:

<sup>145</sup> Firuz Kazem-Zadeh, հշվ. աշխ., էջ 162:

<sup>146</sup> Павловъ М.П., (Мих. Вельтман), հշվ. աշխ., էջ 13-14:

Ֆինանսների նախարար Բ. Վիշնեգրադսկին: Ըստ նրանց՝ ռազմավարական մեծ կարևորություն ենրկայացնող անդրիրանական երկաթուղին և հատկապես նրա հյուսիսային հատվածը նպատակահարմար կլիներ կառուցել միայն պետական միջոցների հաշվին և չպետք է կենտրոնանար մասնավոր կապիտալի ձեռքում<sup>147</sup>:

1890 թ. փետրվարի 4-ին Բրանում երկաթուղային շինարարության հարցը քննելու նպատակով հրավիրվեց Հատուկ խորհրդակցություն: Բ. Ջինտվի տեսակետների՝ անդրիրանական երկաթգիծը չէր կարող մրցակցել Մուեզի ջրանցքի հետ: Երկաթգծի հարավային հատվածը վերահսկելու և պաշտպանելու նպատակով Ռուսաստանին հարկավոր էր Պարսից ծոցում ռազմածովային ենթակետ հիմնել, սակայն հաշվի առնելով անվտանգ և ազդեցությունը Մոցում՝ նշված հարցը պահանջում էր լուրջ քննություն և հետևողական քաղաքականություն,- նշում էր նա: Ձեռնվելը գտնում էր, որ երկաթուղային հարցը քննելիս՝ ռուսական կառավարությունը նախ և առաջ պետք է ուշադրություն դարձներ հյուսիսային Բրանի վարչական կենտրոն Ատրպատականի հետ հետահաղորդակցությանը: Այս տեսակետն ինքն ռազմավարական և տնտեսական լուրջ նշանակություն կունենար Կովկաս-Թավրիզ երկաթգիծը, սակայն տվյալ փուլում քանի դեռ Այսրկովկասն ամբողջապես կապված չէր ռուսական երկաթուղային ցանցին, երկաթծի կառուցման արդյունավետությունը նվազում էր: Ստեղծված իրավիճակում նպատակահարմար կլիներ Ջուլֆա-Թավրիզ մայրուղու շինարարությունը: Ըստ նրա. «Ռուսաստանն իր բոլոր ջանքերը պետք է կենտրոնացներ որպեսզի Պարսկաստանում երկաթուղիների կառուցումն ընդհանրապես հետաձգվեր»<sup>148</sup>:

Արդյունքում, ռուս գործարարների կողմից Բրանին առաջարկվող երկաթծիների կառուցման գրեթե բոլոր ծրագրերը՝ 1890 թ. փետրվարի 4-ին գումարված «Հատուկ խորհրդակցության» կողմից կայացված որոշմամբ հետաձգվեցին<sup>149</sup>:

<sup>147</sup> Англо-русское соперничество в Персии в 1890-1906, "Красный архив", т. I (56), 1933, с. 35-45.

<sup>148</sup> Առյւն տեղում, էջ 44-48:

<sup>149</sup> Առյւն տեղում:

Նույն թվականի նոյեմբերի 12-ին կնքվեց ռուս-իրանական պայմանագիրը, ըստ որի՝ Բրանը պարտավորվում էր տասը տարվա ընթացքում չկառուցել և այլ ընկերությունների ու մասնավոր անձանց չտրամադրել մենաշնորհային իրավունքներ՝ Բրանում երկաթուղային ճանապարհներ կառուցելու համար<sup>150</sup>:

Տվյալ պայմանագիրը փաստացի հավասարազոր էր Բրանում երկաթուղաշինության արգելքի: 1900 թ. Բրանում երկաթուղիների կառուցման արգելքը հատուկ պայմանագրով երկարաձգվեց նույն տարով<sup>151</sup>: Այսպիսով, Բրանը մինչև 1910 թ. առանց Ռուսաստանի համաձայնության իրավունք ուներ չեփակում չէր Բրանում երկաթուղիներ կառուցել և այդ իրավունքը տրամադրել այլ պետությունների:

XIX դ. վերջին տասնամյակներին գերտերությունների հերթապակեան երկաթուղային ծրագրերն էլ ավելի բարձրացրին Բրանի տնտեսական և աշխարհաքաղաքական նշանակությունը: Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կողքին հանդես եկավ Գերմանիան, որի ծավալապաշտական ծրագրերն Բրանում սերտորեն կապվեցին Բաղդադի երկաթուղու շինարարության հարցի հետ: Նախատեսվում էր, որ այդ երկաթուղու ճյուղավորումները կառուցվելու են նաև դեպի Բրան, ինչը մեծ սպառնալիք էր ներկայացնելու և՛ ռուսական, և՛ բրիտանական ռազմավարական ու առևտրատնտեսական շահերին: Օրինակալի է, որ Բրանի երկաթուղաշինարարության նկատմամբ թե՛ Ռուսաստանը, թե՛ Մեծ Բրիտանիան իրական հետաքրքրություն սկսեցին ցուցաբերել Գերմանիայի կողմից Բաղդադի երկաթուղու շինարարությունը նախաձեռնելուն գուզբեթաց: XIX դ. վերջին «Անատոլիական երկաթուղիներ գերմանական ընկերության» Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի ձեռնարկատերերի միջև թե՛ մրցապայքար ծավալվեց Փոքր Ասիայում և Սիջազետում՝ Բաղդադից մինչև Պարսից ծոց երկաթուղային ճանապարհ կառուցելու համար մենաշնորհային իրավունք ստանալու ուղղությամբ, որն

<sup>150</sup> Бондаревский Г., Багдадская дорога и проникновение германского империализма на Ближнем Востоке (1888-1903), Ташкент, 1955, Geoffrey Drage, Russian Affairs, New York E.P. Dutton & CO., London: John Murray; 1904, p. 537.

<sup>151</sup> Англо-русское соперничество в Персии в 1890-1906, "Красный архив", т. I (56), 1933, с. 34:

ի վերջո Օսմանյան կայսրությունը տրամադրեց գերմանացիներին<sup>152</sup>: 1899-1903 թթ. ժամանակահատվածը առանձնանում էր երանով, որ Բաղդադի երկաթուղու կառուցման առանցքում ի հայտ եկան այնպիսի հարցեր, ինչպես՝ ձեռնարկի ֆինանսավորումը և վերջնական կտրի որոշումը, ինչը սերտորեն կապվեց նաև Իրանի երկաթուղաշինության հարցի հետ:

Ֆինանսների նախարար Վիտտեն հիմնվելով տևտեսական ծավալման հետավորարենյան փորձի վրա՝ սկսեց հակվել իրանական երկաթուղաշինության ոլորտում պետական կապիտալներ ներդրելու գաղափարին: 1889-1900 թթ. ինժեներ Վ. Սախանսկիին պաշտոնապես հանձնարարվեց ուսումնասիրություն անցկացնել Իրանում: Արդյունքում Սախանսկին կառավարությանը ներկայացրեց Այսրկովկասի ռուսական երկաթգիծը Պարսից ծոցին կապող անընդհատական երկաթգծի երեք նախագիծ<sup>153</sup>: Անգլիացիներին առավել շատ անհանգստացնում էր ռուսական Անդրկասպյան երկաթգիծը Պարսից ծոցին կապող մեկ այլ նախագիծ, որը սկիզբ էր առնելու Աշխաբադից, Բիրջանով և Քերմանշահով անցնելով ավարովելու էր Բանդար-Աբբասում: Նախատեսվում էր նաև ճյուղավորում կառուցել Բիրջանից դեպի Նարաթաբադ (Միսթան)<sup>154</sup>:

Սակայն չկարողանալով համապատասխան միջոցներ հայթայթել ռուսական կառավարությունը նախ կրկին երկարաձգեց Իրանում երկաթուղիների կառուցման արգելքը, ապա նոր թափ հաղորդեց Իրանում խճուղային ճանապարհների կառուցմանը: Մինչև 1902 թ. ռուսական զանձարանը գնեց նաև «Էնգելի-Թեհրան ճանապարհային ընկերության» բաժնետոմսերի 77 %-ը, ինչը թույլ տվեց Ֆինանսների նախարարությանը վերանսկել Էնգելի-Թեհրան ճանա-

պարհային ընկերության գործունեությունը: 1902 թ. Հաշվավարկային բանկը ստացավ նաև ռուս-իրանական սահմանից (Ջուլֆա) մինչև Թավրիզ և Թավրիզից մինչև Ղազվին խճուղային ճանապարհի կառուցման և շահագործման իրավունք և հիմնեց «Թավրիզի ճանապարհային ընկերությունը»<sup>155</sup>: Ճանապարհի առաջին մասի շինարարությունը մեկնարկելու էր 1904 թ. մարտից և ավարտվելու էր 1910 թ.: Երկրորդ հատվածի շինարարությունը սկսվելու էր 1906 թ. մարտից և նախատեսվում էր ավարտին հասցնել 1912 թ.<sup>156</sup>: Այսպիսով, 1905 թ. առաջ Ռուսաստանի ֆինանսների նախարարությունն իր ձեռքում կենտրոնացրեց նաև Իրանի հյուսիսը կենտրոնին կապող հիմնական խճուղային ճանապարհները, որոնք գերատեսչության վերահսկողության տակ մնացին մինչև 1917 թ.:

1895-1910 թթ. Ռուսաստանն Իրանում ճանապարհաշինության ոլորտում ներդրեց մոտավորապես 21 մլն ռուբլի<sup>157</sup>: 1912-1913 թթ. իրանական կառավարությանը հատկացվող նոր փոխառությունների շրջանակներում Հաշվավարկային բանկը ձեռք բերեց նաև Ջուլֆա-Թավրիզ երկաթուղային ճանապարհի շինարարության մեծաշնորհը, իսկ 1913 թ. գարնանը նույնպես Թավրիզի երկաթգծի շինարարությունը սկսվեց I Աշխաբիամարտի տարիներին, սակայն ավարտին չհասցվեց<sup>158</sup>: Նաթ էդ-Դին շահի օրոք ծնունդ առած անդրիրանական երկաթուղի կառուցելու ծրագրերը հնարավոր դարձավ կյանքի կոչել միայն 1926 թ.-ին՝ Ռեզա շահ Փահլավի կառավարման տարիներին:

<sup>152</sup> Բաղդադի երկաթուղու մեկաշնորհային մրցավայրարի մասին մանրամասն տե՛ս Շուտտ Ա., Экономия Германии на Ближнем Востоке в конце XIX века, М., 1971, The Diplomacy of the Bagdad Railway 1890-1914, Göttingen, 1932; Turkey, the Great Powers, and the Bagdad Railway: a study in imperialism, by Earle, Edward Mead, 1894-1934, N. York, 1966.

<sup>153</sup> 1) Այսպ-Թեհրան-Սպահան-Բուշեյր, 2) Այսպ-Շիրազ-Բանդար-Աբբաս, 3) Այսպ-Թեհրան-Ցեղ-Քերման-Չահրաբ: Паклович М.И., (Мух. Вельяман), ևզվ. աշխ., էջ 15:

<sup>154</sup> Geoffrey Drage, ևզվ. աշխ., էջ 537-538:

<sup>155</sup> Էնգելի-Թեհրան ճանապարհի (333 մղոն) կառուցման համար Ռուսաստանը ծախսեց 7 564 213 ռուբլի, Ղազվին-Համալան ճանապարհի (217 մղոն)՝ 2 468 867 ռուբլի, իսկ Ջուլֆա-Թավրիզ ճանապարհի (124,4 մղոն) ծախսը կազմեց 4 604 729 ռուբլի: Кулагина Л., Россия и Иран, ևզվ. աշխ., էջ 120:

<sup>156</sup> Анианчи Б. В., Российское самодержавие и вывоз капиталов, ևզվ. աշխ., էջ 182, Geoffrey Drage, ևզվ. աշխ., էջ 528:

<sup>157</sup> Кулагина Л., Россия и Иран, ևզվ. աշխ., էջ 149:

<sup>158</sup> Анианчи Б. В., Российское самодержавие и вывоз капиталов, ևզվ. աշխ., էջ 18:

Վերլուծելով XIX դարավերջին և XX դարակզրին Իրանում Ռուսաստանի վարած ֆինանսատնտեսական քաղաքականությունը կարելի է եզրակացնել, որ այդ քաղաքականության առանձնահատկությունն այն էր, որ ինչպես աեստրի, այնպես էլ կապիտալների արտահանման բնագավառում հիմնական դերակատարը պետությունն էր, ինչը նախ՝ պայմանավորված էր Ռուսաստանի տնտեսության հետամնացությամբ և մասնավոր կապիտալի թույլ զարգացման զորոններով: Ի տարբերություն տնտեսապես ավելի ուժեղ և քաղաքական առումով կայուն Մեծ Բրիտանիայի, որն առավելապես առաջնորդվում էր շահութաբերության ու ազատ մրցակցության սկզբունքով, որի կապիտալների արտահանվում էին ֆինանսական հզոր կազմակերպությունների կողմից, ինչն էլ տնտեսական կայուն բազա էր ապահովում պետության արտաքին քաղաքական ծավալապաշտական ծրագրերի համար, ցարական Ռուսաստանի քաղաքականությունն Իրանում հետապնդում էր հիմնականում իր մրցակցին հակազդելու նպատակ: Այսուհանդերձ, թեև Իրանի նկատմամբ Ռուսաստանին և Մեծ Բրիտանիայի կենսագործած քաղաքականությունները՝ ներթափանցման ռազմավարությունների առումով նախանորեն տարբեր էին, Ռուսաստանին հաջողվեց այդ մրցակցության առաջին փուլում քաղաքական և տնտեսական գերակայություն հաստատել Իրանում և գործնականում վերահսկողության տակ առնել իրանական տնտեսության կարևոր ռազմավարական մի շարք ոլորտներ:

### 3. Պարսկական կազակական բրիգադը որպես Ռուսական կայսրության քաղաքական ազդեցության լծակ Իրանում

Ռուսաստանի տնտեսական ներթափանցման հետ զուգահեռ մեծանում էր նաև նրա քաղաքական ազդեցությունն Իրանում, որի համար գլխավոր լծակ հանդիսացավ այսպես կոչված Պարսկական կազակական զուամարտակը:

Իրանում եվրոպական տիպի կանոնավոր բանակ կազմավորելու գործնական առաջին փորձերը ձեռնարկվել են XIX դ. առաջին կեսին, Ֆաթհալի շահի օրոք, թագածառանց Աբբաս-Միրզայի կողմից<sup>159</sup>: Աջաբարական կանոնավոր բանակը տարբեր ժամանակահատվածներում սնարգել են ֆրանսիացի, անգլիացի, ավստրիացի, իտալացի ռազմական հրահանգիչները<sup>160</sup>: Սակայն ռուս-պարսկական երկու պատերազմները, 1837-38 թթ. Հերաթի արշավանքը, 1856-1858 թթ. անգլո-պարսկական պատերազմը բանակը կանգնեցրին ամբողջական կազմավորման վտանգի առաջ<sup>161</sup>:

Իրանում կանոնավոր բանակ ստեղծելու հերթական փորձը ձեռնարկվել է Նասր էլ Դին շահի օրոք՝ Եվրոպա կատարած նրա շրջագայությունների արդյունքում: Տեսակետորեն Նասր էլ Դին շահը ողջունում էր ռազմական ոլորտի բարեփոխումները, սակայն նա չուներ ո՛չ միջոցներ, ո՛ր չ էլ քաղաքական կամք այդ գաղափարը լիարժեքորեն իրականացնելու համար<sup>162</sup>:

Թեև XIX դարի երկրորդ կեսին Իրանի կանոնավոր բանակի մնացորդները բաղկացած էին հեծելազորից, հրետանային զորամասերից և հետնակից և հավաքագրման ցուցակի համաձայն հաշվվում էր 150-200 հազար զինվոր, սակայն երանց թիվը չէր գերազանցում 50 հազարը: Պատկերը նույնն էր նաև դարավերջին: 1899 թ. երկրի տարբեր նահանգներում հաշվառված 80 հազարանոց կանոնավոր բա-

<sup>159</sup> Մինչև XIX դ. սկիզբը իրանական կանոնավոր բանակ որպես աղյուսին գոյություն չուներ: Իրանական գործը գերազանցապես կազմված էր անկանոն ավստակական աշխարհագրից և քոչվոր ցեղերի հեծելազորային ջոկատներից, որոնք անիրավի շտաբային դեպքում, պատերազմներից առաջ, շահական ֆեոդալավ, հավաքագրվում էին խաների և նահանգապետների կողմից: Տե՛ս Կրասնյա Օ., Становление иранской регулярной армии в 1879-1921 гг., По материалам архивов военной миссии, М., с. 44-56.

<sup>160</sup> РГВИА, ф. 446, Персия, д. 39, л. 14.

<sup>161</sup> Рихсиева Н., К истории иранских казачьих частей (по архивным материалам), Восточноеведение (литературоведение, история), сборник научных трудов N 564, Ташкент, 1978, с. 129.

<sup>162</sup> Cronin S., *Bilding a New Army: Military Reforms in Qajar Iran, War and Peace in Qajar Persia, Implication Past and Present*, Edited by Roxan Farmanfarmaian, History and Society in the Islamic world, USA, Canada, 2008, p. 63.

նակի զինվորներից գործնականում ծառայության մեջ էր միայն 40 հազարը: Մնացած զորամասերի զինվորները հիմնականում արձակուրդում էին, իսկ զորամիավորումները գոյություն ունեին միայն թղթի վրա: Հստակ սահմանված չէր ռազմական ծառայության կարգը: Ռազմական օրենսդրություն որպես այդպիսին չկար: Ղաջարական բանակի կանոնավոր նյութական մատակարարումը կառույցի ամենախոցելի մասն էր<sup>163</sup>: Զինծառայողներին կառավարությունը կամ առեսարարակ չէր վարձատրում, կամ վարձատրում էր հանդիսավոր արարողություններին և մարտական պատրաստվածության բերելու անհրաժեշտությունից ելնելով<sup>164</sup>: Այսպիսով, զինվորը վարձատրություն, պահոց և հանդերձանքի պարագաներ գրեթե չէր ստանում և ստիպված էր ինքնուրույն հոգ տանել սեփական կյանքի պահպանման: Այդ կապակցությամբ ցածրաստիճան սպայական կազմը շատ հաճախ դիմում էր մեքենայությունների և որոշակի գումարի դիմաց արձակուրդ էր ստանալ զինվորներին, որոնք զբաղվում էին արհեստագործությամբ, առևտրով, դրամափոխությամբ կամ պարզապես թալանով<sup>165</sup>:

Գոյություն ուներ զինվորական աստիճաններ շնորհելու առանձնահատուկ կարգ: Բացի այն, որ բարձր սպայական կոչումները փոխանցվում էին ժառանգաբար, իրանական բանակի կառավարման համակարգի հիմքում ընկած էր նաև զինվորական կոչումները գնելու ձևավորված ավանդույթը<sup>166</sup>: Չնայած երկրում գործող հատուկ կենտ ռազմատուժական հաստատությունների առկայությանը՝ սպայական կազմի մարտական պատրաստվածությունը և զինելիքների մակարդակն, ընդհանուր առմամբ, չէին ապահովում պատշաճ ցուցանիշներ<sup>167</sup>: Խնդրի բարդական տեսանկյունից նույնպես պարզ է դառնում, որ նման պայմաններում հայրենիքի նկատմամբ պարտքի

և զինվորական արժանապատվության և կարգապահության մասին խոսք անգամ չէր կարող լինել:

Պետև XIX դ. 70-ական թվականներին Ռուսաստանի ռազմաբարձրական շրջանները մեծ կարևորություն սկսեցին տալ Իրանում ռուսական ռազմական ներկայության գործունի, երբ Ռուսաստանը փորձում էր առավելագույնս ամրապնդել բարձրական իր դիրքերն Իրանում՝ ի հակակշիռ Մեծ Բրիտանիայի տնտեսական հզորությանը: Այդ նպատակով Կովկասյան ռազմական շրջանի Գլխավոր շտաբի բարձրաստիճան սպայական կազմից Իրան էին գործուղվում հատուկ գործակալներ, ովքեր պարտավոր էին ոչ միայն ճշգրիտ և զաղտնի տեղեկություններ հավաքել Իրանի զինված ուժերի (թվաքանակի, կազմի, տեղակայման, սպառազինման և այլնի) մասին, այլև հանձնարարություն ունեին ստանալու իրանական բանակի արդիականացումը ռուսական ռազմական ներկայացուցիչներին վստահելու շահական շնորհը<sup>168</sup>:

1878 թ. եվրոպական երկրորդ ուղևորության շրջանակներում Նասր էդ-Ղին շահը ցանկություն հայտնեց բանակի հետևակագործ և հրետանին բարեփոխել ավստրիական, իսկ հեծելազորը՝ ռուսական կազակական հեծյալների օրինակով<sup>169</sup>: Ռուսական ռազմաբարձրական վերնախավը մեծ ոգևորությամբ ընդունեց շահի առաջարկը: 1878 թ. հոկտեմբերին Իրանում ռազմական բարեփոխումներ իրականացնելու նպատակով՝ անմիջապես Թեհրան գործուղվեց ռազմական իրահանգիչների մի խումբ<sup>170</sup>: Նույն թվականի դեկտեմբերի 15-ին ռուսական առաքելությունը Ռուսաստանի Գլխավոր շտաբի փոխվարչապետ Ա. Ղուռնտուվիչի գլխավորությամբ նախնական տեսչական այցով ժամանեց Իրան: Իրանական կառավարության հետ երկու ամիս տևած բանակցությունների արդյունքում՝ ստորագրվեց երկկողմ

<sup>163</sup> РГВИ, ф. 446, Персия, д. 39, л. 7-8.

<sup>164</sup> РГВИ, ф. 446, Персия, д. 38, л. 53-60.

<sup>165</sup> РГВИ, ф. 446, Персия, д. 39, л. 4-5.

<sup>166</sup> Красняк О., նշվ. աշխ., էջ 61.

<sup>167</sup> Նույն տեղում:

<sup>168</sup> РГВИ, ф. 446, Персия, д. 42.

<sup>169</sup> Նույն տեղում:

<sup>170</sup> Красняк О., նշվ. աշխ., էջ 72:

համաձայնագիր՝ «ռուսական ռազմական առաքելությունն Իրան հրավիրելու պայմանների մասին»<sup>172</sup>:

Ռուսական սպայական կազմը հաստատվեց 1879 թ. սկզբին: Խմբում Ռուսաստանի Գլխավոր շտաբի գնդապետ Ա. Ղոմանտովիչի գլխավորությամբ ընդգրկվեցին 3 սպա և 5 ենթասպա հրահանգիչներ<sup>173</sup>: 1879 թ. մայիսին ռուսական ռազմական առաքելությունը երկրորդ անգամ ժամանեց Իրան և նախաձեռնեց Պարսկական կազակական հեծելազորային գնդի ձևավորումը: Նախապես խոստացված շահական դրամների (Շահական թիկնազորային զվարդիայի գնվողներն էին) փոխարեն Ղոմանտովիչի ենթակայության տակ դրվեցին իրանական բանակի 400 թյուրքախոս մուհաջիրներ<sup>174</sup>: Նույն թվականին գնդապետի և շահի միջև, 3 տարի ժամկետով, հեծելազորային գնդի կազմավորման մասին համաձայնագիր կնքվեց: Պաշտոնապես զորամիավորման անվանվեց «Նորին Սեծություն շահի պարսկական կազակական բրիգադ» (Персидская казачья Его Величества шаха бригаа)<sup>175</sup>, որի հրամանատարն էր իրանական հեծելազորի ռազմական վերապատրաստման գծով ղեկավարը: Այդ պաշտոնին նշանակվում էր ռուսական բանակի գեղապետը, Կովկասյան ռազմական շրջանի շտաբի կողմից՝ ցարի և պաշտպանության նախարարի հավանությամբ<sup>176</sup>: Պարսկական կազակական բրիգադի (հետայսու ՊԿԲ) ղեկավարը

<sup>172</sup> Նույն տեղում:

<sup>173</sup> РГВИА, ф. 2000, Персия, оп. 1, д. 1022, л. 55.

<sup>174</sup> V. 9. «کتر عدها من زرين گوب، روزگار ان، تاريخ ايران از اعجاز از سقوط سلطنت پهلوي، ص. 173»

Մրանք կովկասյան մանդեղական ազնվական ընտանիքների ժառանգներն էին, որոնք վերաբնակեցվել էին Իրանում՝ ռուս-պարսկական պատերազմների արդյունքում: Մուհաջիրները Իրանում արտոնյալ փորձամասնություն էին համարվում: Ինչպես քուլտը և կիսաքուլտը ցեղային հեծելազորային խմբերը՝ մշտական զինորդական ծառայություն սկսելով հանդերձ՝ վերջիններս պարսավոր էին միայն շահի պահանջով, ստիպելուության դեպքում, զինվորների որոշակի քանակ ապահովել, որի դիմաց բավականին բարձր նպաստներ էին ստանում գանձարներից: Крассик О., նշվ. աշխ., էջ 74:

<sup>175</sup> Калугин С., Персидская Казачья его Величества шаха Персии дивизия, Военно-исторической вестник, N 11, май, Париж, 1958, с. 15.

<sup>176</sup> РГВИА, ф. 2000, Персия, оп. 1, д. 1022 (1), л. 55-57.

պարտավոր էր համաձայնեցնել բրիգադի գործողությունները նաև Թեհրանում ռուսական առաքելության ղեկավարի հետ<sup>176</sup>:

Վերահսկողություն սահմանելով զորամիավորման ֆինանսավորման վրա և բարձր մակարդակի հասցնելով զինծառայողների մարտունակությունն ու կարգապահությունը՝ Ղոմանտովիչը անմիջապես դարձավ իրանական կառավարող շրջանների գերաշնորհ անձերից մեկը՝ շրջանցելով անգամ երկրի զինված ուժերի նախարարին: 1880 թ. շահի առաջարկով, կամավորների հենքի վրա, նա կազմավորեց հեծելազորային երկրորդ գուղը՝ միավորման գինվորների թվաքանակը հասցնելով 600-ի<sup>177</sup>:

Բրիգադի նորակոչիկների մեծ մասը հավաքագրվում էր քուլտը ազգաբնակչությունից՝ հիմնականում երկրի քրդաբնակ տարրից: Կային նաև թուրքմեններ և աֆղաններ: Սկզբնական շրջանում զորամիավորման բյուջեի հիմքը կազմեցին գանձարանից վճարվող մուհաջիրների ժառանգական նպաստները և շահի դրամական հատկացումները<sup>178</sup>:

ՊԿԲ-ի հաջորդ հրամանատարի՝ Պ. Չարկովսկու ղեկավարման տարիներին (1882-1885թթ.) միավորման կազմն ընդլայնվեց և հասավ 900 զինծառայողի: Ալեքսանդր Գ-ի նվիրաբերած 4 թնդանոթի և հազար միավոր հրացանի հենքի վրա՝ Չարկովսկին կազմավորեց կանոնավոր հեծելազորային հրետանին<sup>179</sup>:

Բրիգադի հեղինակությունը հատկապես աճեց գնդապետ Վ. Կոսազովսկու հրամանատարության տարիներին (1894-1903թթ.): Վերջինս ձեռնամուխ եղավ ՊԿԲ-ի կառուցվածքում մի շարք սկզբունքային հարցերի կարգավորմանը: Այսուհետև բրիգադի բարձր սպայական կազմն ընտրվելու էր ոչ թե Կովկասի կազակական գնդերից, այլ զինվորական բարձրագույն կրթություն ստացած սպաներից, որոնք

<sup>177</sup> РГВИА, ф. 446, Персия, д. 47, л. 147.

<sup>178</sup> Крассик О., նշվ. աշխ., էջ 76-77:

<sup>179</sup> Стрелников (Калабухов) И., Казачи в Персии 1909-1918, М., 2007, с. 215-217.

<sup>180</sup> Մանրամասն տե՛ս Կրասնիկ Օ., նշվ. աշխ., էջ 80-82:

Կովկասում կամ Կենտրոնական Ասիայում ծառայության փորձ կունենային և կտիրապետեին պարսկերենին<sup>182</sup>:

1895 թ. շահական ռազմական նախարարը հարց բարձրացրեց բրիգադի անգլիական սպաների ենթակայության տակ դնելու վերաբերյալ: Որպեսզի ՊԿԲ չանցնել անգլիացի սպաների տրամադրության տակ՝ նույն թվականին Վ. Կոսազովսկու և Ռուսական դեսպանորդի ճնշումների ներքո Նսրը եղ-Դին շահը ստիպված եղավ հաստատել բրիգադի նոր կարգավիճակի մասին «դրույթ», որի համաձայն իրանական կառավարությունը պարտավորվում էր այսուհետև բրիգադը հրավիրել միայն ռուս հրահանգիչների: ՊԿԲ-ը նաև պաշտպանության նախարարի ենթակայությունից անցավ սադր-ազամի (վարչապետի) վերահսկողության ներքո<sup>183</sup>: Կոսազովսկու օրոք զգալիորեն աճեց նաև ՊԿԲ-ի խաղաքական դերակատարումը: ՊԿԲ-ը զարակվան կառավարության համար շահի վրա ազդելու լավագույն միջոցն էր: Այն կոչված էր պահպանելու դաջարական գահի անձեռնմխելիությունը, քանի որ բրիտանացիները հակառակ ընդունված կարգի, արքունական դավադրությունների միջոցով, հայտարարված թագաժառանգի (վալիսահի, ավանդաբար Ատրպատականի կառավարիչ էր Ն.Ն.) փոխարեն, մշտապես փորձում էին գահին նստեցնել դաջարական արքայաուսումի՝ իրենց հովանավորյալ ներկայացուցիչներին<sup>184</sup>: Այս առումով թերևս ուշագրավ են ՊԿԲ-ի անմիջական միջնորդությամբ շահական գահը ժառանգելու օրինակները: Դենտ թագաժառանգ եղած ժամանակ կառավարման հարցերի նկատմամբ հետաքրքրություն չդրսնորդ ֆիզիկապես անառողջ Մոզաֆֆար էղ-Դինը ռուսական հովանավորությունն իր իշխանության պահպանման լավագույն գրավականն էր համարում: 1896 թ. Նսրը էղ-Դին շահի սպանությունից անմիջապես հետո սադր-ազամ Ամին օս-Մալթանեն դիմեց Կոսազովսկուն, որպեսզի ՊԿԲ-ը ռազմական հսկողության տակ առնի Թեհրանը և Ատրպատականից Թեհրան ուղեկցի թագաժառանգ Մոզաֆֆար էղ-Դինին: Մի քանի ժամ անց ողջ Թեհրանը

կազակների հսկողության տակ էր: Այսպիսով, ՊԿԲ-ի անմիջական մասնակցությամբ դաջարական արքայաուսումի նոր շահը խաղաղ գահ բարձրացավ<sup>185</sup>:

Նաջարական գահը փոխանցելու նմանատիպ գործողություն խաղարկվեց նաև 1906 թ. դեկտեմբերին, երբ կազակներից զորամիավորումը, Ատրպատականից Թեհրան ուղեկցեց վալիսահը (թագաժառանգ) Մոհամմադ Ալի շահին՝ մահամերձ Մոզաֆֆար էղ-Դին շահին գահին փոխարինելու նպատակով<sup>186</sup>:

Կազակները մեկուսացված էին իրանական միջավայրից, մշակութային կյանքից, ինչի արդյունքում բրիգադը ցածր ժողովրդակառույթուն էր վայելում: Միավորման հիմնական գործառույթն էր շահի, պետական բարձրատիճան պաշտոնյաների, օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների, նախարարությունների, բանկերի, Ռուսաստանի կողմից կառուցվող ճանապարհների, հակահամաճարակային կայանների անվտանգության պահպանությունը, ինչպես նաև կենտրոնական իշխանության դեմ թույլոր ցեղերի կողմից առաջացող ըմբոսությունների ճնշումը<sup>187</sup>:

ՊԿԲ-ի բյուջեն կազմված էր երկու մասից, առաջինը՝ մտավորապես 2/3-ը ապահովում էին Շաշվավարկային բանկ մուտքագրվող Իրանի հյուսիսային մաքսակետերից ստացվող եկամուտների մի մասը, մյուս մասը՝ վճարվում էր իրանական գանձարանի կողմից<sup>188</sup>:

Բրիգադի ֆինանսական վերահսկողությունն ամբողջովին կենտրոնացված էր Թեհրանում ռուսական առաքելության դեկավարի ձեռքերում, ինչի հետևանքով բրիգադի ղեկավարության և առաքելության հարաբերությունները միշտ չէ որ հարթ էին ընթանում: Շատ հաճախ միավորման անկանոն ֆինանսական մտակարարման և միջոցների անաբղյուծավետ բաշխման հետևանքով նրանց միջև առաջ էին գալիս բազում խնդիրներ<sup>189</sup>: Այս առնչությամբ խնդրահարույց էին նաև իրանական կառավարության հետ փոխհարաբերությունները, քանզի

<sup>180</sup> РГВН, ф. 446, Персия, д. 47, л. 163.

<sup>181</sup> РГВН, ф. 2000, д. 1022 (1), л. 44-50.

<sup>182</sup> АВПРИ, ф. 144, Перекаский стол, он. 488, д. 603, л. 246.

<sup>183</sup> Firuz Kazem-Zadeh, նշվ. աշխ., էջ 299-300:

<sup>184</sup> АВПРИ, ф. 144, Перекаский стол, он. 488, д. 603, л. 246.

<sup>185</sup> Крайнев О., նշվ. աշխ., էջ 80:

<sup>186</sup> РГВН, ф. 2000, д. 1022 (1), л. 53.

<sup>187</sup> РГВН, ф. 2000, д. 1022 (1), л. 13-17, լ. 50-52, РГВН, ф. 446, Персия, д. 47, л. 147.

ՊԿԲ-ն առհասարակ ոչ մի ֆինանսական հաշվետվություն չէր ներկայացնում վերջինիս և ծախսերի մասին հաշվետվություն առաջին անգամ ներկայացրել է 1913 թ., որում տվյալներ էին հաղորդվում միայն 1909 թ. սկսած<sup>198</sup>։ Ղաջարական կառավարությունը բրիգադի ծախսերը փակելու նպատակով՝ հաճախ ստիպված էր լինում վարկեր վերցնել բրիտանական և ռուսական բանկերից, իսկ առավել ճգնաժամային տարիներին առհասարակ չէր հոգում դրանք։ Հաճախ ռուսական կառավարությունն ինքն էր ծանկուն ՊԿԲ-ի բյուջեի պակասորդը՝ պարտքային կախվածության մեջ դնելով իրանական կողմին<sup>199</sup>։

Այսպիսով, ՊԿԲ-ի գլուխ կանգնած էր ռուսական Գլխավոր շտաբի փոխգնդապետը։ ՊԿԲ-ի զինվորները ծառայությունն իրականացնում էին ռուսական ռազմական կանոնակարգի համաձայն<sup>200</sup>։

ՊԿԲ-ն համապատասխանաբար կազմված էր՝ հետևելից, հեծելազորից, հրաձգային զննից և զնդացրային գումարտակից։ 1912 թ. բրիգադում հաշվառվում էր մոտ 2250 կազակ<sup>201</sup>։ Միավորման սպայակույտը գտնվում էր Թեհրանում։ Թավրիզում, Թագաժառանգին ծառայելու նպատակով, գործում էր ՊԿԲ-ի առանձին ներկայացուցչությունը։ Այստեղ մշտապես գտնվում էր մոտ 1288 կազակ և 61 սպա<sup>202</sup>։ Բրիգադի ութ ջոկատը տեղակայված էր Թեհրանում, Սպահանում, Մաշհադում, Համադանում, Գիլանում, Մազանդարանում, Արդաբիլում և Ուրմիայայում<sup>203</sup>։ Միավորման բարձր սպայական կազմում ընդգրկված կազակները պահուստային զինծառայողներ չէին և միաժամանակ ծառայության մեջ էին գտնվում նաև Ռուսաստանում՝ Կովկասյան ռազմական շրջանի Գլխավոր շտաբում և վարձատրվում էին նաև Ս. Պետերբուրգի կողմից<sup>204</sup>։ Իրանահպատակ սպաները, թեև ռուս սպաների համեմատ բավականին ցածր էին վարձատրվում, սա-

կայն բրիգադից դուրս գտնվող իրենց ընկերների նկատմամբ ավելի նախապատվելի վիճակում էին<sup>205</sup>։

Բրիգադի ղեկավարը շահի անմիջական խորհրդականն էր, իսկ նրա ենթակայությունն Իրանի զինված ուժերի նախարարից հաճախ ձևական բնույթ էր կրում<sup>206</sup>։ Բրիգադի ղեկավարի պարտականությունների մեջ էր մտնում նաև Իրանի զինված ուժերի, աշխարհագրական և վիճակագրական տվյալների մասին տեղեկությունների հավաքագրումը, որոնք զեկույցների տեսքով ուղարկվում էին Ռուսաստանի Գլխավոր շտաբի ռազմագիտական բաժին<sup>207</sup>։ Այլ կերպ ասած, Ռուսաստանն Իրանում՝ ի ղեմն ՊԿԲ-ի հաստատել էր նաև հետախուզական ցանց։

ՊԿԲ-ին կից գործում էր երկու դպրոց՝ մեկը բարձրաստիճան սպաների երեխաների համար, մյուսը՝ ենթասպաների։ 1903 թ. դպրոց բացվեց նաև իրանական սպայական կազմի զավակների համար։ Բառամյա կրթական ծրագրի դասավանդումն իրականացվում էր ռուսական միջնակարգ դպրոցի ծրագրին համապատասխան։ Կրթությունը տարրական դպրոցում պարսկերենով էր։ Ավելի բարձր դասարաններում անցում էր կատարվում ռուսերենի։ 1910 թ. սպայական անձնակազմի երեխաների դպրոցը վերանվազվեց, որի արդյունքում ուսուցման տևողությունը դարձավ վեց տարի, իսկ 1913 թ.՝ ութ տարի<sup>208</sup>։ Կադետների դպրոցի շրջանավարտները լավ տիրապետում էին ռուսերեն լեզվին, ինչպես նաև գիտելիքներ ունեին Ռուսաստանի պատմության, մշակույթի և ավանդույթների մասին։

Բրիգադը գործնականում ռուսական ռազմական կանոնակարգի օրինակով իրանական բանակի համար սպայական կադրեր պատրաստելու կառույց էր։ Դպրոցում ուսանում էին ինչպես ՊԿԲ-ի իրանցի զինվորների, սպաների, այնպես էլ պետական պաշտոնյա-

<sup>198</sup> Кулагина Л. М., Россия и Иран, Եզվ. աշխ., էջ 140։

<sup>199</sup> РГВИА, ֆ. 2000, д. 1022 (1), л. 13.

<sup>200</sup> Крассов О., Եզվ. աշխ., էջ 80.

<sup>201</sup> РГВИА, ֆ. 446, Персия, д. 47, л. 67-68.

<sup>202</sup> Кулагина Л. М., Россия и Иран, Եզվ. աշխ., էջ 139։

<sup>203</sup> Donald N. Wilber, Riza Shah Pahlavi: The Resurrection and Reconstruction of Iran, N. York, 1975, pp. 6-7.

<sup>204</sup> РГВИА, ֆ. 446, Персия, д. 47, л. 67-68.

<sup>205</sup> Выборнов М., Персия и ее вооруженные силы, М.-Л., 1928, с. 54, Стрелянов (Калабухов) П., Եզվ. աշխ., էջ 219։

<sup>206</sup> РГВИА, ֆ. 2000, д. 1022, л. 44-50.

<sup>207</sup> РГВИА, ֆ. 446, Персия, д. 46, л. 148.

<sup>208</sup> Кулагина Л. М., Россия и Иран, Եզվ. աշխ., էջ 141.

ների որդիները: Չնայած ՊԿԲ-ի համակարգային մի շարք բերուց-  
յուններին, այստեղ ծառայության անցնելն այդ երիտասարդներին  
իրական հնարավորություն էր ընձեռում ապագայում ավելի արագ և  
հեշտ առաջ գնալ երկրի ռազմական և քաղաքական ծառայության  
բնագավառներում: Ռեզա շահը և նրա կառավարության անդամ-  
ներից շատերը եռյուսպես սովորել և ծառայել են ՊԿԲ-ում: Հայագզի  
Մարտիրոս-խանը գրադեցրել է ՊԿԲ-ի շտաբի հրամանատարի պաշ-  
տոնը հիմնադրման օրվանից մինչև 1903 թ.<sup>199</sup>:

Այսպիսով, ՊԿԲ-ը 1880-ական թթ. սկսած, ընդհուպ մինչև  
Առաջին համաշխարհային պատերազմը և Ռեզա շահի ռազմական  
բարեփոխումների ժամանակաշրջանը (1921թ.), շուրջ 41 տարի հան-  
դիսանում էր իրանական բանակի թիչ թե շատ մարտունակ և կանո-  
նակարգված տարրը<sup>200</sup>:

Առաջին աշխարհամարտի ընթացքում՝ 1916 թ., Ռուսաստանի  
պեղմամբ ՊԿԲ-ը վերածնեց 8 հազար զինվորից բաղկացած դիվի-  
զիայի<sup>201</sup>: ՊԿԲ-ի դիրքերն Իրանում շարունակում էին ամուր մնալ  
ընդհուպ մինչև Ռուսաստանում հեղափոխական իրադարձությու-  
ների ծավալումը: 1917 թ. ՊԿԲ-ը անցավ Իրանի պաշտպանության նա-  
խարարի ենթակայության տակ և ֆինանսավորվում էր Մեծ Բրիտա-  
նիայի կողմից: 1920 թ. ամռանը Անգլիայի պեղմամբ ՊԿԲ-ի բարձր  
սպայական կազմում անգլիացի հրահանգիչներ նշանակվեցին<sup>202</sup>:

Իրանի և Ռուսաստանի կառավարող շրջանակների համար  
ՊԿԲ-ը երկկողմ շահարկումների առարկա էր: Ղաջարական քաղա-  
քական վերնախավը կիրառում էր «կազակական գործունը»՝ Ռուսաս-  
տանից տարբեր հարցերում զիջումներ ստանալու եպատանով՝ հստակ  
զիտակեցնելով, որ այլ օտարերկրյա հրահանգիչներ հրավիրելու յու-  
րաբանչուր փորձ բախվելու էր ռուսական հակազդեցությանը<sup>203</sup>:  
Ռուսաստանն իր հերթին, իրանական բյուջեի հաշվին ավելացնելով

կազակների թիվը և ուժեղացնելով նրանց ռազմական պատրաստ-  
վածությունը՝ ի դեմս ՊԿԲ-ի Իրանում ձեռք բերեց շահի և ղաջարա-  
կան իշխող վերնախավի վրա քաղաքական ազդեցության կարևոր  
լակներ, ստեղծեց կայուն հետախուզական ցանց, որը հնարավո-  
րություն էր տալիս մշտապես տեղեկացված լինել Իրանի զինված  
ուժերի, ռազմավարական, աշխարհագրական, պահուստային հնա-  
րավորությունների մասին: Այն վերահսկողության տակ առավ նաև  
Իրանում ծավալվող ներքաղաքական գործընթացները և հաստա-  
տուն դիրք գրադեցրեց երկրի ռազմակրթական բնագավառում:

<sup>199</sup> Рехснева Н., ևշվ. աշխ., էջ 132:

<sup>200</sup> Сгонін С., ևշվ. աշխ., էջ 68:

<sup>201</sup> РГВИ, ф. 13185, журнал описей 1, Предисловие, стр. 2.

<sup>202</sup> Красняк О., ևշվ. աշխ., էջ 102-103:

<sup>203</sup> دکتر عبدالصمد زرین کوب، روزگار، تاریخ ایران از آغاز تا سقوط سلطنت پهلوی، ص ۹-۷، ۱۹۷۹

ՌՐԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՄ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.

ԴԻՄԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՈՆՀԱՄԱՀԱՍՆԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Պարսից ծոցի գործերը Ռուսական կայսրության և Մեծ Բրիտանիայի հարաբերություններում

XIX դ. 90-ական թթ. Ռուսաստանը Պարսից ծոց ներթափանցելու գործնական քայլեր սկսեց՝ իր դիրքերն ամրակայելու միջոցներից կարևորելով անտուրը, նավագնացությունը, ռազմածովային հենակետի և նոր հյուպատոսությունների հիմնումը: Առաջնահերթություն էր դիտվում նաև ապագայում, անդրիասիական երկաթգծի տարբերակով, դեպի վերոնշյալ շրջաններ «կոմերցիոն էյթ» ապահովելը:

Նշված ժամանակաշրջանում կառավարությունն առաջնային էր համարում Բանդար-Աբբասում հյուպատոսության հիմնումը: Այս նավահանգիստը սպասարկում էր ոչ միայն Պարսից ծոցի առափնյա շրջանները և կապված էր տնտեսական մեծ նշանակություն ունեցող Իրանի ներքին շրջանների հետ, այլև ռազմավարական կարևոր նշանակություն էր ներկայացնում և կարող էր Ռուսաստանի համար ռազմածովային հզոր հենակետի վերածվել<sup>204</sup>:

Արդեն 1899 թ. Պարսից ծոց պարբերաբար ուղարկվում էին ռուսական տարբեր առաքելություններ՝ տեղի նավահանգիստների անտրալային շրջանառությունն ուսումնասիրելու նպատակով<sup>205</sup>: Շուտով Օոցում սկսեցին հայտնվել նաև ռուսական նավերը: Ռուսական ակտիվությունը Օոցում կտրուկ աճեց 1900 թ. հետո<sup>206</sup>: Ֆինանսների

<sup>204</sup> АВІРІИ, "Персидский стоз", փ. 144, օր. 488, ձ. 603, ձ. 65.

<sup>205</sup> John Albert White, Transition to Global Rivalry, Alliance Diplomacy and the Quadruple Entente, 1895-1907, Cambridge University Press, 1995, pp. 56-57.

<sup>206</sup> 1900թ. փետրվարին Պարսից ծոցի նավահանգիստներ փորձական ուղևոր իրականացրեց ռուսական «Գիլյակ» փոքր հրևանահավը: Ուշագրավ է, որ ռուսական հիվց խոշոր անտրալայն կազմակերպությունների հետ միասին այս

նախարարությանը կից կազմվեց «Ռուսաստանի և Պարսից ծոցի միջև ուղիղ նավագնացություն կազմակերպելու և Բասրայում, Բուշեն-րում ռուսական հյուպատոսություններ հիմնելու նպատակով» Հաստիկ խորհրդը<sup>207</sup>: 1900 թ. նոյեմբերի 27-ին տեղի ունեցավ Ռուսաստանի և Պարսից ծոցի միջև անտրալային կապեր հաստատելու վերաբերյալ առաջին խորհրդակցությունը, որին մասնակցեցին անտրի և արդյունաբերության հարցերով ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Կովալևսկին, «Ռուսական նավագնացության և անտրալային ընկերության» ղեկավար Օ. Միլլերը, ինչպես նաև շաքարի, թորած նավթի, կտորեղենի, ապակու արտադրության անտրարդյունաբերական շրջանների առաջատար ներկայացուցիչները<sup>208</sup>:

Խորհրդակցությունը, որի հիմնական նպատակն էր Պարսից ծոցում ռուսական ընդլայնման համար նոր քաղաքականության մշակումը, որոշեց՝ 1) Օղեսայի և Պարսից ծոցի նավահանգիստների միջև կազմակերպել ուղիղ շոգենավային հաղորդակցություն, 2) ապահովել Օոցի շուկաներում առավել բարձր պահանջարկ ունեցող ռուսական ապրանքատեսակների մատակարարումը, 3) կազմակերպել տեղում այդ ապրանքների իրացման գործընթացը<sup>209</sup>:

1901 թ. փետրվարին փորձնական երթուղիով Պարսից ծոցի կարևոր նավահանգիստներ (Ջասկ, Լինգե, Բանդար-Աբբաս, Բուշեն և Բասրա) այցելեց ռուսական ապրանքներով բեռնված՝ «Կորնիլով» անտրալային նավը: Հնդ որում, Օոց այցելող նավերը կառավարությունից ստանում էին 50 հազ. ռուբլի սուբսիդավորում՝ յուրաքանչյուր երթի համար<sup>210</sup>:

նախաձեռնությանը մասնակցել է նաև հայազգի Մանթաշովի անտրալային ընկերությունը: АВІРІИ, "Персидский стоз", փ. 144, օր. 488, ձ. 4064, ձ. 134.

<sup>208</sup> АВІРІИ, "Персидский стоз", փ. 144, օր. 488, ձ. 4064, ձ. 9-19.

<sup>209</sup> Նույն տեղում:

<sup>210</sup> John Albert White, նշվ. աշխ., էջ 57:

<sup>211</sup> Риттих П., Отчет о поездке в Персию и Персидский Белуджистан в 1900 г., ч.1, СПб, 1901, с. 81, Whigham H., The Persian Problem: An Examination of the rival positions of Russia and Great Britain in Persia with Some Account of the Persian Gulf and Bagdad Realway, London, 1903, pp. 142-144.

1901 թ. ապրիլին Պարսից ծոցում ռուսական առևտրի պատասխանատու, Սպահանում ռուսական հյուպատոս Ա. Դաբիժան, Բուշերից հայտնում էր, որ չնայած ռուսական առևտուրը խոչընդոտելու անգլիացիների փորձերին, «Կորնիլովի» փորձական այցելությունը հաջողվել է: Վերջինս կշում էր նաև, որ Մոցում ռուսական առևտուրը խթանելու համար նպաստավոր կլինի, այստեղ գործուղել հայ և երես վաճառականներին<sup>211</sup>:

1901-1902 թթ. ընթացքում Պարսից ծոց այցելեցին նաև ռուսական առևտրային «Ազով» (1901 թ. օգոստոս)<sup>212</sup>, «Զիգֆրիդ» (1901 թ. նոյեմբեր)<sup>213</sup> նավերը<sup>214</sup>: Խոչընդոտելով նավահանգիստներում ռուսական նավերի հետադարձ ապրանքների բեռնման գործընթացը բրիտանական կազմակերպությունները իջեցրին ղեկի Եվրոպա բեռնափոխադրման արժեքը 70%-ով: Պարսից ծոցում ռուսական «Կորնիլով» նավի հայտնվելուց հետո, Բարսայից Լոնդոն բեռնափոխադրման մեկ տոննայի արժեքը 50 շիլինգից հասավ 15-ի<sup>215</sup>:

Մոցում դիրքերն ամրապնդելուն զուգընթաց Ռուսաստանը XIX դ. 90-ական թթ. ձեռնամուխ եղավ նաև Հեռավոր Արևելքում իր ծավալապաշտական ծրագրերի իրագործմանը, ինչն էլ ավելի սրեց ռուս-անգլիական հարաբերությունները<sup>216</sup>: Երկրորդ անգլո-բուրական պատերազմի ընթացքում (1899-1902 թթ.) Մեծ Բրիտանիայի ռազմական անհաջողությունները, որին գումարվեց Ռուսաստանի դաշակից Ֆրանսիայի<sup>217</sup> հետ հարաբերությունների լարվածության

(Ֆեռոդյան ճգնաժամ) հերթական փուլը՝ մեծ հարված էին հասցրել Մեծ Բրիտանիայի միջազգային կշռին<sup>218</sup>: Սակայն Աֆրիկայում ճգնաժամը հաղթահարելուց հետո Մեծ Բրիտանիան վերանայեց «Փայլուն չեզոքության» (Splendid isolation) արտաքին քաղաքականության իր ռազմավարությունը և միջազգային մեկուսացումը հաղթահարելու նպատակով՝ իրատեսական սկսեց համարել դիվանագիտական այլընտրանքների և նոր դաշակիցներ ձեռք բերելու հեռակարները, ինչն էլ ավելի կարևորվեց Օւանիայան կայսրությունում, Հարավային Ամերիկայում, Հյուսիսային Աֆրիկայում օրեցօր հզորացող Գերմանիայի ծավալապաշտական քաղաքականության արդյունքում<sup>219</sup>:

Հարկ է նշել, որ նպատակ ունենալով սահմանափակել ռուսական ծավալունությունները՝ Մեծ Բրիտանիան, դեռևս 1898 թ., ռուսական կառավարությանն առաջարկում էր Կ.Պոլսից մինչև Պեկին ազդեցության գոտիների բաժանման ընդհանուր համաձայնագիր կնքել: Այս համատեքստում իրատեսական էր համարվում Միջին Արևելքը, մասնավորապես Իրանը, ազդեցության գոտիների բաժանելու փոխզիջումային տարբերակը, որով Իրանի հյուսիսային շրջանները կլինեին ռուսական ազդեցության ոլորտում, իսկ հարավայինը՝ բացառապես բրիտանական<sup>220</sup>: Սակայն Ռուսաստանը հրաժարվեց նման գործարքից:

1902 թ. Անգլիան դարձավ ճապոնիայի դաշակիցը հեռավոր արևելյան հարցերում և սկսեց բարելավել իր հարաբերությունները

<sup>211</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 4064, л. 76.

<sup>212</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 4064, л. 121.

<sup>213</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 4064, л. 194.

<sup>214</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 4064, л. 251-260.

<sup>215</sup> Шульце Э., Борьба за персидско-мессопотамскую нефть, М., 1924, с. 1924, с. 61-62.

<sup>216</sup> Felix Patrikeeff and Harold Shukman, Railways and Russo-Japanese War: Transporting War, L. & N.York, 2007, pp. 18-33.

<sup>217</sup> 1899 թ. օգոստոսի 8-9-ին Ֆրանսիայի արագործնախարար Թ. Դելկասսեն և Ռուսաստանի արագործնախարար Մ. Մուրավյովը փոխանակվեցին Լոռաներով, որի արդյունքում վերահաստատվեցին 1891 թ. քաղաքական և 1893 թ. ֆրանս-ռուսական ռազմական դաշիքը: Сборник договоров России с другими государствами 1856-1914 гг., с. 279-283: Ռուս-ֆրանսիական հարաբերություն-

ներում կարևոր դեր էին խաղում նաև ռուսական պետական փոխառությունները Ֆրանսիայում, որոնց հաշվին ցարական կառավարությունը լուծում էր ոչ միայն երկրի ներքին տնտեսական խնդիրները, այլև շարունակում էր իրականացնել իր արտաքին քաղաքական ծրագրերը: Kagarlitsky B., նշվ. աշխ., էջ 249-251:

<sup>218</sup> Graham D. Goodlad, British Foreign and Imperial Policy, L. & N.York, 2000, pp. 57-59, Хвостов, В. М., նշվ. աշխ., էջ 456-466: 59 John Albert White, նշվ. աշխ., էջ 26-30:

<sup>219</sup> British Documents on the Origins of the War, The End of British Isolation, Edited by G. P. Gooch, D.Litt., F.B.A., and Harold Temperley, Litt.D., F.B.A., L., 1927, Vol. I, F.O. Russia, N 18, p. 10 այսուհետև BD.), Ротштейн Ф., Международные отношения в конце XIX века, Л., 1960, с. 450.

Ֆրանսիայի հետ<sup>21</sup>: Նույն թվականի հունվարի 30-ին ստորագրվեց անգլո-ճապոնական դաշնակցային պայմանագիրը, որն ուղղված էր Ասիայում ռուսական ծավալապաշտության դեմ: Առաջին հայացքից կենտրոնացած լինելով Հեռավոր Արևելքի վրա՝ այդ պայմանագիրն իր մեջ ներառում էր Միջին Արևելքի հետ կապված շատ խորքային հարցեր: Պայմանագրի շնորհիվ ճապոնիան հնարավորություն ստացավ պատերազմել Ռուսաստանի դեմ, իսկ Ռուսաստանը հարկադրված էր ուշադրության կենտրոնը տեղափոխել Հեռավոր Արևելք<sup>22</sup>:

Նույն 1902 թ. օգոստոսից մեկնարկեցին նաև անգլո-ֆրանսիական բանակցությունները: Գաղութային խնդիրների կարգավորման միջոցով, Ֆրանսիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելով և վերջինիս դաշնակից՝ Ռուսաստանի հետ արևելյան հարցերի շուրջ համաձայնության գալու միջոցով, Մեծ Բրիտանիան ծրագրում էր սահմանափակել Գերմանիայի ներգրավվածությունը մերձավորարևելյան տարածաշրջանում և կանխել Բաղդադի երկաթուղու միջոցով դեպի Պարսից ծոց ներթափանցելու գերմանական ծրագրերը<sup>23</sup>:

Սակայն ընդհուպ մինչև ռուս-ճապոնական պատերազմում պարտություն կրելը (1905 թ.) Ռուսական կայսրության քաղաքական նպատակներն Իրանում դրսևորվում էին հստակ ձևաչափով. «Պահպանել Պարսկաստանի ամբողջականության և անձեռնմխելիության սկզբունքը, չհավակնել տարածքային նոր ձեռքբերումների, թույլ չտալ որևիցե երրորդ պետության գերակայությունն այստեղ, աստիճանաբար ենթարկելով այն ռուսական ազդեցությանը: Առանց խափանելու

այդ երկրի ինչպես արտաքին ինքնուրույնության սկզբունքները, այնպես էլ ներքին կարգը»<sup>24</sup>: Հետևաբար Ռուսաստանը բրիտանական առաջարկները շարունակում էր անարձագանք թողնել<sup>25</sup>:

1904 թ. արտգործնախարար Վ. Լանզդորֆի «Թեհրանում Ռուսաստանի նորանշանակ դեսպանորդ Ա. Ն. Շպիերի հանձնարարականում մասնավորապես սավում էր. «Պահպանելով Պարսկաստանի ամբողջականության և անձեռնմխելիության սկզբունքը՝ մեր հիմնական խնդիրն է նրան դարձնել հնազանդ և օգտակար: Այլ կերպ ասած՝ հզոր գործիք մեր ձեռքերում՝ պարսկական լայնածավալ շուկան պահպանելու և ընդլայնելու նպատակով»: Գիտակցելով քաղաքական պահի լրջությունը՝ նախարարը շեշտում էր. «Քանի որ Ռուսաստանը դժվարություններ է կրում Հեռավոր Արևելքում, Անգլիան ամեն կերպ փորձում է ամրապնդել իր քաղաքական և տնտեսական դիրքերն այստեղ: Ստեղծված իրավիճակում Անգլիան կարող է Ռուսաստանին պարսկական հարցի հետ կապված որևիցե համաձայնագիր պարտադրել: Ինչպես օրինակ՝ 1889 թ. «condominium»-ի սկզբունքով Իրանն ազդեցության գոտիների բաժանելու առաջարկը»<sup>26</sup>:

1901 թ. ամռանից ռուսական դիվանագիտությունն ավելի զգայուն դարձավ Պարսից ծոցում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ: Հատկապես Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և Օսմանյան կայսրության միջև Քուվեյթի կարգավիճակի շուրջ ընթացող զարգացումներում<sup>27</sup>: 1899 թ. Բաղդադի երկաթուղու շինարարության Գերմանիայի նախնական պայմանագրի համաձայն նախատեսվում էր երկաթուղին ավարտել Շամ ալ-Արաբ գետի ակունքում տեղակայված Բասրայայում, սակայն աստիճանաբար գերմանական ֆինանսական և դիվանագիտական շրջանների ուշադրության կենտրոնում հայտնվեց

<sup>21</sup> Չնայած նրան, որ Ռուսաստանը իր հեռավորարևելյան քաղաքականությանը ճանապարհ էր հարթում Ֆրանսիայի գործարար լայն շրջանների համար և վերջիններս մեծապես ներգրավված էին թե՛ երկաթգծերի կառուցման և թե՛ ֆինանսատնտեսական այլ ձևերակներում, պետամեթոդով Ռուսաստանի կողմից մեծ քանակությամբ ռազմական ուժերի կենտրոնացումը Հեռավոր Արևելքում հարկաձիգ տակ էր դնում ռուս-ֆրանսիական դաշինքը, որի հիմքում ընկած էր Եվրոպայում Գերմանիային հակակշռելու նպատակը: Игнатьева А., Внешняя политика России в 1905-1907 гг., М., 1986, с. 18.

<sup>22</sup> Firuz Kazem-Zadeh, *ibid.*, աշխ., էջ 387:

<sup>23</sup> John Albert White, *ibid.*, աշխ., էջ 26-31:

<sup>24</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 603, л. 53.

<sup>25</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 603, л. 54-55.

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> 1899թ. սկսած Մեծ Բրիտանիան փորձում էր պրոտեկտորատի կարգավիճակով իր ներակայության տակ դնել Օսմանյան կայսրության կազմում գտնվող Քուվեյթի շեխությունը և իր ազդեցությունը տարածել նրա կասաբլանկայի շեյխ Մուրաբաթի վրա:

էլ-Քուվեյթ նավահանգիստը, որը ոչ միայն հարմար էր խոշոր բեռնատար նավեր ընդունելու տեսանկյունից, այլև Մոցուս բացառիկ ռազմավարական իր դիրքով: Բաղդադի երկաթուղու միջոցով Մերձավոր և Միջին Արևելքում և հատկապես Պարսից ծոցում հաստատվելու գերմանական ծրագրերն աննախաբեկ սրբցին անզու-գերմանական հարաբերությունները<sup>228</sup>: Պետերբուրգում մտավախոթյուն կար, որ Քուվեյթի ճգնաժամի ծավալումը հնարավորություն կընձեռի Մեծ Բրիտանիային ակտիվացնելու իր քաղաքականությունը Մոցուս<sup>229</sup>: Օսմանյան կայսրությունում ռուսական առաքելության ղեկավար Ձինովևն արտաքին գերատեսչությանն առաջարկում էր հակահարձակման անցնել այլ ճակատում՝ Աֆղանստանում, եթե Մեծ Բրիտանիան փորձ անի խախտել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը՝ Քուվեյթը կամ Պարսից ծոցի արևմտյան շրջաններում այլ նավահանգիստների բռնազավթումով<sup>230</sup>:

Ռուսաստանը բաց չթողեց միջազգային ասպարեզում Բրիտանիայի ժամանակավոր թուլացումից օգտվելու հնարավորությունը և տեղեկացրեց բրիտանական կառավարությանը, որ առևտրային շահերը և Աֆղանստանի հետ հարևանությունը, թույլ չեն տալիս Ռուսաստանին զերծ մնա, այդ պետության հետ ուղիղ քաղաքական կապեր հաստատելուց<sup>231</sup>:

Ճարական կառավարության շրջադարձային դիրքորոշումը դրսևորվեց 1901 թ. դեկտեմբերին ռուսական «Վորյագ» հաճանավի Մոցի կարևոր, այդ թվում նաև Քուվեյթի, նավահանգիստներ այցելությամբ<sup>232</sup>:

Չնայած բրիտանական իշխող շրջաններում Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում ձևավորված հակասությունների՝ Եվրոպայում դաշնակից ընտրելու, Մերձավոր և

Միջին Արևելքը ազդեցության գոտիների բաժանելու, Պարսից ծոցում բրիտանական մենաշնորհը պահպանելու հիմնախնդիրները ընդհանուր առմամբ միախուլվեցին Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքական ետ ուղեգծի մշակման հետ, ուստի բրիտանական կառավարությունը չէր դադարում ջանքեր գործադրել՝ Ռուսաստանին բանակցային սեղանի մոտ բերելու ուղղությամբ:

Լոնդոնի ռուսական առաքելությունը, հարցի վերաբերյալ նշում էր, որ չնայած Ռուսաստանի համար ոչ ցանկալի անզու-ճապոնական դաշինքին, Մեծ Բրիտանիայի քաղաքական ասպարեզում Ռուսաստանի հետ մերձենալու միտումներն այնուամենայնիվ շարունակվում են: Ըստ այդ գեղույցներից մեկի՝ 1902 թ. Լորդերի պալատում, Իրանում բրիտանական քաղաքականությունն ակտիվացնելու մասին քննարկումների ժամանակ, լիբերալների տեսակետը ներկայացնող և հետագայում արդեն, անզու-ռուսական մերձեցման ճարտարապետ Էդ. Գրեյը նշել էր, որ Անգլիան Իրանում Ռուսաստանի հետ մրցակցության տեսանկյունից կարող է հիմնվել երեք տարբեր քաղաքական կուրսերի վրա: Դրանցից առաջինը ոչ ցանկալի է և կայանում է նրանում, որ Անգլիայի համար դժվար է մշտապես հակադրել ռուսական ընդլայնման քաղաքականության Իրանում: Երկրորդը՝ Ռուսաստանի հետ ափսալան հարցերի շուրջ ընդհանուր համաձայնության գալն է: Երրորդ տարբերակի հիմքում ընկած էր հարցի նկատմամբ «ինքնահոսի քաղաքականությունը» (drift policy), սակայն այս դրույթն, ըստ Գրեյի, անընդունելի էր հատկապես իրանական խնդրի տեսանկյունից. «Եթե այդ երկրում Ռուսաստանը պետք է ընդլայնվի, ապա դա տեղի կունենա միայն Անգլիայի համաձայնությամբ», - նշում էր ապագա արտգործնախարարը<sup>233</sup>:

Այս առումով ուշադրվ է նաև, գործող արտգործնախարարի խորհրդական՝ վիկոնտ Կրանբորնի տեսակետը. «Անգլիայի քաղաքականությունն Ասիայում նախ և առաջ կապված է ստատուս-քվոյի պահպանման, այլ ոչ թե «ինքնահոսի» դիրքորոշման հետ: Թեև Ռուսաստանի հետ փոխշահավետ հարաբերությունները ցանկալի

<sup>228</sup> ВД, Vol. I, pp. 333-334.

<sup>229</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 4064, л. 172.

<sup>230</sup> Ботларевский Г. Л., Английская политика и международные отношения в бассейне Персидского Залива, (конец XIX - начало XX в.), М., 1968, с. 353.

<sup>231</sup> Мульдтаули П., նշվ. աշխ., էջ 180-181:

<sup>232</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 4064, л. 251-260.

<sup>233</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 4064, л. 264-265.

են, սակայն Անգլիան չի կարող «գլխարկը ձեռքին գնալ և համաձայնագիր խնդրել Ռուսաստանից: 1888 թ. Անգլիան և Ռուսաստանը փոխանակվել են նոտաներով, որոնցում պարտավորվում էին հարգել Իրանի ամբողջականության և անձեռնմխելիության սկզբունքը և մինչև հիմա գործել են այդ սկզբունքի համաձայն, սակայն անձեռնմխելիության քաղաքականությունն իր սահմաններն ունի: Նախ և առաջ պետք է պահպանել ուժերի հավասարակշռության սկզբունքը, ուստի Անգլիան չի կարող զիջել իր առաջնային դիրքերը Պարսից ծոցում և հնդկական տիրույթներին հարող շրջաններում»<sup>224</sup>:

Թեև Մեծ Բրիտանիայում ընդհանուր առմամբ հետզհետև ավելի ակնհայտ էին դառնում Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ հակադրմանական ճակատ ձևավորելու տրամադրությունները՝ պետք է նշել, որ բրիտանական իշխող վերահսկումով Ռուսաստանի հետ փոխհամաձայնության գալու վերաբերյալ կարծիքները միտասարդ չէին: Քաղաքական-գաղափարական առումով անգլո-ռուսական համաձայնագրի որոշ առանցքային ձևակերպումներին դեմ էր հենց լիբերալների կուսակցության ձախ թևը, իսկ ռազմաքաղաքական և ֆինանսատնտեսական առումով՝ բրիտանական իշխանությունների «միջինարևելյան» (անգլո-հնդկական) խմբավորումը<sup>225</sup>: Հայտնի է, որ XIX դ. վերջից Մեծ Բրիտանիայի մերձավորարևելյան գաղութային քաղաքականությունը հիմնականում պայմանավորված էր բրիտանական իշխող շրջանների այս ազդեցիկ ձամբարի դիրքորոշմամբ, որը տարբեր տնտեսական, ֆինանսական, քաղաքական դրոպապատճառներից

<sup>224</sup> АВПРИ, "Персидский срок", ф. 144, оп. 488, л. 4064, л. 266-267.

<sup>225</sup> Միջինարևելյան խմբավորումը քաղաքական և տնտեսական առումով գերիշխող էր բրիտանական գաղութային իշխող շրջանների մյուս խմբավորումների (հարավ-աֆրիկյան և չինական) նկատմամբ: Այն հենվում էր անգլո-հնդկական վարչակարգի վրա, որոնց տրամադրության տակ էին ցամաքային և ծովային զինված ուժեր, սեփական գանձարան, լայնածավալ հեռախոսակալան և հյուպատոսական համակարգ: Նրա կազմում էին գտնվում Իրանում խոշոր կապիտալների ներքաճ ձեռնարկատերերը: Իրանում բրիտանական առաքելության ծախսերը հոգում էին հնդկական իշխանությունները, ինչն էլ թույլ էր տալիս ազդել Իրանում բրիտանական առաքելության ղեկավարների բնորոշության հարցին և Ֆրանսիայի իրանական քաղաքականության վրա: Бондаревский Г. Л., Английская политика и международные отношения, т. 2, кн. 1, с. 29-31:

լինելով՝ շահագրգռված էր մերձավոր-միջինարևելյան տարածաշրջանում ակտիվ-հարձակվողական քաղաքականությանը:

Չնայած Ռ. Մոլայերիի կառավարությունը անգլո-ռուսական հակասությունները փորձում էր լուծել Ռուսաստանի հետ արևելյան հարցերի վերաբերյալ համաձայնության գալու ճանապարհով և չէր բացառում դեպի Մոց Ռուսաստանի «կոմպրոմիս ելք» տրամադրելու հնարավորությունը, միջինարևելյան խմբավորումը Պարսից ծոցի ավազանում այլ պետության նկատմամբ զիջումների քաղաքականության դեմ էր արտահայտվում՝ Աֆղանստանն ու Իրանի հարավային շրջանները ցանկանալով տեսնել բացառապես անգլիական ազդեցության գոտում<sup>226</sup>: Խմբավորման հակառուսական տրամադրությունների առաջատարներից էր լորդ Ջ. Քերզոնը, ում «Պարսկաստանը և Պարսկական հարցը» հայտնի աշխատության հիմքում ընկած Միջին Արևելք, մասնավորապես Պարսից ծոց Ռուսաստանի ներթափանցումը կանխելու հայեցակարգը դարձավ խմբավորման գաղափարական դրոյթներից մեկը<sup>227</sup>: Իր քաղաքական գործունեության ողջ ընթացքում լորդ Քերզոնն իրանական հարցը դիտարկում էր գլխավորապես բրիտանական Հնդկաստանի պաշտպանության տեսանկյունից և գտնում էր, որ Արևելքում տիրապետություն հաստատելու համար Բրիտանիային խոչընդոտող ուժը ցարական Ռուսաստանն է<sup>228</sup>: Պարսից ծոց Ռուսաստանի հեռավոր ներթափանցումը, որի արդյունքում հարավային Իրանի որևէ շրջան կարող էր դառնալ ռուսական ազդեցության գոտի, անխուսափելիորեն հանդիպում էր հնդկական խմբավորման հակազդեցությանը<sup>229</sup>:

1900 թ.-ից «միջինարևելյան» խմբավորումն ակտիվացրեց իր գործունեությունը: Նրա ղեկավարները սուր դժգոհություններ էին

<sup>226</sup> Hurewitz J.C., Diplomacy in the Near and Middle East; A Documentary Record, 1535-1956, Ed. By Hurewitz J.C., Cambridge, Cambridge University Press, p. 220.

<sup>227</sup> Curzon, G.N., Persia and the Persian Question, vol. II, L., 1966.

<sup>228</sup> British Foreign policy under Sir Edward Grey, Ed. by Hinsley F.H., L., N. York, McIlbourne, 1977, pp. 135-139, Бондаревский Г. Л., Английская политика и международные отношения, т. 2, кн. 1, с. 32-34:

<sup>229</sup> Жигалина О., т. 2, кн. 1, с. 138-141:

արտահայտում Պարսից ծոցում բրիտանական իշխանությունների ոչ հետևողական քաղաքականության նկատմամբ, ինչը հանգեցրել էր տարածաշրջանում ցարական և գերմանական քաղաքական և տնտեսական դիրքերի ուժեղացմանը: Վերջիններս կառավարությանից պահանջում էին դադարեցնել Աֆրիկայում ռազմական գործողությունները և հակահարձակման անցնել Միջին և Մերձավոր Արևելքում<sup>240</sup>:

Միջազգային դիրքերն ամրապնդելուն զուգընթաց Մեծ Բրիտանիան իրաժարվեց Պարսից ծոցի նկատմամբ իր «գզուշավոր» դիրքորոշումից: Լորդերի պալատում 1903 թ. մայիսի 5-ի իր ելույթում արտգործնախարար լորդ Գ. Լենդալունը հայտարարեց, որ թեև Բրիտանիայի ջանքերն ուղղված չեն Պարսից ծոցում այլ երկրների առևտրային շահերի դեմ, սակայն օտարերկրյա որևիցե տերության կողմից ռազմածովային հեևակետի հիմնումը կամ նավահանգստի ստեղծումը լուրջ վտանգ է ներկայացնում բրիտանական շահերին, որին պետք է հակազդել բոլոր հնարավոր միջոցներով: Այս հայտարարությունը ուղեկցվեց Մոցում բրիտանական ռազմածովային ուժերի ցայցով<sup>241</sup>:

Պարսից ծոցի մասին հուշագիրը ներկայացնելուց անմիջապես հետո Լենդալունը հանդիպեց Լոնդոնում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ա. Բենկեներդրֆին, երան հայտնելով, որ բրիտանական կառավարությունը նպատակադրված է Ռուսաստանի հետ համաձայնության գալ Իրանի և Պարսից ծոցի խեղիքների վերաբերյալ: Փարսիզի գործադրած ջանքերի շնորհիվ 1903 թ. ամառանը և աշնանը բրիտանական արտաքին գերատեսչության ներկայացուցիչների և ռուսական առաքելության ղեկավարի միջև տեղի ունեցան մի շարք հանդիպումներ: Հուլիսի 29-ին Լենդալունը Բենկեներդրֆին հետևյալ հայտարարությունն արեց. «Եթե Ռուսաստանը տեղե-

կացներ մեզ (Մեծ Բրիտանիային Ն.Ն.) իր հետագա ծրագրերի մասին և էթե ընդուներ, որ մեր կողմից յուրաքանչյուր զիջման դեպքում, մենք պետք է ակնկալենք համապատասխան զիջումներ նրա կողմից, ապա հուսով ենք, որ միասին կարող ենք վերջ դնել այս դժբախտ մրցակցությանը, որը այսքան երկար ժամանակ գերիշխում է մեր հարաբերություններում՝ Չինաստանում, Միջին Արևելքում և այլ վայրերում<sup>242</sup>: Թե ի՞նչ կարգի զիջումների մասին էր խոսքը՝ Ս. Պետերբուրգին պարզ դարձավ միայն 1904 թ. հունվարի 1-ին, երբ բրիտանական արտգործնախարարի և Բենկեներդրֆի միջև բանակցությունները վերակավեցին: Անգլիացիները ցանկանում էին, որ Ռուսաստանը բրիտանական ազդեցության գոտի ճանաչի Աֆղանստանը և Տիբեթը: Փոխարենը՝ նրանք պատրաստ էին ճանաչել ռուսական գերակա շահերը Մանջուրիայում: Ինչ վերաբերում էր Իրանին, ապա առաջարկվում էր այն բաժանել ազդեցության գոտիների, հյուսիսը՝ ռուսական, հարավը և հարավ-արևելքը (Միսթանը)՝ բրիտանական: Նման հարցադրումը տվյալ պահին ձեռնտու չէր Ռուսաստանին: Փաստացի, զիջումն չգետնվում, քանի որ հյուսիսային Իրանը և Մանջուրիան արդեն ռուսական ազդեցության տակ էին, Մեծ Բրիտանիան հույս ուներ գերակայություն հաստատել Աֆղանստանում, ապա եան իր ազդեցության ոլորտում ամբողջությամբ ներառել Պարսից ծոցն ու Տիբեթը<sup>243</sup>:

Ի պատասխան՝ ռուսական դեսպանը հայտարարել էր, որ իր կառավարությունը թեև ցանկանում է Անգլիայի հետ ջերմ հարաբերություններ հաստատել, սակայն կտրականապես դեմ է Իրանն ազդեցության գոտիների բաժանելու բրիտանական առաջարկին՝ նշելով, որ Ռուսաստանը համաձայն է միայն Միսթանը, Բելուջիսթանը դիտարկել, որպես բրիտանական ազդեցության գոտի: Ինչ վերաբերում է Պարսից ծոցին, ապա Ռուսաստանը թեև ճանաչում է այստեղ բրիտանական գերակայությունը, սակայն պահպանելու է դեպի վերոնշյալ

<sup>240</sup> Фирюз Казем-Заде, Борьба за влияние Персии, Дипломатическое противостояние России и Англии, М., 2004, с. 362.

<sup>241</sup> Chirol Valentine, նշվ. աշխ., էջ 265, John Albert White, նշվ. աշխ., էջ 62:

<sup>242</sup> British Proposal to Russi, January 1, 1904, in՝ u John Albert White, Appendix 1, նշվ. աշխ., էջ 300-301:

<sup>243</sup> British Proposal to Russi, January 1, in՝ u 1904, John Albert White, Appendix 1, նշվ. աշխ., էջ 300-301:

շրջաններ «կոմերցիոն երթ» ունենալու իր հնարավորությունը, մասնավորապես անդրիրանական երկաթգծի տարբերակով<sup>244</sup>:

Մինևույն ժամանակ բրիտանական կառավարության հավաստիացումներն առ այն, որ Պարսից ծոցի ավազանում այլ երկրների առևտրատնտեսական շահերը չեն հանդիպի որևիցե հակազդեցության, Պետերբուրգը գնահատում էր ոչ իրատեսական: Ակնհայտ էր, որ Ռուսաստանի Մեծ Բրիտանիայի հետ Օղոսմ մրցակցելու հնարավորությունները առանց ռազմաքաղաքական գործոնների ամկայության (նյուպատություններ, ռազմաճովային հենակետ, երկաթգիծ) սահմանափակվելու էին: Այդպիսով, անզրո-ռուսական բանակցային առաջին փուլը փակուղի մտավ:

Շեղհուպ մինչև 1905 թ. ռուսական կառավարող շրջանները գտնում էին, որ Իրանում ռուսական ազդեցությունը չափազանց ուժեղ է թե՛ տնտեսական և թե՛ ռազմաքաղաքական առումներով, ինչն էլ Մեծ Բրիտանիայի հետ Իրանն ազդեցության գոտիների բաժանելու մասին համաձայնագրի կնքումը դարձնում էր ոչ շահավետ: Վերը նշված 1904 թ. սեպտեմբերի 30-ի թվակիր Թեհրանում Ռուսաստանի նորանշանակ դեսպանորդ Ա.Ն. Շպեյերին Լամզորքի հանձնարարականում նաև նշվում էր. «Իրանական հարցում Անգլիայի հետ բանակցություններ սկսելն անգամ մեծ հարված կարող է հասցնել ռուսական դիրքերին: Մենք պետք է ապացուցենք պարսիկներին և անգլիացիներին, որ իր շահերը պաշտպանելու Ռուսաստանի սկզբունքայնությունը չի թուլացել հեռավորարևելյան ճգնաժամի արդյունքում»<sup>245</sup>:

Շատ արտգործնախարարի՝ Իրանում ռուսական դիվանագիտության հիմնական նպատակը «անգլիացիների կողմից խրախուսվող պարսից գահի այլ հավակնորդների ձգտումներին հակազդելն է»: Ռուսաստանի համար ամենահարմար թեկնածուն թագաժառանգ

Մոհամմադ Ալի միրզան էր: Թավրիզում նա ոչ միայն ապացուցել էր իր հավատարմությունը, այլև ռուսասիրական հակումներ էր դրսևորել:

Իրանում Ռուսաստանի ներկայացուցիչները ջերմ հարաբերություններ էին հասցրել հաստատել վերջինիս հետ և ձեռնամուխ էին եղել, որ թագաժառանգը դառնա միայն Հաշվավարկային բանկի հավատարիմ հաճախորդը: Վերջինիս հետ զադտնի պայմանագիր էր կնքվել այն մասին որ. «Եթե արտակարգ իրավիճակների պայմաններում նա ստիպված լինի թողնել Թավրիզը (նկատի ունի շահի բացակայության ընթացքում երկիրը կառավարելու կամ գահը ժառանգելու նպատակով Ն.Ն.), նրան կտրամադրվի փոխառություն»<sup>246</sup>:

Ռուսական իշխանությունները մտավախություն ունեին, որ ծանր հիվանդությամբ տառապող Մոզաֆֆար Էյ-Դին շահի մահվան դեպքում բրիտանական հովանավորությունից օգուվող նրա եղբայր Զիլ օս-Սալթանեն կարող է զբաղեցնել գահը<sup>247</sup>: «Բրիտանացիները հովանավորելով առանձին նահանգների կառավարիչներին և ազդեցիկ շեյխերին՝ փորձում են ամեն կերպ թուլացնել կենտրոնի և շրջանների կապը, - նշում էր Լամզորքը, - սակայն Ռուսաստանը շահին սատարելով՝ հակազդում է այդ միտումներին»<sup>248</sup>:

Չնայած 1900-1905 թթ. Իրանում ռուսական ազդեցությունն ամրապնդելուն ուղղված մի շարք քայլերի՝ կայսրությունում ծագած հեղափոխական խմորումները, 1897-1903 թթ. ընթացքում կառուցվող Գինական արևելյան երկաթգծի հսկայածավալ շինարարությունը, այնուհետև 1904 թ. բռնկված ռուս-ճապոնական պատերազմը ջլատում էին կայսրության ֆինանսական համակարգը և խորացնում տնտեսական և ներքաղաքական ճգնաժամը:

Շուտով ռուսական կառավարությունը ստիպված էր վերանայել Իրանի նկատմամբ իրականացվող արտաքին քաղաքական ուղեգիծը, քանի որ այլևս ի գորտ չէր տնտեսական լայնահուն ծրագրեր

<sup>244</sup> История внешней политики России конец XIX- начало XX века, изд. 2-е, т. 12, с. 128-129.

<sup>245</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, д. 603, л. 54.

<sup>246</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, д. 603, л. 27-30.

<sup>247</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, д. 603, л. 56.

<sup>248</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, д. 603, л. 161.

իրականացնել Իրանում: Նրա առջև ծառայավ նախկինում ձեռք բերվածը պահպանելու խնդիրը:

Պատահական չէ, որ 1903 թ. փետրվարին Նիկոլայ Բ-ը թեև թույլատրեց Հաշվավարկային բանկից կարճաժամկետ մի շարք վարկերի տրամադրումն Իրանին, սակայն իրահանգեց այսուհետև «չտրամադրել որևիցե դրամական հատկացում իրանական կառավարության կարիքների համար», մինչև չգումարվի Հատուկ խորհրդակցություն՝ «Իրանում Ռուսաստանի ֆինանսական քաղաքականության հետագա մտտեցումները քննելու» նպատակով:

Հատուկ խորհրդակցության գումարման անհրաժեշտությունն առաջ եկավ իրանական կառավարության ֆինանսական պահանջների ուղղված ռուսական Պետական գանձարանի վրա ծանրացած պարտավորությունները թեթևացնելու հրամայականով<sup>249</sup>: Նորանշանակ ֆինանսների նախարար՝ Վ.Ն. Կոկովցովն առաջնահերթությունների օրակարգ մտցրեց շահական իշխող շրջանների և տրամադրվող ոչ արտադրողական տարատեսակ վարկերի հարցը: Նման վարկավորումները, ըստ նախարարի, հնարավոր էին միայն արտակարգ դեպքերում, քանի որ կայսրությունում առկա էին ֆինանսական հրատապության այլ խնդիրներ<sup>250</sup>:

Լամզդորֆի նախագահությամբ Հատուկ խորհրդակցությունը կայացավ 1904 թ. հունիսի 7-ին: Իր զեկույցում նախարարն արձանագրեց, որ 1900 թ. և 1902 թ. փոխառություններից հետո իրանական

<sup>249</sup> 1902թ. ռուսական փոխառությունից հետո սեռակցաման եզրին հայտնված իրանական գանձարանի ծախսերը մշտապես լրացվում էր Հաշվավարկային և Հանիչանական բանկերի կողմից բարձր տոկոսադրույքով (9-12%) կարճաժամկետ վարկերի հաշվին: Հաշվավարկային բանկը շահին, թագածառանց Մոսկովայի Ալիին, ինչպես նաև կառավարության անդամներին և բարձրաստիճան հոգևորականներին նույնպես վարկեր էր տրամադրում:

<sup>250</sup> 1903 թ. օգոստոսին Վիտտեն իր քաղաքական ընդդիմախոսների ճնշումների հետևանքով առկաված էր թողնել նախարարի պաշտոնը: Ֆինանսների նախարարի պաշտոնում Վիտտեին փոխարինեց Է. Դ. Պլեսկին, իսկ 1904 թ. փետրվարին Վ. Կոկովցովը: Шайшов А. В., Витте финансовый гений последних Романовых. Досье без ретуши, М., с. 308-311, Витте С. Ю., Воспоминания. Царствование Николая II, 2-е издание, т. 1., Л., 1924, с. 231-232.

կառավարությունը մշտապես դիմել է Ռուսաստանին՝ լրացուցիչ փոխառություններ տրամադրելու և կուտակված պարտքերի մարման ժամկետները երկարաձգելու խնդրանքով: Այդ դիմումների մեծ մասը քաղաքական շահերից էլնելով թեև բավարարվել են և Իրանի պարտքը Ռուսաստանին միայն կարճաժամկետ վարկերի դիմաց արդեն իսկ կազմում է 3 մլն ռուբլի, սակայն շահական կառավարության նկամամբ անհրաժեշտ է մշակել նոր մտտեցումներ<sup>251</sup>:

խորհրդակցության որոշմամբ՝ Իրանում Ռուսաստանի ֆինանսատնտեսական քաղաքականությունը այսուհետև պետք է խարսխվեր հետևյալ սկզբունքների վրա.

1) հնարավորինս խուսափել շահական կառավարությանը ֆինանսական օժանդակություն ցուցաբերելուց,

2) վարկեր տրամադրել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ էլնելով քաղաքական և տնտեսական հատուկ հետաքրքրություններից, ընդ որում լուրջ երաշխիքների առկայության պարագայում,

3) ձեռք չբերել նոր մենաշնորհներ, եթե դրանք չեն արդարացվելու իրենց շահութաբերությամբ,

4) կատարելագործել և զարգացնել Իրանում արդեն գոյություն ունեցող ռուսական բանկային, ճանապարհաշինական, տրանսպորտային և այլ կառույցներն ու ձեռնարկությունները,

5) շարունակել հակազդել Իրանում երկաթուղային շինարարության ծավալմանը,

6) մասնակցել հեռագրական ցանցի ընդլայնման և շախատանքներիին<sup>252</sup>:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ապացուցելով Իրանում հետագա ներդրումների արտադրողականության կարևորությունը, ֆինանսների նախարարը գտնում էր, որ «դրանք անհրաժեշտ է ասանափակել Հյուսիսային Իրանով, Սպահան գծից հյուսիս, քանի որ դեպի հարավ օտարերկրյա այլ պետությունների, մասնա-

<sup>251</sup> АВИРП, «Персидский стол», ф. 144, оп. 488, д. 603, л. 67-68.

<sup>252</sup> АВИРП, «Персидский стол», ф. 144, оп. 488, д. 603, л. 68-69, Журнал особого совещания по вопросу о финансово-экономической политике России и Персии, 7 июня 1904 г., «Красный архив», 1933, т. 1 (56), с. 49-55.

վորապես Մեծ Բրիտանիայի հետ մրցակցությունը դժվարություններ է ստեղծում<sup>253</sup>:

Չնայած հունիսյան խորհրդակցության ընդունած որոշումներին՝ ռուսական կառավարությունը, թեև ավելի սահմանափակ ձևով, այնուամենայնիվ շարունակեց շահին և նրա շրջապատին ֆինանսավորելու գործընթացը<sup>254</sup>: Ցարական կառավարությունը հստակորեն գիտակցում էր, որ կտրուկ հետընթացը կնշանակեր Իրանում Մեծ Բրիտանիայի նկատմամբ համակերպման և զիջողականության դրսևորում:

Մինչև 1906 թ. Իրանում Ռուսաստանի ներդրումների ընդհանուր գումարը կազմում էր 72 մլն ռուբլի, որից իրանական կառավարության պարտքը համապատասխանաբար կազմում էր 29 մլն ռուբլի երկարաժամկետ և 3,2 մլն ռուբլի կարճաժամկետ պարտավորությունների դիմաց: Մինչդեռ Իրանի պարտքը Մեծ Բրիտանիային չէր անցնում 2 մլն ռուբլու սահմանը: Հաշվավարկային բանկին Մոհամմադ Ալիի պարտքը մինչև գահ բարձրանալը (1907 թ.) արդեն մտավորապես կազմում էր 1,7 մլն ռուբլի<sup>255</sup>:

1905 թ. հունիսի վերջին Պետերբուրգում հայտնի դարձավ, որ իրանական կառավարությունը բանակի վերակառուցման համար պատրաստվում է հրավիրել ավստրիացի իրանահմզիչների: Ռուս զինվորականներից բացի, օտարերկրյա այլ իրանահմզիչներ չիբավիրելու ռուսական կառավարության պահանջը բավարարելու դիմաց Իրանի վարչապետը բանակի վերակառուցման համար խնդրեց տրամադրել 2 մլն թումանի (մոտավորապես 3,5 մլն ռուբլի) նոր փոխառություն<sup>256</sup>:

<sup>253</sup> Журнал особого совещания по вопросу о финансово-экономической политике России и Персии, 7 июня 1904 г., "Красный архив", 1933, т. I (56), с. 51-55.

<sup>254</sup> 1904-1905 թթ. քիբարցում Հաշվավարկային բանկը շահական կառավարությանը տրամադրեց երեք կարճաժամկետ վարկ՝ 1904 թ. փետրվարին 1.200.000 թուման, 1905թ. մայիսին 500 000 թուման, 1905 թ. օգոստոսին 150 000 թուման: Апанас Б. В., Российское самодержавие и вывоз капиталов 1895, ևշվ. աշխ., էջ 86, Кулагина Л., Россия и Иран (XIX- начало XX в. ), ևշվ. աշխ., էջ 154-155:

<sup>255</sup> АВПРИ, "Персидский счет", ф. 144, оп. 488, л. 603, л. 30, 218-219.

<sup>256</sup> Апанас Б. В., Российское самодержавие и вывоз капиталов 1895, ևշվ. աշխ., էջ 99-104:

Բավական էր միայն իրանական բանակի վերակառուցման մասին բանակցություններն ավելի գործնական փուլ թեակդիսելի, որպեսզի ակնհայտ դառնար, որ իրանական կառավարությունը լքորեն հետաքրքրված է բացառապես փոխառությամբ: Գումարն անհրաժեշտ էր Եվրոպա շահի հերթական ուղևորության ծախսերը հոգալու և թագածառանգին՝ շահի բացակայության ընթացքում երկիրը կառավարելու համար<sup>257</sup>:

Իրանական կառավարությանը նոր փոխառություն տրամադրելու հարցում հատկապես մեծ ակտիվություն էր ցուցաբերում Ռուսաստանի արտգործնախարարը, ինչը արժանացավ Վ. Կոկովցովի սուր քննադատությանը: Նրա կարծիքով Մեծ Բրիտանիայի հետ նախկին տեսնվելով մրցակցությունն Իրանում կարող էր հանգեցնել Պետական գանձարանի կատարյալ սեռակցմանը: Այսուհանդերձ, 1905 թ. մայիսի վերջին իրանական կառավարությանը տրամադրվեց 500 հազ. թումանի վարկ, սակայն ռուսական փոխառությունների դիմաց իրանական անհետաձգելի պարտքերի պատճառով վարկը գրեթե ամբողջությամբ մնաց Հաշվավարկային բանկում և իրանական կառավարությունն արդեն հունիսին նույն պայմաններով, վարկը կրկնակի ավելացնելու նոր առաջարկով դիմեց ռուսական կողմին<sup>258</sup>:

1905 թ. մայիսի սկզբին Նիկոլայ Բ-ի մոտ իրանական հարցերով հաշվավորությունաց հետո, Լամզորֆը Կոկովցովին առաջարկեց խնդրի լուծման այլընտրանքային տարրերակ, որը նախատեսում էր շահական կառավարության հետ դաշնակցային համաձայնագրի կնքում, ինչը ըստ արտգործնախարարի՝ կերաշխավորեր Ռուսաստանի գերակայությունն Իրանում և այդպիսով կբացառեր Մեծ Բրիտանիայի հետ հետագա ֆինանսական մրցակցության անհրաժեշտությունը: Կոկովցովը թերահավատորեն վերաբերվեց Իրանի հետ դաշինք կնքելու ԱԳՆ ծրագրին, ըստ նրա՝ Իրանի նման թույլ

<sup>257</sup> Նույն տեղում, էջ 104-105:

<sup>258</sup> Նույն տեղում, էջ 106-107:

պետության հետ յուրաքանչյուր դաշինք լրացուցիչ ծանրաբեռնվածություն էր ստեղծելու ռուսական զանձարանի համար: Նա կրկին պնդում էր, որ անհրաժեշտ է Ռուսաստանի ազդեցության ոլորտն Իրանում նեղացնել մինչև Սպահան, իսկ ռուսական գործունեությունը Օնցում սահմանափակել բացառապես բնական ճանապարհով զարգացող մասնավոր նախաձեռնություններով<sup>259</sup>:

1905 թ. օգոստոսի 12-ին կայացած «Իրանում Ռուսաստանի հետագա քաղաքականության հարցերին վերաբերող» Հասուկ խորհրդակցության հիմնական նպատակը վերջնական ու փոխզիջումային մտնեցումների մշակումն էր՝ ռուս-իրանական կայանալիք բանակցությունների համար, որի առաջնային հարցը Իրանին ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու խնդիրն էր<sup>260</sup>:

Ռուսաստանի իրանական քաղաքականությունը փակուղուց դուրս բերելու Վ. Լամզորֆի վերջին փորձը անհաջողության մասնավելց: Ռուսական կառավարությունն ի վիճակի չէրավ վճարելու փոխառությունը: Իրանում ռուսական ազդեցությունն ընդլայնելու ծրագրերը խորը հակասության մեջ հայտնվեցին համընդհանուր այն ճգնաժամի հետ, որում հայտնվել էր ցարիզմը 1905 թ.: Իրանում ներդրումների պետական բեռյթը, ինչպես նաև շահական կառավարությանը ստատաբելու սկզբունքը բարդ էրկրնտարների առաջ կանգնեցրին ռուսական կառավարությանը, որն իր քաղաքական նպատակների կենսագործման համար ստիպված էր հետևողականորեն պահպանել կազմալուծվող դաջարական վարչակարգը, քանզի վերջինիս անկումը սպառնալիքի տակ էր դնում ռուսական շահերը:

Թեև ռուս-իրանական անտարախնտեսական բոլոր ոլորտներում ռուսական կապիտալը զբաղեցնում էր առաջնային դիրքեր, Իրանում բրիտանական գերակայության հաստատման համար ստեղծված պայմանները շատ ավելի արդյունավետ էին: Վերջինս այդ երկրում տիրապետում էր մաքսային, անտրային, տրանսպորտային և տա-

րանցիկի առավել համակարգված ենթակառուցվածքների, իսկ նրա զարգացած արդյունաբերությունը լիարժեք հիմքեր էր տալիս բոլոր չափանիշներով գերազանցելու Ռուսաստանին:

Թեևիրանում ռուսական դեսպանատան առաջին քարտուղար Ստոլով ի մի բերելով Իրանում առաքելության արդյունքները՝ 1906 թ. մարտի 20-ի իր զեկույցում նշում էր, որ չնայած Ռուսաստանը ոչ մի այլ երկրում այդքան զուսար և ջանք չէր ներդրել, որքան Իրանում, այնուամենայնիվ այստեղ հիմնված ռուսական տնտեսական, դիվանագիտական և ռազմական ինտիտուտների միջև համագործակցությունը չափազանց թույլ է կազմակերպված<sup>261</sup>:

«Թեև Պարսկական կազակական բրիգադում Ռուսաստանի Պաշտպանության նախարարությունն ուներ իրանահզիչներ և սպաներ, նախարարության ենթակայության տակ էր գտնվում Թեևրանի Հաշվավարկային բանկը՝ նահանգային բազմաթիվ մասնաճյուղերով, այդ թվում նաև Էնգելի-Թեևրան-Համադան ճանապարհը և Էնգելիի նավահանգստի բարեկարգումը և տրանսպորտային ընկերությունները, Մովազնացության նախարարությունն Ամուդղե կղզում ուներ ռազմածովային կայան, իսկ Ներքին գործերի նախարարության ենթակայության տակ էր Ռուսաստանի կողմից կառուցված Միսթանի հեռագրական գիծը, Այսրկովկասի նահանգապետին են ենթարկվում Գումբեթ-Բաբուսի կոմիսարը և Խորասանի հակաժանտախտային կայանի պահակագործի իրամանատարը, իսկ ռուսական «Կովկաս և Մերկուրի» շոգենավային և անտրային ընկերությունը պարբերաբար ֆինանսավորվում է կառավարության կողմից, նույն պետության այս բոլոր ենթակառույցները գործում են առանց կապի և միասնականության, կարծես դրանք բոլորը պատկանում են տարբեր պետությունների», - նշում էր դիվանագետը<sup>262</sup>:

Այս շրջանում Իրանում ռուսական դեսպանությունից, հյուպատոսություններից, Հաշվավարկային բանկի կառավարման գրասենյակից և այլ կառույցներից Ս. Պետերբուրգ հասցեագրված բազ-

<sup>259</sup> Журнал особого совещания по вопросу о будущих отношениях России и Персии, 12 августа 1905 г., «Красный архив», 1933, т. 1 (56), с. 55-56.

<sup>260</sup> Այսի տեղում:

<sup>261</sup> АВПРИ, «Персидский стол», ф. 144, оп. 488, л. 603, л. 170:

<sup>262</sup> Այսի տեղում:

մաթիվ գեկուցագրերում լավագույնս արտացոլվել է ոչ միայն Իրանում ցարական կառավարության վարած քաղաքականության հակասականությունն ու ամորֆ վիճակը, այլև վերջինիս առջև ծառայած օրհասական խնդիրների խճանկարը, որոնք հրատապ կարգավորման կարիք ունեին:

Դրան գումարվեց նաև ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտությունը, որը հանգեցրեց կայսրության միջազգային կշռի շեշտակի անկմանը՝ նվազեցնելով Արևելքում ռազմաքաղաքական ծանրակշիռ գործոն լինելու նրա հնարավորությունները: Միջազգային ասպարեզում Ռուսաստանի համար ստեղծվում էր քաղաքական, ռազմավարական և տնտեսական բոլորովին նոր իրադրություն: Հասկալա, որ Գերմանիան հետևողականորեն իրագործում էր Մերձավոր և Միջին Արևելքի նկատմամբ մշակված ռազմաքաղաքական և տնտեսական իր ծրագրերը: Գերմանական դիվանագիտությունը ռուս-բրիտանական քաղաքական առճակատումը ծառայեցնելով սեփական շահերին և օգտվելով ռուս-ճապոնական պատերազմի ընթացքում Ռուսաստանի թուլացումից՝ փորձում էր դուրս մղել վերջինիս Մեջին Արևելքից: Այսպիսով, տարածաշրջանում ձևավորվող ուժային նոր հարաբերակցությունը ստիպում էր Ռուսաստանին վերսկսելու Մեծ Բրիտանիայի հետ իրանական հարցի շուրջ երկխոսությունը:

## 2. Իրանը 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրում. Ռուսական կայսրության իրանական քաղաքականության նոր ուղեգծի ձևավորումը

Ռուս-ճապոնական պատերազմից հետո ռուսական կառավարությունը կանգնեց արտաքին քաղաքական նոր կողմնորոշման ընտրության առջև: Ինչպես հայտնի է, 1904 թ. ապրիլի 8-ին երկարատև բանակցություններից հետո Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան համաձայնագիր կնքեցին, որով լուծվեցին Մարոկոյի, Եգիպտոսի և Սիամի գաղութային խնդիրների հետ կապված երկու տեղությունների միջև առկա հին տարաձայնությունները: Դրան հետևեցին անգլիական և

ֆրանսիական գլխավոր սպայակույտերի միջև բանակցությունները, որի արդյունքում ծնունդ առավ Գերմանիայի դեմ ուղղված անգլո-ֆրանսիական Անտանտը<sup>263</sup>:

Եր հերթին, օգտվելով Ռուսաստանի հեռավորարևելյան քաղաքականության անարդյունավետությունից, Բեռլինը փորձեց մեկուսացնել Ռուսաստանին Ֆրանսիայից: 1905 թ. հուլիսին Վիլիելմ Բ-ի և Նիկոլայ Բ-ի «բյուրջյան հանդիպումն» այդ փորձերից էր, որը նպաստեց ուներ խափանելու ռուս-ֆրանսիական դաշնակցային հարաբերությունները: Ռուսական կառավարությունը խուսափում էր խախտել Ֆրանսիայի հետ դաշինքը, որի արդյունքում կարող էր գրկվել երկիրը սեանկացումից փրկող ֆրանսիական դրամական շուկայի իրական մատակարարումներից, ուստի Բեռլինի փորձերը հաջողությամբ չպատկվեցին<sup>264</sup>: Ցարական կառավարությունն իր քաղաքական և տնտեսական դժվարությունները տվյալ փուլում դիտարկում էր իբրև ժամանակավոր երևույթ՝ հակվելով գերտերությունների միջև «դրական չեզոքություն» պահպանելու քաղաքականությանը:

Կայսրության առաջնային խնդիրը դարձավ ջլատված ռազմական համակարգի վերականգնման և երկրի ներսում անագնացող հեղափոխական շարժումը կասեցնելու նպատակով արտաքին նոր փոխառության կնքման հարցը<sup>265</sup>: Միջազգային ֆինանսական տարբեր կենտրոնների հետ փոխառության վերաբերյալ ռուսական կառավարության դժվարին բանակցությունները սերտորեն շաղկապվեցին 1905 թ. օգոստոսին Պորտսմուտում ընթացող ռուս-ճապոնական հաշտության պայմանագրի, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև ծագած

<sup>263</sup> BD, Vol. III, The Testing of the Entente 1904-6, Appendix A, I., 1928, pp. 398-405, նշվ. աշխ., էջ 551-561:

<sup>264</sup> Бестужев, И. В., նշվ. աշխ., 127-128:

<sup>265</sup> 1906 թ. փոխառության պատմության մասին մանրամասն տե՛ս Аваняч Б., Россия и Международный капитал, 1897-1914, Очерки истории финансовых отношений, Ленинград, 1970, Новые документы об Алжирской конференции и займе 1906 г., "Красный архив", М.-Л., 1931, т. I (44), с. 161-165, Crisp O., "The Russian Liberals and the 1906 Anglo-French Loan to Russia", (The Slavonic and European Review), 39 (1961), I., p. 497-511:

Մարտկոյի ճգնաժամի (1905-1906 թթ.) և այդ կապակցությամբ հրավիրվող Ալեկսանդրի կոնֆերանսի հետ (1906 թ. հունվար-ապրիլ): Այդ ճգնաժամում Ռուսաստանի հիմնական նպատակը, ռուսական ԱԳՆ բերողմամբ՝ Գերմանիայի և Ֆրանսիայի միջև հնարավոր բախման չեզոքացման խնդիրն էր և երանցից յուրաքանչյուրի հետ նորմալ հարաբերությունների պահպանումը<sup>266</sup>: Մակայն, իր կամբին հակառակ, ֆրանս-գերմանական հակամարտությունում ռուսական կառավարությունն, արտաքին փոխառություն ստանալու համար, հարկադրված էր քաղաքական աջակցություն ցուցաբերել Փարիզին, որին ստատարում էր նաև Բրիտանիան: Արդյունքում, բրիտանական կառավարության համար իրական հնարավորություն ստեղծվեց ռուսական կառավարության հետ վերսկսել արևելյան հարցերի շուրջ ընդհատված քննարկումները<sup>267</sup>:

Միջազգային ոչ բարենպաստ այս պայմաններում Ռուսաստանի համար թեև անցանկալի էր Գերմանիայի հետ հարաբերությունների բարդացումը, սակայն մյուս կողմից ռուսական իշխանությունները չէին կարող անտեսել Իրանում և Թուրքիայում օրեցօր աճող գերմանական ազդեցությունը:

Թեև Գերմանիայի մասնաբաժինն Իրանի հետ առևտրաշրջանառությունում կազմում էր ընդամենը 5%, ռուսական՝ 50%-ի և անգլիական 25%-ի դիմաց, այնուամենայնիվ ռուսական առևտրաարդյունաբերական շրջաններին չափազանց անհանգստացնում էր գերմանական ապրանքների ներմուծման աճի տեմպերն Իրան, որը կարճ ժամանակահատվածում հասցրել էր երեք անգամ գերազանցել ռուսականին<sup>268</sup>: Ռուսաստանի համար իր արդյունաբերական ապրանքների ամենախոշոր շուկաներից մեկը կորցնելու իրական վտանգ

<sup>266</sup> Игнатова А., ևշվ. աշխ., էջ 83:

<sup>267</sup> BD, vol. III, pp. 400-402, John Albert White, ևշվ. աշխ., էջ 194-195:

<sup>268</sup> Չնայած Ռուսաստանով Իրան տարանցիկի փակ լինելուն՝ Գերմանիան հաշտություն օգտվում էր միջազգային փոստային համաձայնագրի պայմաններին (Իրանը անջատվեց 1903 թ. -ից), որի հիման վրա մինչև 5 կգ ծակբոցներ մտնում էին արտոնյալ փոստային ամպլետների մեջ և կարող էին ուղարկվել միջազգային փոստային միության անդամ երկրներ: Павлова-М., ևշվ. աշխ., էջ 27:

էր ստեղծվում: Առավել անհանգստացնում էին գերմանական երկաթուղային ծրագրերը Մերձավոր և Միջին Արևելքում:

Բաղդադի երկաթուղին և դրա ճյուղավորումները դեպի Տրապիզոն և Թեհրան կզրկեին Ռուսաստանին Արևմտյան Եվրոպայից միջնարևելյան շուկաներ ապրանքներ մատակարարելու իր առավելությունից: Հատկապես խոսքը վերաբերում էր «Ռոյն բանկ»-ի կողմից առաջ քաշված՝ Բաղդադի երկաթուղին դեպի Թեհրան շարունակելու նախագծին: Բացի այդ, ռուս-գերմանական հակասությունները անեախընթաց կերպով սրվում էին Թուրքիայում Գերմանիայի մեծացող ազդեցության պատճառով: Ամրապնդելով իր դիրքերը Ադրեցներում՝ Գերմանիան սպառնում էր լիտվյան փակել Ռուսաստանի համար այդ չափազանց կարևոր առևտրական և ռազմավարական ճանապարհը<sup>269</sup>:

Վերջին մի քանի տարիների ընթացքում Գերմանիան ոչ միայն փորձել էր դուրս մղել Մեծ Բրիտանիային և Ռուսաստանին Թուրքիայից՝ այն վերածելով գերմանական ձեռնարկատերերի, բանկիրների և առևտրական կազմակերպությունների ակտիվ գործունեության ոլորտի, այլ նաև աշխատում էր Մեծ Բրիտանիայի դեմ քաղաքական շարժումներ հրահրել Պարսից ծոցի արաբական շեյխերի կառավարման տակ գտվող շրջաններում<sup>270</sup>:

Ի վերջո՝ XX դարասկզբին Գերմանիան բավականին ընդլայնելով իր ներկայությունն Իրանում և հղում անելով «բաց դռների և հավատար իրավունքների» քաղաքականության սկզբունքին՝ Իրանում ձևավորեց ազդեցիկ գերմանամետ քաղաքական գործիչների մի խմբավորում, որը Իրանի ապագա տեսլականը սկսեց կապել Գերմանիայի հետ<sup>271</sup>:

<sup>269</sup> Batterfield P., ևշվ. աշխ., էջ 17-19, Ն.Նավասարդյան, Իրանում երկաթուղային շինարարության հարցի շուրջ (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ) . ՀՀԳԱԱ (Կրկնալիտություն ինստիտուտ, Մերձավոր Արևելք հոդվածների ժողովածու IV, Եր., 2007, էջ 92-96:

<sup>270</sup> Բալդրիջայն Վ., Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914 թթ.), Եր., 1974, էջ 100:

<sup>271</sup> Lemczowski G., Russia and the West in Iran 1918-1948, A Study in Big Power Rivalry, Greenwood Press, Publishers New York, 1968, p. 5:

1905 թ. դեկտեմբերին Մեծ Բրիտանիայում իշխանության եկած լիբերալների շ. Քեմպբել-Քաննեթմանի կառավարության տեսանկյունից ցարիզմի տնտեսական թուլացումը և Գերմանիայի ակտիվ ներթափանցումը Մերձավոր և Միջին Արևելք կարող էին ստիպել Ռուսաստանին մի շարք զիջումների գնալ վերը նշված համաձայնագրի հարցում և հնարավորություն կրնձեռնին, անգլո-ֆրանսիական միության կազմում մի ղեկս Ռուսաստանի, ձեռք բերել ուժեղ դաշնակից՝ Կայսերական Գերմանիայի դեմ: Այսպիսով բրիտանական նոր կառավարությունում արտգործնախարարի պաշտոնում նշանակված է. Գրեյի կարևորագույն արտաքին քաղաքական խնդիրներից դարձավ ցարական կառավարության հետ ասիական հարցերի շուրջ վերջնական փոխհամաձայնության գալը<sup>272</sup>:

Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցը նոր կարգիներ է ձևավորման պահից մի վեր անընդհատ բարձրացվում էր և՛ պաշտոնական, և՛ դիվանագիտական տարբեր խողովակների միջոցով:

Միայն ռուս-բրիտանական շարունակվող մրցակցությունը և ճապոնիայի հետ պատերազմում կրած պարտությունը չէին կարող ստիպել Ռուսաստանին հրաժարվել իր վարած քաղաքականությունից և ավանդական խնդիրներից Իրանում: Իրանում բռնկված Մահմանադրական հեղափոխությունը և գերմանական վտանգը այն կարևորագույն գործոններն էին, որոնց արդյունքում Ռուսաստանը գնաց բնակցությունների: Պատահական չէ, որ Իրանն ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ անգլո-ռուսական բանակցությունների երկրորդ փուլը սկսվեց 1906 թ. սեպտեմբերին, հենց այն ժամանակ, երբ Թավրիզում հեղափոխական պայքարի արյունքում ստեղծվել էին էջումներ, իսկ Թեհրանում շահը հարկադրված էր թույլատրել մեջլիսի ընտրություններ<sup>273</sup>:

<sup>272</sup> Sweet D.W. and Langhorne, Great Britain and Russia 1907-1914, British Foreign policy under Sir Edward Grey, pp. 133-134.

<sup>273</sup> A Brief Narrative of Recent Events in Persia: Followed by a Translation of "The Four Pillars of the Persian Constitution", by Edward G. Browne, L. 1909, pp. 15-22.

Ֆանակցային գործընթացի առաջնային հարցերից էր Իրանին համատեղ անգլո-ռուսական փոխառություն հասկացումը, գերմանական հնարավոր փոխառությունը կանխելու նպատակով<sup>274</sup>: Դեռևս 1905 թ. գերմանական կառավարությունը Իրանին առաջարկեց 25 մլն մարկ արժուրոյթյամբ փոխառություն՝ փոխարենը պահանջելով նախահաշիստ տրամադրել Պարսից ծոցում և Բաղդադից դեպի շամահան կամ Քերմանշահ ճանապարհի կառուցելու մենաշնորհային իրավունք<sup>275</sup>:

1906 թ. գարնանից ռուսական կառավարության որդեգրած գերտերությունների միջև չեզոքության պահպանման արտաքին քաղաքական հայեցակարգը սկսեց տեղի տալ: Մարտի 12-ին Վ. Լամզոդոբլցի ցարին ներկայացրեց Լոնդոնում ռուսական դեսպան Բենկեդորֆի համար պատրաստված հանձնարարականի նախագիծը, որով ռուսական կառավարությունը պատրաստ էր «մերձեցման» գնալ Անգլիայի հետ և քննարկել որոշակի հարցեր: Միաժամանակ Իրանում նորանշանակ դեսպանորդ, մինչ այդ ԱԳՆ-ի Արևելյան դեսպարտամենտի ղեկավար, Ն. Գարսովիզին հրահանգվեց սերտորեն համագործակցել Թեհրանում անգլիական դեսպանորդի հետ<sup>276</sup>:

Դեռևս 1906 թ. առաջին ամիսների ընթացքում և անգլիական կառավարությունների միջև իրանական հարցում արդեն ձեռք էին բերվել որոշակի պայմանավորվածություններ. մասնավորապես իրանաաֆղանական սահմանում ստատու-քվոյի պահպանման և շահական կառավարությանը ֆինանսավորելու հարցում<sup>277</sup>: Այս փուլում իրանական կառավարությունը հեքթական անգամ փոխառության հարցով դիմելով Լոնդոնին և Պետերբուրգին՝ ստացավ անգլիական կառավարության մերժումը: Այդ որոշման մասին Գրեյը

<sup>274</sup> K. Neilson, Britain and Last Tsar, British policy and Russia, 1894-1917, Oxford, 1995, pp. 271-272.

<sup>275</sup> Sweet D.W. and Langhorne, Great Britain and Russia 1907-1914, British Foreign policy under Sir Edward Grey, p. 238, Иванюв М., Иранская революция 1905-1911 годов, М., 1957, с. 207.

<sup>276</sup> "Красный архив", К истории англо-русского соглашения 1907 г., 1935, т. 2-3 (69-70), с. 3-39.

<sup>277</sup> Առյուծ տեղում:

հաղորդեց Լոնդոնում ռուսական դեսպան Ա. Բենկենդորֆին և պատրաստակամություն հայտնեց իրանական կառավարությանը ֆինանսավորելու հարցը կապել ռուսական կառավարության հետագա որոշումների հետ, ինչը մեծ կարևորություն ունեցավ ցարական կառավարության համար: Շահին ֆինանսավորելու շուրջ ռուս-բրիտանական շարունակվող մրցակցայքաբը ծանրաբեռնում էր ռուսական բյուջեն և ճգնաժամային ամբողջ 1905 թ. ընթացքում հարկադրում էր կառավարությանը շարունակել այդ արատավոր՝ ֆինանսավորումը<sup>276</sup>:

1906 թ. նոր արտգործնախարար Ա. Իվոլյսկին ԱԳՆ եկավ արտաքին քաղաքական որոշակի ծրագրով: Կշռադատելով ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը՝ ռուսական իշխող վերնախավը վերանայեց երկրի արտաքին քաղաքական ուղեգիծը՝ իր ռազմաքաղաքական առաջնահերթությունների օրակարգ մտցնելով միջին-արևելյան, մասնավորապես իրանական խնդիրների շուրջ Մեծ Բրիտանիայի հետ փոխզիջումային մոտեցումներ մշակելու հնարավորությունը:

Անգլո-ռուսական համաձայնագիրը Ռուսաստանին հնարավորություն կտար ժամանակավորապես ձեռնպահ մնալ ակտիվ արտաքին քաղաքականությունից և ուշադրությունը կենտրոնացնել ներքաղաքական ճգնաժամի, սեփական ռազմական և տնտեսական ներուժը համախմբելու հիմնահարցերին: Հետակարգում Ռուսաստանը նպատակ ուներ համաձայնագիրը ծառայեցնել պատմական խնդիրների իրագործմանը՝ Բալկանների և Սևծովյան նեղուցների հարցերը հօգուտ իրեն լուծելու համար: Դրանք հարցեր էին, որոնք պատմական զարգացման բավական տևական ժամանակահատվածում մշտապես բախվում էին Մեծ Բրիտանիայի անզիջում հակազդեցությանը<sup>277</sup>: Ա. Իվոլյսկին գտնում էր, որ Ռուսաստանի արտաքին

քաղաքականությունն առաջվա պես պետք է հիմնվի Ֆրանսիայի հետ անսասան դաշինքի սկզբունքի վրա, սակայն այն անհրաժեշտ է ամրագրել և ընդլայնել Մեծ Բրիտանիայի և Ճապոնիայի հետ համաձայնագրերով<sup>278</sup>: Այս ամենով հանդերձ, ևս սկզբունքային էր համարում եվրոպական հարցերում ծանրակշիռ ազդեցություն ունեցող Գերմանիայի հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանումը<sup>279</sup>:

Լոնդոնի հետ բանակցություններն ավելի գործնական հունի մեջ դնելու համար Ա. Իվոլյսկուն հարկավոր էր հաղթահարել մի շարք ներքին խոչըրդոտներ, նախ՝ ռուս-բրիտանական մերձեցման հարցում առկա հասարակական կարծիքի երկփեղկվածությունը, այնուհետև իշխող շրջաններում ձևավորված տարաձայնությունները: Լախարաբին աջակցում էին հիմնականում բուրժուազիան, ազնվականության մի մասը, կադետների ու օկուպրիստների կուսակցությունները և «չափավոր աջերը»<sup>280</sup>: Մեծ Բրիտանիայի հետ մերձեցմանը դեմ էին դիվանագիտական կորպուսի պահպանողական մի շարք ծառայողներ, գերմանամետ արքունական որոշ շրջաններ և ազնվականության մի մասը: Սրանք հիմնականում կողմ էին Գերմանիայի հետ հարաբերությունների սերտացմանը<sup>281</sup>: Պատահական չէ, որ այդ շրջանում երկրի գերմանամետ խմբավորման ներսում լայն տարածում ստացավ «Երեք կայսերի դաշինքի» վերականգնման գաղափարը, ինչը հակադրվում էր Մեծ Բրիտանիայի հետ մերձե-

<sup>276</sup> Նույն տեղում:

<sup>277</sup> Անգլո-ռուսական համաձայնագրի համատեքստում Նեղուցների բանակցային գործընթացի մասին մանրամասն տե՛ս Բондаревский Г. Л., Англо-русское соглашение 1907 г., Проблема проливов, Россия и Персидский Залив, Спек. Библиотека, N

44, ч. 3, М., 1964, с. 150-252, Игнатъев А., Внешняя политика России в 1905-1907 гг., с. 184-190, Beryl Williams, Էշվ. աշխ., էջ 146-147:

<sup>278</sup> Извольский А. П., Воспоминания, М., 1989, с. 42-44.

<sup>279</sup> John Albert White, Էշվ. աշխ., էջ 209-212, Остафьева А., Էշվ. աշխ., էջ 179-180, Астафьев И., Русско-германские дипломатические отношения (от Портсмутского мира до Поддольского соглашения), М., 1976, с. 60:

<sup>280</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>281</sup> Հատկաշեշտակ է, որ 1907 թ. ռուսական դիվանագիտական կորպուսի գրեթե կիսը գերմանամետ էր, որոնք սերտ կապերի մեջ էին արքունական պառլամենտական շրջանների հետ: Ռուսական իշխող շրջանների արտաքին քաղաքական կողմնորոշման հարցի հետ կապված մանրամասն տե՛ս Бестужев Н. В., Էշվ. աշխ., էջ 63, 34-127:

նայու արտաքին գերատեսչության ղեկավարի ձգտմանը: Հատկապես իրարամերժ էին արտաքին գերատեսչության և ռազմական նախարարության մտտեցումները: Ռազմական շրջանները խնդիր դիտարկում էին ռազմավարական տեսանկյունից: Պաշտպանության նախարար Ա. Ռեդիգերը, գլխավոր շտաբի պետ Ֆ. Պալիցինը և գինձորական վերնախավի այլ գործիչներ հատկապես դեմ էին Իրանի հարավ-արևելյան Միսթան նահանգի անգլիական ազդեցության գոտի ճանաչելու իրողությանը, որտեղ արդեն իսկ բավականին ամրակայված էր ռուսական ազդեցությունը: Մտավախություն կար նաև, որ համաձայնագիրը միարժեքորեն չի դիտվի Գերմանիայի կողմից: Կիկոլայ Բ-ը, քնդիանուր առմամբ, կիսում էր Իզոլյուցիո տեսակետը, սակայն մեծապես շահագրգռված էր պահպանել Գերմանիայի հետ նորմալ հարաբերություններ և ցանկանում էր չեզոքություն պահպանել անգլո-գերմանական հավանական բախման դեպքում: Այս տեսակետին էր նաև նախարարների խորհրդի նախագահի պաշտոնում եղանակված Պ. Ստոլիպինը, ով ցարիզմի դիրքերն ամրապնդելու համար անհրաժեշտ էր համարում Ռուսաստանի համար ապահովել քսան տարվա արտաքին և ներքին հանգստության ժամանակաշրջան<sup>284</sup>:

Անգլիական կառավարությունը սկզբում նախատեսում էր քննարկման դնել չորս հարց՝ Բաղդադի երկաթուղու, Տիբեթի, Իրանի և Աֆղանստանի խնդիրները<sup>285</sup>: 1906 թ. մայիսի 11-ին Է. Գրեյը ռուսական դեսպանորդ Բենկլենդորֆի հետ իր առանձնազրույցում առաջարկեց անգլո-ֆրանս-ռուսական համատեղ գործողություններ ձեռնարկել Բաղդադի երկաթուղու հարցում՝ ցանկանալով զրկել Գերմանիային իր մենաշնորհային կարգավիճակից և այդ համատեղատում հնարավորություն տալ Ռուսաստանին իրականացնելու դեպի

Պարսից ծոց երկաթուղային ճանապարհի կառուցումը<sup>286</sup>: Գրեյի առաջարկը հստակ մատնանշում էր, որ Պարսից ծոցի ավազանում Մեծ Բրիտանիան Գերմանիայի դեմ մտադիր է պայքարել Ռուսաստանի միջոցով: Սակայն գերմանական կառավարությունը պատրաստ էր Փարիզի, Լոնդոնի և Պետերբուրգի հետ բանակցություններ վարել առանձին-առանձին, ինչը բացարձակապես ընդունելի չէր անգլիական կողմի համար: Մտեղծված իրավիճակում կողմերի համաձայնությամբ, Բաղդադի երկաթուղու խնդիրը առժամանակ դուրս եկավ համաձայնագրի բանակցային գործընթացից, և օրակարգում մնացին Տիբեթի, Աֆղանստանի և Իրանի խնդիրները<sup>287</sup>: Այդ հարցերի վերաբերյալ բանակցությունները ձգվեցին տասնհինգ ամիս՝ 1906 թ. մայիսի 29-ից մինչև 1907 թ. օգոստոսի 31-ը / պայմանագրի ստորագրման օրը/:

Իրանական խնդիրը համաձայնագրի բանակցային գործընթացի թերևս ամենակարևոր և կենտրոնական հարցն էր, որտեղ ի տարբերություն Տիբեթի և Աֆղանստանի, բախվում էին ոչ միայն ռազմաքաղաքական, այլև երկու տերությունների տնտեսական շահերը<sup>288</sup>: Իրանական խնդրի քննարկումը սկսելու գործուն խթան հանդիսացավ 1906 թ. օգոստոսին շահական կառավարության կողմից կրկին փոխառություն տրամադրելու մասին հնչեցրած խնդրանքները: Երկու տերությունները նպատակադրված էին պայմանավորվածություններ ձևեր բերել նաև իրանական հեղափոխության կանխարգելման և շահական գաղի ժառանգականության հարցերում<sup>289</sup>:

1906 թ. օգոստոսին դեսպան Ն. Գարսվիզը Թեհրանից անընդմեջ հեռագրում էր այդ փոխառության անհրաժեշտության մասին. «Թեհրանում, - գրում էր դեսպանը, - իշխող շրջանների միջև հարցի վերաբերյալ դիրքորոշումը տարբեր է: Ոմանք կողմնակից են Գեր-

<sup>284</sup> Бестужев Н. В., в 2-х т. т. 132-133.

<sup>285</sup> Բաղդադյան Կ. Իրանական հարցը ռուս-գերմանական դիվանագիտական հարաբերություններում 1905-1911 թթ., Մեքենավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Խ. XI, Եր., 1982, էջ 27:

<sup>286</sup> B. D. vol. IV, N 329.

<sup>287</sup> Остальцева А., Англо-русское соглашение 1907 года. Влияние русско-японской войны и революции 1905-1907 годов на внешнеполитическую политику царизма и на переговоры европейских держав, Саратов., 1977, с. 184.

<sup>288</sup> Sweet D.W. and Langhorne, Great Britain and Russia 1907-1914, Էյզ. աշխ., էջ 237-238:

<sup>289</sup> АВПРИ, «Персидский стол», ф. 144, оп. 488, д. 4453, л. 102.

մանկայից անհրաժեշտ գումարը ստանալ, ոմանք Անգլիայից, սակայն Ջ. Լասուսի ջանքերի շնորհիվ շահը այժմ հասկված է Ռուսաստանի կողմը»: Գարսովիզը, ով մինչ այդ գրադեղեր էր ԱԳԼ-ի Արևելյան դեպարտամենտի անօրենի պաշտոնը և հայտնի էր ռուսական արքունական ու բարձրաստիճան գինեգրական շրջանների հետ իր մտերիմ հարաբերություններով, աչքի էր ընկնում կայսերապաշտական հայացքներով: Նա այդքան էլ ոգեշնչված չէր ռուս-անգլիական մերձեցմամբ և գտնում էր, որ Ռուսաստանն ամեն կերպ պետք է շարունակի աստարել շահին<sup>280</sup>: Սակայն շահին միակողմանի փոխառություն տրամադրելու ուղղությամբ դեպպանորդի բոլոր ջանքերը նախ բախվում էին ֆինանսների նախարար Կոկովցովի ընդդիմությանը, ով գտնում էր, որ եթե նախկինում շահին ֆինանսավորելու հարցը կարևոր էր Մեծ Բրիտանիայի հետ մրցակցության տեսանկյունից, ապա այժմ ձեռք բերված պայմանավորվածության արդյունքում, հարկավոր է վերջ դնել իրանական կողմի շահարկումներին<sup>291</sup>: Անգամ համատեղ փոխառության դեպքում նախարարը ցանկանում էր, որպեսզի դրա ռուսական մասնաբաժինը նա տրամադրի Մեծ Բրիտանիան, իսկ ռուսական կառավարությունը միայն երաշխավորի այն<sup>292</sup>:

Սեպտեմբերյին Գարսովիզը հեռագրում էր, որ Իրանի վերաբերյալ անգլո-ռուսական բանակցություններն անհանգստության տեղիք են տալիս իրանական կառավարությանը. «Կասկածից վեր է, որ պարսիկներին անսահման ստաճ է ռուս-անգլիական հակամարտության հավանական լուծումը, որից նրանք շահեր էին քաղում: Ուստի հեռաբավոր է, որ Անգլիայի հետ համաձայնությունը ստիպի նրանք ընդհատազ զնայու երրորդ պետության առաջարկներին, և շահը մի քանի անգամ արդեն ակնարկել է, որ մտադիր է պայմանավորվող մրցակիցներին ստիպել զիջումների գեպ»<sup>293</sup>: Գարսովիզը նշում էր նաև, որ շահը տարակուսում է և Ռուսաստանից զրավոր պարտավորություններ է խնդրում հետևյալ խնդիրների առնչությամբ.

<sup>280</sup> АВІРІ, «Персидский стол», ф. 144, оп. 488, д. 4453, л. 98.

<sup>291</sup> Остальнича А., ևշվ. աշխ., էջ 193:

<sup>292</sup> Նույն տեղում:

<sup>293</sup> АВІРІ, «Персидский стол», ф. 144, оп. 488, д. 4453, л. 121-122.

1) Շահական կառավարությունը մենաշնորհներ տրամադրելու հարցով մշտապես ճնշումների ենթարկվելով օտարերկրյա այլ տերությունների կողմից ցանկանում է իմանալ, թե որքանով Իրանը կարող է հավակնել Ռուսաստանի աջակցությանը՝ այլ երկրներին մենաշնորհներ տրամադրելու մասին առաջարկները համապատասխանաբար մերժելու համար:

2) Կարո՞ղ է արդյոք շահական կառավարությունը վստահ լինել Ռուսաստանի կողմից ռազմական օգնության տրամադրման հարցում, եթե Մեծ Բրիտանիայի փորձի որևէ բռնագաղթում իրականացվի Օտոման:

3) Չի նշանակում արդյո՞ք, որ անգլո-ռուսական համաձայնագրի կնքումով Ռուսաստանը բախտի քմահաճույքին է թողնում Իրանը՝ հրաժարվելով նրա նկատմամբ իր հովանավորական բաղաբակնությունից:

4) Եթե Ռուսաստանը փոխի իր դիրքորոշումն Իրանի նկատմամբ, ապա նրա կառավարությունը ստիպված կլինի պաշտպանություն փնտրել այլ վայրում<sup>294</sup>:

Գարսովիզին ուղղված պատասխան նամակում Ա. Բզվզակին առհասարակ հրաժարվեց Իրանի հետ ռազմական դաշինք հաստատելու գաղափարից: Առավել ևս այն պարագայում, որ Իրանը փոխադարձ ոչ մի էական պարտավորություն չէր ստանձնելու, բացի այն «լրոզված» խոստումներից, որ պատրաստ է ամեն ինչ անել Ռուսաստանի շահերին համապատասխան: Ինչ վերաբերում է օտարերկրացիներին մենաշնորհային զիջումներ անելու հարցին, ապա նախարարը խնդրում էր շահին հարողել, որ դրանք արդեն իսկ արվում են և հակադրվում են Իրանի կողմից նախկինում ստանձնած պարտավորություններին: Խոսքը մասնավորապես վերաբերում էր դեռևս նախորդ տարի բանկ հիմնելու՝ գերմանացիներին ընձեռած թույլտվությանը և նրանցից փոխառություն վերցնելու մասին տեղեկություններին<sup>295</sup>: Այնուհետև, նախարարը նշում էր. «Իրանին ձեռնտու չէ Անգլիայի հետ Ռուսաստանի մերձեցումը, ինչը խանգարում էր

<sup>294</sup> Նույն տեղում:

<sup>295</sup> АВІРІ, «Персидский стол», ф. 144, оп. 488, л. 130-131.

նրան իր հաշվարկները կատարելու այդ տերությունների միջև մրցակցության վրա: Մակայն այդ հանգամանքն ամենին էլ չէր կարող ազդել Մեծ Բրիտանիայի հետ փոխհամաձայնության գալու Ռուսաստանի ձգտման վրա»: Նախարարը հրաժարվում էր գրավոր պատասխան տալ շահին և ծայրահեղ դեպքում, դեպպետորդին առաջարկվում էր հետևյալ բովանդակությամբ գրություն հանձնել, որ. «ցարը այժմ էլ բարյացակամորեն է տրամադրված Իրանի հանդեպ, որի տարածքային ամբողջականությունը և անձեռնմխելիությունը, ինչպես նախկինում, շարունակում է մնալ ռուսական քաղաքականության հիմնական նպատակը: Բնչ վերաբերում է Անգլիայի հետ հնարավոր համաձայնագրին, ապա այն միայն կարող է ծառայել այդ նպատակին և ապահովել Իրանի խաղաղ զարգացումը»<sup>296</sup>: Այսպիսով, ռուսական ԱԳՆ-ն անանցելով իրանական խնդիրը այն ընդհանուր առմամբ սկսեց դիտարկվել համաներկայական քաղաքականության համատեքստում:

Փոխառության հարցի հետ մեկտեղ անգլիացիները օրակարգ մտքընցին նաև Իրանի ազդեցության ոլորտների հարցը: Բրիտանական կառավարությունը պատրաստ էր իր վրա վերցնել իրանական փոխառության ռուսական մասնաբաժինը և փոխարենը ցանկանում, որ Իրանի Բիքջան-Բանդար-Աբբաս գծից հարավ-արևելք ընկած տարածքը ճանաչվի որպես բրիտանական ազդեցության ոլորտ, որտեղ իրանական կառավարությունը պարտավորվելու էր առանց Մեծ Բրիտանիայի համաձայնության օտարերկրյա այլ պետության չտրամադրել երկաթուղային, խճուղային և հեռագրային մենաշնորհներ և փոխառության 5 մլն ֆրանկ արժողության բրիտանական մասնաբաժինը կերաշխավորեր Պարսից ծոցի մաքսակետերից ստացվող եկամուտներով<sup>297</sup>:

Ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ բանակցությունները սուր քննարկումների արժանացան միջինարևելյան խմբա-

վորման ներքում, որն ակտիվ քարոզարշավ սկսեց կառավարության դեմ<sup>298</sup>: Նրանք դեմ էին անգլո-ռուսական համաձայնության որոշ առանցքային դրույթներին, մասնավորապես՝ Ռուսաստանին «Պարսից ծոց կումերցոն էլք տրամադրելուն»: Եվ ինչպես ստորև կներկայացվի, վերջինս հասավ անգլո-ռուսական համաձայնագրի կարևոր կետերի էական փոփոխմանը: Հատկապես՝ համաձայնագրում տեղ գտած «չեզոք» գոտու պայմանի հետ կապված, որի հիմնական նպատակն էր թույլ չտալու Ռուսաստանի ծավալումը դեպի Պարսից ծոց:

Պետերբուրգում ազդեցության գոտիների վերաբերյալ միջկերտնական առաջին քննարկումը տեղի ունեցավ 1906 թ. սեպտեմբերի 7-ին Ա. Բովուլսուո նախագահությամբ հրավիրված Հատուկ խորհրդակցության ժամանակ<sup>299</sup>: Ֆինանսների նախարարն Իրանում ռուսական հետագա ընդլայնումը կրկին ակնդրուեցի էր համարում: Նա նշում էր. «Անթույլատրելի է թաքցնել փաստերը և ստիպված ենք ընդունել այն հանգամանքը, որ Ռուսաստանի քաղաքական կշիռը նվազել է, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է վերանայել արևելյան քաղաքականության նկատմամբ մեր տեսակետները, որոնցում թույլ ենք տվել այն արմատական սխալը, որ պետության տրամադրության տակ եղած միջոցները չենք համապատասխանացրել մեր առջև դրված նպատակներին»<sup>300</sup>:

Այս խորհրդակցությանը նախարարը, կարելի է ասել, հանդես եկավ Իրանում ռուսական ազդեցության գոտու վերաբերյալ փորձնական տարբերակով՝ Ռուսաստանի բնական շահերի սահմանն Իրանում ներկայացնելով՝ Ղասրե-Շիրին-Համարյան-Թեհրան-Մեշեդ գծից հյուսիս՝ նախկինում առաջարկվող Մպահանից այն նկատելի շեղելով դեպի հյուսիս<sup>301</sup>: Նշված խորհրդակցության ընթացքում վերջնական համաձայնության չգալով՝ ռուսական կառավարության

<sup>298</sup> John Albert White, նշվ. աշխ., էջ 276, Beryl Williams, նշվ. աշխ., էջ 145-148, Բոնդարևսկայ Դ. Լ., Английская политика и международные отношения, նշվ. աշխ., էջ 506:

<sup>299</sup> Журнал особого совещания по вопросу о будущих отношениях России и Персии, 12 августа 1905 г., «Красный архив», 1933, т. 1 (56), с. 60.

<sup>300</sup> Այսին տեղում:

<sup>301</sup> Այսին տեղում:

<sup>296</sup> Այսին տեղում:

<sup>297</sup> Анишчи Б. В., Российское самодержавие и вывоз капиталов 1895, նշվ. աշխ., էջ 142:

խորհրդակցությունից անմիջապես հետո մշակեց միայն իրանական կառավարությունն անգլո-ուսական համատեղ փոխառություն տրամադրելու մասին նախագիծը, որով Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան պարտավորվում էին շահին տրամադրել փոխառության 1/2-ը (5 մլն ֆրանկ)<sup>302</sup>:

Անգլո-ուսական մերձեցման նկատմամբ ստեղծված ներքաղաքական լարվածության արդյունքում Ա. Իզվոլսկու առջև կրկին ծառայավորվեց Գերմանիայի հետ հարաբերությունների խնդրի կարևորությունը: Նա փորձեց Իրանում ուսական շահերը պաշտպանել Գերմանիայի հետ անմիջական բանակցությունների միջոցով և միաժամանակ հարթել անգլո-ուսական համաձայնագրի դեմ ուղղված Բեռլինի բացասական տրամադրությունները<sup>303</sup>: 1906 թ. հոկտեմբերին Իզվոլսկին մեկնեց Բեռլին, որտեղ առաջարկեց Բաղդադի երկաթուղու վերաբերյալ կնքել ուս-գերմանական առանձին համաձայնագրեց: Ռուսաստանը պատրաստ էր խոչընդոտ չհանդիսանալ շինարարությանը և ընդունում էր այդ ձեռնարկում Գերմանիայի գերակայությունը, եթե գերմանական կողմը հավաստիացներ, որ դրա ճյուղավորումները չեն տարածվի դեպի Իրանի ռուսական ազդեցության գոտի<sup>304</sup>: Իր հերթին՝ գերմանական կառավարությունը հավաստիացրեց, որ Իրանում հետապնդում է լոկ առևտրական շահեր և չվիճարկելով Իրանում երկաթուղիներ կառուցելու վերաբերյալ ուս-իրանական «ստերիլիզացնող համաձայնագիրը»՝ համաձայնվեց Բաղդադի երկաթուղու ճյուղավորումները չկառուցել դեպի Իրան՝ մեկ նախապայմանով, որ հետագայում, երբ կկառուցվի իրանական երկաթուղային ջանքը, այն կմիանա Բաղդադի երկաթուղուին<sup>305</sup>:

Փորձելով թույլ չտալ ուս-գերմանական հետագա ավելի սերտ համագործակցության հնարավորությունը՝ եղեմբերին բրիտանա-

կան ԱԳՆ-ը ռուսական կառավարությանը ներկայացրեց համաձայնագրի իր նախագիծը, որում առաջարկվում էր Իրանը բաժանել ոչ թե երկու, այլ երեք գոտիների<sup>306</sup>: Չեզոք գոտու զաղափարն առաջին անգամ հայտնվեց 1906 թ. սեպտեմբերի վերջին՝ Իրանի ազդեցության ոլորտների բաժանելու մասին բրիտանական բանաձևի տեսքով, որտեղ ասվում է. «Եթե մենք (Մեծ Բրիտանիան-Ն.Ն.) անգլիական ազդեցության գոտի համարենք Բիքրան-Ֆանդար-Արբաս Խանայունին, ապա չենք կարող Ռուսաստանին՝ որպես իր ազդեցության գոտի հանձնել Իրանի մնացյալ տարածքը: Պետք է լինի եւ մեկ ոլորտ, որը բաց կլինի բոլոր պետությունների առևտրային գործունեության համար»<sup>307</sup>:

Այլ կերպ ասած, չեզոք գոտու առկայությունը կկանխեր Ռուսաստանի անմիջական հարևանությունը բրիտանական ազդեցության շրջանում: Բրիտանական համաձայնագրի նախագծում երրորդ՝ չեզոք գոտու ավելացումը փոխզիջումային տարբերակ էր, ինչը արևելյան խմբավորման և ռուսական ռազմական շրջանների հակազդեցությունը հարթելու նպատակ ուներ<sup>308</sup>: Այսպիսով, նախագծով ռուսական կողմի համար տարանջատվում էին նրան սահմանակից Իրանի հյուսիսային նահանգները, իսկ Մեծ Բրիտանիայի համար՝ Միջառևտրասահին և Բելուջիսթանին սահմանակից նահանգները: Միաժամանակ կողմերը փոխադարձաբար պարտավորվելու էին միմյանց տալ գործունեության լիարժեք ազատություն սեփական ոլորտում և չորհուրեք թաղաքական և տնտեսական բնույթի մենաշնորհներ հակառակ կողմի ոլորտում: Բրիտանական ազդեցության գոտին սկսվում էր աֆղանական սահմանից և անցնելու էր Գազկի, Բիքրան, Քերման, Բանդար-Արբաս գծով<sup>309</sup>:

1907 թ. փետրվարի 1-ին Իրանում ազդեցության գոտիների վերաբերյալ Անգլիայի հետ բանակցությունները շարունակելու առև-

<sup>302</sup> Аппавич Б. В., Российское самодержавие и валют капиталов 1895, ևշվ. աշխ., էջ 144:

<sup>303</sup> Бестужев И. В., ևշվ. աշխ., էջ 131-137:

<sup>304</sup> Իզվոլսկու բեռլինյան առաքելության մասին մանրամասն տե՛ս Չ. Բայլորդյան, Իրանական հարցը ուս-գերմանական դիվանագիտական հարաբերություններում 1905-1911 թթ., էջ 34-36: Остальцева А., ևշվ. աշխ., էջ 19-208, Игнатъев А., ևշվ. աշխ., էջ 138-147, Бондаревский Г., Персидский Запад и англо-иранское соглашение 1907 г., Проблема провозов, ևշվ. աշխ., էջ 135-141:

<sup>305</sup> Նույն տեղում:

<sup>306</sup> Бондаревский Г., Персидский Запад и англо-иранское соглашение 1907 г., Проблема провозов, ևշվ. աշխ., էջ 119-121:

<sup>307</sup> Նույն տեղում:

<sup>308</sup> Նույն տեղում:

<sup>309</sup> John Albert White, ևշվ. աշխ., էջ 249:

չուրթյամբ հրավիրվեց երկրորդ Հատուկ խորհրդակցությունը, որի ընթացքում համաձայնագրի անգլիական նախագծում տեղ գտած բրիտանական ազդեցության գոտու առաջարկի վերաբերյալ մասնակիցների կողմից առարկություններ չեղան<sup>301</sup>: Ինչ վերաբերում է ռուսական ազդեցության գոտուն, ապա այն շեղվեց դեպի հարավ՝ Ղասբե-Շիրիկից՝ Սպահան, ներառյալ Քերմանշահը, այնուհետև Ցագրով դեպի Խաքը, ապա դեպի Բաֆղանական սահմանում գտնվող Քուսան վայրը<sup>311</sup>:

Ազդեցության գոտիների վերաբերյալ ռուսական տարբերակը անգլիական կողմը ընդունեց դրանում մի շարք փոփոխություններ մտցնելուց հետո միայն. ռասնավորապես պահանջելով, որ ռուսական ազդեցության գոտուց դուրս չա իրանաաֆղանական սահմանի հատվածը և այն վերջանա ավելի հարավ՝ Աֆղանստանի հյուսիսում գտնվող Տուլլաարքում: Այնուհետև կողմերը պետք է պարտավորվեն իրենց ազդեցության գոտիներում թողնել նախկինում այդտեղ հիմնված ձեռնարկությունները Պամավաղաասխանաբար անգլիական ազդեցության ոլորտում մնում էին ռուսականները և հակառակը<sup>312</sup>:

Կողմերը փոխադարձ պարտավորություններ էին ստանձնում չխաչընդոտելու չեզոք գոտում միմյանց՝ մենաշնորհներ ձեռք բերելու հարցում: Իր հերթին՝ ռուսական կառավարությունը չհամաձայնեց մաքսային հարցի անգլիական ձևակերպման հետ: Խոսքը Հաշվարկային բանկի վճարումները երաշխավորող բրիտանական ազդեցու-

թյան գոտում գտնվող մաքսակետերի վրա հարկ եղած դեպքում բրիտանական վերահսկողություն սահմանելու մասին էր: Հայտնելով, որ դա միջամտություն է ռուսական և իրանական կառավարությունների հարաբերություններին՝ ռուսական կողմն առաջարկեց բավարարվել միայն պարտավորություններով, որ անհրաժեշտության դեպքում այս հարցում կողմերը կարող են նախապես համաձայնեցնել իրենց գործողությունները<sup>313</sup>: Սրանք հիմնականում այն դրույթներն էին, որոնք տեղ գտան նաև վերջնական համաձայնագրի տեքստում:

Իրանի շուրջ բանակցային գործընթացը խթանելու նպատակով Լոնդոնն ընդլայնեց քննարկվող հարցերի շրջանակը՝ դրանցում ներառելով նաև Ադուցների կարգավիճակի փոփոխման խնդիրը, որը թեև չամարագրվեց համաձայնագրում, սակայն էապես բեկեց Ռուսաստանի արտաքին քաղաքական ուղեգիծը: Դիվանագիտական կանխավճարի գնալով Ադուցների հիմնախնդրում՝ Մեծ Բրիտանիան ակնկալում էր Ռուսաստանից համապատասխան զիջումներ ստանալ Իրանում, մասնավորապես հարավարևելյան և Պարսից ծոցի, իսկ հետագայում նաև չեզոք գոտում գտնվող նավթաշատ կենտրոնական շրջաններում<sup>314</sup>:

Թեև 1907 թ. ամռանը ռուսական և բրիտանական արտաքին գերատեսչությունների կողմից իրանական հարցի հետ կապված համաձայնագրի վերջնական բովանդակությունը և հիմնական կետերը գրեթե ամբողջությամբ հաստատվել էին, սակայն Պարսից ծոց յուրաքանչյուր այլ պետություն թողնելու ուղղությամբ միջինհարևելյան խմբավորման շարունակական ճնշումները՝ ստիպեցին Գրեյին որոշում կայացնել համաձայնագրի նախաբանում Պարսից ծոցի վերաբերյալ հատուկ բաժին ներառել, ըստ որի՝ ռուսական կողմը կընդուներ Մեծ Բրիտանիայի հատուկ շահերը և կպահպակներ Օցի

<sup>301</sup> АВВРМ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 4142, л. 12-13, Краткий отчет", К историч. англо-русского соглашения 1907 г., 1935, т. 2-3 (69-70), с. 19.

<sup>311</sup> Լույս տեղում, էջ 24:

<sup>312</sup> Օրինակ՝ Թեհրանից չէր հեռացվելու Շահնշահական բանկը, որի փոխարեն անգլիական կողմը պարտավորվում էր պահպանել Միսթանի Հաշվավարկային բանկի մասնաճյուղը: Հարկ է հավելել, որ, Միսթանի հետ կապված հետագա բանակցությունները այնուհետև հիմնականում ընթացան արդեն հեռացրային գծերի հետ կապված հարցերի շուրջ և անգլիական կողմի պետմամբ, անգլիական գոտում առկա մենաշնորհի պահպանման սկզբունքը չադարձվեց Միսթան-Մեշնեղ հեռացրային գծի վրա: Այն Մեծ Բրիտանիայի վերահսկողության տակ էլ անցնելու համաձայնագրի տարրգրվուց հետո, որին իր համաձայնությունը Ռուսաստանը ստվել էր օգոստոսի 24-ին: John Albert White, ելզվ. աշխ., էջ 277, Ignatiev A., ելզվ. աշխ., էջ 183:

<sup>313</sup> Осталцева А., ելզվ. աշխ., էջ 216-218:

<sup>314</sup> Անգլո-ռուսական համաձայնագրի համառոտքում Ադուցների բանակցային գործընթացի մասին մանրամասն տե՛ս Ignatiev A., ելզվ. աշխ., էջ 184-190, Бондаревский Г., Персидский Стол и англо-иранское соглашение 1907 г., Проблема провоза, ելզվ. աշխ., էջ 150-152, Beryl Williams, ելզվ. աշխ., էջ 146-147:

ստատուս քվին<sup>315</sup>: Գրեյի առաջարկը գրեթե ամբողջությամբ փոխում էր համաձայնագրի թվանշանությունը: Այն հոյի էր միջազգային բնույթի նոր բարդություններով ու հետևանքներով և առաջին հերթին ուղղակիորեն արժարժում էր Բաղդադի երկաթուղու կնճռուս խնդիրը, ուստի ռուսական ԱԳԼ-ը կտրականապես մերժեց անգլիական կողմի պահանջը: 1907 թ. հունիսի 23-ին Ա.Ա. Նիկոլսեի՝ Ա. Իվլովսկուն հանձնած Պարսից ծոցում Մեծ Բրիտանիայի հաստիկ շահերը ճանաչելու մասին հռչակագրին ի պատասխան՝ հաջորդեց հունիսի 27-ի ռուսական արտգործնախարարի պատասխան հռչակագիրը, որում հաստիկ ընդգծվում էր, որ նման միջոցառումն անգլո-ռուսական պայմանագիրը խոցելի կդարձնի ինչպես Ռուսաստանի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, որ Պարսից ծոցի առափնյա շրջանների մի մասը պատկանում է ոչ թե Իրանին, այլ Օսմանյան կայսրությանը, որի վրա համաձայնագիրը չի տարածվում: Միաժամանակ ցարկան կառավարությունը չվիճարկելով Մեծ Բրիտանիայի հատուկ շահերը Օսցում՝ պատրաստ էր խնդիրը հետագայում առանձին բանակցությունների առարկա դարձնել<sup>316</sup>:

Ճանդիպելով ռուսական կողմի անգիջում ընդդիմությանը, որն ի վերջո կարող էր հարվածի տակ ղնել ամբողջ համաձայնագիրը, Լոնդոնը որոշում կայացրեց Պարսից ծոցի նկատմամբ իր հավակնությունների մասին հայտարարել 1903 թ. Լենդաուեի հռչակագրի նման օրինակով<sup>317</sup>: Այդ հայտարարությունը հրապարակվեց անգլո-ռուսական համաձայնագրի հետ միասին: Փաստաբույժը մասնավորապես հռչակում էր. «... համաձայնագրի բանակցային գործընթացում ռուսական կառավարությունը հստակորեն հայտարարել է, որ չի վիճարկում Մեծ Բրիտանիայի հաստիկ շահերը և ստատուս քվոյի պահպանումը Պարսից Օսցում, ինչը պաշտոնապես ի զիտություն է առնված բրիտանական կառավարության կողմից, որն

այսուհետև էլ շարունակելու է ուղղորդել իր ողջ ջանքերը Օսցում ստատուս-քվոյի և բրիտանական արևտրական շահերի պահպանման ուղղությամբ...»<sup>318</sup>:

1907 թ. օգոստոսի 31-ին Ա. Պետերբուրգում Ա. Իվլովսկին և Մեծ Բրիտանիայի դեսպան Ա. Նիկոլսեը ստորագրեցին Միջին Արևելքում ազդեցության գոտիների բաժանման մասին անգլո-ռուսական համաձայնագիրը, որով Իրանը բաժանվեց ազդեցության երեք ոլորտների՝ հյուսիսային՝ ռուսական, հարավային կամ հարավարևելյան՝ անգլիական և չեզոք գոտիների<sup>319</sup>: Ճանաչվում էր յուրաքանչյուր կողմի հաստիկ շահերն իրեն հարող կամ սահմանակից իրանական նահանգներում: Միաժամանակ կողմերը պարտավորվում էին չորունել երկաթուղային, բանկային, հեռագրային, տրանսպորտային, ճահապարհաշինական, ապահովագրական և այլ տեսակի մենաշնորհային իրավունքներ և չխոչընդոտել դրանց ձեռք բերմանը հակառակ կողմի ազդեցության գոտում<sup>320</sup>: Չեզոք գոտուն (մոտավորապես 500 հազ. քառ. կմ) վերաբերող III հոդվածով յուրաքանչյուրը պարտավորվում էր չխոչընդոտել /եթե չի համաձայնեցրել նախապես/ համապատասխան երկրի հպատակների համար մենաշնորհների ձեռքբերման գործին:

Ճատկանշական է, որ Իրանին վերաբերող փաստաթղթի նախաբանում երկու կողմերը պարտավորվում էին հարգել այդ երկրի անկախությունը և ստարածքային ամբողջականությունը և վստահեց

<sup>315</sup> John Albert White, նշվ. աշխ., էջ 276-278, Beryl Williams, նշվ. աշխ., էջ 145-146:

<sup>316</sup> John Albert White, նշվ. աշխ., էջ 276-278, Beryl Williams, նշվ. աշխ., էջ 145-146:

<sup>317</sup> "Привлечение нами специальных интересов Англии в Персидском Заливе", АВПРН, "Персидский стол", ֆ. 144, օռ. 488, ձ. 43-48, B.D., vol. IV, N 448; N 455:

<sup>318</sup> Նույն տեղում:

<sup>319</sup> Treaty N° XXI, Convention between Great Britain and Russia regarding the zones of influence in Persia, Afghanistan and Tibet, dated 31<sup>st</sup> August, 1907, Arrangement concerning Persia, pp.120-121, Collection of Treaties, Engagements and Sanads: Relating to India and Neighbouring Countries, by C.U. Aitchison, Vol. XIII, Calcutta: Government of India, 1933, pp.119-124: Պայմագրի տեղտող տեւ աշխատանքի «Ճավելվան» բանւում, Ճավելվան 4. աղբյուրը՝ "Персидский стол", ֆ. 144, օռ. 488, ձ. 28-48:

<sup>320</sup> Մեծ Բրիտանիայի համար այդ սահմանափակումը լինելու էր 'Լարսե-Շիրին, Սպաֆաշանտով, Յեզդ, Խաքը դեպի իրանական սահմանում գտնվող Յալվադար (ռուս-աֆղանական սահմանագծում) գծից հյուսիս ղնկած հասվածք, 790 հազար քառ. կմ. տարածքով (հորվ. I): Ռուսաստանը իր եերթին ճանաչում էր Աֆղանական սահմանից Գազիկով, Բիրոժան, Քերման, Բանդար-Աբբաս գծից հարավ ղնկած 355 հազար քառ. կմ. տարածք ունեցող անգլիական ազդեցության գոտի (հորվ. II):

նում, որ Իրանում բոլոր երկրներն ունեին տնտեսական հավասար հնարավորություններ, ինչը բացահայտորեն հակասում էր ազդեցության գոտիների բաժանման սկզբունքին:

Համաձայնագրի IV և V հոդվածներով երաշխավորվում էին Իրանի Հաշվավարկային և Շահնշահական բանկերից վերցրած իրական կառավարության փոխառությունների վարձավճարների մարսային եկամուտները: Իրանական կառավարության կողմից դրանց վճարման հարցում ինգլիզի հարուցելու պարագայում՝ երկու երկրներն խախտելու մտքերի փոխանակման հիման վրա՝ համապատասխանաբար կարող էին վերահսկողություն սահմանել հակառակ կողմի ազդեցության գոտում գտնվող սեփական եկամուտները երաշխավորող աղյուսների վրա:

Սեպտեմբերին Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան փոխանակեցին համաձայնագիրը վավերացնող փաստաթղթերը և հրապարակեցին դրանք: Համաձայնագիրը տևական ժամանակ թնաղատությունների արժանացավ ռուսական և բրիտանական հասարակական և քաղաքական որոշ շրջաններում<sup>22</sup>:

Ինչ վերաբերում է Իրանին, սպա երբ համաձայնագրի պատճենը հանձնվեց Իրանի արտգործնախարարին, մեջլիսի և հասարակական կարծիքի սուր դժգոհության ազդեցության տակ կառավարությունը հրաժարվեց ճանաչել համաձայնագիրը: Դեռևս 1905 թ.

ռուս-իրանական անհաջող բանակցություններից հետո իրանական կառավարությունում անգլո-ռուսական հնարավոր մերձեցման վերաբերյալ լուրջ կասկածներ էին ի հայտ եկել, սակայն այդ պահից ի վեր և մինչև դրա կնքումը շահական կառավարությունը գրեթե ամբողջությամբ անտեղյակ մնաց Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջև ընթացող բանակցությունների արդյունքներից: Իրանական կողմի յուրաքանչյուր պաշտոնական հարցադրման անմիջապես հետևում էին երկու երկրների դիվանագետների բացատրությունները, որ նմանատիպ համաձայնության պարագայում անպայման կպահպանվի Իրանի ամբողջականությունը և անկախությունը:

Փաստեք, որ Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան համաձայնագիրը տարբեր կերպ էին մեկնաբանում: Եթե Մեծ Բրիտանիայի համար այն իմանակետում հակազերմանական ուղղվածություն ուներ և սահմանափակելու էր ռուսական ընդլայնումը դեպի Պարսից ծոց, ապա Պետերբուրգում սկզբնական շրջանում համաձայնագիրը դիտվում էր մյուս տերությունների՝ Ճապոնիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի հետ առանձին համաձայնագրերի ենթատեքստում: Ռուսաստանն արմատապես փոխելով իր քաղաքականությունը Մեծ Բրիտանիայի նկատմամբ՝ բնավ չէր ցանկանում վերջինիս հետ հաստատել սերտ ռազմաքաղաքական դաշինք: Ռուսական իշխանությունները համաձայնագրին հակազերմանական նշանակություն սկսեցին տալ ավելի ուշ՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին: Դրան նպաստեց անգլո-ֆրանսիական բանկերից խուրացող կախվածությունը, երկրի ռազմական ուժերի արդիականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև բալկանյան խնդրում ռուսավարիական, ռուս-գերմանական հակասությունների սրումը:

1907թ. օգոստոսի 31-ին կնքված Իրանը, Տիբեթը և Աֆղանստանն ազդեցության ոլորտների բաժանելու մասին անգլո-ռուսական համաձայնագիրը սահմանագիծ դարձավ XX դարակազմի միջազգային հարաբերություններում: Ինչպես հայտնի է, այն Առաջին համաշխարհային պատերազմից առաջ ընդլայնեց անգլո-ֆրանսիական միութ-

<sup>22</sup> Մեր ուսումնասիրությունը սահմանափակվում է միայն Իրանն ազդեցության գոտիների բաժանելու մասին հարցի թեմայում: Վերոնշյալ պայմանագրի կնքման հետ կապված տեղի-ռուսական բանակցությունների փուլերի, ընթացքի և դրա վերաբերյալ անցյալական ու ռուսական իշխող շրջաններում, մամուլում և հասարակական-քաղաքական շրջաններում տեղ գտած քննարկումները համակողմանի ուսումնասիրվել են խորհրդային և արևմտյան մի շարք հեղինակների կողմից, ինչը բոլոր է տալիս կենտրոնական համաձայնագրի իրանական գործնի վրա և այդ համատեքստում անդրադարձնել Իրանում Ռուսաստանի հետադարձադարձությունների վրա ունեցած հետևանքների թեմայանք: Մանրամասն տե՛ս The Cambridge History of British Empire, vol.III, London, Cambridge, 1959, pp. 251-550, Churchill R., The Anglo-Russian Convention of 1907, Iowa, 1939, Hurewitz J.C. The Middle East and North Africa in World Politics. A Documentary Record, vol. I, European Expansion, 1535-1914, New Haven & L., 1975

յունը (Անտանյուք), որի արդյունքում կազմվեց հայտնի Եռյակ համաձայնությունը:

Համաձայնագիրը թեև մեղմացրեց իրանական հարցում այդ երկրների միջև ձևավորված հարուրամյա հակամարտությունը և հնարավորություն բնձնեց որոշակիորեն սահմանափակել Գերմանիայի աճող ներգրավվածությունն Իրանում, սակայն Իրանի ներքաղաքական անկայունության պայմաններում այն այլ բնույթի նախադրյալներ ձևավորեց՝ մրցակցությունը շարունակելու համար: Իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ անգլո-ռուսական համաձայնագիրը կարևոր էր ոչ այնքան ազդեցության ուղղությունների առումով (համաձայնագրի հողվածները հիմնականում արտացոլում էին Իրանում ձեռք բերված այդ տերությունների ուժային իրական հարաբերակցությունը), որքան Իրանի ներքաղաքական միջավայրի և մասնավորապես կենտրոնական կառավարության վրա ռուսական ազդեցության թուլացման գործոնով: Բանակցային գործընթացում թեև նախատեսվում էր, որ Մեն Բրիտանիայի և Ռուսաստանի միջև համագործակցության եզրեր կմշակվեն ծավալվող իրանական հեղափոխության կանխարգելման գործում, սակայն Իրանի ներքին խնդիրների չմիջամտելու համաձայնագրի առանցքային դրույթով Մեն Բրիտանիան հնարավորություն ստացավ հեղափոխական զարգացումները շեղել իր հետաքրքրությունների ուղեծիր՝ սահմանափակելով շահական արքունիքում Ռուսաստանի ազդեցությունը:

**ՌՈՒՄԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՄԻՋԱՍՏՈՒԹՅՈՒՆԻԸ 1905-1911 ԹԹ. ԻՐԱՆԻ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ՇԵՂԱՓՈՒՆՈՒԹՅԱՆԸ**

**1. Սահմանադրական շարժման ծավալումը, ռուսական գործոնն  
Իրանի ներքաղաքական զարգացումներում**

Սահմանադրական շարժումն Իրանում XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին երկրում տասնամյակներ շարունակ ձևավորված քաղաքական ճգնաժամի, տնտեսական, սոցիալական և քաղաքական համակարգային խնդիրների արդյունք էր<sup>222</sup>: Ղաջարական կառավարության դեմ ընդվզող հասարակական պայքարի ձևավորմանն առաջին հերթին նպաստում էին Իրանում և արտերկրում բնակվող մտավորականության գործունեությունը, արտասահմանում կրթություն ստացած իրանցիների սովոր գանգվածը և ազգայնական ոգով հրատարակվող թերթերն ու ամսագրերը<sup>223</sup>:

1905 թ. ռուսական հեղափոխության ալիքն Իրան հասավ Այսրկովկաս արտագնա աշխատանքների մեկնած իրանցիների, Ռուսաստանի համալսարաններում կրթվող ուսանողների, Իրանի հետ գործարար կապեր ունեցող մարդկանց, ինչպես նաև Իրան փոխադրվող քարոզչական գրականության, բազմաթիվ կովկասցի հեղափոխականների միջոցով, որոնք փախել էին ռուսական իշխանությունների հետապնդումներից<sup>224</sup>: Այսրկովկասը համակա

<sup>222</sup> Մանքամանտ տե՛ս Cottam W., Nationalism in Iran, University of Iran, L., pp. 11-17; Keddie N., Religion and rebellion in Iran: the tobacco protest of 1891-1892, L., 1966, Keddie R. Nikki, Iran, Religion, Politics & Society, pp. 66-67, Lambton A., Qajar Persia, կով. աշխ., էջ 223-276, Bonakdarian Mansour, Britain and Iranian Constitutional Revolution 1906-1911; Foreign Policy, Imperialism and Dissent, N. York, 2006, p. 13-17: احمد کسروی، تاریخ مشروطه ایران، با پیشگفتاری از رحیم روضه‌آبادی، جات سوم، تهران، ص. ۷۱-۶۸.

<sup>223</sup> Browne E., The Press and Poetry of Modern Persia, Cambridge University Press, 1914, p. 27-166.

<sup>224</sup> John Foran, Social Transformation in Iran from 1500 to the Revolution, San Francisco-Oxford, 1984, p. 127.

սոցիալիստական գաղափարախոսությունը XX դարակերպին սկսեց թափանցել Իրան: Հեղափոխության տարիներին Իրանը, հատկապես Ասրպատականը, վերածվեցին այդ գաղափարախոսությանը տոգորված վերագրային, այդ թվում՝ հայկական, հեղափոխական տարբեր ուժերի համագործակցության ձևակառուի, որի առաջնային նպատակներին էր Իրանում ռուսական տիրապետության դեմ պայքարը:

XX դարի առաջին տասնամյակում Բաքվի նավթաշահարհի բանվորների 50%-ն իրանցիներ էին: Այսրովկայանում գոյություն ունեին սոցիալ-դեմոկրատական ուղղվածության իրանական մի շարք հեղափոխական կազմակերպություններ, որոնց անդամակցում էին բազմաթիվ իրանցի աշխատավորներ և մտավորականներ: Բաքվում էր հիմնադրվել իրանական ազդեցիկ՝ «Էջթեմայուն-ե ամյուն» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Իրանում սկսեցին ձևավորել քաղաքական ձախ կոմունորշումամբ հոսանքներ:

Թուրքիայում և Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական խնդրումները չարագանց մեծ ազդեցություն ունեցան Ասրպատականում հրատարակվող մամուլի, հասարակության քաղաքականացման վրա: Սահմանակից Կովկասի և Թուրքիայի հետ լեզվամշակութային ընդհանրությունները Թավրիզը վերածեցին սահմանադրական շարժումը սնող քաղաքական ազդեցիկ կենտրոնի: Երկրի հյուսիսում և մայրաքաղաքում սկսեցին ընդհատակից դուրս գալ քաղաքական գաղտնի կազմակերպությունները և ձևավորվել հեղափոխական կոմիտեներ՝ «Էնջումեններ»<sup>325</sup>:

Իրանում սկիզբ առած գործընթացներում առանցքային դարձավ բարձրաստիճան շիա հոգևորականության շարժմանը սատարելու իրողությունը: XIX դ. վերջին հոգևորականության բարձր և միջին դասերը հիմնականում սկսեցին համալրել առևտրաարդյունաբերական շերտի ներկայացուցիչները: Ճիշտ է, Սահմանադրական հեղափոխությունը գաղափարական առումով մեծապես պատ-

րաստվել էր լիբերալ-բուրժուազիայի և մտավորականության կողմից, սակայն նրա սկզբնական փուլում այն դեկավարեց շիա հոգևորականությունը՝ «խլամի և շարիաթի վերածնունդ» կարգախոսի ներքո: Շիական հոգևոր վերնախավի զգալի մասը ազգակցական-ամուսնական կեպերով կապված էր ավատական, խռշոր ասնտրային բուրժուազիայի ներկայացուցիչների հետ: Շահինց և պետությունից անկախ՝ եկամտային աղյուրների տիրապետող ուլեմները նախանձախնդրորեն պահպանում էին իրենց տնտեսական և իրավական անկախությունը<sup>326</sup>: Դրան նպաստում էր նաև «աթաբաթ»-ը կամ Իրանի սահմաններից դուրս գտնվող շիական սրբազան գլխավոր կենտրոնները (Նեջեֆ, Քերբլա, Քազվինեյ և Սամարրա (Իրաք)), որտեղի այաթուլլաների հրահանգները պարտադիր էին ինչպես Իրանի հոգևոր հեղինակությունների, այնպես էլ ողջ շիական համայնքի համար<sup>327</sup>:

Այսուհանդերձ, իրանական առաջին հեղափոխությունը աշխարհիկ բնույթ էր կրում, քանի որ նրա հիմքում ընկավ երկրի կառավարման արևմտյան օրինակին անցնելու սկզբունքը: Շարժումն աննախադեպ էր նաև այն առումով, որ առաջին անգամ բախվում էին իսլամական ավանդական հոգևոր արժեքներն ու արևմտյան առաջադեմ միտքը: Ու չնայած մտավորականության, բուրժուազիայի, լիբերալ հոգևորների, ուլեմների աշխարհայացքի և պետական կառավարման ձևերի ընկալումների տարբերությանը, նրանք իրենց բողոքն ուղղեցին միևնույն թիրախին՝ դաջարական իշխանության դեմ, որն իր արտահայտությունը գտավ ազատական կարգեր, սահմանադրության հաստատման և ներկայացուցչական մարմին հիմնելու շարժման կարգախոսներում:

1905-1908 թթ. ընթացքում ցարական կառավարության իրականացրած բռնությունների հետևանքով մեծացավ նաև Կովկասից

<sup>325</sup> Si' u Lambton A., Qajar Persia, p. 301-319; Abrahamian Er., Iran between Two Revolutions, p. 74-80.

<sup>326</sup> Keddie R. Nikki, Եզվ. աշխ., էջ 209-210:

<sup>327</sup> Дорошенко Е., Шинское духовенство в двух революциях 1905-1911 и 1978-1979 гг., М., 1998, с. 34-38.

ուսական հեղափոխական տարրերի հոսքն Իրանի հյուսիսարևմտյան շրջաններ, որտեղ հեղափոխական գործունեությունը շարունակելու պայմանները շատ ավելի դյուրին էին: Ցարական իշխանությունների վերահսկողությունից դուրս եկած կովկասյան հեղափոխական ռազմաքաղաքական ուժերի մասնակցությունն իրանական շարժմանը ու զինված երկարատև պայքարում երանց ներգրավվածությունը վերածվեց լուրջ գործուն, որը ցարական կառավարությունը սկսեց դիտարկել որպես իր երկրի հեղափոխության շարունակություն, և այն պատճառներից մեկն էր, որն ի վերջո հանգեցրեց Իրանի Սահմանադրական հեղափոխության ճնշման հարցում Ռուսաստանի սկզբում քաղաքական, այնուհետև՝ ռազմական միջամտությանը:

Իրանում սահմանադրական շարժման սկիզբ է համարվում 1905 թ. դեկտեմբերը: Երկրում խորը տնտեսական ճգնաժամից անմիջապես հետո պայթեցին մի շարք հասարակական բողոքներ մեկը մյուսից ավելի հուժկու: Մինչև 1906 թ. գարնանը հեղափոխական շարժումը մեծ թափ հավաքեց<sup>328</sup>:

Հուլիսին բարձրաստիճան հոգևորականությունը՝ որպես բողոքի ակցիա, լքեց Թեհրանը՝ հաստատվելով սրբազան Ղում քաղաքում, որին հետևեց սահմանադրականների հուլիսյան հայտնի բեստը<sup>329</sup>՝ Թեհրանի բրիտանական դեսպանատան այգում<sup>330</sup>:

Հուլիսի 29-ին ահաբեկված շահը գնաց որոշ զիջումների, անգամ վարչապետի պաշտոնում նշանակեց լիբերալ Օշոյի եղ-Ղուուլեկին<sup>331</sup>: Սակայն բրիտանական այգում հավաքված ժողովուրդը

առաջ քաշեց Սահմանադրության և ներկայացուցչական մարմնի՝ Մեջլիսի հիմնելու մասին երր պահանջը<sup>332</sup>: Սահմանադրական կարգերը պաշտպանելու նպատակով սկզբում Կովկասում, այնուհետև Ատրպատականում կազմակերպվեցին մոջահեդների (մարտիկներ սրբազան գործի համար) և ֆիդայիների հեղափոխական կառավարական գաղտնի միություններ և զինված ջոկատներ<sup>333</sup>: Մոջահեդները և ֆիդայիներն ազգային-հեղափոխական, ռազմական այն ուժն էին, որի վրա հենվում էին էնջումենները և գործող հեղափոխական կազմակերպությունները:

Հեղափոխական զարգացումներն իրենց արտահայտությունը գտան իրանական Սահմանադրության հաստատման մեջ, որի արդյունքում Իրանը բացարձակ միապետությունից վերածվեց սահմանափակ միապետության:

1906 թ. օգոստոսի 5-ին մահամերձ Մոզաֆֆար Էղ-Ղին շահը հասարակական ճնշման ներքո հրապարակեց Իրանում սահմանադրական կարգեր և ազգային ժողով (մեջլիս) հիմնելու մասին հրովարտակ<sup>334</sup>: 1906 թ. հոկտեմբերի 7-ին իր գործունեությունը սկսած Առաջին մեջլիսի ջանքերը հիմնականում ուղղված էին բանակի վերականգնման, բյուջեի կայունացման և շահի իշխանությունը սահմանափակելու վերաբերյալ օրենսդրության մշակմանը: Առանց մեջլիսի համաձայնության կառավարությունն իրավասու չէր որևէ օտարերկրյա կազմակերպության մենաշնորհներ տրամադրել, արտաքին պետական փոխառություններ վերցնել<sup>335</sup>, ինչն օրենսդրության անրագրվեց դեկտեմբերի 30-ին՝ մահամերձ շահի հաստատած

328. دکتر عبدالعزیز زین گویب، روزگار، تاریخ ایران از آغاز تا سقوط سلطنت پهلوی، ص ۸۵۵-۸۵۶; Abrahamian Er., A History of Modern Iran, և՛վ. աշխ., էջ 42; Nükkie Keddie, Iran, Religion, Politics & Society, և՛վ. աշխ., էջ 72-73:

329. Քեսոթ (բաստ) բողոքի ձև է: Քեսոթ նստում էին սրբավայրերում, օտարերկրյա դեսպանություններում, կուսակառույցներում՝ ի պատասխան իշխանությունների կողմից իրականացվող բռնությունների և հալածանքների: Թույլ չէր տրվում քեսոթ նստածին քոնի կերպով դուրս հանել ապաստանից կամ ձեռքազրկել:

330. احمد كسروی، تاریخ هجده ساله ایران، ص ۱۲۶-۱۲۷; Browne Edward G., نظام الاسلام كرمی: تاریخ بیداری ایران، بخش اول چاپ پنجم، تهران، ص ۲۹۰; The Persian Revolution of 1905-1911, L., 1910, p. 118-119;

331. عبدالعزیز زین گویب، روزگار، تاریخ ایران از آغاز تا سقوط سلطنت پهلوی، ص ۸۵۷

332. احمد كسروی، تاریخ مشروطه ایران، ص ۱۷۱-۱۷۶

333. Afary J., Social Democracy and the Iranian Constitutional Revolution of 1906-1911, A Century of Revolutionary Social Movements in Iran, Social movements, Protest and contention, vol. 2, ed. J. Foran, Minneapolis, 1994, p. 29,

احمد كسروی، تاریخ مشروطه ایران، ص ۱۸۰-۱۸۲

334. ۴۰۸۶۰۱ نظام الاسلام كرمی: تاریخ بیداری ایران، ص ۴۰۸۶۰۱; Afary J., The Iranian Constitutional Revolution: Grassroots Democracy, Social Democracy, and the Origins of feminism, New York, 1996, p. 64-73; The Royal Proclamation of August 5, 1906, Constitution, Electoral Laws, of the State in the Near and Middle East, Helen Miller Davis, Durham, 1947, p. 67-68.

335. The Fundamental Law of December 30, 1906, Art. 23; 24; 25, A Brief Narrative of Recent Event in Persia, Followed by a Translation of "The Four Pillars of the Persian Constitution", trans. by Ed. Brown, L., 1909, p.80.

Սահմանադրության առաջին մասի «Հիմնական օրենք»-ի հոդվածներում<sup>336</sup>:

Սրանից ելնելով՝ 1906 թ. նոյեմբերին Ազգային բանկ հիմնելու նախագծով հանդես եկող մեջլիսի ընդհանրադիր թեկ կողմից մերժվեց նաև իրանական կառավարությանն առաջարկված 10 մլն արծողուքյամբ անգլո-ուսական համամետ փոխառությունը<sup>337</sup>:

1907 թ. հունվարի 8-ին Մոզաֆֆար էլ-Դին շահի մահվանից հետո նոր շահ հռչակվեց երա որդին՝ Ատրպատականի կառավարիչ Մոհամմադ Ալին, ում իշխանության գալուց հետո Իրանի զարգացումը խաղաղ չլնթացավ: Հակահեղափոխական դիրքորոշման արդյունքում երա և սահմանադրականների միջև երկար և անզիջում պայքար ծավալվեց: Շահի առաջին քայլը՝ 1907թ. մայիսին Եվրոպա արտաքսված Ամին օս-Մալթանեհի վարչապետի պաշտոնում վերականգնել էր<sup>338</sup>:

Հասարակական բողոքի դրսևորումները նոր թափ հավաքեցին, որոնք միտված էին մեջլիսի դիրքերն ամրապնդելուն: Երբ մեջլիսի պատգամավորների շարքերը համալրեցին Ատրպատականի ծայրահեղական ներկայացուցիչները, մշակվեց «Հիմնական օրենքի» «Հավելումների» նախագիծը: Սպասնալիքի տակ շահից և կառավարությունից պահանջվեց ընդունել Սահմանադրության «Հավելումները» և վերջնականապես պահպանել սահմանադրական միա-

պետության կառավարման ձևը: Որոշվեց նախարարներին հաշվետու դարձնել մեջլիսի և ոչ թե շահի առաջ, արգելել օտարազգիների նախարարական կաշտոններ զբաղեցնելը, ընդունել նահանգային էնջումենտների իրավունքները<sup>339</sup>:

Առաջին մեջլիսը, որը երկրի կառավարման հարցերում լայն լիազորություններ ձեռք բերեց, իր գործունեության սկզբնավորման պահից նեթ խիստ հակառուսական դիրքորոշում գրավեց: Բոլորներն ուղղված էին հատկապես Իրանում Կազակական բրիգադի, շահի ուսուցիչ և խորհրդատու Շապշալի և մաքսային ոլորտի ղեկավար Ջ. Նաուսի գործունեության դեմ<sup>340</sup>: Մեջլիսի կողմից առաջարկվող յուրաքանչյուր բարեփոխման օրինագիծ առաջ էր բերում Մոհամմադ Ալիի հակազդեցությունը<sup>341</sup>: Ռուսամետ շահի և սահմանադրականների հակամարտությունն ավելի կատաղի բնույթ ձեռք բերեց, երբ հայտնի դարձավ Իրանը ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ անգլո-ուսական համաձայնագրի կնքման մասին: Համաձայնագրի կնքման օրը Թավրիզի ահաբեկչական ազգայնական կոմիտեի անդամ մուջահեդ Աբբաս-աղայի կողմից սպանվեց վարչապետ Ամին օս-Մալթանեհը<sup>342</sup>:

Տևական ժամանակ թե՛ ռուս, թե՛ բրիտանացի ներկայացուցիչներն Իրանում ծագած յուրաքանչյուր հասարակական բողոքի ակցիա միայնաց դեմ էի ուղղում: Այս անգամ էլ փորձելով սահմանափակել ռուսական ազդեցությունը դաջարական արքունիքում՝ բրիտանական առաքելության ներկայացուցիչները շարժման հենց սկզբում բացահայտորեն աջակցում էին սահմանադրական շարժման առաջնորդներին<sup>343</sup>: Անգլո-ուսական պայմանագրի շուրջ բանակցություններ սկսելով՝ թեև Է. Գրեյն Իրանում անգլիական դիվանագիտական անձնակազմին հանձնարարել էր խուսափել երկրի ներքա-

<sup>336</sup> The Fundamental Laws of December 30, 1906, Constitution, Electoral Laws, of the State in the Near and Middle East, նշվ. աշխ., էջ 69-78.

<sup>337</sup> АБИПН, "Персидская crisis", փ. 144, օտ. 488, և 603, և 231.

<sup>338</sup> Ղևնես 1903 թ. վարչապետը հասարակության պահանջով հեռացվել էր պաշտոնից: «Ղևնեսն ուժեղ ավտորիտար կառավարության կողմակից էր և հայտնի էր իր սրահանադական հայացքներով: Ժողովրդի շրջանում պետական այս այդը անձնավայելում էր Նասր էլ-Դին և Մոզաֆֆար էլ-Դին շահերի օրոք օտարակազմիչներին սրամտալոված մեծաշնորհներն ու ամենակարևորը՝ ռուսական 1900, 1902 թթ. փոխառությունները: «Նաշտոնում վերականգնվելով՝ նա, առանց Մեջլիսի բույրավության, կրկին սկսեց ջանքեր գործադրել Ռուսաստանից և մեծ Բրիտանիայից նոր փոխառություն ստանալու և սահմանադրական շարժման կենտրոնները Ատրպատականում արմատախիլ անելու ուղղությամբ»: ۸۵۷-۸۵۵ من. اغتر تا سقوط سلطنت پهلوی, ص. ۲۸۹-۲۲۴. احمد كسروی، تاريخ مشروطه ايران، من. ۱۵4-55: Pesa Fozg., M., 1906, Azar.,

<sup>339</sup> Նույն տեղում:

<sup>340</sup> Նույն տեղում:

<sup>341</sup> Firuz Kazemzadeh, նշվ. աշխ., էջ 497:

<sup>342</sup> ۲۸۱ من. احمد كسروی، تاريخ مشروطه ايران، من.

<sup>343</sup> Նույն տեղում, էջ 138-167:

դարական գործընթացներին մասնակցելուց, այսուհանդերձ հեղափոխական ճգնաժամի խորացման պայմաններում, բրիտանացիները չկարողացան անհաղորդ մնալ իրադարձություններին: Հաշվի առնելով նաև այն, որ անգլո-ուսական համաձայնագիրը դեռևս բանակցային փուլում էր՝ Գրեյը մինչև համաձայնագրի կնքումը, ժամանակավորապես պահպանեց իրանական ընդդիմության հետ հաղորդակցվելու հնարավորությունը<sup>344</sup>: Այդ է պատճառը, որ 1906 թ. ամռանը, երբ իրանական ազգայնականները ապստարան խնդրեցին բրիտանական դեսպանության այցում, առաքելության գործերի հավատարմատար Գրանտ Դաֆֆը չմերժեց նրանց: Սակայն երբ ստորագրվեց անգլո-ուսական համաձայնագիրը, Թեհրանի բրիտանական առաքելությունը աշխատում էր բացահայտորեն չաջակցել սահմանադրականներին<sup>345</sup>:

Դեռևս 1906 թ. անգլո-ուսական համաձայնագրի բանակցային փուլում Մեծ Բրիտանիան և Ռուսաստանն Իրանում ծավալվող սահմանադրական շարժման հարցում մշակեցին համատեղ գործողությունների ծրագիր, որով պետք է առաջնորդվեին Թեհրանում նրանց առաքելությունների ղեկավարները: Որոշվեց.

1. չմիջամտել Իրանի ներքին խնդիրներին և չստատարել հակամարտող կողմերից ոչ մեկին,
2. միասնաբար հանդես գալ Իրանում ստատուս-քվոյի պահպանման հայեցակարգային դիրքերից,
3. իշխանափոխության պարագայում՝ շահին ընդունել առաքելություններից որևիցե մեկում և հասնձնել նրան գործող կառավարությանը, եթե կտրամադրվեն բավականաչափ երաշխիքներ, որ նրա կյանքին վտանգ չի սպառնում<sup>346</sup>:

<sup>344</sup> British influence in Persia, 1900-1921, Great Britain, Encyclopedia Iranica, iv, <http://www.iranicaonline.org/articles/great-britain-iv>

<sup>345</sup> Peta Fox, նշվ աշխ., էջ 56, Bonakchian Mansour, նշվ աշխ., էջ 50, 77-78, Lenczowski J., The Middle East in World Affairs, Fourth Edition, Ithaca and London, 1980, p. 50:

<sup>346</sup> Сборник дипломатических документов касавшихся событий в Персии, вытекк 1, С. Петербург, Военная типография, 1911, (այսուհետև՝ Сборник дип. док.), с. 55.

Երկու տերությունները համաձայնություն էին ձեռք բերել նաև Մոհամադ Ալի շահի ավագ որդուն՝ սուլթան Ահմադ Միրզային, ճանաչել որպես վալիահոյ (թագաժառանգ)<sup>347</sup>:

Այն օրերին, երբ իրանական հասարակությունը շարունակում էր ցնցվել, Թեհրանում ռուսական և բրիտանական առաքելությունների ղեկավարների դիրքորոշումներում շարունակվում էր նկատվել ավանդաբար ձևավորված երկվությունը:

Թեև անգլո-ուսական համաձայնագիրը դիտվում էր որպես իրանական խնդրի կարգավորման առավել արդյունավետ տարբերակ և ենթադրում էր Իրանում նրանց խաղաղ համակեցությունը՝ փոխադարձ զիջումների քաղաքականության կիրառելիությամբ, սակայն թե՛ Մեծ Բրիտանիան, թե՛ Ռուսաստանն աշխատում էին պահպանել իրենց դիրքերն Իրանում՝ հետագայում բարենպաստ իրավիճակի պայմաններում դրանք ի հաշիվ հակառակ կողմի ուժեղացնելու նպատակով:

## 2. Սահմանադրական շարժմանը ռուսական ռազմական միջամտության նախադրյալները

1907 թ. հոկտեմբերի 7-ին նորընծա շահը Մեջլիսի և էնջումենների ճնշման տակ ստիպված էր հաստատել Սահմանադրության Հիմնական օրենքի «Հավելումների»<sup>348</sup>: Հիմնական օրենքի «Հավելումների» հողվածներով, նահանգային էնջումենները, բացի տեղական ընտրական մարմնի գործառույթներից, ձեռք բերեցին ավելի լայն խորհրդատվական, վարչական, ինքնակառավարման մարմնի արտոնություններ և իրավունքներ, որոնք հզորացնելով իրենց քաղաքական իշխանության հիմքերը, շարժման ծավալմանը զուգընթաց, ձեռք բերեցին հարաճուն հեղինակություն՝ դառնալով շահական վարչակարգի ամենակոշտ ընդդիմախոսը<sup>349</sup>:

<sup>347</sup> Լույս տեղում, էջ 8:

<sup>348</sup> The Supplementary Fundamental Laws of October 7, 1907, Art. A Brief Narrative of Recent Event in Persia, Followed by a Translation of "The Four Pillars of the Persian Constitution", trans. by Ed. Brown, L., 1909, p. 87-101.

<sup>349</sup> The Supplementary Fundamental Laws, Art. 90; 91; 92; 93, p. 99.

1907 թ. ղեկտնմբերին Մոհամմադ Ալին փորձեց պետական հեղաշրջում իրականացնել, որին միջամտեցին հեղափոխական էն-ջունները<sup>350</sup>:

Պետերբուրգ ուղարկված իր հաղորդագրություններում ռուսական դեսպանորդ Ն. Գարտվիլը հորդորում էր քննարկման ղեկ Ռուսաստանի կողմից շարժման նկատմամբ ռազմական միջամտություն կիրառելու հարըը<sup>351</sup>: Սակայն նոյեմբերի 30-ին երավիրված Հատուկ խորհրդակցությանը Ա. Իվոլսկին, Վ. Կոկովցովը և Պ. Ստոլիպինը ղեմ եղան Ռուսաստանի միակողմանի ռազմական միջամտությանը՝ առաջարկելով «հարըը քննել Մեծ Բրիտանիայի հետ համաձայնության շրջանակներում»: Այդ դիրքորոշմանը հակառակ պաշտպանության նախարարը և ռուսական սպայակույտի պետը ռազմական միջամտությունը հիմնավորում էին նրանով, որ Ռուսաստանն Իրանում «պետք է հանդես գա քաղաքական և տնտեսական իր շահերի պաշտպանի դիրքերից և անհրաժեշտության դեպքում հաշվի առնի իրանական սահմանը ռուսական ռազմական ուժերի կողմից հատելու հնարավորությունը», քանի որ շարժումը հիմնականում ծավալվում էր Իրանի հյուսիսային շրջաններում, որտեղ կենտրոնացած էին ռուսական շահերը: Այն նաև սպանում էր վերահսկողությունից դուրս բերել հեղափոխական տրամադրությունների տակ ցնցվող Այսրկովկասը<sup>352</sup>:

Երկար քննարկումներից հետո, սակայն, որոշում կայացվեց առայժմ զերծ մնալ բաց ռազմական գործողություններից՝ սահմանափակվելով Իրանում ռուսական հյուպատոսությունների և մարտակետերի պաշտպանությունն ուժեղացնելով: Որոշվեց ռուս-իրանական սահմանին ռազմական միավորներ չկենտրոնացնելով՝ Կովկասում մարտական կարգավիճակում պահել մի քանի հարյուր կազակների<sup>353</sup>:

Մեծ Բրիտանիան ղեմ էր ռուսական ռազմական միջամտությանը: Վերջինս ստավախություն ուներ, որ ի վերջո այն կրկին կարող է բերել շահական արքունիքում ռուսական դիրքերի ուժեղացմանը, այդ իսկ պատճառով փորձում էր ամեն կերպ զսպել ռուսական իշխող շրջաններում պարբերաբար առաջացող իրանական հեղափոխությունը ռազմական միջամտությամբ ճնշելու գաղափարները<sup>354</sup>: Բրիտանական կառավարությունը հարցի լուծումը տեսնում էր ավելի ճկուն միջոցների՝ իրանական քաղաքական դաշտում բրիտանամետ «չափավորների» խմբակցությանն աջակցություն ցուցաբերելու մեջ:

Երբ սահմանադրորեն սահմանափակվեց շահի իշխանությունը, հաստատվեց մասնավոր սեփականության, կյանքի, գույքի անձեռնմխելիության իրավունքը, հոգևորականության և օտարերկրյա կապիտալի հետ կապված խոշոր բուրժուազայի, հողատերերի խմբակցությունները երկփեղկվեցին, և նրանց զգալի մասը հարեց մեջլիսի լիբերալ «չափավորների» խմբակցությանը: Վերջիններս սկսեցին խոչընդոտել շարժման ժողովրդավարական հունով ծավալվելուն և դաշինք կնքեցին արքունական հետադիմության հետ, որն էլ իր հերթին ուղղվեց ծայրահեղ ազգայնականների (ձախերի) ղեմ, որոնց կողմից իրավական, կրթական ոլորտներում աշխարհիկ բարեօրոգումներ անցկացնելու փորձերը առաջ բերեցին հոգևորականության դժգոհությունը: Վերջիններս մեղադրեցին ձախերին իսլամի չափորոշիչներից շեղվելու մեջ<sup>355</sup>:

Հակակառավարական շարժումներից շատ չանցած, շահը ստիպված եղավ նահանջել, որից հետո ժողովրդավարական ուժերը, հասկապես Թավրիզի էջեմանեղը, նրանից «պահանջեցին հեռանալ երկրի կառավարման գործերից»<sup>356</sup>: Նրանք զգալի ճնշումներ էին գործադրում նաև մեջլիսի «չափավորների» ճամբարի վրա: Չնայած ձախերի

<sup>350</sup> Сборник дин. док., вып. 1, с. 43-44, 57-58.

<sup>351</sup> АВПРИ, “Персидский стол”, ф. 144, оп. 488, л. 2293, л. 89-90.

<sup>352</sup> АВПРИ, “Персидский стол”, ф. 144, оп. 488, л. 2293, л. 84-85.

<sup>353</sup> Այսին տեղում:

<sup>354</sup> Zinnovlev I., նշվ. աշխ., էջ 48-50:

<sup>355</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Niikie Keddie, Iran, Religion, Politics & Society, նշվ. աշխ., էջ 60-79, Abrahamian Er., Iran between Two Revolutions, նշվ. աշխ., էջ 92-94; Bayat Mongol, Mysticisim and Dissent: Socioreligious Thought in Qajar Iran, N. York, 1982, p. 161-162.

<sup>356</sup> “تاریخ مشروطه ایران، احمد مسکوی، تاریخ مشروطه ایران، س. 214-215: Сборник дин. док., вып. 1, с. 52.

հակազդեցությանը՝ 1907 թ. դեկտեմբերի 9-ին մեջլիսի նիստի ժամանակ, հարտաբարվեց շահի և մեջլիսի փոխհամաձայնության մասին, որն ամրապնդվեց Ղուրանի վրա երկու կողմերի երդումով<sup>357</sup>:

Ձախ ազգայնական առաջնորդները շահի և չափավորների միջև գործաբրը համարելով արտաքին ուժերի և մեջլիսի պահպանողական խմբակցության դավադրության արդյունք՝ շարունակեցին իրենց պայքարը: Ձախների ընդդիմադիր ճակատը սկսեց համարվել մոջահեդների, ֆիդայիների նորանոր ուժերով: Այս հողի վրա նահանգներում և մայրաքաղաքում ժողովրդական հուզումները նոր թափ սկսեցին հավաքել<sup>358</sup>:

Ճամատարած ամենաթողության պայմաններում ակտիվացան քոչվոր և կիսաքոչվոր ցեղերի սովազակային հարձակումները: Իզվոլսկին հանձնարարեց Գարսովիցին իրանական կառավարության ուշադրությունը կենտրոնացնել Ատրպատականում տեղի ունեցող «անկարգությունների» վրա<sup>359</sup>:

Թեև այս փուլում բրիտանական ճնշումների արդյունքում իրանական ճգնաժամին ռուսական ռազմական միջամտությունը կանխվեց, սակայն այն չբացառեց ռուս-իրանական սահմանում տեղային բնույթի պատժամիջոցները: Դրան նպաստում էին Իրանում ռուսական հյուպատոսների հաղորդագրությունները, որոնք պարբերաբար հեղորդում էին կառավարությանը գորք ուղարկել ռուսահպատակների և ռուսական հաստատությունների անվտանգությունն ապահովելու համար: Արդեն 1908 թ. կեսերից ռուսական կառավարությունը փոքրաթիվ պատմիչ ջոկատներ սկսեց ուղարկել Իրան: Ամբարցվում էր ռուսական հյուպատոսությունների և այլ հաստատությունների պաշտպանությունը<sup>360</sup>:

1908 թ. ապրիլին Կովկասի փոխարքայի կողմից 400 հոգանոց պատմիչ ռազմախումբ ուղարկվեց Իրան<sup>361</sup>: Ռուսական զորքերի

իրամանատար Ի. Սևարսկին նախագուշացնում էր, որ եթե վերջ չլրվեն ցեղերի ավազակային հարձակումներին և անօրինակամարտունեքին, որոնք վնաս էին հասցնում առևտրական ճանապարհների գործունեությանը, ապա ռուսական զորքերը պատմիչ գործողություններ կձեռնարկեն մեղավորների դեմ<sup>362</sup>:

1908 թ. փետրվարի 15-ին ազգայնականների կողմից Մոհամմադ Ալի շահի դեմ կազմակերպված անհաջող մահափորձից հետո պահպանողական և ժողովրդավարական ուժերի միջև առճակատամարտի խորացավ<sup>363</sup>: Չնայած պաշտոնական Լոնդոնի և Պետերբուրգի համատեղ գործողություններին, որոնք հիմնված էին իշխանությունների և ընդդիմության միջև երկխոսության հնարավորությունների սպառնալից չինելու սկզբունքի վրա, շահի մտադիր էր շարունակել հակասահմանադրական պայքարը: Չկարողանալով փոխհամաձայնության գալ սահմանադրականների հետ՝ 1908 թ. հունիսի 4-ին շահը Պարսկական կազակական բրիգադի ուղեկցությամբ թողեց Թեհրանը և իր գործով մեկնեց մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող Բաղեշահ վայրը: Այստեղից հունիսի 10-ին նա պահանջեց ձերբակալել և երկրից արտաքսել մի շարք ձախ մտավորականների և ընդդիմադիր թեթեթի խմբակիների<sup>364</sup>:

Ատրպատականում նահանգապետ նշանակվեց Այն օղ-Ղուլեն, ով 1905 թ. շարժման սկզբնավորման փուլում, հասարակական ճնշմամբ, հեռացվել էր վարչապետի պաշտոնից: 1908 թ. հունիսի 22-ին Թեհրանում հայտարարվեց ռազմական դրություն, և ՊԿԲ-ի իրամանատար, գեղապետ Վ. Լյախովը նշանակվեց Թեհրանի ռազմական նահանգապետ, ում ենթակայության տակ անցան շահական զինվորական բոլոր ստորաբաժանումները: Հունիսի 23-ին ՊԿԲ-ի աջակցությամբ Մոհամմադ Ալի շահը պետական հեղաշրջում իրականացրեց: Ռմբակոծվեց մեջլիսի շէքը և հարևանությամբ գտնվող Սևիա-

<sup>357</sup> ۸۶۱-۸۶۰ ص. دكتور عبدالحسين زرين كورب، روزگار، تاریخ ایران از آغاز تا سقوط سلطنت پهلوی، ص. ۸۶۱-۸۶۰

<sup>358</sup> Afary J., The Iranian Constitutional Revolution, Էջվ. աշխ., էջ 95:

<sup>359</sup> Сборник дин. док. вып. 1, с. 90-94.

<sup>360</sup> АВПРИ, «Персидский стол», ф. 144, оп. 488, л. 2293, л. 67.

<sup>361</sup> Сборник дин. док. вып. 1, с. 131-140.

<sup>362</sup> Լույս տեսում, էջ 153, 162, 177-178.

<sup>363</sup> Сборник дин. док. вып. 1, с. 116-117, Pers Gate, Էջվ. աշխ., էջ 56, نظام الاسلام ۱۳۸۱-۱۳۴۰

<sup>364</sup> ۱۳۸۱-۱۳۴۰ م. گرامی، تاریخ بنیادی ایران، بخش دوم، ص. ۱۳۸۱-۱۳۴۰

<sup>365</sup> PFGH, ф. 2000, оп. 1, л. 1022 (2), Էջ. 147, Afary J., The Iranian Constitutional Revolution, Էջվ. աշխ., էջ 140-142:

հալար մզկիթը, որտեղ կենտրոնացել էին էջեումենների ռազմական ցուկաները: Հայտարարվեց, որ մեջլիսն ու էջեումենները ցրվում են: Սպանվեցին, ձերբակալվեցին և երկրից արտաքսվեցին սահմանադրական շարժման բազմաթիվ առաջնորդներ<sup>365</sup>:

Հեղաշրջումից անմիջապես հետո Ատրպատականի ազգայնականների մի խումբ, հեղափոխական հայտնի գործիչ Հասան Թադիգադեի գլխավորությամբ, շտապեց բեսու նստել Թեհրանի բրիտանական առաքելությունում: Լյախավի հրամանով կազակները շրջապատեցին դեսպանատունը, իսկ Գարսովիլը ուղղակի մեղադրանքներ ներկայացրեց բրիտանական դեսպանությանը, որ վերջինս շրջանցելով ձեռք բերված պայմանավորվածությունը՝ սատարել է ազգայնականներին<sup>366</sup>: Սակայն Մեծ Բրիտանիայից հեշտ ուղիղ ակնարկների ազդեցության տակ, որ բրիտանական կառավարությունը կարող է հավաղարձել և զբաղեցնել Պարսից ծոցի կղզիներին որևէ մեկը<sup>367</sup>, ռուսական կառավարությունը պահանջեց հարթել իրավիճակը և շահի հրամանով կազակները հանեցին դեսպանատան շրջափակումը<sup>368</sup>:

Այդ շրջանում Բավկաններում բրիտանական աջակցություն ակնկալող Իզվուսկին աշխատում էր զգուշություն ցուցաբերել՝ կոչ անելով հավատարիմ մնալ անգլո-ռուսական համաձայնագրի դրույթներին<sup>369</sup>:

Իր հերթին Լոնդոնը ևս խուսափելով ավելորդ լարվածությունից՝ սահմանափակվեց շահին ուղղված պաշտոնական բողոքներով: Համայնքների պալատում իրանական հարցերով իր էլույթի ժամանակ է. Գրեյը հայտարարեց, որ «Լյախավիլ ծառայում է նախ և առաջ շահին և կատարում է նրա հրամանները, իսկ նրա ղեկավարած կառույցն իրանական է և ոչ թե ռուսական և նման դեպքե-

<sup>365</sup> Abrahamian Er., Iran between Two Revolutions, նշվ. աշխ., էջ 96-97:

<sup>366</sup> РГБН, ф. 2000, оп. 1, д. 1022 (2), л. 147.

<sup>367</sup> РГБН, ф. 2000, оп. 1, д. 1022 (2), л. 178-181.

<sup>368</sup> Լույս տեսում:

<sup>369</sup> РГБН, ф. 2000, оп. 1, д. 1022 (2), л. 183-242, Сbornик дипломатических документов, вып. 1, с. 184, 188-189.

րում, այլ տերությունների սպաները, այդ թվում նաև՝ անգլիական, նման կերպ են վարվել»<sup>370</sup>:

Այսպիսով, հեղափոխության ճնշման հարցում ՊԿԲ-ի մասնակցությունը չէր կարող ընկալվել որպես արտաքին միջամտություն: Սակայն միանգամայն ակնհայտ է, որ ՊԿԲ-ը աջակցելով Ռուսաստանի ստատու-քոլոնիստ իրականացրած քաղաքականությանն Իրանում, մասնակցելով շահի կողմից շարժման ուղղակի ընդդեմ դիրքերից՝ բացասաբար հանդես եկավ Իրանի ազատական տարրերի դեմ: Հեղաշրջումից հետո Իրանում նոր քաղաքական իրավիճակ ստեղծվեց: Հեղափոխական շարժումը տեղափոխվեց երկրի հյուսիսային շրջաններ, մասնավորապես՝ Ատրպատական և Գիլյան: Չնայած նրան, որ Լյախավիլ և նրա կազակները պաշտպանական օղակի մեջ էին առել Թեհրանը, Մոհամադ Ալին այդպես էլ չկարողացավ իրեն ենթարկել հյուսիսային և կենտրոնական նահանգները: Հեղափոխականների իշխանության տակ անցավ գրեթե ողջ Ատրպատականը: Կովկասից իրանցի գաղափարակիցների օգնության եկան հայերից, վրացիներից, ազերիներից կազմված զինյալ խմբեր, որոնք իրենց հետ բերում էին զենք, զինամթերք, քարոզչական գրականություն<sup>371</sup>:

1908 թ. Թավրիզի նահանգային խորհուրդը (էջեուման-ե Իլալաթի-ե Ագարբայջան կամ Թավրիզի էջեումները), սոցիալ-դեմոկրատների էջեմայունե ամյուն կուսակցության<sup>372</sup> Թավրիզի գաղտնի

<sup>370</sup> Մեքլերումը՝ Иванов М., նշվ. աշխ., էջ 285, ըստ՝ "Parliamentary Debates", 1908, v. CXXI, p. 88-89, 956-95, v. CXXII p. 63-65, 606, 1086.

<sup>371</sup> Լավասայան Լ., 1905-1911 թթ. Իրանի սահմանադրական շարժանը հայերի մասնակցության հարցի շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հոդվածների ժողովածու, հ. XXVIII, Եր., 2011, էջ 130-132, Afary J., Armenian Social Democrats, the Democrat Party of Iran, and Iran-e Naw: a Secret Camaraderie, Iran and Iranian Studies, p. 239, <http://www.janetafary.com/wp-content/uploads/docs/afary-article-armeniandemocrats.pdf>:

<sup>372</sup> Այս կուսակցությունը իրանիկ էր Բաքվում 1905 թ.: Մերս համագործակցել է սոցիալ-դեմոկրատական Հեմմաթ (անդամակցում էին խալանդախաններ) կուսակցության և ռուսական Սոցիալ-դեմոկրատական Բանվորական կուսակցության (ՌՄԲԿ) Բաքվի և Թիֆլիսի մասնաճյուղերի հետ: Իրանում կուսակցու-

կենտրոնը (Մարթազ-ե դաբի), և մոջահեդների խմբերը ձևավորեցին Թավրիզի հեղափոխական բանակը՝ Մարթար և Բադի խաների հրամանատարության ներքո, որը հաստատեց Էջեումենների հեղափոխական իշխանությունը և իր ձեռքում կենտրոնացրեց քաղաքի կառավարման բոլոր ոլորտները: Հունիսյան հեղաշրջումից հետո Թավրիզի ազգայնականները հրաժարվեցին ճանաչել Մոհամադ Ալիի որպես երկրի օրինական ղեկավար և զինված պայքարի մեջ մտան շահական հետադիմության հետ՝ հանուն սահմանադրական կարգերի և մեջլիսի վերահաստատման: Իր ներքին՝ Թավրիզում շահը կենտրոնացրեց շահսենյան և այլ ցեղերի զինված ջոկատներ և հետադիմական ճամբարի ուժերը: Սակայն շահական գորբերի հրամանատար նշանակված Վալի-խան Սեփահդարը և Այն Էջ-Պուլսեն չկարողանալով քաղաք տանել և շրջափակման մեջ առնելով՝ փակեցին քաղաք տանող բոլոր ճանապարհները, պաշարման մեջ պահելով այն շուրջ ինը ամիս<sup>374</sup>:

1908 թ. հուլիսին սկսվեց Թավրիզի ինքնապաշտպանությունը:

<sup>374</sup> Չնայած ռուս-իրանական սահմանի խիստ վերահսկողությանը՝ հեղափոխականները զարտուղի ճանապարհով կարողանում էին իրականացնել զենք-զինամթերքի մատակարարումը Ատրպատականին: Ռուսական հեղափոխության բովոլ անցած կովկասյան հեղափոխականների փորձառությունը թույլ էր տալիս սահմանադրականերին ինքնապաշտպանությանը ավելի կազմակերպված ընթացք հաղորդել: 1908 թ. հոկտեմբերի 8-ին Գարսովիզը հեռագրում էր. «Այն

բյուրը սկսեց մասնաճյուղեր իյնակել 1906 թ. (Թավրիզ, Ռաշտ, Էնզելի): Կազմակերպության Թավրիզի մարմինը (Մարթազ-ե դաբի) համագործակցում էր Թավրիզի Էջեումանի հետ, ուներ կամավոր մոջահիդներին (մարտիկներ սրբազան գործի համար) մարտական խումբ, որը մեջլիսի ամենառանդուն պաշտպանն էր: Կուսակցության գաղափարախոսությունը սոցիալիզմի և լիբերալ-ազգայնականության սինթեզ էր, ներկայացնում էր տարաբնույթ անդամակցություն, ներառյալ նաև հայազգի հեղափոխական ներկայացուցիչները:

<sup>375</sup> Թավրիզի ինքնապաշտպանության մասին մանրամասն տե՛ս Afary J., The Iranian Constitutional Revolution, նշվ. աշխ., էջ 211-227; նշվ. աշխ., էջ 305-362; Abrahamian Er., Iran between Two Revolutions, նշվ. աշխ., էջ 96-97:

<sup>376</sup> Abrahamian Er., Iran between Two Revolutions, նշվ. աշխ., էջ 97-100; Afary J., The Iranian Constitutional Revolution, նշվ. աշխ., էջ 211-212:

ինչ տեղի է ունենում Ատրպատականում, առանձնակի կարևորություն է ներկայացնում Ռուսաստանի համար և անմիջականորեն շոշափում է կրա շահերը Կովկասում և ռուս-իրանական սահմանի անվտանգությունը<sup>375</sup>:

Հեղափոխական խմբումները տարածվել էին նաև Իրանի հարավային շրջաններում: Իրանի կենտրոնական շրջաններում սկիզբ առած բողոքի շարժման արդյունքում Սպահանի սահմանադրականները կապեր էին հաստատել բախթիարների խան Մամսամ օս-Մալթանեի հետ, որին շահը զոհվել էր բախթիարական իլյասի կոլումից: Որպես պատասխան քալլ բախթիար առաջնորդները հրաժարվեցին միանալ Թավրիզ արշավող շահական գորբերին և իրենց զինված խմբերով անցան Սպահանի սահմանադրականների կողմը<sup>376</sup>:

1909 թ. անգլիացիների ազդեցության գոտում՝ Բուշեհրում, Բանդար-Աբբասում, Էհեզեյում հեղափոխական Էջեումենները բուռն գործունեություն էին ծավալել: Բենդար-Աբբասում և Բուշեհրում սահմանադրականներն ըմբոստացան՝ զբաղեցրել նահանգապետերի նստավայրերը, մաքսատները: Թեև հարավում տեղի ունեցող շարժումները, ի տարբերություն հյուսիսային շրջանների, կազմակերպված զինված պայքարի ընթաց չէին կրում, սակայն 1908 թ. ապրիլին Բուշեհրի բրիտանական հյուպատոսի միջնորդությամբ անգլիական երկու հրետանավ և մեկ ռազմական հաճանակ ժամանեցին Պարսից ծոց: Արևելք կատարած բրիտանական դեսանտը շտապեց գրավել հեղափոխականների ձեռքն անցած մաքսակետերը և այլ կարևոր հաստատություններ<sup>377</sup>:

Իրավիճակը կայունացնելու ուղղությամբ շահական կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումները, ռազմական ուժի տրության պատճառով, անհաջողության էին մատնվում: Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով շահին չէր հաջողվում համախմբել իր կողմնակիցների ուժերը: Հեղաշրջումից երկու շաբաթ

<sup>375</sup> АВИПН, «Персидский стол», ф. 144, он. 488, л. 4087, л. 49-50.

<sup>376</sup> احمد كسروی، تاریخ هیجده ساله ازباجان، تهران، ۱۳۷۱، ص ۱۱-۱۳.

<sup>377</sup> Fraser D., Persia and Turkey in Revolt, L., 1910, p. 235-236.

անց շահը Մեծ Բրիտանիայից և Ռուսաստանից փոխառություն էր խնդրել, որի վերաբերյալ բանակցությունները շարունակվեցին մինչև 1909 թ. աշուն<sup>378</sup>:

1908 թ. օգոստոսի 21-ին Պետերբուրգում անգլիական դեսպան Ա. Ափկլոսը դիմեց ռուսական արտգործնախարարի ժամանակավոր պաշտոնակատար Ն. Չարիկովին, որպեսզի Թեհրանում ռուսական և բրիտանական ներկայացուցիչները, Թավրիզում ստեղծված իրավիճակը հարթելու նպատակով, հայտարարություն անեն շահին, որ վերջինս պարտավորվի վերականգնել սահմանադրական կարգերը և մինչև նոյեմբերի 1-ը կրկին մեջլիս գումարի<sup>379</sup>:

Գրեյը ձգտում էր հնարավորինս շուտ հարթել իրանական ճգնաժամը: Արտգործնախարարի վրա հատկապես ճնշումներ էր գործադրում Լոնդոնում հիմնված այսպես կոչված «Պարսկական կոմիտեն», որը Գրեյից պահանջում էր հասնել Սահմանադրության և մեջլիսի ամբողջական վերականգնմանը: Հունիսյան հեղաշրջումից հետո մի շարք հեղափոխական գործիչներ, մեջլիսի պատգամավորներ թաղաքական ազատան գտնելով Լոնդոնում, շարունակեցին պայքարը: Մեծ Բրիտանիայում այդ ժամանակ գործում էր Գրեյի իրանական թաղաքականությանը ընդդիմադիր ճամբար, որը գտնում էր, որ անգլո-ռուսական համաձայնագրի պայմանները բացարձակապես չեն համապատասխանում բրիտանական շահերին, հատկապես անգլիական ազդեցության ոլորտից դուրս մնացած Իրանի հարավ-արևմտյան (չեզոք գոտու) շրջանները, որտեղ կենտրոնացած էին անգլո-հնդկական տնտեսական շահերը:

Մասնավոր Բունեկդարյանը ընդդիմադիր այս ճամբարին անվանում է «բրիտանական արտաքին թաղաքականության այլախոհներ», որոնց կողմից 1908 թ. հոկտեմբերին ստեղծվել էր Լոնդոնի «Պարսկական կոմիտեն»: Այն ավելի կազմակերպված բնույթ հաղորդեց Գրեյի իրանական թաղաքականության ընդդիմախոսների պայ-

քարին: Կոմիտեի հիմնական նպատակն էր՝ խթանել բրիտանական հասարակական կարծիքի աջակցությունը իրանական հեղափոխությունը: Կոմիտեին անդամակցում էին իրանական ծայրահեղ ազգայնականների բարեկամ և «Իրանի սահմանադրական հեղափոխությունը» լայնածավալ աշխատության հեղինակ է. Բրուուերը, ինչպես նաև Իրանում տնտեսական կարևոր լծակներ ունեցող անգլիացի մի շարք ազդեցիկ ձեռնարկատերեր, այդ թվում նաև՝ անգլո-ռուսական համաձայնագրի արդյունքում տնտեսական կորուստներ կրած Լինչ Էդրայթերը, պահպանողականների ճամբարից մի շարք գործիչներ<sup>380</sup>: Օրինաչափ է, որ նման ճնշումների տակ բրիտանական արտգործնախարարը իր ռուս գործընկերներին փորձելու էր համոզել, որ նրանք ազդեն շահի վրա և պարտադրեն նրան չտապալալել սահմանադրական կարգը:

Օգոստոսի 26-ին անգլո-ռուսական համատեղ հայտարարությունը հանձնվեց շահին: Սահմանադրությունը վերականգնելու և կրկին մեջլիս հրավիրելու շահի պարտավորության դիմաց Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան երկրում բարենորոգումներ անցկացնելու նպատակով իրանական կառավարությանը խոստացան փոխառություն տրամադրել<sup>381</sup>: Սակայն սեպտեմբերի 4-ին շահական արտգործնախարարի պատասխան նոտայում ասվում էր, որ թեև շահը հեղաշրջումից հետո իր ժողովրդին և երկու տերությունների ներկայացուցիչներին խոստացել էր շարիաթի և երկրի օրենքներին համապատասխան մեջլիս հրավիրել, ստեղծված պայմաններում մեջլիսը կարող է գումարվել Ատրպատականում կատարյալ կարգուկանոն հաստատվելուց հետո միայն<sup>382</sup>:

Կարծելով, որ գործընկերային հարթության վրա դրված ռուս-անգլիական հարաբերությունները թույլ կտան կարգավորել ներքա-

<sup>378</sup> Ашманов Б. В., Российское самодержавие и вывоз капиталов 1895, в. 2, м. 2, с. 138-155.

<sup>379</sup> Сборник дип. док. вып. 1, с. 205-252.

<sup>380</sup> St. u Bonakdarian Mansour, в. 2, м. 2, с. 354-356, 178-186:

<sup>381</sup> Ашманов Б. В., Российское самодержавие и вывоз капиталов 1895, в. 2, м. 2, с. 138-155:

<sup>382</sup> Сборник дип. док. вып. 1, с. 284, Afary J., The Iranian Constitutional Revolution, в. 2, м. 2, с. 224-225, Er., Iran between Two Revolutions, в. 2, м. 2, с. 99:

եական ճգնաժամը և պահպանել ռուսական ազդեցությունը դաջարական արքունիքում, Ռուսաստանը սկզբում թերագնահատեց հեղափոխության գործընթացները: 1908 թ. դեկտեմբերի 17-ին և 19-ին վարչապետ Պ. Ստոլիպինի նախագահությամբ կայացած Հաստիկ խորհրդակցության մատչանում, որին ներկա էին ցարական կառավարության ֆինանսների, պաշտպանության և ԱԳՆ ղեկավարները, առկում էր. «Ռուսաստանին անհրաժեշտ է որոշել Իրանում հետագա քաղաքական առաջնահերթությունների շրջանակը: Մեր քաղաքականության սկզբունքը՝ Իրանի ներքին խեղդիներին չմիջամտելն ու Անգլիայի հետ 1907 թ. համաձայնագրին հետևելն է: Այնուամենայնիվ, Պարսկաստանի ներքաղաքական իրադարձությունները հարվածի տակ են դնում մեր շահերը և, անկախ մեր կամքից կարող են հանգեցնել մեզ համար միայն անցանկալի միջամտությանը, բանի որ շահը զիջումների չգնալով փոքրում է ներքաշել մեզ Անգլիայի դեմ ուղղված միակողմանի գործողությունների մեջ... Շահին սատարելով՝ Ռուսաստանը մեծ ռիսկերի է գնում, առաջին հերթին հարվածի տակ դնելով Անգլիայի հետ ձեռք բերված պայմանագրվածությունները, երկրորդ հերթին՝ Ռուսաստանի դեմ բացասաբար տրամադրելով հեղափոխական շարժման մեջ ներգրավված ազատական ուժերին»<sup>385</sup>: Կարևորելով Իրանում գործող վարչակարգի նկատմամբ Մեծ Բրիտանիայի հետ փոխանամայնեցված գործողությունների հստակեցման հարցը, նշելով երկրում կայունություն հաստատելու (կլիմի դա լիբերալ, թե պահպանողական իշխանություն), տնտեսական և իրավական բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտության մասին ռուսական արտգործնախարարությունը 1909 թ. հունվարի 3-ին բրիտանական կառավարությանը հանձնեց վերոնշյալ Խորհրդակցության քննարկումների արդյունքում մշակված մի հուշագիր, որն ըստ էության՝ Իրանի ներքաղաքական ճգնաժամի հաղթահարման «ճանապարհային քարտեզ» էր<sup>386</sup>: Սակայն 1909 թ. հունվարի 21-ի պատասխան հուշագրում բրիտանական կառավարությունը հայտնեց,

<sup>385</sup> АВПРИ. "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 2293, л. 90-92.

<sup>386</sup> АВПРИ. "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 2293, л. 52-53, Kazemzadeh F., նշվ աշխ., էջ 539:

որ նախընտրում է «չեզոքություն պահպանել Իրանի ներքին խեղդիների նկատմամբ» և պատրաստ է փոխառություն տրամադրել միայն պայմանով եթե. «այն չօգտագործվի սահմանադրության տապալման նպատակի համար: Հակառակը՝ այն պետք է տրամադրվի այն ձևաչափով, որը կսատարի սահմանադրական կարգերի վերահաստատմանը», բանի որ շահի միանձնյա կառավարումը մեծացնում էր դրամական միջոցների ոչ արդյունավետ օգտագործման հավանականությունը<sup>387</sup>: Փաստորեն, Լոնդոնը մերժեց Ռուսաստանի առաջարկը և սպասում էր երկրում առավել կայուն քաղաքական տարրի գերակայության հաստատմանը:

Մինչև 1909 թ. գարուն շահի, Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև ընթացող բանակցություններն էական արդյունք չուղեցին: Միաժամանակ 1908 թ. հունվարին հեղափոխական խմբումներ սկսվեցին նաև Գիլյանի կենտրոն Ռեշտում, որտեղ նույնպես կենտրոնացել էին մեծ թվով կովկասցի հեղափոխականներ: Այստեղ ետևդուն հեղափոխական գործունեություն էր ծավալել սահմանադրական շարժմանը զինվորագրված հայազգի Եփրեմ խան Դավթյանը: Երա կազմակերպած հեղափոխական ջոկատները փետրվարի 9-ին գրավեցին Ռեշտը և իրենց վերահսկողության տակ առան քաղաքի զինանոցը<sup>388</sup>: Շուտով հեղափոխականների իշխանությունը տարածվեց ողջ նահանգի վրա, նրանց ենթակայության տակ անցավ նաև Էնզելի նավահանգիստը: Ռեշտի և Էնզելիի գրավումից հետո 1909 թ. ապրիլին Գիլյանի հեղափոխական բանակը Եփրեմ խանի հրամանատարության ներքո Ռեշտից շարժվեց դեպի Դավլին՝ մայրաքաղաք արշավելու նպատակով: Ռեշտի նջումները Գիլյանի «ձևական» նահանգապետ կարգեց նույն այն Կալի-խան Մահադդարին, ով Թավրիզի ինքնապաշտպանության սկզբում պայքարում էր սահմանադրականների դեմ: Թեև պետական այս այրը հայտնի էր իր պահպանողական հայացքներով, սակայն նահանգից վերջինիս հետացնելու

<sup>387</sup> Նույն տեղում:

<sup>388</sup> Բայրուրյան Կ., Իրանի պատմություն, նշվ. աշխ., էջ 525:

նպատակով՝ հեղափոխականները ստիպեցին նրան իր գործով միանալ դեպի Թեհրան պատրաստվող արշավանքին<sup>387</sup>:

1908-1909 թթ. ցարական կառավարությունը միշտ չէ, որ ուշադրության կենտրոնում էր պահում Իրանը՝ բավարարվելով շահի և ազգայնականների միջև որոշակի հավասարակշռություն պահպանելու ուղղությամբ անգլիական կողմի հետ համատեղ ելույթներով: Նոյեմբերին Փարսովիզը լքեց Իրանը: Նա «ժամանակավորապես» ետ էր կանչվել Պետերբուրգ, և ռուսական ԱԳՆ-ը կես տարուց ավել պաշտոնապես չէր մեկնաբանում ոչ նրա հնարավոր վերադարձը Թեհրան, ոչ էլ Իրանում նոր դեսպանորդի նշանակման հարցը<sup>388</sup>:

Մինչ Լոնդոնում ռուսական դեսպան Բենեդեկտովի և Իզվոլսկու ջանքերով Թեհրանում դեսպանորդ կնշանակվեր Լոնդոնում ռուսական դեսպանության խորհրդական Ս. Պոկլևսկի-Կոզելը<sup>389</sup>, Իրանում առաքելության պարսկականությունները կատարում էր գործերի հավատարմատար Ե. Մարյինը, ով ամբողջովին հետևում էր Իզվոլսկու ցուցումներին և հակված էր համագործակցելու բրիտանական նոր դեսպանորդ Ջ. Բարկլիի հետ:

Մեծ Բրիտանիայի հետ ձևավորված համագործակցությունը պահպանելու նպատակով և Իրանի ներքաղաքական ճգնաժամի կարգավորման ուղղությամբ վերջնական և որոշիչ համաձայնության չցալու արդյունքում՝ Ռուսաստանի իրանական քաղաքականությունը 1908 թ. հոկտեմբերից մինչև 1909 թ. ապրիլ աչքի էր ընկնում անվճարականությամբ: Ջորջ ուրարկելու հրամաններին հետևում էին դրանց ընթացքը կասեցնելու և սպասողական դիրքորոշում զբաղեցնելու հրամանները, շահին հեղափոխականների դեմ սատարելու

<sup>387</sup> احمد كسروی، تاریخ هیجده ساله ازباجان - ص. ۱۷.

<sup>388</sup> Sliu, u. Ninkatova H., Русская пресса о деятельности посланника Российской империи в Персии Н.Г. Гартвига в период революции 1905-1911 гг., Известия Российского государственного педагогического университета им. А. И. Герцена, N 146, 2012, с. 19.

<sup>389</sup> Վիտտես իր հուշերում Պակևսկու մասին գրել է, որ նա եղել է Էդուարդ II-ի ֆավորիտը և Իզվոլսկու ընտանիքի մտերիմ ընկերը: Գրաֆ Berge C., նշվ. աշխ., էջ 395:

որոշմանը հետևում էր այս կամ այն քաղաքական խմբավորման վրա հենվելու հաշվարկները<sup>390</sup>:

1909 թ. փետրվարին անցկացված մի շարք Հասուկ խորհրդակցությունների մատչաններում ակնհայտորեն ուրվագծվում են իրանական հարցում ռուսական կառավարությունում առկա իրարամերձ մտաեցումներն ու տարակարծությունները հիմնախնդրի մարտավարության վերաբերյալ: Օրինակ, երբ 1909 թ. փետրվարի 9-ին Հասուկ խորհրդակցության ընթացքում պաշտպանության նախարար Ա. Ռոդիգերը, Իրանում իշխանափոխություն թույլ չտալու հարցի հետ կապված, առաջարկեց ռուսական շահերն Իրանում պաշտպանել ՊԿԲ-ի միջոցով. «Կազակական բրիգադի ռուս սպաները սատարում են շահին, այնքան ժամանակ, քանի դեռ նրա գործողությունները չեն հակասում ռուսական շահերին», Իզվոլսկին չհամաձայնվելով նախարարի այդ դիրքորոշմանը՝ նշել էր, որ «շահի իշխանությունը ռուսական ավիներով պահելու անհրաժեշտություն չկա»<sup>391</sup>:

Փետրվարի 16-ի խորհրդակցության Իզվոլսկին՝ Իրանում իրավիճակը կայունացնելու նպատակով առաջարկեց մի ծրագիր, ըստ որի՝ շահին ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու հարցում բրիտանական կողմի հրաժարվելու դեպքում, շահական կառավարության տրամադրության տակ կարող էին դրվել ռուսական փոխառությունները երաշխավորող մաքսային եկամուտները՝ որպես նոր փոխառության կանխավճար, որին Կոկովցովը կտրականապես դեմ էր: Կոկովցովն առաջարկում էր գրավել հյուսիսային մաքսակետերը՝ փոխառությունները երաշխավորող եկամուտները ապահովելու համար և փոքրաթիվ ռազմական միավորներ ուղարկել Իրան<sup>392</sup>: 1909 թ. փետրվարի 27-ի Հասուկ խորհրդակցության ընթացքում պետական գործիչների մի մասը՝ Կոկովցովի և Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի գլխավորությամբ Իրանում ռազմական միջամտություն կիրառելու կողմ էին արտահայտվում, մյուս մասը՝ Իզ-

<sup>390</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 2294, с. 1, л. 52.

<sup>391</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 2294, с. 1, л. 56.

<sup>392</sup> АВПРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 2294, с. 1, л. 78-79.

վոլսու հետ միասին, գտնում էին, որ ռուսական զորքերն Իրան ուղարկելը միաբժեքորեն չի ընկալվի Լոնդոնի կողմից: Որոշ վերապահումներով միջանտոյությանը կողմ էր եսև նախարարների խորհրդի նախագահ Պ. Մտոլիպիևը, որը գտնում էր, որ թեև միջանտոյությունը ցանկալի կլինի իրականացնել Մեծ Բրիտանիայի համաձայնությամբ, սակայն հակառակ դեպքում, «եթե Անգլիան ի վերջո հրաժարվի շահին ֆինանսական աջակցություն ցուցաբերելուց, ապա Ռուսաստանին, իր հիմնական սկզբունքները յուշատելու նպատակով՝ հարկավոր է հանգամանորեն վերլուծել Իրանի նկատմամբ հետագա բաղադրականությունը»:<sup>393</sup> Որոշ տվյալների համաձայն՝ ռազմական միջանտոյությանը կողմ էր արտահայտվում նաև Լիզոլայ Բ-ն<sup>394</sup>:

### 3. Ռուսական կայսրության ռազմական առաջին ներխուժումն Իրան

Նյութական վնասներից գտա՝ իրանական հեղափոխությունն օրակարգային դարձրեց նաև ռուսական սահմանների անվտանգության հարցը՝ պայմանավորված Ատրպատականի նկատմամբ թուրքական զավթողական ծրագրերով: Դեռևս 1905 թ. սկսված ռզեշնչված Գերմանիայի հետ իր սերտ համագործակցությամբ՝ Աբդուլ Համիդ Բ-ն իրանական սահմանին մեծաքանակ զորք կենտրոնացնելով՝ նպատակ ուներ Օսմանյան կայսրությանը բռնակցել Իրանական Քրդստանի և Ատրպատականի տարածքները<sup>395</sup>: Ստամբուլի ջանքերն ուղղված էին նաև սահմանափակելու Իրանի հյուսիսային շրջաններում կենտրոնացած ակտիվ գործունեություն ծավալող հայ զինված հեղափոխական խմբերի ներթափանցումն Արևմտյան Հայաստան: 1908 թ. Աբդուլ Համիդի վարչակարգի տապալումը գուզադիպեց Իրանում ծավալվող հեղափոխական բուռն իրադարձություններին: Էշխանության եկած երիտթուրքական կառավարությունը շարունակեց Ատրպատականի և Իրանական Քրդստանի նկատմամբ մեծապե-

տական-զավթողական իրենց նախորդների ծրագրերը<sup>396</sup>: Բնական է, որ ստեղծված իրավիճակում Ռուսաստանը չէր կարող անմասն մնալ Թուրքիայի և Իրանի միջև ընթացող զարգացումներից<sup>397</sup>: Իրան գումարվում էին նաև կայսրության համար ոչ պակաս կարևոր Բալկանյան խնդրի շուրջ ռուսական կառավարությունում ձևավորված սուր հակասությունները<sup>398</sup>:

1908-1909 թթ. Բալկանյան խնդրում Բզվոլսկու դիվանագիտական անհաջողությունը էլ ավելի ուժեղացրեց ռուսական գերմանական շրջանների հակասանցիական տրամադրությունները և նրանց ակտիվ ճնշումները կառավարության վրա: Այն հնոտորեն օգտագործվեց գերմանամետ ազգերի կողմից՝ առաջնահերթությունների օրակարգ հանելով դեպի Գերմանիա կողմնորոշվելու և այդ կապակցությամբ արտգործնախարարի փոփոխման հարցերը<sup>399</sup>: Ստեղծված իրավիճակում Պետերբուրգում գնալով ավելի էին հակվում իրանական հեղափոխությանը ռազմական միջամտության կիրառման գաղափարին<sup>400</sup>:

1909 թ. մարտ-ապրիլ ամիսներին ռուսական կառավարությունը շարունակեց ռազմական փոքրաթիվ միավորներ ուղարկել Իրան: Մարտի 20-ի Հաստուկ խորհրդակցությունը որոշեց մի ռազմա-նավ ուղարկել Էնգելի և Նազկինի հյուպատոսության ծառայողների անվտանգությունն ապահովելու համար, այնտեղ գործուղել 50 զին-ձառայող, իսկ հենակետերի պաշտպանության համար նս տասական զինվոր: Մարտի 15-ին որոշվեց Մեշեհեդի հյուպատոսական պահակազորը ամրացնել 75 ռուս զինվորով և համապատասխան սպայական անձնակազմով<sup>401</sup>:

<sup>393</sup> АВПРИ, "Персидский стол", փ. 144, օտ. 488, ձ. 2294, Կ. 1, ձ. 57.

<sup>394</sup> Бестужев И., նշվ. աշխ., 313:

<sup>395</sup> XX դ. սկզբի թուրք-իրանական հարաբերություններին է կիցված Վ. Բայրուբյանի արխիվային փաստաթղթերի հենքի վրա գրված համակարգմանի ուսումնասիրությունը: Մանրամասն տե՛ս Բայրուբյան Վ., Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914 թթ.), Եր., 1974.

<sup>396</sup> Տե՛ս Բայրուբյան Վ., Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914 թթ.), նշվ. աշխ., էջ 156-174:

<sup>397</sup> նշվ. աշխ., էջ 74-99,112:

<sup>398</sup> Մանրամասն տե՛ս Էֆրեմով П., Внешняя политика России 1907-1914, М., 1961, Կ. 79-100, Аветян А., Русско-германские дипломатические отношения накануне первой мировой войны, 1910-1914, М., 1985, Կ. 34-36, Marian Kent, Constantinople and Asiatic Turkey 1905-1914, British Foreign policy under Sir Edward Grey, նշվ. աշխ., էջ 156-157:

<sup>399</sup> Бестужев И., նշվ. աշխ., էջ 314-317, Игнатьев А., Русско-английские отношения накануне первой мировой войны (1908-1914 гг.), М., 1962, Կ. 95-96

<sup>400</sup> АВПРИ, "Персидский стол", փ. 144, օտ. 488, ձ. 2294, Կ. 1, ձ. 52.

<sup>401</sup> АВПРИ, "Персидский стол", փ. 144, օտ. 488, ձ. 2294, Կ. 1, ձ. 71-93.

Մեծ Բրիտանիան ևս սկսեց ռազմական միավորներ ուղարկել Իրան: Մարաի վերջին Բուշեհրում քուչկուրների զինյալ խմբերի կողմից իրականացվող հարձակումների պատճառով այստեղ էր ժամանել անգլիական «Ֆորս» ռազմանավը: Ապրիլին այն ավի իջեցրեց 100 հոգանոց զորայտանք և 4 իրանոս<sup>402</sup>՝ անգլո-հնդկական առևտրական հեռահաղորդակցության անվտանգությունն ապահովելու նպատակով<sup>403</sup>:

Ապրիլի 8-ին Ա. Իզվիլսկու և Պեսերբուրգում անգլիայի դեսպան Ա. Նիկոլսոնի միջև ի վերջո համաձայնություն ձեռք բերվեց, որով կողմերը համատեղ խորհուրդ պետք է տային շահին.

1. պետական գործերից հեռացնել հետադիմական գործիչներին,
2. վերականգնել Սահմանադրությունը,
3. նոր կառավարություն ձևավորել, որի կազմում կընդգրկվեն Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի դիվանագիտական առաքելությունների կողմից ներկայացված ցուցակում զետեղված ներկայացուցիչները,
4. համաներում շեղանել շահի հակառակորդներին,
5. սահմանել մեջլիսի նոր ընտրությունների ժամկետը:

Եթե շահը կատարեր երկու պետությունների պահանջները, ապա Ռուսաստանից կտանար 2,5 հազար ֆրանկ արժողությամբ փոխառություն, իսկ Մեծ Բրիտանիան համարժեք գումարը կտրամադրեր՝ նորընտիր մեջլիսի կողմից այն հաստատելուց հետո: Շահին հանձնված հուշագրում միաժամանակ նշվում էր, որ վերջինս բազմիցս խայտալ է իր խոստումները և եթե այս անգամ էլ չընդունի առաջարկվող ծրագիրը, ապա կողմերը ձեռնպահ կլնան<sup>404</sup>:

Չնայած սրան, ռուսական օգնությունն ակնկալող շահը շարունակեց Թավրիզը պաշարման մեջ պահելու հուսահատ փորձերը՝ քաղաքի ավելի քան 200 հազարանոց ազգաբնակչությունը մատնելով սովի: Մարտի վերջին շահական զորքերին ի վերջո հաջողվեց

զրավել իրանական Ջուլֆան (Ջուղա), որով իրենց ձեռքը վերցրին Կովկասը Թավրիզին կապող կարևոր ճանապարհը: Իրանական կառավարությունը հրաժարվեց բաց անել ճանապարհները: Ստեղծված պայմաններում Իզվիլսկին Ե. Սաբրինին հրահանգեց վերջնագիր ներկայացնել շահին, որ էթե շահական զորքերի հրամանատարը շարունակի թույլ չտալ պարենի ներմուծումը Թավրիզ, ապա խաղաղ բնակչությանը մթերքով ապահովելու, օտար հպատակների կյանքի և գույքի, հյուպատոսությունների պաշտպանության նպատակով՝ ռուսական կառավարությունը ստիպված կլինի ռազմական ուժի միջոցով բաց անել ճանապարհները<sup>405</sup>:

Պաշարումը հանելու՝ շահին ուղղված ռուս-բրիտանական կոչերն արդյունք չտվեցին: Այն օդ-հողույն պատճառաբանեց, որ չի ստացել 6 օրով պաշարումը հանելու շահական հրամանը և անուսեց հյուպատոսներ Ա. Միլլերի (ռուսական) և Ա. Վարսիլալվի (բրիտանական) համատեղ պահանջները<sup>406</sup>:

Մինչ Թավրիզում և Թեհրանում ռուս և բրիտանացի դիվանագետները բանակցություններ էին վարում հեղափոխական իշխանության և շահական ներկայացուցիչների հետ՝ ռուսական կառավարությունում Իրան լայնածավալ ռազմական ներխուժում սկսելու մասին որոշումն արդեն կայացվել էր: Ապրիլի 20-ին Գլխավոր շտաբ հասցեագրված գաղտնի հեռագրից տեղեկանում ենք, որ Կովկասի ռազմական շրջանի գլխավոր հրամանատար Վորոնցով-Դաշկովին ապրիլի 7-ի հեռագրով Նիկոլայ Բ-և (Նախարարների խորհրդի շատուկ խորհրդակցության կայացրած որոշման հիման վրա) հրահանգել էր ռուսական և օտարերկրյա հյուպատոսությունների, ձեռնարկությունների անվտանգությունը, մթերքի մատակարարումը ապահովելու, ինչպես նաև Ջուլֆա-Թավրիզ հեռահաղորդակցությունը վերականգնելու նպատակով՝ անհրաժեշտ քանակությամբ զորք ուղարկել

<sup>402</sup> British influence in Persia 1900-1921, Encyclopedia Iranica, <http://www.iranicaonline.org/articles/great-britain-iv>.

<sup>403</sup> Сборник дин. док. вып. 2, с. 128-131.

<sup>404</sup> Сборник дин. док. вып. 2, с. 115-116, 128-131.

<sup>405</sup> Сборник дин. док. вып. 2, с. 135-138.

Թավրիզ<sup>406</sup>: Այդ են փաստում նաև գործերի հավատարմատար Ե. Սար- լինին և հյուպատոս Ա. Միլլերին հասցեացրված Բոլոլսկու հեռագրերը<sup>407</sup>: Ապրիլի կեսին գեներալ-մայոր Ի. Մեսարսկու հրամանատարության տակ գորք ուղարկվեց Ջուլֆա (Ջուղա), որի կազմում կար՝ 2 գումար- տակ՝ կովկասյան առաջին հրաձգային բրիգադից, 2 հարյուրյակ՝ Տերի կովկասյան գորբերից, 2 հարյուրյակ՝ Կովկասյան կազակական գորբից, 3 թնդանոթային մարտկոց և 1 ակնասզերծող վաշտ<sup>408</sup>:

1909 թ. ապրիլի 25-ին ռուսական գորբերն անցան սահմանը: Նույն օրը շահը ստիպված ընկրկեց և հրամայեց հանել Թավրիզի պաշարունը, սակայն արդեն ուշ էր: Ռուսական գորբերի մուտքն Ատրպատական անկասելի էր: Ռուսական արտաքին գերատեսչու- թյան հրամանով թավրիզցիներին օգնության եկած բոլոր ռուս- հպատակ հեղափոխականները պետք է զինաթափվեին և արտաքս- վեին Իրանից<sup>409</sup>:

Ռուսական գորբի ներխուժումն Իրան նպատակ ուներ նաև խափանել Ատրպատականի գավառն թուրք-գերմանական ծրագ- րերը: Թուրքական նվաճողականությունը սպառնալիքի տակ էր դնում Ռուսաստանի ռազմավարական դիրքերն ինչպես Իրանում, այնպես էլ Այբրկովկասում: Ատրպատականն ապագայում կարող էր օգտագործվել որպես ռազմական հենակետ՝ Ռուսաստանի վրա հարձակվելու համար:

Ռուսական գորբերի ժամանումով թեև Թավրիզում ռազմա- կան գործողությունները դադարեցին և շահական գործախաղորում- ները ստիպված էին թողնել քաղաքը, սակայն մյուս նահանգներում հեղափոխական ակտիվությունը շարունակվում էր: 1909 թ. ապրիլի 21-ին Գիլյանի հեղափոխականները գրավեցին Ղազվինը (հետավո- րությունը Թեհրանից՝ 90 մղոն) և սկսեցին պատրաստվել դեպի

մայրաքաղաք արշավանքի<sup>410</sup>: Ղազվինը բացառիկ նշանակություն ուներ ռուսների համար: Այստեղ խաչվում էին երկու կարևոր՝ Ռու- սաստանից Ռեշտով և Թավրիզով դեպի Թեհրան տանող ճանա- պարհները, ուստի ապրիլի 25-ի ռուսական կառավարության շատուկ խորհրդակցության ժամանակ որոշվեց անհապաղ Բաքվում կենտ- րոնացնել կովկասյան կազակական զեղերից 400 հոգանոց զորախումբ՝ անհրաժեշտության դեպքում, ծովով Էնզելի և Ռեշտ ուղարկելու նպատակով: Այն պահանջվելու էր ինչպես հյուպատոսությունների, այնպես էլ Էնզելի-Ղազվին ճանապարհի անվտանգությունը: Որ- պեսզի վերոնշյալ ճանապարհը չարժանանար Ջուլֆա-Թավրիզ ճա- նապարհի ճակատագրին, Վ. Կոկովցովը առաջարկում էր, որ ռուսա- կան գորբերը՝ առանց մայրաքաղաքը գրավելու, զբաղեցնեն Էնզելի- Թեհրան ճանապարհը<sup>411</sup>: Հուլիսի 3-ի շատուկ խորհրդակցությունը վերջնականապես որոշեց Բաքվից Էնզելի ուղարկել մի զորախումբ, որը բաղկացած էր լինելու կազակական մեկ զեղից, հետևակային գումարտակից և մարտկոցից: Այդ զորախումբը պետք է ապահովեր Ղազվին-Կասպից ծով հարողակցությունը: Ռուսական գործախա- վորման առաջխաղացումը կախված էր լինելու իրադարձություն- ների հետագա զարգացումներից և իրականացվելու էր Թեհրանի ռուսական առաքելության հրահանգով<sup>412</sup>:

Հունիսի 10-ին շահը Սահմանադրության վերականգնման և մեջլիսի վերաբացման մասին հրովարտակ հրապարակեց: Մեկ այլ հրովարտակով համաներում էր շնորհվում բոլոր երանց, ովքեր հե- ղափոխական գործունեության պատճառով դատապարտվել կամ հետապնդվում էին իշխանությունների կողմից: Հայրենիք կարող էին վերադառնալ նաև քաղաքական գործունեության պատճառով ար- տաքսված գործիչները<sup>413</sup>: Կազմվեց երկ կառավարություն: Այդ կապակ- ցությամբ ռուսական կառավարությունը վերականգնեց կանխավճար արա-

<sup>406</sup> Стрелинов (Калабухов), изд. шпж., т. 23, риз. Донесения об отправке русских войск в Персию 1909-1914 гг., РТВИ, ф. 2000, л. 973 (1), л. 105.

<sup>407</sup> Сборник дин. док. вып. 2, с. 134-135.

<sup>408</sup> Առին տեղում:

<sup>409</sup> Գ. Կ. Կոկովցով, «Мем. Сборник дин. док. вып. 2, с. 150.

<sup>410</sup> احمد كسروی، تاریخ هیجده ساله آذربایجان، ص. ۳۲-۲۹

<sup>411</sup> АВГРИ, "Персидский стол", ф. 144, оп. 488, л. 2295, л. 177-178.

<sup>412</sup> Сборник дин. док. вып. 2, с. 227-228, 231.

<sup>413</sup> احمد كسروی، تاریخ هیجده ساله آذربایجان، ص. ۲۶-۲۵

մարդերու մասին իրանական կառավարության հետ բանակցությունները, սակայն բրիտանական կառավարությունը հրաժարվեց մասնակցել կանխավճարի տրամադրմանը՝ «մինչև նորընտիր մեջլիսը չհաստատի այն»: Ենթադրվում էր, որ շահին կտրամադրվի կանխավճարի ռուսական մասնաբաժինը: Մակայն արդեն հունիսի վերջին պարզ դարձավ, որ գործարքն անհնարին է: Հեղափոխական ճգնաժամի արդյունքում շահի կարգավիճակը խիստ անկայուն դարձավ, իսկ իրանական կառավարությունը հրաժարական տվեց: Ջորջերին վճարելու նպատակով շահը ստիպված էր 500 հազ. թուրան վերցնել Հաշվավարկային բանկից՝ ուկյա իրերի գրավադրման դիմաց<sup>414</sup>:

Ղազվինի հեղափոխական բանակի հետ միաժամանակ Սպահանից բախթարական առաջնորդ Մաման օս-Սպայանեն նույնպես պատրաստվում էր արշավել Թեհրան և սպասում էր Եվրոպա մեկնած իր եղբոր՝ Մարդար Ասադի վերադարձին<sup>415</sup>: Վերադառնալով սամանադրական շարժմանը բախթարական ուժերի մասնակցության հարցին՝ անհրաժեշտ է նշել, որ ռուսամետ Մոհամմադ Ալի շահի դեմ հանդես գալուն բախթարներին հրահրում էին բրիտանացիները: Մարդար Ասադը Եվրոպայում հասցրել էր սերտ կապեր հաստատել Իրանից արտաքսված ազգայնականների և Լոնդոնի «Պարսկական կոմիտեի» գործիչների հետ: Վերջիններս դրամական և զինամթերքի լուրջ օժանդակություն էին ցուցաբերել բախթարներին՝ Թեհրան նախապատրաստվող արշավանքի համար: Թեև 1907 թ. Լոնդոնը իրանական ճգնաժամի կարգավորմանն ուղղված իր քայլերը պարբերաբար համաձայնեցնում էր ռուսական կառավարության հետ, այնուամենայնիվ է. Գրեյը և բրիտանական արտաքին գերատեսչության մի շարք աշխատակիցներ, «այլխոսիների ճամբարի» գործադրած ջանքերի շնորհիվ ժամանակ առ ժամանակ անձնական հանդիպումներ էին ունենում իրանական ընդդիմադիր դաշտի չափավոր գործիչների հետ<sup>416</sup>:

<sup>414</sup> Сборник дин. док. вып. 2, с. 244.

<sup>415</sup> ۲۰. احمد كسروي، تاریخ هیجده ساله ازبایجان، ص. ۲۰.

<sup>416</sup> Bonakdarian Mansour, Էշվ. աշխ., էջ 187-208:

Մարդար Ասադի՝ Սպահան ժամանելուց շուրջ մեկ ամիս հետո՝ հունիսի 17-ին, բախթարները նրա առաջնորդությամբ շարժվեցին դեպի Թեհրան<sup>417</sup>:

Հունիսի 23-ին հեղափոխական բանակը Ղազվինից նույնպես վերսկսեց իր արշավանքը դեպի Թեհրան<sup>418</sup>: Հունիսի 26-ին Թեհրանի մոտ Գիլյանի և Բախթարական առաջնորդների զորքերը միավորվեցին, որոնք շահական անկանոն բանակի, այդ թվում ՊԿԲ-ի հետ Թեհրանի մատուցեցնում էրկողյա մարտերից հետո շրջանցեցին վերջիններին պաշտպանությունը և հունիսի 30-ին մուսր գործեցին մայրաքաղաք՝ զբաղեցնելով մեջլիսի շենքը<sup>419</sup>: Այսպիսով, Իրանը կրկին կանգնեց պետական հեղաշրջման փաստի առջ:

Մտնդված իրավիճակում անցիական և ռուսական ԱԳԼ-ները միմյանց հետ սկսեցին բանակցել Թեհարանում իրենց առաքելություններից մեկում Մոհամմադ Ալի շահին ապաստան տրամադրելու վերաբերյալ<sup>420</sup>: Ի վերջո, շահը ընտանիքով, կազակների և բրիտանական սեպահների ուղեկցությամբ, ապաստանեց մայրաքաղաքից մի քանի մղոն հյուսիս գտնվող Ջիրգյանդեյի ռուսական առաքելության ամառային նստավայրում<sup>421</sup>: Մյուս օրը նա հարկադրված հրաժարվեց գահից<sup>422</sup>:

Մեջլիսում գումարված «Արտակարգ գերագույն խորհուրդը», որի 500 հոգանոց կազմում ընդգրկվեցին մշտաինդներ և բախթարական առաջնորդներ, մի շարք ուլեմներ, իշխանագուհներ, առևտրական խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներ, Առաջին մեջլիսի պատգամավորներ, վերահաստատեց 1906-1907 թթ. Մահմանադրությունը, Մոհամմադ Ալի շահին գահընկեց հայտարարեց և շահ հռչակեց նրա տասներկուամյա որդուն՝ Ահմադին<sup>423</sup>: Անչափառես շահի (1909-1925 թթ.) խնամակալ (ռեգենտ) նշանակվեց դաջարական տոհմի իշ-

<sup>417</sup> Afary J., The Iranian Constitutional Revolution, Էշվ. աշխ., էջ 251:

<sup>418</sup> Աշխ տեղում, էջ 252, Сборник дин. док. вып. 2, с. 232-233:

<sup>419</sup> ۲۰. احمد كسروي، تاریخ هیجده ساله ازبایجان، ص. ۲۰.

<sup>420</sup> Աշխ տեղում:

<sup>421</sup> Сборник дин. док. вып. 2, с. 255.

<sup>422</sup> Смирнов К., Записки воспитателя персидского шаха, 1907-1914 годы, (с приложениями), Тель-Авив, 2002, с. 127.

<sup>423</sup> ۲۷. احمد كسروي، تاریخ هیجده ساله ازبایجان، تهران، ص. ۲۱.

խանագուն Ագուդ օլ-Մոլլը<sup>424</sup>։ Կազմվեց ժամանակավոր կառավարություն, որի փաստացի ղեկավարությունն անցավ Մեփահչարի (վարչապետ և ռազմական նախարար) և Սարդար Ասադի (ներքին գործերի նախարար) ձեռքը<sup>425</sup>։ Օգոստոսի 17-ին Գերագույն խորհուրդը վերակազմավորվեց և վերածվեց Դիրեկտորիայի (Հայաթ-ե Մուդի-բահ-ե Մովաքքաթի), որի կազմում ընդգրկվեցին տասներկու նշանավոր սահմանադրականներ, ովքեր պետք է վերահսկեին կառավարության աշխատանքը մինչև Երկրորդ մեջլիսի գումարումը<sup>426</sup>։

Դիրեկտորիայի օրակարգում դրված առավել կարևոր հարցերից էին՝ մի շարք հակասահմանադրականների դատավարությունների կազմակերպումը, Մոհամմադ Ալի շահի արտաքսումը, ֆինանսների հայթայթումը, նոր մեջլիսի ընտրությունները, ինչպես նաև ՊԿԲ-ի լուծարման և հարավային առևտրական ճանապարհների անվտանգությունը ապահովելու նպատակով ոստիկանական միավորումների ստեղծման հարցերը<sup>427</sup>։

Ռուսաստանի ազդեցությունն արքունիքում սահմանափակելու նպատակով՝ սահմանադրական իշխանությունների առաջին թիրախը դարձավ ՊԿԲ-ն։ Բնական է, որ Լյախովին և ռուս կազակներին ծառայությունից հեռացնելու որոշումը արժանացավ ռուսական առաքելության սուր դժգոհությանը։ Ռուսական առաքելության գործերի իրավատարմատար Ե. Սաբլինը կարող Կախանջեյրով դիմեց իրանական նոր կառավարությանը, որի հետ բանակցությունների ժամանակ ռուսական առաքելության ներկայացուցիչը պահանջեց, որ բրիգադը մնա ռուս գնդապետի հրամանատարության տակ, իսկ շահին պաշտպանող ռուս բոլոր սպաներին և շարքային ծառայողներին ներում չնորհիլի։ Գործադրած ճնշումների և սպառնալիքների արդյունքում նա զրավոր պարտավորություն ստացավ, որ ՊԿԲ-ն

ժամանակավորապես կշարունակի մեզ Լյախովի հրամանատարության ներքո<sup>428</sup>՝ պայմանով, որ ամբողջությամբ կանցնի ռազմական նախարարի ենթակայության տակ<sup>429</sup>։

Նոր շահին ռուսական ազդեցությունից մեկուսացնելու նպատակով սահմանադրականները փորձեցին նաև արքունիքից հեռացնել ռուս բժիշկ Ա. Մադովսկուն և անչափանաս շահի դաստիարակ Կ. Սմիրնովին։ Հայտարարվեց, որ շահի դաստիարակությամբ պետք է զբաղվեն միայն պարսիկ ուսուցիչները<sup>430</sup>։ Մաբլինի հետ երկար բանակցություններից հետո, հարցը վերջապես հաջողվեց կարգավորել միայն սեպտեմբերին՝ Թեհրան ժամանած նոր դեսպանորդ Ս. Պոկլյանկի-Կոզլեյին<sup>431</sup>, ում խիստ առարկությունների շնորհիվ, թեև Սմիրնովին մենաշնորհային կարգավիճակը չպահպանվեց, այնուամենայնիվ նա մնաց արքունիքում որպես պատանի շահի ուսուցիչներից մեկը<sup>432</sup>։

Ռուսական և անգլիական առաքելությունները հոր իշխանությունների հետ անհպաղ սկսեցին բանակցել նաև Մոհամմադ Ալիի հետագա ճակատագրի անկողնային։ Բանակցությունները տևեցին ավելի քան երկու ամիս և ավարտվեցին օգոստոսի 25-ին։ Հստակորեն միջև ձեռք բերված համաձայնության՝ նախկին շահը չէր ենթարկվելու իրավական պատասխանատվության։ Նրա համար սահմանվեց տարեկան 100 հազ. թուման ցմահ թոշակ և շահը պետք է լքեր Իրանը՝ համաձայնագիրը կնքելու պահից 48 ժամվա ընթացքում։ Կառավարությունը իրավասու էր դադարեցնել թոշակի վճարումը, եթե նախկին շահը քաղաքական քարոզչություն սկսեր վարել իրանական կառավարության դեմ, իսկ Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի

<sup>424</sup> Բայբուրյան Կ., Իրանի պատմություն, նշվ. աշխ., էջ 526; Abrahamian E., Iran between Two Revolutions, նշվ. աշխ., էջ 100։

<sup>425</sup> Abrahamian E., Iran between Two Revolutions, նշվ. աշխ., էջ 100։

<sup>426</sup> Afary J., The Iranian Constitutional Revolution, նշվ. աշխ., էջ 258։

<sup>427</sup> Նույն տեղում։

<sup>428</sup> Մեյլտեմբերի 21-ի Լյախովին ՊԿԲ-ի հրամանատարի պաշտոնում փոխարինեց Կաբրսկին։ Сборник диг. док. вып. 3, с. 5.

<sup>429</sup> Сборник диг. док. вып. 3, с. 7.

<sup>430</sup> Смирнов К., նշվ. աշխ., էջ 129-130։

<sup>431</sup> Մաբլինի Պետերբուրգից հաստիկ ցուցում էր ստացել ձգձգել գործը մինչև առաքելության նոր ղեկավարի ժամանումը։ Смирнов К., նշվ. աշխ., էջ 136։

<sup>432</sup> Сборник диг. док. вып. 3, с. 1, 129, 138, 184-185.

նիայի ներկայացուցիչներն ընդունելով այս դրույթը՝ երաշխավորում և պարտավորվում էին, որ հարկ եղած դեպքում կկանխեն նմանատիպ բարոզությունը: Շահը պետությանն էր հանձնում արքունական հարստությունը, որոնք ի դեպ դուրս էին բերվել արքունիքից բժիշկ Մադովակու ջանքերով, և իր անձնական հողատարածքներն ու գույքը, փոխարենը կառավարությունն իր վրա էր վերցնում շահի բոլոր պարտքերի վճարումն օտարերկրյա բանկերին: Երկու օր հետո Մոհամմադ Ալին լքեց մայրաքաղաքը և էնզելիվով մեկնեց իր նոր բնակության վայրը՝ Օդեսա<sup>437</sup>:

1909 թ. օգոստոսի 30-ին Դիրեկտորիան պարզեցվեց և վերածվեց խորհրդակցական մարմնի<sup>438</sup>: Մեպտեմբերի վերջին, այն բանից հետո, երբ Լոնդոնում տարագրության մեջ գտնվող նախկին վարչապետ բրիտանամետ Նասր օլ-Մուլլը, ում նախատեսվում էր նշանակել վարչապետի և արագործնախարարի պաշտոնում, հրաժարվեց վերադառնալ Թեհրան, կառավարության ղեկավարի պաշտոնը զբաղեցրեց Սեֆահդարը<sup>439</sup>: Կենտրոնական կառավարությունում պաշտոնները հիմնականում զբաղեցրին ավատատիրական ազնվականության ներկայացուցիչները և շահական նախկին վարչակարգի հետ կապված մի շարք բարձրաստիճան պետծառայողներ:

Նույն թվականի նոյեմբերին իր աշխատանքները մեկնարկեց Երկրորդ մեջլիսը: Ձևավորվեցին քաղաքական հիմնական խմբակցությունները: Խորհրդարանական մեծամասնություն կազմեցին աջերը (53 պատգամավոր)՝ չափավորները: Այս խմբակցությունը ներկայացնում էին ավատական ազնվականության, ավանդական կլանային, խոշոր առևտրային բուրժուազիայի շրջանները, ովքեր ցանկանում էին պահպանել գոյություն ունեցող կառավարման համակարգը՝ սահմանափակված միապետությունը և շահագրգռված չէին երկրի պետական կարգում և սոցիալ-տնտեսական կյանքում

խորքային բարեփոխումների իրականացմամբ<sup>440</sup>: Չափավորների ճամբարում պատկանելի թիվ էին կազմում բարձրաստիճան հոգևորականները: Խմբակցության պատգամավորների մեծ մասը սերտորեն կապված էր անզլիական և ռուսական ֆինանսատնտեսական շրջանակների հետ, ինչը շատ հաճախ ի ցույց էր դնում նաև արտաքին քաղաքական բնագավառում նրանց հարմարվողական դիրքորոշումը:

Շեղիմադիր ճակատում համախափվել էր ձախների փոքրամասնություն, սակայն չափազանց ազդեցիկ ազգայնականների խմբավորումը (27 պատգամավոր), որի կորիզը կազմում էր Իրանի Դեմոկրատական կուսակցությունը (էջթեմայունե ամիյուն): Նրանց մեծ մասն Անրպատականից էր և աչքի էր ընկնում իրենց ձախակողմյան գործունեությամբ: Վերջիններս սերտորեն համագործակցում էին նաև մեջլիսից դուրս իրանական և այսրկովկասյան սարբեր սոցիալ-դեմոկրատական խմբավորումների և կուսակցությունների հետ<sup>441</sup>: Այն ներկայացնում էր ազգայնականներից, լիբերալ հոլդատերներից կազմված, արմատական մտավորականության և մանր բուրժուազիայի շահերը: Նրանց ծրագրի հիմքում ընկած էր սոցիալ-դեմոկրատիայի գաղափարախոսությունը<sup>442</sup>:

Չակառակ 1907 թ. շիմական օրենքի հավելումներում ամփառված պետական համակարգում կոերականության արտակարգ

<sup>437</sup> Մանքամաս տե՛ս Afary J., The Iranian Constitutional Revolution, Էշվ, աշխ., էջ 257-273, Abrahamian Er., Iran between Two Revolutions, Էշվ, աշխ., էջ 103-106, Ивасов М., Էշվ, աշխ., էջ 402-406:

<sup>438</sup> Դեմոկրատների շրջանում մեծ ազդեցություն ունեին Շեյխար խան Ամու Օղլուն և Ամին Ռասալզադեն: Շեյխար խանը, ով հետագայում դարձավ Իրանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղարը, կուսակցության գործադիր քարտուղարն էր և պատասխանատու էր Բաքվի սոցիալ-դեմոկրատների և Իրանի դեմոկրատական կուսակցության կապերի համար: Ռասուլզադեն ռուսական հեղափոխությունից հետո դարձել էր Բաքվի մեկնելիկան կազմակերպության ստացվողը, Իրանում մասնակցել էր 1909 թ. Թալիբիի քաղաքացիական պատերազմին և հիմնադրել էր դեմոկրատների «Իրան-ե նուս» պաշտոնաթերթը: Afary J., The Iranian Constitutional Revolution, Էշվ, աշխ., էջ 266-269:

<sup>439</sup> Դեմոկրատական կուսակցության ծրագիրը տե՛ս Afary J., The Iranian Constitutional Revolution, Էշվ, աշխ., էջ 269-271:

<sup>437</sup> ۷۲-۷۰ من احمد كبرى، تاريخ هجده ساله ايرانين، Сبورник дин. док. вып. 3, с. 21-23, Самарнов К., Էշվ, աշխ., էջ 132-133, 153-155.

<sup>438</sup> Сבורник дин. док. вып. 3, с. 68.

<sup>439</sup> Сבורник дин. док. вып. 3, с. 142.

իրավասությունների մասին դրույթի՝ դեմոկրատները կոչ էին անում աշխարհիկացնել իշխանությունը և առանձնացնել կրոնը պետությունից, ինչի արդյունքում բարձրաստիճան ազդեցիկ հոգևորականության շատ ներկայացուցիչներ նույնպես հարեցին չափավորներին<sup>400</sup>։ Դեմոկրատներն արտաքին քաղաքական բնագավառում, ավելի քան չափավորները, կոշտ դիրքորոշում որդեգրեցին Իրանում Ռուսաստանի քաղաքականության դեմ։

Նշենք, որ պատգամավորների մի զգալի մասը միջանկյալ դիրք էր զբաղեցնում ձախերի և չափավորների միջև և շատ հաճախ, քաղաքական զարգացումներից էլենելով, հարում էր չափավորներին։ Ի դեպ՝ Երկրորդ գումարման մեջլիսում Իրանի հայկական համայնքը մյուս կրոնական փոքրամասնությունների (հրեաներ, զրադաշտականներ, ասորիներ) հետ միասին պատգամավորական ներկայացուցիչ ունենալու իրավունք ստացավ<sup>401</sup>։

Շեռագա զարգացումները վերահսկելու նպատակով ռուսական կառավարությունը շարունակեց իրանական տարածքում՝ Թավրիզում, Ռեշտում, Էնզելիում պահել իր զորքերը և հրաժարվեց իրանական կառավարության հետ քննարկել դրանք աստիճանաբար դուրս բերելու հարցը։ Պետերբուրգում գտնում էին, որ զորքերի ներկայությունն արդարացված է, քանի դեռ վտանգված են առևտրական ճանապարհները և երկրում գտնվող այսրկովկասյան հեղափոխականները շարունակում են իրենց «սադրիչ» գործողությունները<sup>402</sup>։ Ռուսական զորքերի դուրս չբերման պատճառներից մեկն էլ Ուրմիայի շրջանում թուրքական ռազմականության ընդլայնումն էր<sup>403</sup>։ Պետերբուրգում թեև չէին ցանկանում թուրքերի դեմ կարող միջոցառումների դիմել, այսուհանդերձ նրանց կողմից պանիսլամիզմի գաղափարախոսության ներքո մղվող հակառուսական քարոզչությունը

իր անդրադարձն ունեցավ դեպքերի զարգացման վրա, քանի որ այն արժանանում էր նաև իրանցի ազգայնականների հավանությանը<sup>404</sup>։

Երկրորդ մեջլիսի աշխատանքները մեկնարկելուց ի վեր առաջնային կարևորություն ստացավ Իրանից ռուսական զորքերի տարհանումն ու ռուսական ազդեցության սահմանափակումը՝ որպես ճգնաժամի կարգավորման նախադրյալ<sup>405</sup>։ Իրանական նոր վարչակազմի բացահայտ հակառուսական գործունեությանը ստատորդ ուժ գնահատելով Մեծ Բրիտանիային՝ Ռուսաստանը կտրուկ փոխեց իր մարտավարությունը։ Ռուսական անզիջում դիրքորոշումն առաջ բերեց մեջլիսի ձախերի և մամուլի սուր ընդդիմությունը և էլ ավելի մեծացրեց երկրում ձևավորված հակառուսական արշավը։

1909 թ. օգոստոսին Նիկոլայ Բ-ի՝ Մեծ Բրիտանիա պաշտոնական այցելության ընթացքում բրիտանական արտաքին գերատեսչությունը, ներքին ընդդիմության ճնշումների ներքո, փորձեց քննարկել Իրանից ռուսական զորքերի տարհանման հարցը, սակայն Լալան արդյունքների չհասավ<sup>406</sup>։ Պետերբուրգում զործերի հավատարմ տարար Ալի Ղուլի խան օլ-Մամալեբի այս ուղղությամբ դիմումները ռուսական ԱԳՆ-ը առհասարակ անպատասխան էր թողնում<sup>407</sup>։ Լոնդոնը թեև շահագրգռված էր Իրանից ռուսական զորքերի տարհանման հարցում, սակայն ստեղծված պայմաններում, բնականաբար ստիպված էր գործընթացի վրա ներազդել սահմանադրական իշխանությունների վրա ճնշումներն ուժեղացնելու հաշվին, քանի որ Պետերբուրգի հետ իրանական խնդրի լայնածավալ քննարկումները կարող էին հանգեցնել բրիտանական արտաքին քաղաքական ծրագրերի փլուզմանը։ Տեսնելով ռուսական կողմի և ձախերի անզիջում հակամարտությունը՝ Է. Գրեյը 1910 թ. փետրվարի 14-ին Թեհրանում բրիտանական դեսպանորդ Ջ. Բարկլիին հրահանեց ազդել իրանա-

<sup>400</sup> Abrahamian Er., Iran between Two Revolutions, նշվ. աշխ., էջ 103-106; Afary J., The Iranian Constitutional Revolution, նշվ. աշխ., էջ 269-272

<sup>401</sup> Berberian H., Armenians and the Iranian Constitutional Revolution of 1905-1911: The Love for Freedom Has No Fatherland, Westview Press, 2001, p. 138-139;

<sup>402</sup> Сборник дин. док. вып. 3, с. 29.

<sup>403</sup> Si u. A. Բայրուրյան, Թուրք-իրանական հարաբերությունները, նշվ. աշխ., էջ 226-235:

<sup>404</sup> Լալի տեղում, էջ 247-248:

<sup>405</sup> Сборник дин. док. вып. 3, с. 201-207, Сборник дин. док. вып. 4, с. 36-39.

<sup>406</sup> Bonakdarian Mansour, նշվ. աշխ., էջ 200-201, Firuz Kazemzadeh, նշվ. աշխ., էջ 563, 96-97, Игнатъев А., Русско-английские отношения, նշվ. աշխ., էջ 96-97:

<sup>407</sup> Сборник дин. док. вып. 4, с. 44-45.

կան կառավարության վրա և հայտարարել, որ ռուսական կառավարության վրա ճնշումներն անտեղի են և վերջինս պետք է բավականաչափ կամք դրսևորի զիջումների գնալու ուղղությամբ<sup>447</sup>: Ջորջերի դուրս բերման մասին ռուս-իրանական բանակցությունները ձգվեցին ավել բան մեկ տարի: Ռուսական առաջին ռազմական ներխուժման արդյունքում թեև հյուսիսիրանական շրջաններում հաստատվեց մասնակի անվտանգության գոտի, սակայն այն էապես չկարողացավ ազդել Թեհրանում ստեղծված իրավիճակի վրա, որը բացարձակապես չէր համապատասխանում կայսրության շահերին Իրանում:

#### 4. Միջազգային իրադրություն Իրանի շուրջ և Ռուսական կայսրության կողմից Իրանում սահմանադրական վարչակարգի տապալման փորձը

Նշանակալիորեն ամրապնդելով իրենց ազդեցությունը Թեհրանում՝ անգլիացիները սկսեցին շահագրգռվածություն ցուցաբերել նոր կառավարությանը դրամական օժանդակություն ցուցաբերելու հարցում: Օգոստոսին Իրանի նորակազմ կառավարությունը 100 հազ. ֆունտ ստեռլինգի վարկ էր վերցրել Շահնշահական բանկից՝ արքունական հարստությունների գրավի դիմաց: Սակայն ավելի խոշոր գործարք, առանց ռուսական կողմի մասնակցության, անգլիական կառավարությունը հրաժարվեց կնքել, որի արդյունքում 1909 թ. վերջին իրանական կառավարությունը ստիպված էր անգլո-ռուսական համատեղ փոխառության հարց բարձրացնել<sup>448</sup>: 1910 թ. փետրվարի սկզբին Լոնդոնն ու Պետերբուրգն ի վերջո համաձայնության եկան Իրանին տրամադրելու 400 հազ. ֆունտ ստեռլինգի վարկ, սակայն չափազանց ծանր պայմաններով: Վարկատուները պահանջեցին, որ իրանական կառավարությունը

1. փոխառության ծախսերի վերաբերյալ ծրագիր ներկայացնի, որը պետք է հաստատվեր Թեհրանում անգլիական և ռուսական դեսպանությունների կողմից,

2. ծառայության վերցնի ֆրանսիացի յոթ ֆինանսական փորձագետներին, որոնք օժտվելու էին գործադիր իշխանության գործառույթներով,

3. անտրակական ճանապարհների անվտանգությունն ապահովելու համար, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի համաձայնությամբ, հատուկ ռազմական ուժեր կազմավորելու նպատակով, օտարերկրյա հրահանգիչներ հրավիրի,

4. պարտավորություն ստանձնի, առանց Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի նախնական համաձայնության, որևէ այլ պետության երկաթուղային մեկաշնորհներ չտրամադրել,

5. «Ջուլֆա-Թավրիզ ճանապարհային ընկերությանը» Ուրմիա լճում երկաթուղային կազմակերպելու մեկաշնորհային իրավունք շնորհի<sup>449</sup>: Իրանական կառավարությունն անգամ չհամարձակվեց նախագիծը մեջլիսի բենակմանը դնել՝ ցանկանալով ժամանակ շահել և միաժամանակ փորձելով այլ աղբյուրներից գումար հայթայթել<sup>450</sup>:

1910 թ. գարնանը Սեֆահյարի կառավարությունը փոխառության վերաբերյալ առաջարկներ ստացավ գերմանական «Դոյչե Օրիենտալ» բանկի ներկայացուցչի և «Միջազգային սինդիկատի» կողմից, որի մեջ ընդգրկված էին անգլիացի, ֆրանսիացի և իտալացի ֆինանսիստներ (լուրջ կասկածներ կային, որ նաև գերմանացի): Սակայն այդ բանակցությունները տապալվեցին անգլո-ռուսական համատեղ միջամտության արդյունքում<sup>451</sup>: Միաժամանակ, որպեսզի տպավորություն չստեղծվի, որ երկու տերություններն արհեստականորեն խոչընդոտում են Իրանում համակարգային բարեկորդումներ իրականացնելու գործընթացին, 1910 թ. ապրիլի 7-ին,

<sup>447</sup> Сборник дин. док. вып. 4, с. 49-52.

<sup>449</sup> Afary J., The Iranian Constitutional Revolution, ևշվ. աշխ., էջ 286, Сборник дин. док. вып. 4, с. 68-69:

<sup>451</sup> Сборник дин. док. вып. 4, с. 84, 96-98, 120.

<sup>447</sup> Сборник дин. док. вып. 4, с. 48-49.

<sup>448</sup> Аваньян В. В., Российское самозеркание и истоки капиталов 1895, ևշվ. աշխ., էջ 152:

կրանք իրանական կառավարությանը ուղղված համատեղ նոտայում իրենց պատրաստակամությունը հայտնեցին՝ ճանաչելու երրորդ արդյուրից փոխառություն ստանալու նրա իրավունքը՝ պայմանով, որ ռուսական և բրիտանական նախկին փոխառությունների մարմանն ուղղված եկամուտների աղբյուրները չեն լինի նոր գործարքի երաշխիք, և կառավարությունը վերահաշվարկ անցկացնելով՝ կկարգավորի երկու տերություններին ընթացիկ պարտքերը: Այն նաև պարտավորություն պետք է ստանձնել այլ պետությունների հպատակներին չտրամադրել այնպիսի մենաշնորհներ, որոնք կարող են վնասել Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի ռազմավարական շահերին<sup>452</sup>:

Իրանական կառավարությունը կանգնած էր նաև երկրում կայունություն հաստատելու լուրջ խնդիրների առջև: Տեղերն իսպառ դուրս էին եկել կենտրոնի վերահսկողությունից: Նրանց անջատողական գործողություններն ու խռովությունները դեռևս շարունակվում էին: Արդյունքում, և՛ հարավում և՛ հյուսիսում խաթարվել էր առևտրական ճանապարհների գործունեությունը<sup>453</sup>: Սահմանադրական իշխանությունների հետ ծագած որոշ տարաձայնությունների արդյունքում՝ հյուսիսային շրջաններում գեները վայր չըրեցին նաև ֆիդայիների զինված խմբերը, որոնք երաժարվում էին ծառայել կենտրոնական կառավարությանը: Այս խմբերի ներկայությունն իրենց ազդեցության գոտում խիստ անհանգստացնում էր ռուսներին: Ճեղքափոխականների կողմից Թեհրանի գրավումից ի վեր Ռուսաստանն անընդհատ պահանջում էր զինաթափել ֆեյդայական ջոկատները և երկրից արտաքսել ոչ իրանահպատակ ֆիդայիներին: Թավրիզում ռուսական արտաքին գերատեսչության ներկայացուցիչները տեղեկացնում էին ԱԳՆ-ին, որ Սաթթար և Բադիր խաների զինված ջոկատները մշտապես սաղրում էին ռուսական գորքերին և պայքարի նոր միջոցներ են նախապատրաստում<sup>454</sup>:

<sup>452</sup> Сборник дин. док. вып. 4, с. 137-138, 172-173, 189.

<sup>453</sup> Стреланин (Калабухов) П., бշվ, աշխ., էջ 26:

<sup>454</sup> Сборник дин. док. вып. 4, с. 75.

1910 թ. փետրվարին Մ. Սազունովը պահանջեց, որ դեսպանորդ Մ. Պոկլևսկի-Կոզելը ֆիդայիներին զինաթափելու վերաբերյալ պահանջ ներկայացնի իրանական կառավարությանը և թե՛ այն չբավարարվի, ապա ռուսական կողմը ստիպված կլինի սեփական միջոցները ձեռնարկել՝ ուժեղացնելով Թավրիզի գորսխումբը, որի կազմը մասամբ կրճատվել էր աշնանը: Միաժամանակ, Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը Ջուլֆա (Ջուղա) ուղարկելու համար պատրաստեց երկու հետևակային գումարասկ՝ երկու հրանետյով և հարյուր կազակ, որն իրանական կառավարության կողմից պահանջը չբավարարելու դեպքում շարժվելու էր Թավրիզ<sup>455</sup>:

Այդ փուլում Սեֆահդարի կառավարությունն անձամբ սկսեց շահագրգռվածություն ցուցաբերել ֆիդայական ջոկատների լուծարման և զինաթափման հարցում: Գտնելով, որ վերջիններիս գործունեությունը նպաստում էր երկրում ձևավորված անջատողականությանը և խորացնում էր ներքաղաքական ճգնաժամը՝ նա փորձեց ֆիդայական ջոկատներն ընդգրկել կանոնավոր զինծառայության մեջ<sup>456</sup>: Սահայն իրանական կառավարությունը ավելի կտրուկ բայերի անցավ, երբ սաստկացան ռուսական կառավարության պահանջները: Նրանց բռնի կերպով զինաթափել հաջողվեց միայն օգոստոսին, երբ կազմվեց Մաթռուֆի օլ-Մամալեթի կառավարությունը: Օգոստոսի 3-ին նորակազմ կառավարությունը մեջլիսից երեք ամսով արտակարգ իրավասություններ ստացավ և մի քանի օր անց կառավարական, բախթիարական գորքը և Եփրեմ խանի ղեկավարած ռուսիկանական ուժերը զինաթափեցին Բադիր և Սաթթար խանի զինավորությամբ Աթաբեկ այգում տեղակայված իրենց նախկին զինակիցներին<sup>457</sup>:

Ապրիլին իրանական կառավարությունում սկիզբ առավ իշխանական ճգնաժամ, որը զուգորդվում էր մեջլիսում ձախերի կող-

<sup>455</sup> Կույն տեղու, էջ 77-79:

<sup>456</sup> James D. Clark, The Constitutional movement and Russian intervention in Tabriz 1907-1911, Iranian-Russian encounters, Empires and revolutions since 1800, Ed. By S. Cronin, N. York, 2013, p. 241-242.

<sup>457</sup> احمد كسروی، تاریخ هیجده ساله آذربایجان، ص. ۱۱۷-۱۱۸

մից չափավորների դեմ պայքարով և բախթիարական խաների և Սևփահադարի սուր հակասություններով: Այն շարունակվեց մինչև հունիս: Երկրորդ մեջլիսի գումարումից ի վեր՝ չափավորների և դեմոկրատների միջև սուր հակասությունները հատկապես սրվեցին աշխարհիկ բարենորոգումներ իրականացնելու քննարկումների շուրջ<sup>458</sup>: 1910 թ. հունիսին Սևփահադարի կառավարությունը ստիպված հրաժարական տվեց՝ իր տեղը զիջելով հակառուսական ավելի կտրուկ դիրքորոշում ունեցող դեմոկրատներին: Հունիսի 28-ին դեմոկրատների և բախթիարների կոալիցիայի հենքի վրա կազմվեց նոր կառավարություն՝ Դեմոկրատական կուսակցության անդամ Մուսթուֆի օլ-Մամալեքի գլխավորությամբ<sup>459</sup>: Մեփահդարն ու Մարդաբ Ասադը դարձան մեջլիսի պատգամավորներ՝ շարունակելով պահպանել իրենց ազդեցությունը ներքաղաքական դաշտում<sup>460</sup>:

Նոր կառավարությունը հիմնական կայտակ հռչակեց երկրում խաղաղության հաստատումն ու օտարերկրյա զորքերի դուրս բերումը: Այս կառավարության գործիչների զգալի մասը գերմանամետ կողմնորոշում ուներ: Մեջլիսին ներկայացրած նրանց ծրագրով առաջնահերթություն էր սրվում, ժամդարմերիայի ստեղծմանը, նախատեսվում էր ֆինանսական, իրավական և ռազմական բարեփոխումներ իրականացնել, որի համար ծառայության էին հրավիրելու երրորդ երկրներից մասնագետներ<sup>461</sup>:

Մուսթուֆի օլ-Մամալեքի կառավարության, ռուսական զորքերը մասամբ դուրս բերելու վճռական պահանջների դիմաց ռուսական կառավարությունն առաջարկեց, որ իրանական կառավարությունը Ռուսաստանին.

1. Թույլ տա ընդլայնել Ղարադաղի օգտակար հանածոների ռուսական մենաշնորհը,

<sup>458</sup> Abrahamian Er., Iran between Two Revolutions, նշվ. աշխ., էջ 106-107, Afary J., The Iranian Constitutional Revolution, նշվ. աշխ., էջ 292:

<sup>459</sup> Сборник дин. док. вып. 4, 229-239, 247.

<sup>460</sup> Afary J., The Iranian Constitutional Revolution, նշվ. աշխ., էջ 298:

<sup>461</sup> Առյև տեղում. էջ 77-79:

2. Ուրմիա լճի վրա շտրոփի նավագնացության իրավունք,

3. Իրավունք տա առանց մաքսազերծման մերենաներ ներկրել Տուլիա-Թավրիզ ճանապարհը շահագործելու նպատակով և տրամադրի հիշյալ ճանապարհի տուրքերը գանձելու իրավունք.

4. ՊԿԲ-ին վերադարձնել նախկին արտոնությունները և մեծացնել նրա թվաքանակը: Իրանական կառավարությունը պետք է նաև փոխհատուցեր հյուսիսում շահանեյան ցեղերի ասպատակությունների արդյունքում ռուսահպատակներին հասցված վնասները և այդ չոչվորների խմբերը պատժելու նպատակով ուղարկված ռուսական արշավախմբերի ծախսերը<sup>462</sup>:

Օգոստոսին արտգործնախարար Ս. Մազունովը Ս. Պետերբուրգում իրանական դեսպանին հետևյալ բովանդակությամբ պաշտոնական հայտարարություն արեց. «Ռուսական զորքերի դուրս բերումը կախված է շահական կառավարությունից, որը հրաժարվում է կատարել ռուսական կողմի օրինական պահանջները: Կառավարությունը պետք է ապացուցի Ռուսաստանի հետ անկեղծ հարաբերություններ ունենալու իր պատրաստակամությունը և ընդառայց գնա ներկայացվող պահանջներին, որի դիմաց կատարանվի Ղավիսի ջուկատը: Մինչդեռ կառավարությունը անասարակ չի հարթում ո՛չ մեջլիսի, ո՛չ էլ ռուսական ներկայության դեմ քարոզչությունը, որին գումարվում է նաև թուրքական զորքերի կողմից իրանական տարածքների ծրագրավորված բռնագավթումները: Չնայած նրան, որ այդ բռնագավթումները շատ ավելի մեծ վտանգ են ներկայացնում, Իրանում ռուսական ու թուրքական ներկայության դեմ վերաբերմունքը ստորեր է և միայն ավելորդ անգամ ապացուցում է նորակազմ կառավարության անբարյացկամությունը Ռուսաստանի հանդեպ»<sup>463</sup>:

Ռուսաստանին բավականին մեծ տեսաձրություն էր պատճառում նաև իր նկատմամբ թշնամաբար տրամադրված նոր կառավարությանը փոխառություն տրամադրելու Լոնդոնի ցանկությունը<sup>464</sup>: Շահնշահական բանկին փոխառության վերաբերյալ բանակցույթ-

<sup>462</sup> Сборник дин. док. вып. 3, с. 209, вып. 4, с. 67-68:

<sup>463</sup> Առյև տեղում, էջ 79-80:

<sup>464</sup> Сборник дин. док. вып. 5, с. 59.

յուններ սկսելու թույլտվություն տալուց առաջ Լոնդոնն անհրաժեշտ գտավ խորհրդակցել ռուսական կառավարության հետ: Մակայն վերջինս պաշտոնապես հայտարարեց, որ առաքելություններ չի ունենա, եթե փոխառությունից առաջ իրանական կառավարությունը վերջնականապես կոնսոլիդացնի (համախմբի) և ալքարտի իր պարտավորությունների դիմաց ռուսական բանկին 1904 թ. և 1905 թ. 600 մլն դրան<sup>465</sup> կարճաժամկետ վարկերի կոնվերսացումը (օրվա փոխարժեքով սահմանված մի արժույթի փոխանակումը մեկ այլ արժույթով)<sup>466</sup>:

Ի դեպ՝ ռուսական կառավարության այս կտրուկ որոշումներն անրապեղծվում էին իրանական կառավարությունը բրիտանական արտաքին գերատեսչության ներկայացրած պահանջների ազդեցության տակ ևս: Փոխառությունը տրամադրելու դիմաց անգլիացիները պահանջում էին, Իրանի հարավային շրջաններում ճանապարհների անվտանգությունը ապահովելու նպատակով, Իրանի հաշվին, ՊԲԲ-ի օրինակով՝ անգլիացի հրահանգիչների հրամանատարության տակ հաստուկ ռազմական միավորներ ստեղծել հարավում և դեռևս 1909 թ. վերջից այդ առկառության պարբերաբար դիմում էին իրանական կառավարությանը<sup>467</sup>: 1910 թ. հոկտեմբերի 14-ին բրիտանական առաքելության ղեկավար Ջ. Բարկլին շահական կառավարությանը կոտա էր հանձնել, որում ասվում էր, որ եթե վերջինս երեք ամսվա ընթացքում չապահովի Բուշեից Շիրազ և Սպահան տանող առևտրական ճանապարհների անվտանգությունը հարավի գեղերից, ապա Մեծ Բրիտանիայի հեղկական սպայակազմի ենթակայության տակ կստեղծի 1000-1200 իոզանոց միավորում<sup>468</sup>: Հասարակական կար-

ծիքի ճնշման տակ իրանական կառավարությունը չընդունեց բրիտանական պահանջը: Սակայն մեջլիսը համաձայնություն տվեց ձևավորել հատուկ ժաղկարմերիա և այն մարզելու նպատակով որոշեց հայցով դիմել եվրոպական այլ պետությունների՝ իրանակցիչներ ուղարկելու համար, որից հետո նա ի վիճակի կլիներ 2-3 հազարանոց զորք ուղարկել հարավ՝ ցեղերի գազելու համար<sup>469</sup>:

Արտգործնախարար Ս. Մազունովը շտապեց հայտնել, որ Ռուսաստանն առարկություններ չի ունենա այն պայմանով, որ հիշյալ գործախաղվումը գործողություններ չձավալի ռուսական ազդեցության գոտում<sup>470</sup>: Փոխառության հողի վրա ռուս-բրիտանական հարաբերություններն Իրանում նկատելիորեն լարվեցին: Միաժամանակ, Ռուսաստանը փորձեց կարգավորել իր հարաբերությունները Գերմանիայի հետ՝ վերադառնալով դեռևս 1907 թ. իրանական հարցերով գերմանական կառավարության հետ ընդհատված բանակցություններին<sup>471</sup>: Հոկտեմբերին Բզվոլսկին լքեց արտգործնախարարի

<sup>465</sup> Լույն տեղում, էջ 164:

<sup>466</sup> Տե՛ս Գորնուկ ժող. ժոք, Կոն. Կ. 68-69.

<sup>467</sup> 1907 թ. փետրվարի 1-ին տեղի ունեցած Հատուկ խորհրդակցության ժամանակ ռուսական կառավարությունը վերանայել էր Քաղաքալի երկաթուղու շինարարության կանխարգելող իր նախկին քաղաքականությունը: Գտնելով, որ Ռուսաստանը ի վիճակի էլ չէր արհեստի քաղաքականություն ցույց տալ դեպի Իրան այդ երկաթգծի ճյուղավորումների կառուցմանը: Թեև ցարական կառավարությունը պարտավորվում էր չլուրջադատել Քաղաքալի երկաթուղու շինարարությանը և չնպաստել այդ ձևաներկամ օտարերկրյա կապիտալների ներգրավմանը, սակայն գերմանական կողմը ցանկանում էր, որ Պետերբուրգը Քաղաքալի երկաթուղին իրանական ազգայն երկաթուղիների ցանցին միացնելու վերաբերյալ համաձայնություն տար, և այդ կապակցությունը Ռուսաստանը պետք է պարտավորվեր երկաթուղային գիծ կառուցել դեպի թուրք-իրանական սահմանը՝ Սաենկին: Այն պետք է կառուցվեր Մադիե-Սաենկին գծի շինարարության ավարտելու անմիջապես հետո: Այդ փալում Ռուսաստանի համար Գերմանիայի հետ համաձայնություն գալու հիմնական նպատակը Բաղդադի երկաթուղու ճյուղավորումների կառուցումը դեպի Իրան արգելակելն էր, ուստի գերմանական առաջարկը սուր քննադատության արժանացավ 1907 թ. հուլիսի 27-ին կայացած Հատուկ խորհրդակցության մասնակիցների կողմից: Ստեղծված իրավիճակում, որին նպաստեցին նաև Բալկաններում ծավալվող իրադարձությունները, ռուս դիվանագետները նախընտրեցին ընդհատել Գերմանիայի հետ բանակցությունները, որոնք վերականգնեցին միայն 1910 թ., երբ լրացավ ռուս-իրանական երկաթուղային շինարար-

<sup>465</sup> Դրանի գազարական արժաթյա դրամն է 10 դրանը հավասար էր 1 ոսկյա դրամին: Ежов Г., Монеты эпохи Каджаров, Иран. История, экономика, культура. Сборник статей, М., 2009, М., с. 72-75:

<sup>466</sup> Анишян Б. В., Российское самодержавие и вывоз капиталов 1895, Бзվ. աշխ., էջ 157, Տե՛ս Գորնուկ ժող. ժոք, Կոն. Կ. 5, с. 99:

<sup>467</sup> Տե՛ս Գորնուկ ժող. ժոք, Կոն. 3, с. 302-303, 313, Տե՛ս Գորնուկ ժող. ժոք, Կոն. 5, с. 42, 47.

<sup>468</sup> Afary J., The Iranian Constitutional Revolution, Бзվ. աշխ., էջ 305: E. Brown, The Press and Poetry of Modern Persia, Бзվ. աշխ., էջ 325-327, Տե՛ս Գորնուկ ժող. ժոք, Կոն. 5, с. 114:

աթուղ: Երան փոխարինեց Ստոլիպինի փեսան՝ ավելի վստահելի Ս. Մազունովը<sup>675</sup>:

Վերադառնալով ռուս-գերմանական բանակցությունների հարցին՝ նշեք, որ 1910 թ. լրանում էր ռուս-իրանական երկաթուղային «ստերիլիզացնող» պայմանագրի ժամկետը և ռուսական իշխանությունները քաջ գիտակցում էին, որ Իրանի մեկուսացման, երանում էին քաղաքական, սոցիալ-տնտեսական ստատուս-քվոյի պահպանման քաղաքականությունն այնև դժվար է շարունակել և Գերմանիան օգտագործելով սահմանադրական իշխանությունների հետ կապելով՝ կարող է անհետադեպ հաջողություններ գրանցել, այդ թվում նաև երկաթուղային մենաշնորհներ ստանալու ուղղությամբ: Մյուս կողմից 1910 թ. Գերմանիան փորձելով Պետերբուրգին կրկին բերել բանակցային սեղանի մոտ՝ ակտիվացրել էր իր տնտեսական և քաղաքական ներթափանցումն Իրան՝ հերթական անգամ նպատակ ունենալով պատակելու Անտանտը<sup>676</sup>: 1910 թ. նոյեմբերին կայացավ Լիվոլայ Բ-ի և գերմանական կազմեր հայտնի պոստոլայան հանդիպումը: Ս. Մազունովը կարծում էր, որ անզիպացիների կողմից Բադաղի երկաթուղու ֆինանսավորումն արգելակելու պատճառով մոտ ապագայում գերմանական երկաթուղին չի հասնի Բադաղ, հետևաբար միևնույն ժամանակ գծի կառուցումը Ռուսաստանը կարող էր էլ ավելի ամրապնդել իր դիրքերը հյուսիսիրանական շուկայում՝ սեփական երկաթուղին կառուցելով ռուսական սահմաններից մինչև Թեհրան<sup>677</sup>:

Դեռևս 1910 թ. հոկտեմբերի 15-ի ռուսական կառավարության Հատուկ խորհրդակցության ժամանակ Ս. Մազունովը հայտնեց, որ իրանական կառավարության բացահայտ հակառուսական արա-

մաղրվածությունը և ռուսական շահերի անտեսումը ստիպում է որոշակի պատժամիջոցներ իրականացնել Իրանի նկատմամբ, որոնք բնարկվում էին Թեհրանում ռուսական առաքելության գեկոմսոբ Պոկլևսկի-Կոզլեյի հետ<sup>678</sup>: Այս կապակցությամբ Խորհրդակցությունը միաձայն որոշել էր, որ Մազունովն Իրանի նկատմամբ կարող է կիրառել այն միջոցառումները, որոնք նպատակահարմար կլլտնի տվյալ պահին<sup>679</sup>: Առաջարկվեց պատժամիջոցների հետևյալ փաթեթով սկզբում սահմանափակվելու էին շահական կառավարության և արտոնիքի համար մատակարարվող պարագաների տարանցիկի արտոնյալ սակագները, Իրանը չէր կարող Ռուսաստանում ծառայության նշանակել երր հյուպատոսներ, ապա անցում էր կատարվելու ավելի կտրուկ միջոցների, որոնք վերաբերում էին Ռուսաստան իրանական արտահանմանը, գեներ գինամթերքի վաճառքին և ռուսական տարածքով դրանք Իրան փոխադրելու: Մերժվելու էին բոլոր տեսակի փոխառությունների առաջարկները: Վերոնշյալ միջոցառումների անարդյունավետության պարագայում Ռուսաստանն Իրան երր գորամիավորումներ էր ուղարկելու<sup>679</sup>:

Շուտով արտգործնախարար Ս. Մազունովը պաշտոնապես հայտնեց, որ եթե անզիպական փոխառությունը տրամադրվի առանց ռուսական պահանջները հաշվի առնելու՝ այն չափազանց վատ տպավորություն կգործի և անհետ կդարձնի Իրանից ռուսական գործերի դուրս բերումը<sup>680</sup>: Այսպիսով, իրանական կառավարության հետ Շահնշահական բանկի գործարքն ուղղակիորեն կապվեց ռուս-իրանական բանակցությունների արդյունքների հետ:

րության կանխարգելման մտախ տոերիլիզացնող պայմանագրի ժամկետը: Ավելի մանրամասն տես Բայրուրջյան Վ., Իրանական հարցը ռուս-գերմանական դիվանագիտական հարաբերություններում 1905-1911 թթ., և՛ ավել, և՛ 38-55:

<sup>675</sup> Саконов С. Д., Воспоминания, Минск, 2002, с. 4-15, Хвостов, В.М., և՛ ավել, և՛ 38-55, էջ 698, Бестужев И., և՛ ավել, էջ 302-303, 314-326:

<sup>676</sup> Բայրուրջյան Վ., Իրանական հարցը ռուս-գերմանական դիվանագիտական հարաբերություններում, և՛ ավել, էջ 46-60, Ерусалимский А., К истории Потсдамского соглашения 1911 г., "Красный архив", т. 3 (58), М., 1933, с. 48-54.

<sup>677</sup> Саконов С. Д., Воспоминания, և՛ ավել, էջ 15-20:

<sup>678</sup> Журнал Особого совещания по Персии, октябрь, 1910 г., "Красный архив", 1933, т. 3 (58), с. 57.

<sup>679</sup> Այսին տեղում:

<sup>680</sup> Международные отношения в эпоху империализма: документы из архивов царского и временного правительства 1900-1913 гг. (Ужунեսун՝ МОИП, М., 1938, серия 2, т. 2, N.593, с. 136.

<sup>681</sup> 1900 թ. և 1902 թ. ռուսական կառավարության հետ կնքված փոխառությունների համաձայնագրերի համաձայն՝ իրանական կառավարությունը մինչև 1910 թ. իրավասու չէր առանց Ռուսաստանի համաձայնության որևէ այլ պետությունից արտաքին փոխառություն վերցնել: Собрание дин. док. вым. 5, с. 155.

Սահմանադրական իշխանությունների առավել ծայրահեղ շրջանակները, հիմնավորելով երկրում մաքսային, ֆինանսական և ռազմական բարեկարգումների անհրաժեշտությունը, նախատեսում էին դրանք իրականացնել օտարերկրյա, սակայն սկզբունքորեն ոչ ռուս մասնագետների օժանդակությամբ: Ուստի Ռուսաստանի նկատմամբ իր ֆինանսական պարտավորությունները իրանական կառավարությունը անձամբ էր շտապում հարթել, քանի որ դեռևս օգոստոսի 24-ին Մեջլիսը որոշում էր ընդունել, իրանական հարցերում չեզոք երկիր հանդիսացող ԱՄՆ-ից ֆինանսական հիևզ խորհրդականներ հրավիրելու մասին<sup>479</sup>:

1910 թ. դեկտեմբերի վերջին ռուսական պարտքերի դիմաց կոնվերսացումը ի վերջո անցկացվեց: Դեկտեմբերի 31-ին կերված ռուս-իրանական պայմանագրի համաձայն տարեկան 7% տոկոսադրույքով ընդհանուր պարտքը մարման էր ենթակա 15 տարվա ընթացքում, մինչև 1925 թ., որի վճարման աղյուր էր երաշխիք էին հանդիսանալու մաքսային եկամուտները<sup>480</sup>: 1911 թ. փետրվարին իրանական կառավարությունը Շահեջահական բանկից ստացավ 120 հազ. թուրան կանխավճար<sup>481</sup>: Նույն թվականի մայիսին մեջլիսը իրանական կառավարությանը թույլատրեց ստորագրել Շահեջահական բանկի հետ տարեկան 5% տոկոսադրույքով 1,25 մլն ֆուտա ստեռլինգի վերջնական պայմանագիրը<sup>482</sup> և չնայած փոխառության տոկոսադրույքի ցածր եկամտաբերությանը, Մեծ Բրիտանիան տրամադրելով այն՝ ամբողջովին թուլացրեց նաև իրանական կառավարության վարկավորման գործում Ռուսաստանի երբեմնի մենաշնորհային դիրքերը:

1911 թ. հունվարի վերջին բրիտանական ԱԳՆ-ի գործադրած ջանքերի շնորհիվ Իրան ժամանեց Նասր օլ-Մուլլը: Նա դեռևս սեպտեմբերին՝ Ազուլ օլ-Մուլլի մահվանից հետո ընտրվել էր որպես

անչափահաս Ամմադ շահի խնամակալ: 1910 թ. դեկտեմբերից իրանական կառավարությունում ձևավորված նոր ճգնաժամի արդյունքում նախարարները և մեջլիսի նախագահը կրկին հրաժարականներ էին տվել: Ռեզեևտի ժամանումից անմիջապես հետո հրաժարական տվեց նաև Մոսթուֆի օլ-Մամալեքը, ում վարչապետությանն որոշ շրջանը նույնպես զուգորդվեց ներքաղաքական հակասություններով և գործող քաղաքական ուժերի փոխադարձ սուր պայքարով<sup>483</sup>: Չափավոր հայացքների տեր նոր ռեզեևտը եղել էր Գրեյի համակուրսեցին Օքսֆորդում ուսանելու տարիներին և բազմականին ջերմ հարաբերություններ էր պահպանել վերջինիս հետ<sup>484</sup>: Գրեյը շտապեց հավաստիացնել ռուս գործընկերներին, որ իշխանության գալուց հետո արտաքին քաղաքականության բնագավառում նոր ռեզեևտը միտված էր լինելու անգլո-ռուսական համաձայնագրի ձեռնարկին համահունչ ուղեգիծ վարել: Վերջինին հաջողվեց Մեջլիսում ձևավորել չափավորների նոր կոալիցիա, որը կառուցվեց ղեկավարների ազդեցությունը: Վարչապետի պաշտոնում չափավորներն անաջադրեցին Սեֆահդարին, ում էլ Նասր օլ-Մուլլը հանձնարարեց նոր կառավարության ձևավորումը<sup>485</sup>: Այս ամենը Ռուսաստանին հույս էր ներշնչում, որ իրանական գործերում կարող է հաստատվել որոշակի կայունություն:

Հունվարին Ս. Սազոնովը Պակևսկի-Կագելիյին ուղղված մի շարք հեռագրերում արդեն նշում էր, որ Նասր օլ-Մուլլը խոստացել է բավարարել Ղարադաղի և ավտոմեքենաների հետ կապված ռուսական պահանջները, իսկ արագորձմախարարի ժամանակավոր պաշտոնակատար Մոհթեշամ օս-Սալյանեի ցանքերով կառավարութ-

<sup>479</sup> Сборник дин. док. вып. 5, с. 87.

<sup>480</sup> Сборник дин. док. вып. 6, с. 5-8.

<sup>481</sup> Сборник дин. док. вып. 6, с. 55.

<sup>482</sup> МОЭИ, серия 2, т. 18, N. 138, с. 149-151.

<sup>483</sup> Abrahamian Er., Iran between Two Revolutions, Եզվ. աշխ., էջ 104-107:

<sup>484</sup> Մոխամադ Ալի շահի կառավարման շրջանում նա որոշ ժամանակ ստանձնել է վարչապետի պաշտոնը, սակայն իր լիբերալ հայացքների համար արժանացել էր շահի անբարեկամության և հեղաշրջման առարկանում, կայտնավորել էր: Սակայն Գրեյի միջամտության շնորհիվ նրան հաջողվել էր դուրս գալ բանտից և մեկնել Լոնդոն:

<sup>485</sup> Afary J., The franian Constitutional Revolution, Եզվ. աշխ., էջ 309-310:

յունը փոխհատուցել է ռուսահպատակներին հասցված վնասների մի մասը, և, «այդ իսկ պատճառով, տվյալ պահը նպաստավոր է Ղազվիկից ռուսական զորքերի դուրս բերման համար»<sup>486</sup>:

Մարտին դուրս բերվեցին Դարբազգի և Քուչանի ռուսական ջոկատները<sup>487</sup>: Նույն մարտին ռուսական կառավարությունն անգամ համաձայնվեց իրանական նոր կառավարությանը վաճառել մեծ քանակությամբ զենք՝ երկրում կարգուկանոն հաստատելու համար<sup>488</sup>:

Փետրվարի 26-ին մեջլիսում ներկայացնելով կառավարության նոր կազմը՝ Սեփահաբը խնդրեց արտակարգ լիազորություններ տրամադրել գործադիրին: Նոր ծրագրում կարևորվում էր՝ երկրի ողջ տարածքում կարգուկանոն հաստատելու, նպատակով ստեղծել արագ արձագանքման պատժիչ ջոկատներ, բարիքրացիական հարաբերություններ պահպանել բարեկամական պետությունների հետ և կարգավորել ֆինանսական խնդիրներն օտարերկրյա խորհրդականների օգնությամբ<sup>489</sup>:

Ֆինանսական ոլորտում բարենորոգումներ սկսելու նպատակով՝ նոր կառավարությունը շարունակեց դեռևս 1910 թ. վերջին Մոսթոուֆի օլ-Մամալեքի կառավարության կողմից ԱՄՆ-ի պետդեպարտամենտի հետ ֆինանսական մասնագետներ Իրան գործուղելու վերաբերյալ բանակցությունները: 1911 թ. հունվարին ԱՄՆ պետդեպարտամենտը երեք տարի ժամկետով գլխավոր գանձապետի պաշտոնի համար առաջադրեց ֆինանսական վարչարարության բնագավառում մեծ փորձ ունեցող Մորգան Շուսթերին և ֆինանսական հինգ խորհրդականի<sup>490</sup>: Շուստ ռուսական արագորձնախարարի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Ներատովի՝ գերաբարության հպատակի հրավերը նախադեպ էր, որից հետո իրանական վարչա-

կարգ այլ խոշոր տերությունների հպատակների ներքափանցմանը հակազդելը ավելի կոժվարանա: Բացի այդ, ամերիկացի փորձագետի էշանակումն ավելորդ անգամ փաստում էր, որ դեմոկրատները չջանկազան հետևել Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի խորհրդին՝ եվրոպական երկրորդական երկրներից (բելգիացիներ, իտալացիներ, շվեդներ) հրահանգիչներ հրավիրելու հարցում<sup>491</sup>:

Ինչ վերաբերում է անգլիացիներին, ապա նրանք դրականորեն վերաբերվեցին ամերիկացիներին հրավիրելու որոշմանը և անգամ պաշտպանեցին այդ առաջարկը Ս. Պետերբուրգում: Իրավիճակը ավելորդ չարելու նպատակով ռուսական կողմը որոշեց, որ բրիտանացիների հետ կարող է համատեղ հայտարարությամբ զգուշացնել իրանական կառավարությանը, որ Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան թեև դեմ չեն մեջլիսի որոշմանը, սակայն հետագայում վերջիններիս խորհուրդներին հետամուտ չլինելը և օտարերկրյա հպատակներ հրավիրելու այլ փորձերի դեպքում՝ պահանջելու են այսուհետև հրավիրել միայն անգլիացի և ռուս խորհրդականների<sup>492</sup>:

Իր ժամանումից անմիջապես հետո Շուսթերը մշակեց Իրանի ֆինանսական բնագավառում բարենորոգումներ անցկացնելու մասին 12 կետից բաղկացած օրինագիծը, որը դեմոկրատների ճնշումների տակ մայիսի 31-ին անմիջապես հաստատվեց մեջլիսի կողմից: Շուստ այլ օրենքի՝ Շուսթերը բացառիկ և լայն իրավունքներ էր ստանում վերահսկելու պետության ֆինանսական բոլոր գործարքները, այդ թվում նաև պետական հարկերի և եկամուտների հավաքագրման, ծախսերի, բանկային գործարքների, դրամահատման, փոխարժեքի և մենաշնորհների դիմաց մարումները և այդ գործընթացը կառավարելու նպատակով հատուկ հաստատություններ էին հիմնվելու ինչպես կենտրոնում, այնպես էլ նահանգներում: Օրենքով նրա՝ գլխավոր գանձապետի, տրամադրության տակ էր անցնում պետական գանձարանը, առանց որի ստորագրության չէր կարող իրակա-

<sup>486</sup> Сборник дип. док., вып. 6, с. 19, 25, 30, 43.

<sup>487</sup> Նույն տեղում, էջ 36-37:

<sup>488</sup> Նույն տեղում, էջ 91, 95, 101:

<sup>489</sup> Նույն տեղում, էջ 72-78:

<sup>490</sup> Shuster M., The Strangling of Persia, N. York, 1912, p. 5-9; McDaniel Robert A., The Shuster Mission and the Persian Constitutional Revolution, Minneapolis, 1974, p. 115.

<sup>491</sup> Сборник дип. док., вып. 6, с. 5-8.

<sup>492</sup> Նույն տեղում, էջ 107:

ևազվել որևիցե ծախս կամ թրկակվորման գործարք, ինչպես նաև արտաքին փոխառություններ կկրելու և մենաշնորհների շուք բա-  
նակցություններ վարելու լիազորությունը: Նա իրավասություն էր  
ստանում կառավարության և մեջլիսի հաստատմանը ներկայացնել  
երկրում գոյություն ունեցող ֆինանսական օրենքները փոփոխելու  
մասին նախագծեր, ինչպես նաև գանձարանը նոր էկամտուներով  
համալրելու մասին որոշումներ<sup>695</sup>: Բնական է, որ նմանօրինակ լայն  
արտոնությունների արամադրումը իր անմիջական անդրադարձն էր  
ուներադու ռուս- իրանական հարաբերությունների վրա, քանզի գլխա-  
վոր գանձապետն իր ձեռքում կենտրոնացնելով պետական ողջ ֆի-  
նանսական համակարգը, այդ թվում նաև հարկերի մուտքագրման,  
գործող բանկերի հետ կառավարության գործարքների և ծախսերի  
հաշվետվությունների վերահսկողությունը թուլացնելու էր Ռուսաս-  
տանի անմիջական ազդեցությունը Իրանի տնտեսական կյանքում:

Շուստով, փորձելով վերահսկողություն հաստատել մաքսային  
ուղղությամբ գործունեության վրա, Շուսթերը պահանջեց, որ Իրանում  
գործող բանկերն առանց իր ստորագրության և թույլտվության չվճա-  
րեն մաքսային վարչության կտրոնները և մաքսային էկամտուները  
անմիջապես մուտքագրվեն գանձարան, որի արդյունքում լուրջ  
խնդիր առաջացավ մաքսատների տնօրեն բելգիացի Մորեսի հետ,  
ով հրաժարվեց կատարել Շուսթերի պահանջները<sup>696</sup>: Միջադեպը  
լուրջ փորձության ենթարկեց նաև ռուս-անգլական հարաբերու-  
թյունները, քանի որ Շահնշահական բանկի ղեկավարը իր համա-  
ձայնությունն էր տվել Շուսթերին: Պակկևսի-Կազեյլն անմիջապես  
բողոքարկեց Շուսթերի որոշումը, մինչդեռ բրիտանական առաքելու-  
թյան ղեկավարը, իր վերադասի ցուցումով, չեզոքություն պահեց<sup>697</sup>:

Արտգործնախարարի ժամանակավոր պաշտոնակատար Ա.  
Ներատովը Է. Գրեյին հաղորդեց, որ Ռուսաստանը համաձայնվել է  
Շուսթերի հրավերին միայն իրանական իշխանությունների հետ  
հարաբերություններն ավելի չարելու համար՝ կարծելով, որ նրա  
գործունեությունը կսահմանափակվի միայն խորհրդականի գործա-  
ռույթներով: Սակայն փաստացի ֆինանսական համակարգի բոլոր  
ուղղությունները նրա տրամադրության տակ ղեկը չափազանց վտանգա-  
վոր է և հակառակ է Մեծ Բրիտանիայի հետ այդ երկրում համատեղ  
բաղաբականություն իրականացնելու հիմնական սկզբունքին<sup>698</sup>:

Չհասցնելով հարթել Մորներ-Շուսթեր հակասությունները՝ Թե-  
րանում ռուսական դեսպանությունն ավելի լուրջ խնդիրների առաջ  
կանգնեց: Շուսթերը բարեփոխումներն իրականացնելու նպատակով  
ծրագրում էր 12-15 հազար հոգանոց ֆինանսական ժանդարմերի  
հավաքագրել, որի համար ստացել էր մեջլիսի թույլտվությունը: Այդ  
գորամիավորումը ղեկավարելու համար նա առաջադրեց իր հակա-  
ռուսական հայացքներով հայտնի Թեհրանում բրիտանական ռազ-  
մական կցորդ Չ. Մթոուքսի թեկնածությունը, ինչը ռուսական իշխող  
շրջաններում ծայրաստիճան վատ ընկալվեց: Ապացույցներ կային,  
որ Մթոուքսը սերտորեն համագործակցում է իրանական ազգայնա-  
կանների հետ և հարում է «բրիտանական այլախոհներ» ձամ-  
բարին<sup>699</sup>: Սկզբում ռուսական ԱԳՆ-ը փորձեց ինսիքը բուժել Լոն-  
դոնի միջոցով, անգլիական կառավարությունը պետք է ստիպել  
Մթոուքսին հրաժարվել Իրանում ծառայության անցնելուց և չընդու-  
ներ անգլո-հնդկական զինված ուժերում ծառայությունից դուրս  
գալու վերաբերյալ նրա հրաժարականը և միաժամանակ իրանական  
կառավարությանը հայտարարություն անել, որ նշված պաշտոնին  
հրավիրվի երկրորդական տեղության մասնագետ: Ա. Ներատովը  
պնդում էր, որպեսզի Լոնդոնում ռուսական դեսպան Բենկենդորֆը  
հայտարարի, որ ռուսական հանրային կարծիքը չափազանց սուր է

<sup>695</sup> Shuster M., նշվ. աշխ., "Report of the Parliamentary finance regulations commission" Appendix B, էջ 356-358, Շօրնիկ ձև. ձև, հատ. 6, էջ 159-161:

<sup>696</sup> McDaniel Robert A., նշվ. աշխ., էջ 130-132, Շօրնիկ ձև. ձև, հատ. 6, էջ 190:

<sup>697</sup> McDaniel Robert A., նշվ. աշխ., էջ 133, Շօրնիկ ձև. ձև, հատ. 6, էջ 195, 205:

<sup>698</sup> Շօրնիկ ձև. ձև, հատ. 6, էջ 199-200.

<sup>699</sup> Afary J., The Iranian Constitutional Revolution, նշվ. աշխ., էջ 320, Firuz Kazem-Zadeh, նշվ. աշխ., էջ 587-589.

ընկալում Մթոռքսի նշանակումը, ինչը կարող էր վտանգել ռուսանգլիական համաձայնագիրը, և էթե բրիտանական կառավարությունը պատշաճ կերպով չարգելակի այն, Ռուսաստանը պահանջելու էր փոխհատուցումներ<sup>498</sup>:

Հուլիսի 15-ին Ռուսաստանն իրանական կառավարությանը հայտարարեց, որ դեմ է Մթոռքսի նշանակմանը<sup>499</sup>: Միաժամանակ պահանջեց, որպեսզի Լոնդոնը պաշտոնապես հայտարարի, որ էթե Մթոռքսի գործունեության ոլորտը տարածվի ռուսական ազդեցության գոտի, սպա Մեծ Բրիտանիան համաձայնվելու է նմանատիպ իրավունքներով օժտված, ռուս սպայի անգլիական ազդեցության գոտում նշանակմանը<sup>500</sup>:

Ռուսական կառավարության պահանջների նման կտրուկ երանգավորումները մեծապես պայմանավորված էին աշխարհաքաղաքական հարթակում անգլո-ֆրանս-գերմանական հարաբերությունների լարվածության հերթական փուլով: Ամբիկկացի ֆինանսիստի առաքելությունը Թեհրան համընկավ Գերմանիայի և Ֆրանսիայի միջև 1911 թ. հուլիսին բռնկված Մարոկկոյի հերթական ճգնաժամում Մեծ Բրիտանիայի կողմից Բրանսիային աստարելու գործընթացին: Ռուսաստանը հետոն է օգտագործեց եվրոպական զարգացումները՝ փորձելով շուտափույթ կերպով վերանվազակերպել իր արտաքին քաղաքականության աստղահերթություններն Իրանում: Այն մեծ ջանքեր գործադրեց իր նախկին ազդեցությունն այստեղ վերականգնելու համար: Նախ՝ ավարտին հասցրեց իրանական հարցերով շուրջ տասնամյա ընթացող ռուս-գերմանական բանակցությունները, որի արդյունքում 1911 թ. օգոստոսի 19-ին կնքվեց Իրանի վերաբերյալ ռուս-գերմանական վերջնական պայմանագիրը<sup>501</sup>: Այնուհետև, ցարա-

կան կառավարությունը փորձեց հետոն է խաղաղել Իրանի ներքաղաքական նոր զարգացումները, որոնք պայմանավորված էին նախկին շահ Մոհամմադ Ալիի կողմից գանդ վերստանալու գործնական փորձերով<sup>502</sup>: Ռուսական իշխող շրջանները թաջ գիտակցում էին, որ Գերմանիայի հետ լարված հարաբերությունների ֆոնի վրա Մեծ Բրիտանիան ավելորդ փորձության չի եեթարկի Ռուսաստանի հետ հարաբերությունները:

Ռուսական ճնշումների ներքո Գրեյը՝ չցանկանալով ավելորդ անգամ վտանգել անգլո-ռուսական համաձայնագիրը, հրաժարվեց ընթացք տալ Մթոռքսի գործին: Օգոստոսի սկզբին Լոնդոնում ռուսական դեսպան Բենկենդորֆը հեռագրում էր Ա. Ներատովին, որ Թեհրանում բրիտանական դեսպանտող Ջ. Բարկլիին հրահանգված է իրանական կառավարությանը հայտարարել, որ էթե վերջինս շարունակի պնդել Մթոռքսի նշանակման հարցում, սպա զինձատյաղղի հրաժարականը չի ընդունվի բրիտանական կառավարության կողմից<sup>503</sup>:

Օգոստոսի 6-ին Ա. Պոկլևսկի-Կոզլովը Մթոռքսի նշանակման վերաբերյալ ռուսական բողոքի պաշտոնական նոտա հանձնեց իրանական կառավարությանը, որով Ռուսաստանը իրեն իրավունք էր վերապահում հյուսիսային Իրանում իր շահերը ինքնուրույնաբար պաշտպանելու<sup>504</sup>: Բարկլին գրավոր կերպով գոուշացրեց իրանական կառավարությանը, որ Մթոռքսի հրաժարականը չի ընդունվել իր կառավարության կողմից և նպաստավոր կլինեք, որ շահական կառավարությունը ֆինանսական ժանդարմերիայի հետ կապված բարեփոխումների գործում փոխարինի նրան երկրորդական պետության իրանանգիչով<sup>505</sup>:

<sup>498</sup> Сборник дип. док, вып. 7, с. 5-6.

<sup>499</sup> Նույն տեղում, էջ 87:

<sup>500</sup> Նույն տեղում, էջ 51, 76-78, 80.

<sup>501</sup> Պայմանագրով Գերմանիան ի վերջո ճանաչեց ռուսական հատուկ շահեր Իրանի հյուսիսում և ընդունեց, որ ինքն այստեղ հենուպելուցում է միայն առնուրակակ նպատակներ: Վերջինս խոստանում էր ռուսական ազդեցության գոտում չնավանել երկաթուղային, խճուղային և հեռագրային մենաշնորհներ տասնամյա: Իր հերթին՝ Ռուսաստանը պարտավորություն էր ստանձնում կառուցել

Թեհրան-Խանեկին երկաթուղային գիծը համապատասխան պայմանավորված ժամկետի, երբ կավարտվի Բաղդադի երկաթուղու հյուսիսային հատվածի (Մադիդե-Խանեկին) շինարարությունը: Պայմանագիրը տես Сборник документов России с другими государствами, т. 24, т. 2, с. 405-407:

<sup>502</sup> ۱۹۹-۱۹۹، تاریخ مهندسه ناله آذربایجان، ص. ۱۰۰

<sup>503</sup> МОЭИ, серия 2, т. 18, ч. 1, N 331, с. 343, Сборник дип. док, вып. 7, с. 103-105:

<sup>504</sup> Moez D. W. and Langhorne, Great Britain and Russia 1907-1914, т. 2, с. 250:

<sup>505</sup> Сборник дип. док, вып. 7, с. 101-102, 105.

Ինչ վերաբերում է նախկին շահի կողմից գահը վերադարձնելու գաղափարին, ապա այն, թեև որոշակի վերապահումներով, այնուամենայնիվ կարեկցանքի արժանացավ ռուսական ԱԳՆ-ում: Թևն այստեղ քաջ գիտակցում էին, որ նախկին շահին սատարող ուժերին պակասում է համախմբվածություն, ու առանց լուրջ ֆինանսական օժանդակության երանց դժվար կլինի գրավել Թեհրանը, այդուհանդերձ Իրանում տիրող ամենաթողությունը և հասարակության շրջանում սահմանադրական կարգերի նկատմամբ հուսալքությունը հնարավորություն է տալիս Ի Մոհամմադ Ալիի շահի շուրջ նոր քաղաքական շարժման ձևավորման համար<sup>506</sup>:

Շուրջ երկու տարի Օղեսայում գտնվող նախկին շահը իր վատարիմ գործակալների միջոցով քարոզություն էր իրականացնում Իրանում, որը հատկապես մեծ հաջողություն ունեցավ թուրքմենական, շահսենեյան և քրդական որոշ ցեղերի շրջանում, որոնց բնակության շրջաններում նախկին շահի գործակալների և հետադիմական ուժերի կողմից ակտիվորեն հող էր նախապատրաստվում նրան վերադարձնելու ուղղությամբ: Բացի դրանից, մեծ աշխատանք էր տարվել նաև նրա եղբոր՝ Մալար օդ-Ղուուլի, ինչպես նաև Մարաղայի պահպանողական նահանգապետ Սամադ խան Շոջջա օդ-Ղուուլի, Մազանդարանի պալատատերի, Աստրաբադից Մեշեղեղ տանող ճանապարհին վերահսկողություն սահմանած Ռաշիդ օս-Մալթանեի ջոկատների կողմից<sup>507</sup>: Իրանական կառավարությունը, որին չէր հաջողվում վերջնականապես հանդարտեցնել այդ տարրերին հյուսիսային շրջանների անջատողականությունը հիմնականում կապում էր հենց այս քարոզչության հետ:

Թևն Մոհամմադ Ալիին դժվար էր համարել երկրի ներսում ծանրակշիռ ազդեցություն ունեցող ուժ, սակայն ռուսական ԱԳՆ-ը փորձեց ուղղել «նախկին սխալները»՝ որոշում կայացնելով չեզոքություն պահել նախկին շահի և սահմանադրական իշխանությունների

միջև պայքարում: Մինևույն ժամանակ կարևորվում էր, որ իրանական կառավարության մոտ չհայտնվեն Մոհամմադ Ալիի գործունեության վերաբերյալ ապացույցներ<sup>508</sup>: 1910 թ. սեպտեմբերից ընդհուպ մինչև 1911 թ. ամառ իրանական կառավարությունը Մոհամմադ Ալիի հետադիմական գործունեության մասին մշտապես հայտարարություններ էր անում ռուսական առաքելությանը՝ նշելով, որ այն չի համապատասխանում 1909 թ. օգոստոսի 25-ին Իրանի, Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև ստորագրված փաստաթղթին և այդ կապակցությամբ նախազգուշացնում էր, որ կզադարեցնի թշուառի վճարումները նախկին շահին<sup>509</sup>:

Ինչ վերաբերում է սեպիացիներին, ապա նրանք ցանկանում էին, որպեսզի Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան իրանական կառավարությանը համատեղ հայտարարեն, որ երկու տերությունները ճանաչում են միայն ներկայիս կառավարությանը և դեմ են Մոհամմադ Ալիի վերադարձին: Սակայն Լոնդոն ուղղված իր հաղորդագրություններում Ներսեսովն ուղղակիորեն սկսեց ակնարկել 1909 թ. Մեծ Բրիտանիայի կողմից գրաված դիրքորոշման մասին: Հուլիսի 7-ին Բեռլինեղբորֆին ուղղված հեռագրում նա խնդրում էր այժմ արդեն Է. Գրեյի մշտական խորհրդական Ա. Նիկոլսոնին հայտնել, որ Իրանում Մոհամմադ Ալիի հայտնվելը ռուսական կառավարության համար նույնքան անսպասելի էր, որքան Լոնդոնի համար: Ռուսական կառավարությունից նա ոչ մի ֆինանսական աջակցություն չի ստացել, սակայն իրանական տարածքում նրա հայտնվելուց հետո, նրա և իր հակառակորդների միջև պայքարին Ռուսաստանի վերաբերմունքը «կարող է լինել միայն չեզոք»<sup>510</sup>: Այդ իսկ պատճառով ներկայիս իրավիճակում Ռուսաստանն, ինչպես 1909 թ. գեթ կմտա հակամարտող որևէ կողմին աջակցություն ցուցաբերելուց՝ թույլ տալով նրանց լուծել ներքին հակասությունները<sup>511</sup>:

<sup>506</sup> Նույն տեղում, էջ 603:

<sup>507</sup> Сборник дип. док., вып. 5, с. 129-130, 146:

<sup>508</sup> Сборник дип. док., вып. 7, с. 17:

<sup>511</sup> Сборник дип. док., вып. 7, с. 26, МОЭИ, серия 2, т. 18, ч. 1, N.228, с. 246:

<sup>506</sup> МОЭИ, серия 2, т. 18, ч. 1, N. 133, с. 143-146:

<sup>507</sup> 1۷۳-1۷۲, ۱۶۶-۱۶۵, ص ۱۰ تاریخ هجده سله ازباجان، ص ۱۰

Դեռևս 1910 թ. հոկտեմբերին ռուսական իշխանությունների ընդատառ զննվով շահի խնդրանքին, թույլ էին տվել նրան բուժման նպատակով մեկնել Եվրոպա, որտեղ նա պարբերաբար հանդիպումներ էր կազմակերպել Իրանի հետադիմական առաջնորդների, այդ թվում նաև իր եղբոր՝ Աբուլ Ֆաթի-միրզա Սալար օդ-Ղոուլեի և Սարգար Արշադի (Արշադ օդ-Ղոուլե) հետ<sup>512</sup>: 1911 թ. հունիսին Մոհամմադ Ալիին, ռուսական իշխանությունների թողտվությամբ, Խալիլ-Բադղադի անունով կեղծ անձնագրով, հաջողվել էր Ռուսաստանի տարածքով Վիեննայից ժամանել Բաքվից հյուսիս գտնվող Պետրովակ նավահանգիստը, որտեղից նա և իր կողմնակիցները, զենքով բեռնված «հանքային ջրեր» ցուցանակներով արկերը տեղավորել էին ռուսական «Քրիստոֆոր Կոլումբ» նավը: Հուլիսի 4-ին Մոհամմադ Ալին Շոա օս-Սալթանեի, նախկին արտգործնախարար Սաադ օդ-Ղոուլեի, Սարգար Արշադի ուղևորությամբ ժամանել էր Աստրաբադի մտակալքում գտնվող Գյումուշթեփե թուրքմենական գյուղը<sup>513</sup>, որտեղից գրույթուն էր ուղարկել իր կողմնակիցներին՝ առաջարկելով շարժվել դեպի Թեհրան<sup>514</sup>:

Հուլիսին ռուսական ղեկավարողին հանձնված նուստյում իրանական կառավարությունը հաղորդում էր. «Քանի որ ռուսական կառավարությունը հարկ չի համարել կանգնեցնել շահի գործակալներին Բաքվում, ապա իրանական կառավարությունն իրեն պարտավորված չի համարում փոխհատուցել Ռուսաստանից ռուսական շոգենավով ժամանած նախկին շահի գործունեության արդյունքում գեղերի ասպատակություններից առաջացած վնասները»<sup>515</sup>:

Պակլեսկի-Կազեյլին իրահանգվել հակադարձել իրանական կառավարության նուստյին, որ, «Մոհամմադ Ալի շահը բավիցա զգուշացվել է՝ զերծ մնալու իրանական ներկայիս կառավարության

դեմ քարոզությունից և քանի որ վերջինս հայտարարել է, որ հաղորդակից չէ նման քարոզության, ապա լիարժեք հիմքեր կային կարծելու, որ այդ քարոզությունը տարվել է նրանից անկախ, այլ անձանց կողմից: Այդուհանդերձ, յուրաքանչյուր երկրում քարոզության դեմ պայքարը, տվյալ երկրի կառավարության պարտականությունն է, այլ ոչ թե ուրիշինը: Ռուսական կառավարությունը չի կարող նաև չկեղտնել, որ Մոհամմադ Ալի շահի հեռանալուց հետո անցած երկու տարիների ընթացքում իրանական կառավարության կողմից ոչինչ չի արվել երկրում կայունության հաստատման ուղղությամբ: մշտական նախարարական ճգնաժամերը, կուսակցությունների պայքարը և մեջլիսի անարդյունավետ գործունեությունն անկասկած նպաստավոր միջավայր են ստեղծել Մոհամմադ Ալի շահի օգտին բանասարկություններ կազմակերպելու և նրան գահին վերադարձնելու համար... ուստի ռուսական կառավարությունը, նախկին շահի հայտնվելու արդյունքում, իրանական կառավարությանը շարունակելու է պատասխանատու համարել՝ ռուսական պետական և մասնավոր շահերին հասցված վնասների համար»<sup>516</sup>: Ռուսական կողմը հասավ նաև նրան, որ իրանական կառավարությանը արվեց չեզոքության պահպանման մասին անզիլ-ռուսական համատեղ հայտարարությունը<sup>517</sup>:

Չնայած հայտարարված չեզոքությանը՝ Իրանում ռուսական ներկայացուցիչները, շահագրգռված լինելով գործող սահմանդրական վարչակարգի տապալմամբ, մեծ հետաքրքրություն սկսեցին դրսևորել նախկին շահի վերականգնման գաղափարի նկատմամբ: Թավրիզում, Աստրաբադում, Արդաբիլում, Մեշեդում ծառայող ռուսական հյուպատոսներն ամեն կերպ ջանում էին թուլացնել նախկին շահի դեմ կենտրոնական կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումների և պայքարի հիմքերը: Նրանց հիմնական նպատակներից էր նաև Մոհամմադ Ալիի դեմ պայքարում սահմանադրական

<sup>512</sup> Shuster M., նշվ. աշխ., էջ 107:

<sup>513</sup> Смирнов К., նշվ. աշխ., էջ 158, Shuster M., նշվ. աշխ., էջ 104, McDaniel Robert A., նշվ. աշխ., էջ 136-139, Сторонок дит. док. вып. 7, с. 70-71.

<sup>514</sup> Сторонок дит. док. вып. 7, с. 59-73, 114, كسرى، تاريخ هجده مهله از باجان، ص.

<sup>515</sup> Ասլիս տեղում, էջ 29-32:

<sup>516</sup> Сторонок дит. док. вып. 7, с. 43-44.

<sup>517</sup> Ասլիս տեղում, էջ 45-55:

ճակատի կողմից Այսրկովկասի հեղափոխական ուժերի մասնակցությանը խոչընդոտելը<sup>518</sup>:

1911 թ. օգոստոսին Մոհամմադ Ալիին սատարող զինված ուժերի գործողություններին զուգընթաց սրվեցին նաև վերջին երկու տարվա ընթացքում երկիրը կառավարող տարբեր քաղաքական ճամբարների միջև հակասությունները: Եուսթերին ընձեռած արտոնությունները խորացրին մեջլիս-կառավարություն հակասությունները՝ առաջացնելով կառավարական նոր ճգնաժամ: Շահագրգռված լինելով չարավորների կառավարության պահպանման հարցում՝ Նասր օլ-Մոլլը ձեռնամուխ եղավ, որ բախթիարական առաջնորդ Սամսամ օս-Սալթանեն Մեփահադարի կազմած երկրորդ կառավարությունում զբաղեցրեց պաշտպանության նախարարի պաշտոնը<sup>519</sup>: Սամսամ օս-Սալթանեի վարչապետությունը որոշիչ դերակատարություն ունեցավ Իրանի ներքաղաքական զարգացումների վրա: Քաջ գիտակցելով, որ առանց բախթիարների ռազմական ներուժի կառավարությունը չի կարող դուրս մղել Մոհամմադ Ալիին, բախթիարները սկսեցին զուշորեն ամրացնել իրենց իշխանության հիմքերը և աշխատելով չառաջացնել ձախերի ցասումը՝ վարում էին երկզիմի քաղաքականություն<sup>520</sup>:

<sup>518</sup> Ռեշուտում ռուսական հյուպատոսության ծառայող Ն. Նեյրատլի հուլիսի 13-ի գեկույցը, Մեշեդեում հյուպատոս Ա. Դաբիժայի հուլիսի 17-ի գեկույցը, Աստրախայում ռուսական հյուպատոս Ա. Իվանովի հուլիսի 20-ի գեկույցը, С.Сборник дин. док. вып. 7, с. 38-39, 65-73, էջ 65-73:

<sup>519</sup> Afary J., The Iranian Constitutional Revolution, և՛վ. աշխ., էջ 323:

<sup>520</sup> Բազմ իրանից, որ Սամսամ օս-Սալթանեն վարչապետ էր, իսկ նրա եղբայր՝ Մարդյալ Ասալը շարունակում էր վայելել դևանկուսների վտահանությունը, մյուս կերպըր դեկավարում էր արքունական թիկնազորը: Բախթիարական շաջի իլխանի ընտանիքի ցեղապետի գերակայության էր ենթարկվում պաշտպանության նախարարությունը, նրանց մյուս բայեկանները կառավարում էին Սպահան, Արաբիստան, Յազդ, Քերման հանագեները, ինչպես նաև Բաքուցեղաում, Բեհբեհանիում և Մուլթանարաում: Բախթիարական իլխանների և շաջի իլխանների ընտանիքների մյուս վեց առաջնորդները գործարար կապեր էին հաստատել «Անգո-պարսկական» նախալի ընկերության հետ, որն ընդլայնել էր իր գործունեության սահմանները 1909 թ. հարավում նավթի մեծ պաշարներ հայտնաբերելու

Յեհրանը ռազմական դրության բերելու մասին իրանական կառավարության հուլիսի 8-ի որոշումից հետո, Պակլեսկի-Կազեյն իրանական ԱԳՆ-ին հայտարարեց, որ եթե Իրանի սահմանադրական ուժերը, ինչպես 1909 թ., օգտվեն անօրինական ռուսահպատակների ծառայություններից, ապա ռուսական կառավարությունը պահանջելու է, որ այդ անձինք հանձնվեն համապատասխան ռուսական հյուպատոսություններ՝ վերջիններին հայրենադարձությունը կազմակերպելու նպատակով: Իրանական իշխանությունների կողմից նրանց չհանձնելու դեպքում՝ ռուսական հյուպատոսություններն իրավասու էին ինքնուրույն կերպով կալանավորել «անցանկալի ռուսահպատակ տարրերին», ինչը թույլատրվեց Թավրիզի, Արդաբիլի, Ղազվինի, Ռեշահի և Մեշեդի հյուպատոսներին<sup>521</sup>: Ռուսական կառավարության կողմից նման ցուցումներ էին տրվել նաև այսրկովկասյան զինված ուժերին<sup>522</sup>: Դեպքանորդը իրանական կառավարությանը պաշտոնապես հայտարարեց, որ Ռուսաստանից զենված զենք-զինամթերք նահանգների էնջումենների կողմից չբաժանվի ֆիդայիներին<sup>523</sup>:

Ստեղծված պայմաններում ազգայնականների ճակատը սկսեց նախապարաստվել նախկին շահին հակահարված հասցնելու համար: Ռազմական բոլոր գործերը հանձնարարվեցին ռուսիկանապետ Եփրեմ խանին<sup>524</sup>, ում կազմակերպչական տաղանդի շնորհիվ հնարավոր եղավ ձևավորել «Իրանի հեղափոխական բանակը»<sup>525</sup>:

ընդց հետո: Պատահական չէ, որ հարավի մի շարք այլ զեղապետեր (դաշուպատան, արարական, բեկուշական) միադրվեցին և սեզամ մասնակցեցին Մոհամմադ Ալիի խռովությանը՝ Յեհրանում առողջ նրանց ազդեցությունը թուլացնելու նպատակով: Abrahamian Er., Iran between Two Revolutions, և՛վ. աշխ., էջ 107-108:

<sup>521</sup> С.Сборник дин. док. вып. 7, с. 23.

<sup>522</sup> Առլիս տեղում, էջ 41, 109.

<sup>523</sup> С.Сборник дин. док. вып. 7, с. 53-54.

<sup>524</sup> Իրանի Մահմադարական շարժմանը հայերի մասնակցության մասին մանրամասն տե՛ս Նավասարդյան Ն., 1905-1911 թթ. Իրանի սահմանադրական շարժմանը հայերի մասնակցության հարցի շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և մուսուլմաններ, հոգվածների ժողովածու. Խ. XXVIII, Երևան, ՀՀԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2011, էջ 112-139:

<sup>525</sup> Բալբուրյան Վ., Իրանի պատմություն, և՛վ. աշխ., էջ 529-530:

Պենոկրատների ջանքերով զգալիորեն ընդլայնվեցին նաև Շուսթերի արտոնությունները: Նա կատարելու էր նաև ռազմական նախարարի խորհրդականի պարտականությունները: Շուսթերը առաջնային դերակատարում ունեցավ արևելքից Թեհրանի վրա արշավող Մարդար Արշալի հեծելազորի դեմ դուրս եկած հեղափոխական բանակի կազմակերպման և մատակարարման գործում<sup>526</sup>: Բնիչ շեղիկով օգուտտոսի վերջին Թեհրանից ոչ հեռու գտնվող Վերամյի քաղաքի մոտ հեղափոխական բանակը պարտության մատնեց խոտվարարների<sup>527</sup>:

Սեպտեմբերին կառավարական գործերը զենքն ուղղեցին նաև շահի եղբոր Սալար էլ-Պոտոլեի գործերի դեմ, ում հաջողվել էր վաչկատուն ցեղերից կազմակերպել մի հսկայական բանակ Թեհրան արշավելու համար<sup>528</sup>: Հեղափոխական բանակի կողմից Սալար օդ-Պոտոլեին հասցված պարտությունը ի չիք դարձրեց Մոհամմադ Ալիի գահը վերստանալու հնարավորությունները<sup>529</sup>: Հեղափոխական բանակի կողմից բախթիարների հանդես գալը և նրանց ներքուսր կառավարության ռազմական հաջողությունների գործում ևս կարևոր նշանակություն ունեցավ: Ըստ Պակևակի-Կազելլի հայտնած տեսլետի՝ նախկին շահի կողմնակիցները չօգտագործեցին բախթիարների դժգոհությունը: Բախթիարների ու Մոհամմադ Ալիի միջև վերջնական համաձայնություն ձեռք չէր բերվել, որով վերջինս իշխանության գալուց հետո, կերպշխավորներ նրանց տիրապետությունը կենտրոնական և հարավային նահանգներում, իսկ թշնամական հարավային ցեղապետերի նախկին շահի դաշնակիցներին միանալու հանգամանքը բախթիարներին աստիճանաբար ներքաշեց քաղաքացիական պատերազմի մեջ՝ ամրացնելով նրանց սահմանդրականների ճամբարին<sup>530</sup>:

Իրականում ռուսներն այդքան էլ չէին վստահում բախթիարական խաներին, որոնց քաղաքական և տնտեսական հետաքրքրու-

յունները սերտորեն կապված էին անգլիացիների հետ: Ալվիզի՝ ռուսներին հայտնի էր, որ բախթիարները մեջլիսը ցրելու և սեփական խաներից մեկին ռեզենտի պաշտոնում նշանակելու միջոցով հեռանկարում հույս ունեն գավթել շահական գահը, որի համար պետական հեղաշրջման ծրագրեր են մշակել<sup>531</sup>: Բնական է, որ այս իրողությունը բացարձակ ընդունելի չէր դաջարական արքայատոհմի պահպանման հարցում վճռակետերն հանդես եկող ռուսական կառավարության համար:

##### 5. Առաջին աշխարհամարտից առաջ Ռուսական կայսրության կողմից հյուսիսային Իրանի ռազմակալումը և Մահմանադրական հեղափոխության ճնշումը

Մոհամմադ Ալի շահի խոտվությունը տապալվելուց հետո Պետերբուրգին պարզ դարձավ, որ ժամանակն է փոխելու ռազմավարությունը: Ալևնայտ էր, որ Լոնդոնը ամեն կերպ մտադիր էր պաշտպանելու գործող իշխանությանը: Նման պայմաններում այլևս վտանգավոր էր աջակցություն ցուցաբերել հակահեղափոխական ուժերին, ինչը կործանիչ վնաս կարող էր հասցնել Ռուսաստանի հեղինակությանը: Գործնականում Պետերբուրգը «Իրանում կայունություն վերահաստատելու գործում»՝ պատրաստ էր աջակցել իրանական կառավարությանը միայն այն նախապայմանով և այնպիսի երաշխիքների ղեկավարում, որոնք կապահովեին ռուսական շահերն Իրանում: Պակևակի-Կազելլի համոզմամբ Ռուսաստանը կարող էր օգտագործել ստեղծված իրավիճակը, քսելի Մոհամմադ Ալիի ժամանումով Թեհրանում առերես դադարած քաղաքական հակամարտությունը անկասկած բռնկվելու էր նոր ուժով<sup>532</sup>: Սակայն ռուսական ծրագրերի իրականացման ճանապարհին խոչընդոտ էր Շուսթերի հետագա գործունեության ծավալումը: Ռուսական ԱԳՆ-ի բնորոշմամբ. «Անգլիան օգտվելով, իր նկատմամբ Շուսթերի բարեհաճ վերաբերմունքից, նա-

<sup>526</sup> Shuster M., նշվ. աշխ., էջ 103, Сборник дин. док. вып. 7, с. 58.

<sup>527</sup> Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, նշվ. աշխ., էջ 530:

احمد كسروی، تاریخ هیجده ساله از باستان، ص ۱۸۵-۱۸۱

<sup>528</sup> МОЭИ, серия 2, т. 18, ч. 1, N. 529, с. 73-74, Сборник дин. док. вып. 7, с. 163-166.

<sup>529</sup> МОЭИ, серия 2, т. 19, ч. 1, N. 57, с. 50-51.

<sup>531</sup> Նույն տեղում:

<sup>532</sup> Նույն տեղում:

խանձեկի էներգիայով շարունակում էր խաղաղ ներթափանցման քաղաքականությունը»<sup>533</sup>:

Դեռևս 1911 թ. գարնանը լոնդոնյան «Ձեկիզման եղբայրներ» (Seligmen Brothers) բանկային տուներ փոխառություն տրամադրելու առաջարկով դիմել էր իրանական կառավարությանը, որը մտադիր էր գործարքն իրականացնել ռուսական ֆինանսների նախարարության միջոցով<sup>534</sup>: Թեև Ձեկիզմանները Պետերբուրգի վստահեցրել էին, որ Իրանում պատրաստ են գործել ռուսական շաների համապատասխան, այնուամենայնիվ Թեհրան ժամանած բանկային ներկայացուցիչ անգլիական զինված ուժերի գնդապետ Բեդդոսի և Շուսթերի միջև բանակցությունների արդյունքում մշակված փոխառության նախագիծը, ռուսական սպասումներին հակառակ, նախատեսում էր փակել Հաշվավարկային բանկին նախորդ տարում կտնվերացված 7% պարտքը: Այդ ծրագրի համաձայն՝ գումարը ծախվելու էր ռոզման աշխատանքների, ճանապարհների բարեկարգման, առևտրի և հողագործության զարգացման և ինչև ամենակարևորն է՝ Թեհրանում և նահանգներում ֆինանսական վերանսկոտրության բարելավման նպատակների համար: Փոխառության երաշխիք էին լինելու հյուսիսային և հարավային մաքսակետերի եկամուտների մեացորդները, գանձապետարանի եկամուտները, հարկերը (մալխաթը), պետական հողերի եկամուտները: Այս պայմաններով Վ. Կոկլեյցովը Ձեկիզմաններին Իրանում որևիցե մենաշնորհի կամ իրավունքների տրամադրումը սկսեց դիտարկել՝ որպես անգլիական կազմակերպությանը տրամադրված արտոնություններ<sup>535</sup>: Այսպիսով՝ Ձեկիզմանների առաջարկների փաթեթը ուղղակի ֆինանսական գործարք չէր, այն անմիջակերպ ճանապարհ էր հարթելու ռուսական ազդեցության գոտի անգլիական կապիտալների ներխուժի համար: Սեպտեմբերի 19-ին Պետերբուրգ թվագրված իր հեռագրում Պոկլևսկին նշում էր, որ էթե ռուսական կառավարությունը չհամաձայնվի փոխառության պայմաններին, ապա ամերիկացի գանձապետը մտադիր էր նման

պայմաններով այլ կազմակերպությունից փոխառություն ստանալու նպատակով՝ մեջլիսից օտարերկրյա ձեռնարկատերերին իրանական երկաթուղաշինության բնագավառում մենաշնորհային իրավունքներ տրամադրելու թույլտվություն ստանալ՝ առաջարկելով ութ նախագիծ, այդ թվում նաև ռուսական ազդեցության գոտում<sup>536</sup>: Ընդ որում, Շուսթերն արդեն բանակցություններ էր սկսել «Լինչ եղբայրներ» և «Անգլո-գարսկական նավթային» ընկերությունների հետ՝ հարավում չորս երկաթգիծ կառուցելու նպատակով<sup>537</sup>: Մինչև Երկրորդ մեջլիսի գործունեության ժամկետի ավարտը նա փորձում էր նաև ստանալ Ջուլֆա-Թավրիզ-Նազվի-Համադան-Մուսանմարա երկաթգծի (մենաշնորհային իրավունքի թույլտվությունը և այդ նպատակով պայմանագիր կնքել օտարերկրյա այլ կազմակերպության հետ)<sup>538</sup>:

Սեպտեմբերի վերջին Շուսթերը մեջլիսի առաջ նաև իրանական հեռագրային ոլորտը ղեկավարելու նպատակով անգլոնիպատակ Գ. Նյուի պայմանագիրը երկարաձգելու հարց բարձրացրեց: Հոկտեմբերի 4-ին Ներսիսյանի հասցեագրված իր հեռագրում «Պակլևսկի-Կոզելլը սահազանգում էր, որ Նյուի գործը անգլիացիների կողմից ռուսական ազդեցության գոտում հաստատվելու արդեն թվով երրորդ փորձն էր (առաջին երկուսը՝ Մստուքսի և Ձեկիզմանի գործերն էին)<sup>539</sup>: Նույն սեպտեմբերի սկզբին հայտնի էր դարձել, որ իրանական կառավարությունը, բացի ժանդարմերիայի համակարգում բարենորոգումներ անցկացնող շվեդ սպաներից, ռազմական մյուս ուժերը մարզելու նպատակով նա պատրաստվում էր հրավիրել շվեդ անսնտեղեցուների: Ռուսները գտնում էին, որ իրանական բանակի կորպուսում հնարավոր էր բացառապես ՊԿԲ-ի ընդլայնման միջոցով: Ա. Ներսիսյանի այս հեռագրի լուսանցքում Նիկոլայ Բ-ն նշել էր. «Եթե դա ձեռնտու չէ Ռուսաստանին՝ ապա անթույլատրելի է: Քանի որ Իրանի հյուսիսում տեղը մենք եմք»<sup>540</sup>:

<sup>533</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, ր. 18, 4.2, N. 713, ց. 227.

<sup>534</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, ր. 18, 4.2, N. 482, ց. 39-40.

<sup>535</sup> Նույն տեղում: Shuster M., նշվ. աշխ., էջ 306-307:

<sup>536</sup> Shuster M., նշվ. աշխ., էջ 307, ՄՕՅԻ, օրինակ 2, ր. 18, 4.2, N. 446, ց. 8:

<sup>537</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, ր. 18, 4.2, N. 632, ց. 168.

<sup>538</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, ր. 18, 4.2, N. 652, ց. 178.

<sup>539</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, ր. 18, 4.2, N. 525, ց. 71.

<sup>540</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, ր. 18, 4.2, N. 537, ց. 84.

Ռուս-իրանական հարաբերությունները և այդ համատեքստում Շուսթերի հետ հակասությունները հատկապես սրվեցին, երբ սեպտեմբերին մեջոխը որոշում կայացրեց բռնագրավել Մոհամմադ Ալիի խոփությանը մասնակցած անձանց գույքը<sup>541</sup>:

Սեպտեմբերի 26-ին Իրանի գլխավոր գանձապետարանի աշխատակիցները Շուսթերի հրամանով ժանդարմների ուղեկցությամբ գրավեցին իշխանագուև Շոա օս-Սալթանեի Թեհրանի առանձնատունը և մայրաքաղաքի մոտակայքում գտնվող Դոուլաթբադի նրա կալվածքը, որը վարձակալում էր ռուսահպատակների ընկերությունը: Տեղեկանալով այդ մասին՝ Թեհրանում ռուսական հյուպատոս Ի. Պոխիտոնովը, շրջանցելով ռուսական դեսպանության ղեկավարին և առաջնորդվելով այն հանգամանքով, որ տվյալ տունն ու կալվածքները գրավադրված են Հաշվադրակային բանկում այնտեղ էր ուղարկել հյուպատոսության աշխատակիցներին և կազակներին, որոնք հեռացրել էին Շուսթերի ներկայացուցիչներին և ժանդարմներին<sup>542</sup>: Մյուս օրը Շուսթերը առանձնատուն էր ուղարկել 120 ժանդարմների, ովքեր հեռացնելով կազակներին՝ զբաղեցրել էին Շոա օս-Սալթանեի առանձնատունը, ինչը կրկին առիթ էր սվել Ի. Պոխիտոնովին այնտեղ ուղարկել հյուպատոսության երկու աշխատակիցների<sup>543</sup>: Հաջորդ օրը իրանական կառավարությունը հատուկ նոտայով Պակևսեկի-Կոզլեյից պահանջեց ծառայությունից հեռացնել Պոխիտոնովին և հյուպատոսության աշխատակից Պետրովին<sup>544</sup>:

Իրականում խնդիրը հետևյալն էր. եսախ՝ Շոա օս-Սալթանեն թուրքահպատակ էր, և երա իրավունքները կարող էին պաշտպանել թուրք դիվանագետները և ինչն ամենակարևորն է՝ ես ոչ մի պարտք չունեի ռուսական բանկին: 1908 թ. իշխանագուևը իր ունեցվածքը ապահովագրելու համար՝ բանկի հետ կեղծ գործարք էր կնքել, որի հիման վրա իբրև թե բանկից 120 հազար թուման պարտք էր վերցրել,

որոնց դիմաց գրավադրել էր իր որոշ կալվածքները: Դեսպանորդ Պակևսեկի-Կոզլեյի դիտարկմամբ՝ ռուսական կառավարությունը իրանական կառավարությունից իրավասու էր պահանջելու միայն, որ բռնագրավման պարագայում՝ վերջինս վճարի Շոա օս-Սալթանեի պարտքը ռուսական բանկին և կատարի ռուսահպատակների նկատմամբ պարտավորությունները: Ըստ դեսպանորդի՝ բանկի և իշխանագուևի միջև ձևական գործարքի բովանդակությունը բաց հայտնի էր իրանական կառավարությանը, և վերջինս իրավասու էր բանկից պահանջել նրա պարտքերի վերաբերյալ փաստաթղթերը, ինչը լուրջ խնդիրներ կարող էր հարուցել բանկի համար, քանի որ նման փաստաթուղթ բանկը չունեի<sup>545</sup>: Շրջանցելով այս իրողությունը՝ գլխավոր հյուպատոս Ի. Պոխիտոնովը Պետերբուրգ էր ուղարկել միջադեպի վերաբերյալ իր տեսակետները<sup>546</sup>: Նոյեմբերի 13-ին Պակևսեկի-Կազլեյը գեկուցում էր Ներատովին, որ գլխավոր հյուպատոսի արարքը կոպիտ և անբացատրելի է ոչ միայն իրանական կառավարության, այլև առաքելության հանդեպ և, ծառայության կարգը խախտելու նոր փորձերի դեպքում նա ստիպված է ինքնուրույն միջոցներ ձեռնարկել առանձին ծառայությունների, անգամ հյուպատոսության ռոջ անձնակազմի նկատմամբ<sup>547</sup>: Սակայն Ներատովը մի կողմ դեմ էր խնդրի իրավական տեսանկյունը՝ ամբողջովին արդարացնում էր Պոխիտոնովի գործողությունները: Նա գտնում էր, որ հյուպատոսը պարտավոր էր առանց որևիցե կողմի հրահանգը ստանալու և փաստաթղթի ձևական լինելու հարցին խորամուխ լինելու՝ առաջին հերթին պաշտպանել կալվածքում գործող ռուսահպատակների և ռուսական բանկի շահերը, քանզի «առանց այդ էլ պարզ էր, որ ռուսական կողմը երբեք չէր էլ ընդունելու փաստաթղթի կեղծ լինելու հանգամանքը»<sup>548</sup>:

<sup>541</sup> ۲۱۱-۲۱۰ من احمد كبرى، تاريخ هيجه ساله از باجان، ص.

<sup>542</sup> Сборник дип. док. вып. 7, с. 171-173.

<sup>543</sup> МОЭИ, серия 2, т. 18, 4.2, N. 616, с. 154-155.

<sup>544</sup> Сборник дип. док. вып. 7, с. 179.

<sup>545</sup> МОЭИ, серия 2, т. 18, 4.2, N. 603, с. 146-147.

<sup>546</sup> Сборник дип. док. вып. 7, с. 171-172, 173-174.

<sup>547</sup> МОЭИ, серия 2, т. 18, 4.2, N. 616, с. 154-155.

<sup>548</sup> МОЭИ, серия 2, т. 18, 4.2, N. 636, с. 170-171.

Արդյունքում՝ դեսպանորդին հրահանգվեց իրանական կառավարությունից պահանջել.

1. Շոա օս-Սալթանեի տնից և կալվածքից անհապաղ հեռացնել ժանդարմներին՝ փոխարինելով նրանց ՊԿԲ-ի զինծառայողներով.

2. մինչև միջադեպի վերաբերյալ հետաքննության ավարտը, անկախ դրա արդյունքներից, պաշտոնապես ներողություն խնդրել ռուս դիվանագետներից.

3. իրանական արտգործնախարարին վերադարձնել ռուս դիվանագետներին ծառայությունից հեռացնելու մասին նոտան և հայտնել, որ հետագայում նմանօրինակ քայլ ձեռնարկելու դեպքում դեսպանորդը կդադարեցնի իրանական կառավարության հետ շփումները<sup>549</sup>։

Նմանատիպ հայտարարություն էր արվել նաև Պետերբուրգում իրանական ներկայացուցիչ Ալի Ղուլի խանին։ Հեռագրի լուսանցքում Նիկոլայ Բ-ն նշել էր. «Լավ է»<sup>550</sup>։ Իսկ Պետերբուրգում բրիտանական դեսպան Օ'Բերկին Ա. Ներատովը հայտնել էր, որ անցյալ ռուսական համաձայնագրի պետազատ ճակատագիրը կախված է նրանից, թե որքանով Լոնդոնը հետադառն կլինի ռուսական կառավարության հետ համատեղ պայքարելի Շուսթերի դեմ և ստիպել նրան՝ իր գործունեությունն իրականացնել ռուսական շահերին համապատասխան<sup>551</sup>։

Պակկակի-Կագելլը չէր կիսում ռուսական ԱԳՆ-ի կարծիքը և հրաժարվում էր կատարել իրանական նոտան վերադարձնելու մասին Ներատովի հրահանգը՝ նախընտրելով հրաժարական տալ և վերադառնալ Պետերբուրգ՝ դեսպանության կառավարումը կրկին թողնելով գործերի հավատարմատար Ե. Սարյինին։ Դեսպանորդը մտավախություն ուներ, որ իրանական կառավարությունը չի ընդունի ռուսական պահանջերը, և Իրանի նկատմամբ ավելի կտրուկ

<sup>549</sup> Նույն տեղում։

<sup>550</sup> Նույն տեղում։

<sup>551</sup> ՄՕՅՈ, օրեն 2, Կ. 18, Կ. 2, N. 672, Կ. 192.

ճնշումները համընդհանուր դժգոհության առիթ կտան և մեկնաբանվելու են, որպես «Մոհամմադ Ալի շահի կրած անհաջողության արդյունքում՝ Ռուսաստանի կողմից ստեղծված արհեստածին կրկնվիկտ»<sup>552</sup>։

Սակայն Ներատովն անբեկանելի էր։ Հոկտեմբերի 22-ին նա հինգ հեռագիր էր հղել դեսպանորդին, որոնցում կրկին անգամ պետում էր կատարել հրահանգները<sup>553</sup>։ Այս անգամ արդեն խստվում էր Ղազվինից Թեհրան գինձորական հարյուրյակը կանչելու և ռազմական նոր համադրումներ Իրան ուղարկելու մասին։ Հստ նրա՝ իրանցիների հանդեպությունն անցնում էր բոլոր սահմանները։ Իսկ ինչ վերաբերում էր նրանց կարծիքին, ապա «պետք չէ մոտանալ, որ պարսիկները բացառապես խոնարհվում են միայն ուժի առաջ և յուրաքանչյուր զիջում վերագրում են հակառակ կողմի թուլությանը։ Անգլիացիները նրանց հակադարձում են շատ ավելի փոքր կարևորություն ունեցող հարցերում և երբեք էլ չեն մտահոգվում հեղինակության մասին»<sup>554</sup>։

Հոկտեմբերի 24-ին Ներատովը Շոա օս-Սալթանեի գործի՝ դրա հետ կապված իրանական կառավարությանն ուղղված պահանջների և վերջինիս կողմից դրանք չունդունելու պարագայում՝ պատժամիջոցների կիրառման աստջարկների վերաբերյալ զեկուցագիր էր հանձնել Նիկոլայ Բ-ի հաստատմանը։ Դրանում նաև արժաքմվել էր Իրանից Պակկակուն հետ կանչելու հարցը։ Ջեկուցագրին կցվել էր նաև դեսպանորդի հետ նրա նամակագրությունը, սակայն փաստաթղթին ուշադիր ծանոթանալու պարագայում դժվար չէ նկատել, որ միջադեպը հրամցվել էր բացառապես Պոխիտոնովի տեսակետների հիման վրա, որը նա արժանացել էր ցարի հավանությանը. «Միանգամայն հաստատում եմ Ձեր ցուցումները», - նշել էր ցարը<sup>555</sup>։

Երկու շաբաթ շարունակ Պակկակի-Կոգելլը փորձում էր մեղավել Պետերբուրգի կրքերը։ Սակայն Ներատովին ուղղված ողջա-

<sup>552</sup> Նույն տեղում։

<sup>553</sup> ՄՕՅՈ, օրեն 2, Կ. 18, Կ. 2, N. 672, Կ. 206, N. 692, N. 207; N. 693, N. 207-208; N. 694, N. 208; N. 695, N. 209

<sup>554</sup> Ցարը կրկին ուշցունել էր այս մտաբեցումը՝ «Շոա լավ է։ Լիվադիա, [29] 16 հոկտեմբեր 1911 թ.։» ՄՕՅՈ, օրեն 2, Կ. 18, Կ. 2, N. 693, Կ. 207-208.

<sup>555</sup> ՄՕՅՈ, օրեն 2, Կ. 18, Կ. 2, N. 691, Կ. 220.

խոհույթան կոչերը արձագանք չգտան<sup>556</sup>: Լոյսերի 2-ին Ս. Պոկլակի- Կոզլը ստիպված էր արտագործնախարար Վոսուդ օդ- Դոուլդին հետ վերադարձնել ռուս դիվանագետների վերաբերյալ իրանական նոտաները և ներկայացնել ռուսական պահանջները<sup>557</sup>:

Մակայն մինչ վերջինս պատասխան կտար՝ ծագեցին լրացուցիչ հարցեր: Գլխավոր գանձապետին դեմոկրատների աջակցության շնորհիվ հաջողվեց ոչ միայն մեղջիսում անցկացնել ամերիկացի ևս տասը մասնագետի եշանակման մասին նոր օրինագիծը, այլև Մպահանում և Շիրագում ֆինանսական ղեկավարների պաշտոններում նշանակել անգլիացի մասնագետներին<sup>558</sup>: Իսկ Թավրիզում ևս հանդգնել էր ֆինանսական տեսուչի պաշտոնում նշանակել անգլիացի Լակոֆֆին:

Եթե ռուսները պարտատ էին աչք փակել վերնուշաղ երկու հանգամանքի վրա, ապա չափազանց ցավազին ընկալեցին վերջին նշանակումը: Լակոֆֆը Իրանում ծառայության երկարամյա փորձ ուներ և Ստոքսի նման իրանական ազգայնականների հետ իր սերտ համագործակցության պատճառով՝ վաղուց էր հայտնվել ռուսական դիվանագիտական առաքելության ուշադրության կենտրոնում<sup>559</sup>: Ուստի, այդ պահից ի վեր, Շուսթերին Իրանից հեռացնելու ցարական իշխանությունների վճռակախությունը սկսեց աճել աննխաղեսյ արագությամբ: Բրիտանացիների հետ համատեղ, այդ նշանակումը անմիջապես բողոքարկելու Լոնդոնին հասցեագրված Ներատովի հեռագրի պատճենի վրա Նիկոլայ Բ-ն գրառել էր. «Նմանօրինակ բողոքարկումները կարող են միայն ժպիտ առաջացնել»<sup>560</sup>:

1911 թ. վերջին իրանական ճգնաժամը դարձավ այն թույլ օղակը, որը կարող էր հանգեցնել Լոնդոնի և Ս. Պետերբուրգի աշ-

խարհաքաղաքական ծրագրերի փլուզմանը: Մեծ հաշվով իրանական խնդիրը դիտարկվում էր համաձայնական քաղաքականության համատեքստում, ուստի երկու տերությունների դիրքորոշումներում սկսեցին նկատվել փոփոխումային միտումներ:

Ի պատասխան՝ Լոյսերին Շուսթերը “Times” և “Reuters” լրատվական գործակալություններին տրված հարցազրույցում իր հիասթափությունն էր հայտնել Իրանում երկու տերությունների քաղաքականության վերաբերյալ, մասնավորապես. Ստոքսի գործում և Զելիզմանների փոխառության կանխարգելման հարցում Լոնդոնի տված «լուս համաձայնության» վերաբերյալ: Երբ “Times”-ը Շուսթերի մեղադրանքները «անարդարացի» որակեց, վերջինս Իրանում Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի քաղաքականության վերաբերյալ մանրակրկիտ և մերկացնող բաց նամակ ուղարկեց թերթին, որը տպագրվեց երկու մասով, թերթի 1911 թ. հոկտեմբերի 28-ի և 29-ի համարներում<sup>561</sup>: Քսական է, որ նամակն իր ազդեցությունն էր ունենալու բրիտանական հանրության շրջաններում՝ մեծացնելով արտագործնախարար Է. Գրեյի իրանական քաղաքականությանը հասցեագրված քննադատությունը: Բենկեդոգրֆի հետ իր առանձնագրույցում վերջինս նշել էր, որ Շուսթերը «իր դերը չգիտակցած ամերիկացի է և շուտով կլքի պաշտոնը, քանի որ թշնամական դիրքորոշում է որդեգրել երկու երկրների նկատմամբ»: Եթե նախկինում ևս Շուսթերին համարում էր գործունյա մարդ, ով ի վիճակի կլիներ կայունություն հաստատել Իրանում, ապա այժմ վստահ է, որ «երա կողմից քաղաքական իրավիճակը ճիշտ չգնահատելու» արդյունքում՝ գանձապետի հետ հույսեր կապելն ավելորդ է «ոչ անգլիական, ոչ էլ ընդհանուր տեսակյուններից»<sup>562</sup>:

Շուսթերի և ձայների միջև ձևավորված համագործակցությունը, միջիսում աճող կրանց ազդեցությունը, Նար օլ-Մուրի քաղաքական կշռի թուլացումը մեծ հավանականություն էր ստեղծում ծայրահեղ-

<sup>556</sup> Տե՛ս հոկտեմբերի 24-ին Ս. Արատովի հասցեագրված Պակնակու հեռագրերը: ՄՕՅՈ, серия 2, т. 18, 4.2, N. 745, с. 258, N. 746, с. 259: Ինչպես ևսն Արատովի հոկտեմբերի հեռագիրը Պակնակուն: N. 764, с. 276-277:

<sup>557</sup> ՄՕՅՈ, серия 2, т. 18, 4.2, N. 784, с. 290, N. 741, с. 341, Сbornик дин. док. вып. 7, с. 205:

<sup>558</sup> Shuster M., նշվ. աշխ., էջ 161, Сbornик дин. док. вып. 7, с. 198, 199, تاریخ هیده سله از باجان، ص.

<sup>559</sup> McDaniel Robert A., նշվ. աշխ., էջ 177, 793, Сbornик дин. док. вып. 7, с. 208, ՄՕՅՈ, серия 2, т. 18, 4.2, N. 793, с. 296-297:

<sup>560</sup> ՄՕՅՈ, серия 2, т. 18, 4.2, N. 793, с. 296-297:

<sup>561</sup> Shuster M., նշվ. աշխ., էջ 153-154: Նամակի ամբողջական տեքստը տե՛ս Shuster M., նշվ. աշխ., էջ 358-371:

<sup>562</sup> ՄՕՅՈ, серия 2, т. 18, 4.2, N. 713, N. 227:

ազգայնականների կառավարության ձևավորման համար<sup>563</sup>: Դրան գումարվում էին հարավում, հասկապես՝ Շիրազում, միջեղային բախումների և առևտրական ճանապարհների անվտանգության հարցերը: Սեպտեմբերից Թեհրանում բրիտանական ղեկավարող Ջ. Բարկլիին կրկին ակտիվացրեց հարավային շրջանների անվտանգության ապահովման վերաբերյալ պահանջները<sup>564</sup>: 1911 թ. հոկտեմբերին բրիտանացիները սկսեցին եոր զորամիավորումներ կենտրոնացնել Պարսից ծոցի շրջաններում: Փոխհամաձայնության գալով Պետերբուրգի հետ՝ հոկտեմբերի 10-ին և 24-ին Բարկլիին իրանական կառավարությանն էր հանձնել երկու նոսա, որոնցում ասվում էր, որ անզու-հեղիական գործերը վերահսկողություն են սահմանելու Բուշեհր-Շիրազ-Սպահան և Բահլար-Աբբաս-Քերման առևտրական ճանապարհների վրա և իշխած չորս քաղաքներում ուժեղացնելու են հյուպատոսական պահակագործերը<sup>565</sup>:

Հոկտեմբերի 24-ին իրանական կառավարությունը հրաժարվեց ընդունել Ռուսաստանի պահանջները<sup>566</sup>: Մյուս օրը Ջ. Բարկլիին Շուսթերին հայտնել էր, որ անզուիական կառավարությունը բացարձակապես չի ուղչունում Լակոֆիթի նշանակումը, քանի որ այն չի համապատասխանում անզու-ռուսական համաձայնագրի ոգուն<sup>567</sup>:

Հոկտեմբերի 26-ին Ներսիսյանը հրահանգեց Պակելեկուն ռուսական պահանջները զրավոր հանձնել իրանական կառավարությանը և գզուշացնել, որ չկատարելու դեպքում առաքելությունը դադարեցնելու է վերջինիս հետ շփումը և ռուսական շահերը պաշտպանելու նպատակով ձեռնարկվելու են համապատասխան միջոցներ: Ռուսական պահանջները երկօրյա ժամկետում չկատարելու դեպքում Ղազվին էր ուղարկվելու մեկ զորախումբ, որը ժանդարմների

Շուս-Սալթանեի կալվածքներից հեռացնելու նպատակով՝ ղեկավարող կարող էր Թեհրան կանչել<sup>568</sup>:

Ռուսական պաշտոնական նոսան Վոսուղ օդ-Պուլեին հանձնվեց հոկտեմբերի 29-ին<sup>569</sup>: Մյուս օրը Ներսիսյանը խիստ գաղտնի և շտապ նամակով ղինեց նախարարների խորհրդի նախագահի պաշտոնը ստանձնած Կոկոլցովին՝ Կովկասի փոխանորդին հրահանգելու Ղազվին ուղարկվող զորաշտկան անվիջապես ռազմական պատրաստվածության բերելու նպատակով<sup>570</sup>:

Հոկտեմբերի 31-ին վարչապետ Ամսամ օս-Սալթանեն Շուսթերին հրամայեց դուրս բերել ժանդարմներին: Սակայն խորհրդականը հրաժարվեց՝ պատճառաբանելով, որ բռնագրավման մասին հրամանը ստորագրվել է բոլոր նախարարների կողմից, ուստի այն չեղյալ հայտարարելու մասին հրամանը նույնպես պետք է ամրակալվի բոլորի համաձայնությամբ: Սակայն մինչ այդ նախարարների մեծ մասն արդեն հրաժարականներ էր տվել<sup>571</sup>: Երբ մեջլիսը մերժեց գիսավոր գանձապետի իրավասությունները սահմանափակելու մասին կառավարության մշակած օրինագիծը<sup>572</sup>, հրաժարականներ տվեցին նաև վարչապետն ու արտգործնախարարը՝ անպատասխան թողնելով ռուսական վերջնագիրը<sup>573</sup>:

Ստեղծված պայմաններում Ռուսաստանը կազմակերպեց իր երկրորդ լայնածավալ ռազմական ներխուժումն Իրան: Վերջնագրի ժամկետը լրանալուն պես նոյեմբերի 3-ին Կոկոլցովը Կովկասի փոխարքային հրամայեց 4 հազարանոց զորք ուղարկել Ղազվին, որից

<sup>563</sup> Afary J., The Iranian Constitutional Revolution, նշվ. աշխ., էջ 326:

<sup>564</sup> Сbornик дин. док. выст. 7, с. 151-152, 167-168, 191.

<sup>565</sup> Сbornик дин. док. выст. 7, с. 182.

<sup>566</sup> ՄՕՅՈ, серия 2, т. 18, ч.2, N. 815, с. 316, Сbornик дин. док. выст. 7, с. 213-214.

<sup>567</sup> Shuster M., նշվ. աշխ., էջ 160-161, Сbornик дин. док. выст. 7, с. 219: Բենկելնորֆի հետ իր առանձնաբարյոցում Լիկուլսոնը հայտնել էր, որ վերջինս հաշվի չի նստում անզուիական քաղաքականության հետ և ուղղակի «իրանական ազգայնական» է: ՄՕՅՈ, серия 2, т. 18, ч.2, N. 823, с. 321:

<sup>568</sup> ՄՕՅՈ, серия 2, т. 18, ч.2, N. 835, с. 330:

<sup>569</sup> ՄՕՅՈ, серия 2, т. 18, ч.2, N. 866, с. 359-360, Сbornик дин. док. выст. 7, с. 222-223:

<sup>570</sup> ՄՕՅՈ, серия 2, т. 18, ч.2, N. 868, с. 364.

<sup>571</sup> Сbornик дин. док. выст. 7, с. 228-229.

<sup>572</sup> Այդ ներքինի 1-ին լրատու էր երկրորդ մեջլիսի լիազորությունների ժամկետը, սակայն դրանից մեկ օր առաջ մեջլիսը շրջանցելով սահմանադրական կարգը՝ քվարկայության արդյունքում ստանալով մեծամասնության համաձայնությունը (49՝ կողմ, 6՝ դեմ)՝ որոշում էր կայացրել վեց ամսով երկարաձևել իր լիազորությունները: ۱۱۳ احمد كسروی، تاریخ هجده ساله آذربایجان، ص ۳۰۰:

<sup>573</sup> Сbornик дин. док. выст. 7, с. 237-238, ՄՕՅՈ, серия 2, т. 19, ч. 1, N. 9, с. 10-11.

երկու հազարը պետք է շարժվեին Թեհրան, մյուս երկուսը՝ մնային պահուստում<sup>574</sup>:

Ռուսաստանն օգտագործելով Մեծ Բրիտանիայի հետ եվրոպական հարցերում համագործակցության կարևորությունը՝ կարողացավ ապահովել Իրանում ռազմական երկրորդ ներխուժման նկատմամբ բրիտանական վարչակազմի լուր համաձայնությունը: Սակայն Լոնդոնում լուրջ մտավիտություն կար, որ ռուսական ռազմական ներկայությունը՝ իրանական վարչակարգի փոփոխման նպատակ է հետապնդում, քանի որ Իրանում էր դեռևս գտնվում Մոհամմադ Ալին<sup>575</sup>:

Նոյեմբերի 5-ին և 6-ին Ս. Պետերբուրգում բրիտանական դեսպան Ջ. Բյուկենենը Ներատովի և Կոկովցովի հետ հանդիպումների ժամանակ փորձել էր ճշտել Ռուսաստանի վերջնական նպատակները և հիշեցրել էր, որ Մեծ Բրիտանիան համակրանք է տածում Նասեր օլ-Մուլքի նկատմամբ և նախկին շահի վերադարձը չի կարող ընդունվել բրիտանական կառավարության կողմից: Է. Գրեյի ջանքերն ուղղված էին նրան, որ ռուսական կառավարությունը ժամանակավորապես կատցնի իր գործերի շարժը դեպի Թեհրան՝ հնարավորություն տալով իրանցիներին մեկ անգամ ևս կշռադատելու ստեղծված իրադրությունը<sup>576</sup>: Ներատովը պատասխանել էր, որ Ռուսաստանը թեև շատ բարձր է գնահատում Մեծ Բրիտանիայի հետ հարաբերությունները, սակայն հետագա որոշումները կախված կլինեն իրադրությունների զարգացման ընթացքից: «Որքան երկար մնա ռուսական զորքն Իրանում, այնքան ավելի է ընդլայնվելու ռուսական պահանջների ցանկը, որոնց թվում ևսև Շուսթերի պաշտոնակնման պահանջը», - ևնշել էր արտգործնախարարը<sup>577</sup>: Ինչ վերաբերվում էր նախկին շահին, ապա Ներատովի պիղծմամբ, ռուսական կառավարությունն Իրանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելով, առհասարակ իր գործողությունները չի

կապում Մոհամմադ Ալիի ճակատագրի հետ<sup>578</sup>: Մյուս օրը, Կոկովցովը վատահեցրել էր Ջ. Բյուկենենին, որ Ռուսաստանը չի պատրաստվում բռնազավթել իրանական որևիցե նահանգ և գորբերը դուրս կհանի հենց, որ իրանական կառավարությունը բավարարի ռուսական նախորդ երկու պահանջը<sup>579</sup>:

Թեհրանում բրիտանական դեսպանորդն անմիջապես սկսեց շանքեր գործադրել ռուսական առաքելությանը և իրանական կառավարական մամիններին բանակացային սեղանի մոտ բերելու համար: Սակայն հակառակ Կոկովցին՝ Բյուկենենին տված խոստմանը՝ Ներատովը այդ ընթացքում հատուկ ցուցումներ էր տվել Պակլևսկի-Կոզլյին, որ մինչև էնգելի ռուսական զորքերի ժամանումը՝ ես խուսափի իրանական արտգործնախարարի հետ հանդիպելուց, քանի որ վերոնշյալ երկու պահանջը բավարարելու արդյունքում, ռուսական կառավարությանը դժավ կլիներ իրագործել Շուսթերին Իրանից հեռացնելու վերաբերյալ պահանջը<sup>580</sup>: Նույն օրը ռուսական զորքերի առաջին միավորումները ցամաք իջան էնգելիում<sup>581</sup>: Ռուսական կառավարության կողմից մշակվեցին նաև Իրանին ներկայացվելիք նոր վերջնագրի պահանջները.

1. Պաշտոնակն անել Շուսթերին և Լալոֆֆին: Շուսթերի կողմից հրավիրված մյուս մասնագետներին վիճակը կարգավորվելու էր երկրորդ կետի համաձայն:

<sup>574</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, տ. 19, գ. 1, Ո. 15, է. 14, ՏՅօրնիկ ձևով, թվ. հրատ. 7, է. 229-230.

<sup>575</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, տ. 18, գ. 2, Ո. 721, է. 236, 713.

<sup>576</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, տ. 19, գ. 1, Ո. 31, է. 30-32, ՏՅօրնիկ ձևով, թվ. հրատ. 7, է. 239-242.

<sup>577</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, տ. 19, գ. 1, Ո. 31, է. 30-32, ՏՅօրնիկ ձևով, թվ. հրատ. 7, է. 239-242.

<sup>578</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, տ. 19, գ. 1, Ո. 47, է. 43.

<sup>579</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, տ. 19, գ. 1, Ո. 47, է. 43.

<sup>580</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, տ. 19, գ. 1, Ո. 47, է. 43. Իր հուշերում Բյուկենենը փաստում է, որ հետագայում նրան հայտնի էր դարձել, որ Կոկովցովը չէր համաձայնեցրել իր հայտարարությունը կառավարության մյուս անդամների հետ, ինչի համար արժանացել էր դեկտեմբերի կեսին Եվրոպայից վերադարձած (արտգործնախարար մեկնել էր բուժման) Սազոնովի դժգոհությանը: Սազոնովը անգամ պահանջել էր, որպեսզի Բյուկենենը տարևական դիվանագիտական հաշվետվությունների «Կապուրտ գրքում» չհրատարակի Կոկովցովի հետ գրույցի բովանդակությունը, քանի որ վերջինս պատասխանատու չէ կայսրության արտաքին քաղաքական որոշումների համար: G. Buchanan, My Mission to Russia and other Diplomatic Memories, London & N. York, Toronto and Melbourne, 1923, p. 99.

<sup>581</sup> ՏՅօրնիկ ձևով, թվ. հրատ. 7, է. 251.

<sup>574</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, տ. 19, գ. 1, Ո. 15, է. 14, ՏՅօրնիկ ձևով, թվ. հրատ. 7, է. 229-230.

<sup>575</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, տ. 18, գ. 2, Ո. 721, է. 236, 713.

<sup>576</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, տ. 19, գ. 1, Ո. 31, է. 30-32, ՏՅօրնիկ ձևով, թվ. հրատ. 7, է. 239-242.

<sup>577</sup> ՄՕՅԻ, օրինակ 2, տ. 19, գ. 1, Ո. 31, է. 30-32, ՏՅօրնիկ ձևով, թվ. հրատ. 7, է. 239-242.

2. Իրանական կառավարությունը պարսավորվելու է ծառայության չիրավիքը օտարերկրացիների՝ առանց Թեհրանում ռուսական և բրիտանական առաքելությունների համաձայնության:

3. Իրանը պետք է Ռուսաստանին փոխատուցեր ռուսական արշավանքի ծախսերը: Պահանջները բավարարելու համար իրանական կառավարությանը տրամադրվում էր 48 ժամ, որից հետո ռուսական զորքը Ռեշտից շարժվելու էր Թեհրան<sup>582</sup>:

Երբ զորքն արդեն Իրանում էր, ռուսներն անցան ավելի կտրուկ գործողությունների: Նոյեմբերի 10-ին դեսպանորդին հրահանգվեց վերականգնել Մամսա օս-Մալթանեի նորակազմ կառավարության<sup>583</sup> հետ շփումները, միայն այն բանի համար, որ վերջինս փոխարինել էր ժանդարմներին կազակներով և պաշտոնապես ներողություն էր խնդրել դեսպանորդից<sup>584</sup>:

Մյասել չտվեցին նաև ռուսական հերթական պահանջները, որոնք կապվեցին Շուսթերի կողմից “Times”-ի նամակը պարսկերենով հրապարակելու և ազգաբնակչության շրջանում տարածելու հետ<sup>585</sup>. «Եթե իրանական ներկայիս կառավարությունը նոր պահանջները կհամարի անընդունելի կամ կհայտարարի անիրագործելի ձայների ընդդիմության պատճառով, ապա Ռուսաստանը ստիպված կլինի զորքը շարժել դեպի Թեհրան: Ռեզեևտին կառաջարկվի լուծարել այմյան կառավարությունը և ձևավորել նորը, որն իր հերթին, նախ և առաջ կլուծարի «այսրիխաբար» գործող մեջլիսը, կանցկացնի նոր օրենքին համապատասխան ընտրություններ, այնուհետև կհեռացնի Շուսթերին և կկատարի ռուսական պահանջները: Իսկ եթե մեջլիսը հրաժարվի ցրվել, ապա կառավարության հրամանով կլուծարվի ուժի միջոցով: Ռեզեևտի հրաժարականի դեպքում կնշանակվի նորը,

<sup>582</sup> Сbornик дин. док. вып. 7, с. 259-260.

<sup>583</sup> Նոյեմբերի 29-ին ռեզեևտի պոլսմամբ Մամսա օս-Մալթանե ձևավորել էր նոր կառավարություն, որում վարչապետի, ներքին գործերի և պաշտպանության նախարարի պաշտոնները զբաղեցրելին բախթիար խաները:

<sup>584</sup> МОЭИ, серия 2, т. 19, ч. 1, N. 71, с. 66-67.

<sup>585</sup> Сbornик дин. док. вып. 7, с. 253.

որի թեկնածությունը նախապես կհամաձայնեցվի անգլիացիների հետ»<sup>586</sup>:

Արևաք ցուցումներ էին, որոնք Ներսատվը տվել էր նոյեմբերի 10-ին և ըստ երևույթին, պահուստային այն տարբերակ էր, որն արդեն արձարծվել էր անգլիական ԱԳՆ հետ քննարկումներում՝ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում Իրանի նկատմամբ կիրառելու նպատակով: Մակայն Ռուսաստանը շտապադրականություն էր դրսևորել և դա մեծապես անհանգստացնում էր Լոնդոնին<sup>587</sup>: Նոյեմբերի 16-ին ռուսական վերջնագիրը, հանձնվեց արտգործնախարար Վուտու օդ-Դուլեյին<sup>588</sup>: Երեք օր անց, թեև Թեհրանում բրիտանական դեսպանորդը իրանական կառավարությանը հորդորեց ընդունել ռուսական պահանջները<sup>589</sup>, սակայն է. Գրեյը կոչ էր անում ռուսներին մեղմել դիրքորոշումը և թույլ չտալ, որ ռուսական զորքը շարժվի դեպի մայրաքաղաք, ինչը կարող էր հանգեցնել Մոհամադ Ալի շահի վերականգնմանը: Հատկապես անհանգստացնում էր իրանական կառավարության կողմից ռուսական արշավանքի ծախսերը փոխատուցելու հետ կապված ռուսական վերջնագրի երրորդ դրույթը, որոնք կարող էին խափանել հարավի անվտանգության ապահովման ծրագիրը, քանի որ իրանական կառավարության տրամադրության սակարդեն չլին մնալու համապատասխան միջոցներ ժանդարմական զորամիավորումներ ստեղծելու համար<sup>590</sup>:

Պատահական չէ, որ Գրեյը փորձել էր իրավիճակի վրա ներազդել Ֆրանսիայում գտնվող Սազոնովի միջոցով, ում նոյեմբերի 24-ին Փարիզում բրիտանական դեսպան Ֆ. Բերթին հանձնել էր Գրեյի

<sup>586</sup> St' u Ներսատվի նոյեմբերի 23-ի Պակկեսի-Դազկլին N 1859 թվագրված հեռագիրը: МОЭИ, серия 2, т. 19, ч. 1, N. 71, с. 66-67.

<sup>587</sup> МОЭИ, серия 2, т. 19, ч. 1, N. 70, с. 68-69.

<sup>588</sup> «Կերջնագրի տեքստը տես՝ աշխատանքի «Հավելված» բաժնում, Հավելված 5: Աղբյուրը՝ Сbornик дин. док. вып. 7, с. 266-267.

<sup>589</sup> Նույն տեղում, էջ 270, 272, МОЭИ, серия 2, т. 19, ч. 1, N. 142, с. 125.

<sup>590</sup> Afary J., The Iranian Constitutional Revolution, էջվ. աշխ., էջ 331, АБИПН, փ «Персидский стол», օտ. 489, а. 577 6, л. 22.

իրանական հարցի մասին 6 կետից կազմված հուշագիրը Փաստաթղթում արձարձվում էին հենարյալ խնդիրները.

1. Իրանում ստեղծված ներկայիս իրավիճակից ելքը այդ երկրում այնպիսի վարչակազմի հաստատումն է, որը հաշվի կհասի Անգլիայի և Ռուսաստանի հաստիք շահերի հետ,

2. Անգլիան իր արժանապատվությունից ցածր կհամարի ճանաչել նախկին շահի վերականգնվելու փաստը,

3. Թեհրանում ռուսական և անգլիական առաքելության ղեկավարներն անհապաղ պետք է համատեղ պայմանավորվածություն ձևաբերեն ֆինանսական խորհրդակցանի թեկնածուի ընտրության հարցում, ում հնարավոր կլինի առաջադրել Շուսթերի փոխարեն,

4. Հենց որ ռուսական պահանջները կընդունվեն Իրանի կողմից, ռուսական և անգլիական կառավարությունները պետք է միասին ըննարկեն նաև համատեղ փոխառության հարցը,

5. Քանի որ Ռուսաստանի կողմից պահանջվող փոխհատուցումը խոչընդոտ կհանդիսանա վերոնշյալ 4-րդ կետի նպատակների իրագործման համար, ապա ռուսական կառավարությունը միջոցներ կգտնի կատենելու փոխհատուցումը վճարելու գործընթացը,

6. Անգլիան վստահ է, որ ռուսական պահանջները բավարարելուց և հյուսիսային Իրանում կայունության հաստատվելուց հետո ռազմական միջոցառումները և իրանական տարածքների զավթումները, որոնք ժամանակավոր բնույթ են կրում, կդադարեցվեն<sup>591</sup>:

Փաստաթղթից պարզ է դառնում, որ անգլիական կողմը ընդհանուր առմամբ չէր էլ միճարկում ռուսական վերջնագիրը, և խոսքը գնում էր Իրանի կողմից այն ընդունելուց հետո երկու պետության դիրքորոշումներում ընդհանուր մտնեցումներ մշակելու մասին:

Ո՛չ Անգլիան, ո՛չ Ռուսաստանը մեծ հաշվով չէին կարող թույլ տալ, որ իրանական խնդիրը բախտորոշ ազդեցություն ունենա միջազգային անպարեզում նրանց համագործակցության վրա, սակայն այլ հարց է, թե որքանով էր Ռուսաստանը պատրաստ իրանական

քաղաքականության իր տեսլականը կապել չափավորների կառավարության հետ, և արդյո՞ք վերջինիս քաղաքական գործիչների ընտրանին պատրաստ է հենարանի վերածվել Ռուսաստանի համար և հանդես գալ երկրում նոր թափ հավաքող ժողովրդավարական շարժումը ճնշելու դիրքերից:

Պատասխան հուշագրում Ա. Ներսիսյանը կրկին հավաստիացրեց բրիտանացիներին, որ Ռուսաստանը ռազմական գործողություններ սկսելով՝ Մոհամադ Ալիին գահին վերականգնելու նպատակ չի հետապնդում և Ղազվինում կենտրոնացած ռուսական ջոկատը 10 օրվա ընթացքում, մինչև դեկտեմբերի 8-ը, չի շարժվի դեպի Թեհրան<sup>592</sup>: Ինչ վերաբերում է Ղազվիկից գորախումբը դուրս բերելուն, ապա, ըստ Ներսիսյանի, դա հնարավոր էր միայն, եթե իրանական կառավարությունը ենթարկվեր ներկայացված պահանջներին և եթե տեղի չունենային նոր միջադեպեր և սադրյալ գործողություններ (ռուսական գործակալների, զորքերի, հաստատությունների վրա հարձակումներ), որոնք ըստ էության անհնար կդարձնեն զորքի տարահանումը<sup>593</sup>:

Սակայն ստեղծված պայմաններում միջադեպերն անխուսափելի էին: Իրանում պայթուեափայտանց իրավիճակի ձևավորմանն առաջին հերթին նպաստում էին ռուս ռազմական և դիվանագիտական ներկայացուցիչների գործողությունները: Այս փուլում ճգնաժամային իրավիճակի պահպանումն անկասկած ձեռնտու էր Ռուսաստանին, որով էլ արդարացվում էր ռուսական ռազմական ներկայությունը: Եթե Թեհրանում Պակլևսկի-Կոզլյը ռուսական շահերը փորձում էր պաշտպանել անգո-ռուսական համագործակցության շրջանակներում, ապա հյուպատոսների մեծ մասը գտնում էր, որ Ռուսաստանն Իրանում պետք է աներկրայորեն հանդես գա սեփական շահերը պաշտպանելու դիրքերից և հույսը դնի միայն իր ուժերի վրա: Թավրիզում՝ Ա. Միլլերը, Ռեշտում՝ Ն. Նելրաստը, Մեշեդում՝ Ա. Դաբիժան այն գլխավոր հյուպատոսներից էին, ովքեր հատկապես այդքի ընկալն իրենց կայսերապաշտական վարքագծով:

<sup>591</sup> АВІРІИ. ф. «Переводный стол», он. 489, д. 577 б, л. 38.

<sup>592</sup> Сборник дип. док. вып. 7, с. 307-308, МОЭИ. серия 2, т. 19, ч. 1, N. 189, с. 175-176.

<sup>593</sup> Сборник дип. док. вып. 7, с. 308.

Նոյեմբերի 18-ին մեջլիսը հասարակական ճնշումների տակ՝ Ապերի մեծամասնությամբ մերժեց այն՝ իր անվստահությունը հայտնելով նաև Սամառ օս-Սալթանեի կառավարությանը<sup>594</sup>, որից հետո ռուսական զորքը Ռեշտից շարժվեց դեպի Ղազվին<sup>595</sup>: Ռուսական զորքերի ներխուժումը երկրում առաջ բերեց արմատական տրամադրությունների և զինված դիմադրության ուժեղացում, որն էլ գլխավորեցին ձախ ուժերը: Այս ընթացքում ընդդիմությունը, հասկնալիս ճնշումները, նպատակ ունենալով ուժեղացնել կառավարության վրա ճնշումները, ամենուրեք կազմակերպում էին բողոքի հանրահավաքներ: Թեհրանում՝ մեջլիսի առաջ, հրապարակներում և մզկիթներում ծայր առան բողոքի բազմամարդ ցույցեր, որոնց մասնակցում էին հասարակության գրեթե բոլոր խավերի ներկայացուցիչները<sup>596</sup>: Ռուսական զորքին դիմադրություն ցույց տալու նպատակով կազմակերպվում էին ինքնապաշտպանական ֆիդայական խմբեր<sup>597</sup>:

Ցնցումներից զերծ չմնացին նաև նահանգները: Ստեղծված իրավիճակում հյուսիսային նահանգներում ազգային ազատական ուժերի հակառուսական քարոզչությունը հասավ իր գագաթնակետին: Այն երբեմն վերածվում էր բացահայտ զինված ելույթների: Կովկասյան հեղափոխականներով համարված տեղական ֆիդայական ջոկատների՝ Ռուսաստանի դեմ կազմակերպած դիմադրության շարժումը, Բրանում ծառայող դիվանագիտական գործիչների տեսակետով, պահանջում էր կտրուկ հակահարված:

1911 թ. վերջին ստեղծվել էր մի իրավիճակ, երբ Բրանում ծառայող գրեթե բոլոր հյուսիսայինները, առանց դեպատերոջի միջնորդության, Պետերբուրգից պահանջում էին լուրջ միջոցառումներ ձեռնարկել և ակտիվացնել ռազմական միջամտությունը<sup>598</sup>: Դրան

<sup>594</sup> احمد كسروي، تاريخ هجده ساله از بايجان، ص. ۲۱۹-۲۲۲

<sup>595</sup> Сборник дин. док. вып. 7, с. 267-268, АВПРИ, ф. «Персидский стол», оп. 489, д. 5786, л. 184.

<sup>596</sup> احمد كسروي، تاريخ هجده ساله از بايجان، ص. ۲۲۵-۲۲۶

<sup>597</sup> Сборник дин. док. вып. 7, с. 273, 277-278, 288-290, Afary J., The Iranian Constitutional Revolution, изд. աշխ., էջ 332:

<sup>598</sup> Сборник дин. док. вып. 7, с. 196, 201, 210-211, 283, 285, 300, 307, АВПРИ, ф. «Персидский стол», оп. 489, д. 5776, л. 24-25, 31-32.

նպաստում էր նաև այն, որ թուրքական զորքերի բռնազավթումների և թուրքական գործակալության մղած պահեստապահության քարոզչության արդյունքում՝ երիտթուրքերին հաջողվել էր միաժամանակ իրանական ազգայնական շրջանների ուշադրությունը շեղել բացառապես Ռուսաստանի կողմը և բոլորքն այստեղ տիրող հակառուսական տրամադրությունները<sup>599</sup>:

Թավրիզում դեկտեմբերի սկզբին տեղ գտած մի շարք հանրահավաքներից հետո փակվել էին բազարները: Ֆիդայական ջոկատները, որոնցում հաշվառվում էր 3000 մարտիկ, նախապատրաստվում էին ընդդիմանալ ռուսներին: Գրավելով Թավրիզի միջնաբերդը՝ ֆիդայիներն այստեղ տեղակայված թեղանոթները ուղղել էին Բաղեշենայ ալզու ուղղությամբ, որտեղ գտնվում էր ռուսական զորախումբը<sup>600</sup>: Ըստ հյուսիստուս Ա. Միլլերի՝ Թավրիզում գտնվող 250 հոգանոց ռուսական զորաջոկատը ի վիճակի չէր դիմագրավելու մի քանի անգամ գերազանցող ֆիդայիներին, որոնց օգնում էին հայերը: Դեկտեմբերի 7-ին և 8-ին ռուսական զորամասերը, հյուսիսատույնները և հիմնարկությունները զինված հարձակումների ենթարկվեցին ֆիդայիների կողմից: Ֆիդայական ջոկատների և ցարական զորքերի միջև զինված բախումներ տեղի ունեցան, որոնք այնուհետև վերաճեցին տասնորյա լայնածավալ մարտական գործողությունների<sup>601</sup>:

Կովկասի փոխարքայի հրամանով դեկտեմբերի 4-ից սկսած՝ Թավրիզի ուղարկվեցին նոր զորաջոկատներ<sup>602</sup>: Ա. Մազունցիի դեկտեմբերի 10-ին հետևյալ ցուցումներն էր տվել Միլլերին: Թավրիզի հյուսիսատար իրավունք էր ստանում.

1. ձերբակալել ռուսական զորքերի վրա հարձակում գործած ֆիդայիներին և տեղում կազմակերպել ռազմադաշտային դատարաններ.

2. ամբողջությամբ զինաթափել հեղափոխականներին,

<sup>599</sup> Բայրուլյան Վ., Թուրք-իրանական հարաբերությունները, Եզվ. աշխ., էջ 254-270; 291-297, Сборник дин. док. вып. 7, с. 284:

<sup>600</sup> Сборник дин. док. вып. 7, с. 280.

<sup>601</sup> James D. Clark, Եզվ. աշխ., էջ 244-246, «۲۳» - ۲۴, ۲۵, ۲۶, ۲۲۲

<sup>602</sup> Նույն տեղում, էջ 274, 301, 327, 349, 352:

3. գրավել միջնաբերդը և ոչնչացնել զինանոցները, պաշտպանական հենակետերը, որտեղից կարող էր կազմակերպվել ինքնապաշտպանություն:

Հյուպատոսին թույլ էր տրվում նաև ռուսական զորքի հրամանատարին հետ համանախ կշակել և կիրառել այնպիսի պատժամիջոցներ, որոնք նպատակահարմար կհամարվեին, «քանի որ թափված ռուսական արյունը պահանջում էր ամենադժոխքի վրեժը, որը լավ դաս պետք է հանդիսանար ապակայուն տարրերի համար»<sup>603</sup>: Լրացուցիչ զորքերի ժամանումից անմիջապես հետո Կովկասի փոխարքայ Վորոնցով-Ղաշկովը հրահանակեց ուժբակոծել Թավրիզի միջնաբերդը, կազմակերպել ռազմադաշտային դատարաններ, որոնք կպատժեն բոլոր նրանց, ովքեր կազմակերպել էին ռուսական զորամիավորումների վրա հարձակումները և անարգել էին վիրավոր ռուս զինվորների մարմինները. «Թավրիզում մեր զորքի վրա հարձակումը, վիրավորների նկատմամբ կոտորածները՝ պահանջում են ամենադժոխքի վրեժխնդրությունը»: Դատավճիռները պետք է ի կատար անվերջ անմիջապես: Ընդ որում մեղավորները պետք է պատժվեն հենց Իրանում և ոչ մի դեպքում չուղարկվեն Կովկաս, ուր բանտերը, առանց այդ էլ լեփիլեցուն էին քաղբանտարկյալներով, և նրանց նկատմամբ դատավարությունները կարող էին երկարաձգվել և անհամեմատ մեղմանալ»<sup>604</sup>:

Կովկասիև ուղղված մեկ այլ հետազոտում փոխարքան նշում էր. «Պարսիկների համառությունը բացատրվում է նրանց շարքերում կովկասյան և իրանահպատակ հայերի ներկայությամբ, որոնք էլ ղեկավարում են մարտերը»<sup>605</sup>:

Միաժամանակ ռուսական զորքերի և ֆիդայական ջոկատների միջև բախումներ էին տեղի ունենում Ռեշտում և Էնգելիում<sup>606</sup>: Դեկտեմբերի 4-ին Ռեշտում և Էնգելիում հայտարարվել էր համընդհանուր գործադուլ, Էնգելիում չէին բեռնաթափվում ռուսական առևտրական նավերը: Երկու օր հետո Էնգելիում ֆիդայիների կողմից հարձակումների էին ենթարկվել «Կրասնոդոլսկ» ռազմանավը և Լիանտ-

գովի ձկնաբոլորանաբերական հիմնարկությունը: Միջև ռուսական լրացուցիչ զորամիավորումները կծամանեին Ռեշտ<sup>607</sup>, Մազոսովը, Թավրիզի հյուպատոս Ա. Միլերին տրված ցուցումների համապատասխան, հյուպատոս Ն. Նեկրասովին հրահանգել էր ձերբակալել դիմադրության շարժման կազմակերպիչներին<sup>608</sup>: Ճգնաժամային իրավիճակ էր ձևավորվում նաև Մեշեդում<sup>609</sup>:

Ռուսական առաքելությանը հանձնված վերջնագիրը մերժելու մասին իրանական նոտայում նշվում էր, որ Իրանը պատրաստ է Ռուսաստանի հետ բանակցել վերջինիս կողմից առաջադրված պահանջների շուրջ: Մակայն ռուսական դիրքորոշումը մեղմելու իրանական կառավարության փորձերն անհաջողության մատակցվեցին: Ուշագրավ է, որ միաժամանակ, դեռևս նոյեմբերի 24-ին, Պակևսկի-Կոզլովի հետ իր հանդիպման ժամանակ, Իրանին նոր փոխառություն տրամադրելու մասին հարց բարձրացնելով՝ արտգործնախարարն ասել էր, որ եթե մեջլիսն այնուամենայնիվ չընդունի ռուսական վերջնագիրը, ապա կառավարությունը կանց չի առնի այն լուծարելու որոշման հարցում: Երկու օր անց նույնը փաստել էր նաև Իրան վերադարձած Մարդար Ասաադը<sup>610</sup>:

Ռուսների հետ ձախողված բանակցությունների արդյունքում կառավարությունն ի վերջո, դեկտեմբերի 5-ին մեջլիսին առաջարկեց երկու այլընտրանք. լայն լիազորություններ տրամադրել կամ կառավարությանը, կամ մեջլիսի կողմից ընտրված հատուկ հանձնախմբին, որը կառավարության հետ համագործակցելով՝ ռեգենտի ղեկավարությանը կլուծի ռուս-իրանական հակասությունները: Մակայն ձախերի կողմից սուր ընդդիմության հանդիպելով՝ ձայների մեծամասնությամբ այն մերժվեց: Միայն երեք օր անց դեկտեմբերի 8-ին, երբ հայտնի դարձավ Ղազվինից դեպի մայրաքաղաք ռուսական զորքի շարժվելու և Թավրիզում, Ռեշտում ծավալվող գործընթացների արդ-

<sup>603</sup> Сборник дин. док. вып. 7, с. 351-352.

<sup>604</sup> МОЭН, серия 2, т. 19, ч. 1, N. 70, с. 239, 393.

<sup>605</sup> Сборник дин. док. вып. 7, с. 357.

<sup>606</sup> Сборник дин. док. вып. 7, с. 312, 318, 334.

<sup>607</sup> Ռեշտի և Էնգելիի ռուսական զորամասում այդ ժամանակ կար կազմակերպիչ հարյուրյակ և «Կրասնավոլոսկ» ռազմանավը: МОЭН, серия 2, т. 19, ч. 1, N. 264, с. 242.

<sup>608</sup> Сборник дин. док. вып. 7, с. 338.

<sup>609</sup> Նույն տեղում, էջ 313, 392-393:

<sup>610</sup> Նույն տեղում, էջ 306:

յունքում ձեռքբերվածների, օրեցօր սովորացող գոների թվերի մասին՝ պատգամավորները համաձայնվեցին հինգ հոգանոց հանձնախումբ ձևավորել, որն էլ կատավարության ու ռեզենտի ճշտումների տակ որոշում կայացրեց ընդունել ռուսական վերջնագիրը<sup>61</sup>:

Դեկտեմբերի 11-ին հաջորդեց մեղշիսը ցրելու և նոր ընտրություններ նշանակելու մասին Նասեր օլ-Մոլլիի հրամանագիրը: Լույն օրը Եփրեմ խանի ոստիկանական և բախթիարական ուժերի կողմից բռնի կերպով ցրվեց մեղշիսը և Թեհրանում ռուսական դեսպանությունը հանձնվեց իրանական կատավարության կողմից ռուսական վերջնագրին ընդունելու մասին նոտան<sup>62</sup>: Այսպիսով, իրանական կատավարությունը դադարեցրեց Շուսթերի գործունեությունն Իրանում<sup>63</sup>:

Չնայած սրան՝ Ռուսաստանն ընդլայնեց իր ռազմական ներկայությունն Իրանում: Դեկտեմբերի 13-ին կայացած Հատուկ խորհրդակցության ընթացքում ցարական կատավարության որոշմամբ.

1. Երևանից Թավրիզ ուղարկվեց լրացուցիչ երեք հրաձգային գունդ և 5 կազակական հարյուրակ, 3 մարտից՝ յուրաքանչյուրում չորսական թեղանոթ, հարվածային մարտկոցի ջոկ և ակեսագերծող կես վաշտ,

2. Կովկասից, Էնզելիի, Ռեշահ և Ղազվինի ուղղությամբ, ուղարկվեց 4000 զինվոր,

3. Էնզելի ուղարկվեցին «Ադրասան» և «Նարս» հաճանավերը<sup>64</sup>:

Հյուսիսային Իրանում ռուսական ներկայացուցիչները անտեսելով տեղական իշխանություններին՝ իրենց վրա վերցրին վարչական և դատական գործառնությունները, հատկապես՝ Ասրաբատակում, Գիլյանում և Նորասանում: Թավրիզ ռուսական լրացուցիչ զորամիավորումների ժամանումից հետո ձեռքբերվեցին բազմաթիվ

<sup>61</sup> Իրանական կատավարության պատասխան նոտայի տեքստը տես՝ աշխատանքի «Հավելված» բաժնում, Հավելված 6: Ալլոյրը՝ Շօբորուկ ընդ. ժոկ. ցույց. 7, գ. 381-382:

<sup>62</sup> Շօբորուկ ընդ. ժոկ. ցույց. 7, գ. 371-383:

<sup>63</sup> James D. Clark, նշվ. աշխ., էջ 244-246, «تاريخ هجده ساله ازبيلجان», ص. ۲۵۲

<sup>64</sup> МОИ, серия 2, т. 19, к. 1, N. 264, с. 242-243.

հեղափոխականներ ու ֆիդայիներ, ովքեր ռուսական ռազմադաշտային դատարանների որոշմամբ կարանավորվեցին և կախաղան բարձրացվեցին<sup>65</sup>: Այդ դատավճիռների համաձայն կախաղան հանվեց ավելի քան քսան մարդ, այդ թվում հոգեուրականները Միլլիկը երեսուցուրում էր. «Ազգաբնակչության շրջանում այդ պատժամիջոցները լավագույն ազդեցություն են գործում և նշանակալիորեն հանդուսաբերել են մեր ռազմական անհանկարգի ցատուկը, որն առաջացել էր ֆիդայիների կողմից կատանքների ենթարկված ռուս զինվորների և կազակների տեսից»<sup>66</sup>: Թավրիզի բախումների ժամանակ գնվեց 40 և վիրավորվեցին շուրջ 50 ռուս զինծառայող<sup>67</sup>:

Նշանակալի մեծ թիվ կազմեցին իրանական կողմի կորուստները՝ հասնելով մի քանի հարյուրի, այդ թվում նաև խաղաղ բնակչությունից: Նրանցից շատերն անգամ անմասն մնալով վերջին օրագրումներից՝ պատիժ կրեցին սահմանադրական շարժման սկզբնական փուլում իրենց մասնակցության համար<sup>68</sup>:

Ռեշտում ռուսական ներկայացուցիչները ևս պատմիչ գործողություններ իրականացին և ձեռքբերվեցին բազմաթիվ հեղափոխականներ<sup>69</sup>: Ռեշտում տեղի ունեցած բախումների ընթացքում սպանվեց 43 և ավելի քան 50 մարդ վիրավորվեց<sup>70</sup>: Մ. Պետերբուրգում բրիտանական դեսպան Ջ. Բյուկենեն իր հուշերում գրում է. «Ռուսական հյուպատոսները մշտապես հրահրում էին անկարգություններ,

<sup>65</sup> James D. Clark, նշվ. աշխ., էջ 248-249:

<sup>66</sup> Շօբորուկ ընդ. ժոկ. ցույց. 7, գ. 406-407:

<sup>67</sup> Թավրիզի ռազմական գործողությունների մասին մանրամասն տես՝ Стрелянов (Катабухов) П., նշվ. աշխ., էջ 35-40, Շօբորուկ ընդ. ժոկ. ցույց. 7, գ. 410-425, James D. Clark, նշվ. աշխ., էջ 244-246, ۲۹۱-۲۵۲, ۲۵۰-۲۲۱, ص. ۲۵۲

<sup>68</sup> Թավրիզում և Գիլյանում ռուսական իշխանությունների կողմից պատմիչ ենթարկված հեղափոխականների շարքերում կային նաև հայեր: 1912 թ. հունվարին կախաղան էր հանվել Թավրիզի հեղափոխների առաջնորդ Պետրոս Մելիք Սողոմոնյանը: Նրանցից շատերը ձեռքբերվեցին. արտովեցին կամ փախուստի դիմեցին: Afary J., The Iranian Constitutional Revolution, էջ 337-338; Berberian H., նշվ. աշխ., էջ 155: Սափունյի պեղումներ՝ Թավրիզից Խոյ անցած մի խումբ հայեր Խոյանյան պետ է ձեռքբերվել և պատիժ կրել: Շօբորուկ ընդ. ժոկ. ցույց. 7, գ. 404:

<sup>69</sup> МОИ, серия 2, т. 19, к. 1, N. 245, с. 235-236.

<sup>70</sup> Abrahamian Er., Iran between Two Revolutions, նշվ. աշխ., էջ 109-110:

որպեսզի արդարացնեն իրենց միջամտությունը: Արտգործնախարարություն ուղղված գեղույցներում նրանք այնքան հաջող էին աղավաղում այդ միջադեպերի ծագումն ու բնույթը, որ Մազոնովն անգամ սպառնում էր, թե Ռուսաստանն իր վրա կվերցնի Ասորպատական կառավարումը, եթե իրանական կառավարությունն ի վիճակի չլինի կարգուկանոն հաստատել թավրիզում:<sup>621</sup>

Ռուսական կառավարության մարտավարությունը փորձ էր ստիպել Թեհրանին երկուստեք հավասարակշռել քաղաքականությունը և հաշվի նստել նաև ռուսական շահերի հետ: Այն նպատակ ուներ նաև վերջնականապես ճնշել հեղափոխական օջախները: Վերջնական կազատակին հասնելու համար ռուսական կառավարությունը կրկին խաղարկեց նախկին շահ՝ Մոհամմադ Ալիին իշխանության վերադարձնելու խաղաքարտը: Երբ հեղափոխական հիմնական օջախներն Իրանում ճնշվեցին, գլուխ բարձրացին Մոհոմմադ Ալիի հետադիմական ուժերը: Դեռևս աշնանը պարտություն կրելով՝ նախկին շահը նահանջել էր Գորգան և իր կողմնակիցների հետ շարունակում էր մնալ իրանական տարածքում՝ արժանանալով ռուսական հյուպատոսների հովանավորությանը:<sup>622</sup>

Օգտվելով Թավրիզում ռուսական զորքի ներկայությունից Միլլերի թողտվությամբ, ղեկնումբերի 18-ին իր գործով Թավրիզ վերադարձավ Մոհամմադ Ալիի կողմնակից Շոջա օդ-Դոուլեն, ում ռուսական կողմը նպատակ էր հետապնդում կարգել որպես Ասորպատականի նահանգապետ<sup>623</sup>: Նմանօրինակ իրադարձությունների թվին էր պատկանում նաև 1912 թ. հունվար-փետրվար ամսիներին Խորասանում ծավալված ճգնաժամը: Դեռևս ղեկնումբերի սկզբին կանխատեսելով հակառուսական ելույթների բռնկումներ Մեշհեդի գլխավոր հյուպատոս Ա. Դաբիժայի պնդմամբ, Թուրքեստանի գեներալ-նահանգապետ Ա. Սամանովի հրամանով՝ Խորասան և Քուչան էին ուղարկվել լրացուցիչ ռազմական միավորներ<sup>624</sup>: Մակայն նա-

հանգում դրությունն ապակայունացավ ոչ թե հեղափոխականների, այլ Մոհամմադ Ալիի կողմնակիցների գործողությունների հետևանքով, որոնց աջակցում էին ռուսական ներկայացուցիչները: Փետրվարին, Ասորպաղում նախկին շահի բարձրացրած ըմբոստությունն հետ միաժամանակ, Մեշհեդում ապստամբեցին նրան սատարող ուժերը՝ տիրապետություն հաստատելով քաղաք այն հատվածում, որտեղ գտնվում էր շիական գլխավոր սրբավայրերից մեկը՝ ութերորդ իմամ Ռեզայի դամբարանը: Հունվարի վերջին հյուպատոսը տեղեկացնում էր Ա. Պետերբուրգին, որ տեղական բնակչության 90 %-ից ավելին պահանջում են վերադարձնել նախկին շահին և անհամբերությամբ սպասում են Ռուսաստանի օգնությանը<sup>625</sup>:

Միաժամանակ Իրանի հարավ-արևմտյան շրջաններում ապստամբություն բարձրացրեց նաև իշխանագուև Սալար օդ-Դոուլեն, ում կարճ ժամանակամիջոցում հաջողվեց իրեն ենթարկել Քերմանշահի, Քրդստանի և Լուրիստանի նահանգները<sup>626</sup>:

Հունվարի 22-ին և 24-ին Մազոնովին հանձնված բրիտանական հուշագրերում Մեշհեդի ռուսական հյուպատոսության գործակալները մեղադրվեցին Մոհամմադ Ալիի օգտին քարոզություն իրականացնելու մեջ և բրիտանական կողմը ռուսական կառավարության խիստ ուշադրություն էր հրավիրում գլխավոր հյուպատոսի գործունեության վրա<sup>627</sup>:

Իր համար ոչ բարենպաստ զարգացումները կանխելու նպատակով, Լոնդոնը կտրուկ ուժեղացրեց իր ճնշումները Պետերբուրգի վրա<sup>628</sup>, ինչի արդյունքում ռուսական ԱԳՆ-ը չցանկանալով իսլամ վտանգել Մեծ Բրիտանիայի հետ հարաբերությունները՝ սկսեց զսպվածություն դրսևորել: Այն զերծ մնաց նախկին շահի հետագա գործունեությունը խրախուսելուց: Պետերբուրգը պատրաստ էր քաղաքական հրապարակից հեռացնել Մոհամմադ Ալիին, սակայն

<sup>621</sup> G. Buchanan, հշվ. աշխ., էջ 101:

<sup>622</sup> ۱۹۱۲-۱۹۱۳. تاریخ هیجده ساله ازباجیان، ص ۳۱۸، примечание 3. МОИИ, серия 2, т. 19, ч. 1, N. 245, с. 318, примечание 3.

<sup>623</sup> Сборник дин. док. вып. 7, с. 395-396.

<sup>624</sup> Сборник дин. док. вып. 7, с. 313, 319, 335-336.

<sup>625</sup> Jennifer Siegel (Foreward by Paul Kennedy), Endgame: Britain, Russia and the Final Struggle for Central Asia, L. & N. York, 2002, p. 122.

<sup>626</sup> Քաղաքական և Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914 թթ.), հշվ. աշխ., էջ 305-307:

<sup>627</sup> МОИИ, серия 2, т. 19, ч. 1, N. 245, с. 81-82.

<sup>628</sup> Jennifer Siegel, հշվ. աշխ., էջ 121-123:

ծամանակավորապես և նախապայմանով. «Քանի որ ներկայումս Ռուսաստանը նոր փորձ է ձեռնարկում իրանական գործող կառավարության հետ ամուր, բարեկամական հարաբերությունների հաստատման ուղղությամբ և եթե վերջինս ապագայում արժանա-հավատություն չդրստորի, ապա տվյալ հարցը կրկին կհայտնվի հե-ղոնի հետ քննարկումների ասանցքում»<sup>629</sup>.

Հունվարի 16-ին Ս. Պետերբուրգում բրիտանական դեսպանին հանձնված ռուսական նոտայում առաջարկվում էր, որ իրանական կառավարությունն անմիջական բանակցությունների մեջ մտնի Մոհամմադ Ալիի հետ, որոնցում կարող էր միջնորդ հանդիսանալ Աստրաբադի ռուսական հյուպատոսը: Իրանին համատեղ փոխա-ռություն տրամադրելու դիմաց՝ նրա կառավարությունը պետք է վերջնականապես լուծարեր ֆիդայական միավորները և ռազմական ուժերում բարենորոգումներ անցկացներ՝ Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի պահանջների համաձայն: Ռուսական կառավարու-թյունը պահանջում էր նաև պահպանել Ղաջարական արքայատոհմը, չմիջամտել իր ազդեցության գոտու գործերին, տրամադրել նոր մե-նաշնորհներ և կարգավորել հողատարածքների սեփականաշնորհ-ման հարցը (իրանական օրենքներով արգելվում էր օտարիպատակ-ների հողատարածքներ սեփականաշնորհել)<sup>630</sup>:

Ձ. Բյուկենեևի հետ իր առանձնագրույցում Սագոնովը փաստել էր, որ. «Անգլո-ռուսական համաձայնագիրը մշտապես հսկողնացել է նրա քաղաքականության ալֆան և օմեգան» և, հակառակ ռուսական հասարակական կարծիքի, այն պահպանելու համար նա կանգնե-րել է ռուսական զորքերի շարժը դեպի Թեհրան, խաղաղ հարաբերու-թյուններ է հաստատել իրանական կառավարության հետ, համա-ձայնվել է համատեղ փոխառություն տրամադրել վերջինիս, զոհարե-

<sup>629</sup> МОЭИ, серия 2, т. 19, в. 1, N. 392, с. 43-44.

<sup>630</sup> МОЭИ, серия 2, т. 19, в. 1, N. 398, с. 54-56. Jennifer Siegel, *ibid.*, աշխ., էջ 124:

րել է Մոհամմադ Ալիին. գործնականում արել այն ամենը, ինչ խնդ-րել է անգլիական կառավարությունը»<sup>631</sup>:

Փետրվարի 5-ին Թեհրանում ռուսական և բրիտանական դես-պատությունները Վոստոլ օդ-Դոուլեյիս հանձնեցին համատեղ նոտա, որում իրանական կառավարությանը համատեղ վարկ<sup>632</sup> տրամադ-րվում դիմաց՝ տերություններն առաջադրեցին հետևյալ պահանջները.

1. իրանական կառավարությունն իր քաղաքականությունը պետք է համապատասխանեցնի 1907 թ. անգլո-ռուսական համա-ձայնագրին:

2. Մոհամմադ Ալիի և Սալար օդ-Դոուլեյիս կողմից Իրանը լրե-լուց հետո, այն կլուծարի ֆիդայական և անկանոն զորքերը:

3. Երկու առաքելությունների հետ կցենարիի ոչ մեծաքանակ մարտունակ բանակ կազմակերպելու մասին նախագիծ:

4. Թոշակ կիջանակի Մոհամմադ Ալիին և համաներում կշնորհի նրա կողմնակիցներին»<sup>633</sup>:

Մարտի 7-ի նոտայով իրանական կառավարությունը ստի-պված էր պաշտոնապես ընդունել անգլո-ռուսական պահանջները, որով փաստացի ճանաչեց 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագիրը<sup>634</sup>:

Սակայն մինչ այդ, փետրվարին, երբ նախկին շահը լրեց Իրանը<sup>635</sup>, նրա կողմնակիցները հրաժարվեցին գեները վայր դնել: Այս իրո-դությունը Մեծ Բրիտանիայի և իրանական կառավարությունների հետ ձեռք բերված վերջին պայմանավորվածություններից հետո սկսեց խանգարել ցարական կառավարությանը: Վերանայելով խաղաքա-րտերը՝ Պետերբուրգը անմիջական մասնակցությունը բերեց Մոհամմադ Ալիի կողմնակիցների դիմադրությունը ճնշելու գործում՝ կանգ չառ-

<sup>631</sup> G. Buchanan, *ibid.*, աշխ., էջ 110-111:

<sup>632</sup> Չտրամադրելով խոշոր փոխառություններ՝ վերոնշյալ տերությունները, ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտ քաղաքական լուրջ զիջումների, այդ թվում նաև ներառությամբ և այլ կարգի մենաշնորհներ տրամադրելու դիմաց իրանական կառավարությանն էին հատկացնում տարատեսակ վարկեր և կանխավճարներ:

<sup>633</sup> МОЭИ, серия 2, т. 19, в. 2, с. 155-156.

<sup>634</sup> МОЭИ, серия 2, т. 19, в. 2, с. 304-307.

<sup>635</sup> Ames C., *ibid.*, աշխ., էջ 70:

նելով անգամ շիակն օրհնելով դարերով ամրագրված բնտի իրավունքը խախտելու փաստի առաջ: Մագոնովը պահանջեց, որ Ա. Դարիժան անգլիական հյուպատոս Մայքսի հետ համատեղ կանխի Մոհամմադ Ալիի օգտին քարոզչությունը և հասնի երան, որ իմանա՞նք Ռեզայի դամբարան բնտ նստածները դուրս բերվեն: Մակայն մարտի 11-ին, երբ նահանգի կառավարման մարմինները հայտարարեցին, որ սեփական միջոցներով չեն կարող կարգավանտ հաստատել, հյուպատոսը իրավիճակը վերահսկողության տակ առնելու պահանջով՝ դիմեց ռուսական զորքերի հրամանատարին: Անարյունքում, բանակցություններից հետո մարտի 18-ին հյուպատոսի հրամանով դամբարանը շրջապատվեց ռուսական զորքերի կողմից: Համոզված լինելով, որ ոչ ոք չի հանդիսի խախտել ավանդույթը, ըմբոստացածները հրաժարվեցին լքել այն: Ի պատասխան՝ ռուսական հրետանին նախկինում անհրաժեշտ էր արձակել, որպեսզի նրանք կարողանան անսանձ կերպով ներխուժել ներս՝ բազմաթիվ զոհերի գնով ճնշեցին դիմադրությունը<sup>66</sup>: Վնասված դամբարանը, կողոպտված սգկիթը և մարդկային կորուստները ճնշող տպավորություն և անջնջելի հետք են թողել իրանցիների հիշողությունում:

Առաջին աշխարհամարտի նախաշեմին Իրանում ռուս-բրիտանական մրցակցությունը չնեղմացավ: Հակառակը՝ յուրաքանչյուրը փորձեց ամրապնդել սեփական գերակայությունը և միաժամանակ հակազդել Իրանում գերմանական աճող ներգրավվածությանը: Իրանական վարչակարգի նկատմամբ շարունակում էր կիրառվել սպառնալիքների և ճնշումների քաղաքականությունը՝ տարատեսակ պայմանագրերի, սենաշնորհային իրավունքների ձեռքբերման նպատակով<sup>67</sup>:

Իրենց ձեռքում կենտրոնացնելով նաև քաղաքացիական վարչարարության գործառնությունները՝ բրիտանացի պաշտոնյաները հարավում, իսկ ռուսները հյուսիսում հովանավորության տակ արձնելով

տեղական ավատական հեղինակություններին կամ ցեղապետերին՝ ուղղակիորեն խրախուսում էին երանց կենտրոնախույս ձգտումները: Ռուսական իշխանությունները Հաշվավարկային բանկի միջոցով, հյուսիսային Իրանում շարունակեցին լայնարձակ հողատարածքների մասսայական ձեռք բերման գործընթացը, որոնք տրամադրվում էին ռուսաձայնակներին<sup>68</sup>:

Ռուսները հյուսիսում խթանեցին հողատարածքների լայնածավալ ձեռք բերման գործընթաց՝ խրախուսելով սահմանակից նահանգներում ռուսաձայնակների վերաբնակեցումը, ինչը այդ տարածքի տնտեսական և քաղաքական յուրացման նպատակ էր հետապնդում և հյուսիսիրանական շրջանների էթնիկ դիմագիծը փոխելու հստակ քաղաքականություն էր:

Առաջին Աշխարհամարտից առաջ և պատերազմի տարիներին Իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամն ավելի խորացավ: Խայկ համաձայնության և Եռյակ դաշինքի երկրների համար այդ պետության աշխարհաքաղաքական դերակատարումը և նավթային հարուստ պաշարներով ընդերքը էլ ավելի կարևորվեց: Իրանի տարածքը ռազմակալած բրիտանական և հատկապես, ռուսական զորքերը մինչև Առաջին աշխարհամարտ և պատերազմի ընթացքում դուրս չբերվեցին չնայած պատերազմում Իրանի հայտարարված չեզոքությանը: Նման պայմաններում Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Գերմանիան և Օսմանյան կայսրությունը հնարավորություն ստացան ոչ միայն Իրան գործուղել սեփական գաղտնի գործակալներ և կանոնավոր գործախաղորդումներ, այլև հստակ ռազմաքաղաքական ծրագրեր իրականացնելու նպատակով՝ տեղական բնակչությունից կազմավորեցին աշխարհագրային չոկատներ:

1914 թ. հունիսի սկզբին բրիտանական նավատորմի՝ հեղուկ վառելիքի անցնելու կապակցությամբ՝ ծավային նախարարությունը ձեռք բերեց Անգլո-պարսկական (1935 թ.-ից ԱՐՆՀ-ի) նավթային ընկերության բաժնետոմսերի 51 % -ը: Դաշտոնապես այդ միջոցառումը ռուսական կառավարությունը դժվարությամբ կարող էր բողոքարկել.

<sup>66</sup> МОСМ, серия 2, т. 19, ч. 2, с. 367-362, Abrahamsian Er., Iran between Two Revolutions, էջվ. աշխ., էջ 110, Jennifer Siegel, էջվ. աշխ., էջ 126-127:

<sup>67</sup> АВІРІА, ф. «Персидский стол» Б. ош. 489, л. 592 б, т. 30-33, 37-38, 48-49.

<sup>68</sup> Նույն տեղում:

քանի որ ընկերությունը կազմավորվել էր 1907 թ. համաձայնագրից մի քանի տարի առաջ, հետևաբար նրա գործունեությունը համաձայնագրով չէր կարգավորվում: Սակայն, փաստացի բաժնետոմսերի գնումը լուրջ խոչընդոտներ էր հարուցում ռուսական շահերին, քանի որ հնարավորություն էր ընձեռում բրիտանական կառավարությանը, շրջանցելով գործող համաձայնագիրը, ոչ միայն վերահսկել նավթի հանույթը հյուսիսային շրջաններում և չեզոք գոտում, այլև նվազեցնում էր Էրան ռուսական նավթամթերքների արտահանման ծավալները:

Պատերազմը բռնկվելու հետ մեկտեղ՝ բրիտանական կառավարությունը, ֆրանսիական դիվանագիտության ակտիվ աջակցությամբ, մեծ շահագրգռվածություն սկսեց դրսևորել 1907 թ. համաձայնագրի վերանայման հարցում, որով Ռուսաստանը չեզոք գոտին կձանաչեր որպես բրիտանական ազդեցության գոտի: Անգլո-ռուսական բանակցություններն ավարտվեցին 1915 թ. մարտի 20-ին, և ձևոր բերված համաձայնությամբ՝ չեզոք գոտին, բացառությամբ Մպահան և Յազդ քաղաքների, անցավ բրիտանական ազդեցության տակ: Փոխարենը՝ Ռուսաստանին, պատերազմի բարեհաջող ավարտից հետո, իրավունք էր տրվելու իր վերահսկողությունը սահմանել սևծովյան նեղուցների և Կ.Պոլսի վրա: Սակայն, Ռուսական կայսրության «պատմական» այս ծրագրերին վիճակված չէր իրականություն դառնալ:

## ՎԵՐՋԱԲԱՆ

XIX դարում Կովկասի և Կենտրոնական Ասիայի միակցումով Ռուսական կայսրությունը դեպի Միջին և Մերձավոր Արևելքի երկրներ առաջխաղաղման լայն հնարավորություն ստացավ: Իսլամում գերակայություն հաստատելու Ռուսաստանի հավակնությունները բախվեցին նրա վաղեմի մրցակից Մեծ Բրիտանիայի հակազդեցությանը՝ վերածելով աշխարհաքաղաքական լուրջ դիմակայության:

Խուսափելով Մեծ Բրիտանիայի հետ ռազմական սոճակատումից՝ Ռուսական կայսրությունը հրաժարվեց տարածքային նոր նվաճումներից Իրանում՝ նախապատվություն տալով այդ երկիր խաղաղ ներթափանցման քաղաքականությանը: Կիրառելով կապիտալիզմի համակարգի ողջ զինանոցը՝ Ռուսաստանն ուժեղացրեց իր տնտեսական և քաղաքական ներգրավվածությունն Իրանում:

Ակտիվացնելով իր ռազմաքաղաքական և տնտեսական ներկայությունն Իրանում՝ Ռուսաստանը հնարավորություն ստացավ իր աշխարհաքաղաքական շահերին համապատասխան ուղղորդել կառավարող Ղաջարական արքայատոհմի քաղաքականությունը: Ռուսաստանից տնտեսապես և անվտանգային կախվածության մեջ գտնվող ղաջարական Իրանը միջանկյալ գոտու դեր ստանձնեց մի կողմից Ռուսաստանի և Օսմանյան կայսրության, մյուս կողմից՝ Ռուսաստանի և Բրիտանական Հնդկաստանի միջև:

Իրան տնտեսական ներթափանցման ակտիվացնելու հարցում ռուսական կառավարության անմիջական հովանավորությամբ և վերահսկողությամբ մշակված ռազմավարության մեջ կարևորագույն դերը վերապահված էր իրանական տնտեսության ենթակառուցվածքներում ներդրումների, արտաքին փոխառությունների, մենաշնորհային, մաքսային, հարկային պայմանագրերի միջոցով շարունակական ներթափանցման հայեցակարգին: Ռուսական իշխանությունների կողմից այն դիտվում էր որպես Իրանի հետ առևտրատնտեսական հարաբերություններն ընդլայնելու և Մեծ Բրիտանիային հակազդելու ամենարդյունավետ միջոցը:

Իրանի նկատմամբ կայսրության ֆինանսատնտեսական քաղաքականությունն ուներ որոշակի սկզբունք. խոշոր փոխառություններ տրամադրելով դաջարական կառավարությանը՝ Ռուսաստանն ամբողջապես ֆինանսական կախվածության մեջ դրեց շահական արքունիքը: Ռուսաստանին հաջողվեց քաղաքական և տնտեսական գերակայություն հաստատել Իրանում և գործնականում վերահսկողության տակ առնել իրանական տնտեսության ռազմավարական մի շարք ոլորտներ: Ռուսական առևտրաարդյունաբերական շրջանների համար Իրանը կարճ ժամանակամիջոցում վերածվեց ապրանքահումքային կցորդի: Անիրավահավասար պայմանագրեր կնքելով օտարերկրյա տերությունների, մասնավորապես Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի հետ, դաջարական կառավարությունը աստիճանաբար կորցրեց թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական ինքնուրույնությունը և դե-յուրե պահպանելով անկախությունը, դե-ֆակտո վերածվեց կիսանկախ պետության:

Մի շարք պայմանագրեր պարտադրելով դաջարական կառավարությանը՝ Ռուսաստանը փաստացի մինչև 1910 թ. Իրանում երկաթուղաշինության արգելք ստացրեց՝ մատնելով այդ երկիրը տարերային ճանապարհագրության: Իրանն առանց Ռուսաստանի համաձայնության իրավասու չէր սեփական երկրում երկաթուղիներ կառուցել և այդ իրավունքը տրամադրել այլ պետություններին: Ընդհուպ մինչև 1917 թ. Ռուսաստանն իր ձեռքում կենտրոնացրեց Իրանի հյուսիսը կենտրոնի կապող հիմնական խճուղային ճանապարհները:

Ի դեմս Պարսկական Կազակական բրիգադի Ռուսաստանն Իրանում ձեռք բերեց շահի և իշխող վերնախավի նկատմամբ քաղաքական ազդեցության կարևոր լծակներ: Ռուսական անմիջական վերահսկողության տակ գտնվող այդ գորափափորումը կոչված էր պահպանելու դաջարական զանի անձեռնմխելիությունը և իրավահաջորդությունը: Իր գործունեության ընթացքում Պարսկական կազակական բրիգադն Իրանում ստեղծեց կայուն հետախուզական ցանց, հաստատուն դիրք զբաղեցրեց երկրի ռազմակրթական բնագավառում: Այն գործնականում ռուսական ռազմական կանոնա-

կարգի օրինակով իրանական բանակի համար սպայական կադրեր պատրաստող կառույց էր: Պարսկական կազակական բրիգադի առաջնային խնդիրներից էր Իրանի ներքաղաքական գործընթացների նկատմամբ վերահսկողությունը և Ռուսաստանի համար ստատուս-քվոի ապահովումը:

Ռուսական կայսրության ռազմավարական նպատակներն Իրանում զրևտրվում էին հստակ ձևաչափով և ամփոփվում էին ռուսական դիվանագիտության կողմից ձևակերպված հետևյալ դրույթներում.

ա) «Պահպանել Պարսկաստանի ամբողջականության և անձեռնմխելիության սկզբունքը, չհավակնել տարածքային նոր ձեռքբերումների և թույլ չտալ որևիցե երրորդ պետության գերակայությունն այստեղ՝ աստիճանաբար ենթարկելով այն ռուսական ազդեցությանը: Առանց խափանելու այդ երկրի ինչպես արտաքին ինքնուրույնության սկզբունքները, այնպես էլ ներքին կարգը»:

բ) «Պահպանելով Պարսկաստանի ամբողջականության և անձեռնմխելիության սկզբունքը՝ մեր (Ռուսական կայսրության Ն. Ն.) հիմնական խնդիրն է նրան դարձնել հեազակ և օգտակար: Այլ կերպ ասած՝ հզոր գործիք մեր ձեռքերում՝ պարսկական լայնածավալ շուկան պահպանելու և ընդլայնելու նպատակով»<sup>692</sup>:

Նպատակ ունենալով սահմանափակել ռուսական հավակնությունները Միջին Արևելքում՝ Մեծ Բրիտանիան, դեռևս 1898 թ., ռուսական կառավարությանն առաջարկում էր Գ.Պոլսից մինչև Պեկին ազդեցության գոտիների բաժանման համաձայնագիր կնքել: Ըստ այդ համաձայնագրի՝ Իրանի հյուսիսային շրջանները լինելու էին ռուսական ազդեցության ոլորտում, իսկ հարավայինը՝ բացառապես բրիտանական: Սակայն ընդհուպ մինչև 1905 թ. ռուսական կառավարող շրջանները գտնում էին, որ Իրանում ռուսական դիրքերը չափազանց ուժեղ են թե՛ տնտեսական և թե՛ ռազմաքաղաքական առումներով, ինչն էլ թույլ կտա ապագայում Իրանն ամբողջապես ենթարկելու ռուսական ազդեցությանը: Չենց այս համատեքստում էլ

Ռուսաստանը հանդես էր գալիս իր աշխարհաքաղաքական շահերից բխող Իրանի տարածքային ամբողջականության պահպանման երաշխավորի դիրքերից:

Սակայն XX դարասկզբին միջազգային ասպարեզում Ռուսաստանի համար ստեղծվեց ռազմաքաղաքական բոլորովին նոր իրադրություն: Գերմանիան և Օսմանյան կայսրությունները հետևողականորեն իրագործում էին Մերձավոր և Միջին Արևելքի նկատմամբ ռազմաքաղաքական և տնտեսական ծավալապաշտական իրենց ծրագրերը: Գերմանական դիվանագիտությունը ռուս-բրիտանական քաղաքական առճակատումը ծառայեցնելով սեփական շահերին և օգտվելով ռուս-ճապոնական պատերազմի արդյունքում Ռուսաստանի թուլացումից՝ փորձեց դուրս մղել վերջինիս մերձավորարևելյան տարածաշրջանից: Սրան գումարվեց 1905-1911 թթ. Իրանում Սահմանադրական հեղափոխության արյունքում ստեղծված ներքաղաքական ճգնաժամը, որն ուղղակի սպառնալիք ստեղծեց այդ երկրում ռուսական շահերի համար: Այս ամենը լուրջ նախադրյալներ ձևավորեցին Իրանն ազդեցության ոլորտների բաժանելու շուրջ Մեծ Բրիտանիայի հետ բանակցային գործընթաց սկսելու համար:

Իրանն ազդեցության ոլորտների բաժանելու վերաբերյալ Բրիտանիայի հետ համաձայնագրի շնորհիվ Ռուսաստանը հեռանկարում նաև նպատակ ուներ հասնելու իր պատմական հավակնությունների իրագործմանը՝ Բալկանների և Սևծովյան նեղուցների հարցերն իրեն լուծելու համար: Դիվանագիտական կանխավճարի գնալով Ադրուցների իմամայնդում՝ Մեծ Բրիտանիան Ռուսաստանից համապատասխան զիջումներ ստացավ Իրանում, մասնավորապես հարավարևելյան շրջաններում և փաստացի հասավ Պարսից Օղուս՝ Ռուսաստանի կողմից Մեծ Բրիտանիայի հատուկ շահերի ճանաչմանը:

1907 թ. Իրանն ազդեցության գոտիների բաժանելու անգլո-ռուսական համաձայնագրի կնքումով Ռուսական կայսրության և Մեծ Բրիտանիայի հարաբերությունները թեև աշխարհառազմավա-

րական նոր բովանդակություն ստացան, սակայն նրանց մրցակցությունն Իրանում չնեղմացավ և շարունակեց դրսևորվել նոր թողարկված դիմակայությամբ:

Իրանի ներքին խնդիրներին չմիջամտելու համաձայնագրի առանցքային դրույթով Մեծ Բրիտանիան հնարավորություն ստացավ հեղափոխական զարգացումները շեղել իր հետաքրքրությունների ուղեծիր: Բրիտանիային հաջողվեց սերտ համագործակցություն ձևավորել Իրանի սահմանադրական կառավարող շրջանների հետ՝ սահմանափակելով շահական արքունիքում ռուսական ազդեցությունը: Բրիտանացիներին դիրքերը չզիջելու նպատակով՝ Ռուսաստանն ուժաղացրեց Իրանի սահմանադրական վարչակարգի վրա ճնշումներ և 1909 թ. սպրիլին կազմակերպեց առաջին ռազմական ներխուժումն Իրան: Ռուսական ռազմական ներկայության ընդլայնումն Իրանում նպատակ ուներ նաև չեզոքացնելու իրանական իր ազդեցության գոտում հեղափոխական գործընթացների տարածումը և խափանելու Ասորպատականի զավթման թուրք-գերմանական ծրագրերը:

Իրանի հարցը Առաջին աշխարհամարտից առաջ դարձավ այն կարևորագույն գործոնը, որը վճռորոշ դերակատարում ունեցավ համաեվրոպական աշխարհաքաղաքական գործընթացների վրա: Մեծ Բրիտանիան չվտանգեց 1907 թ. համաձայնագրով ձեռք բերված ռուս-բրիտանական հարաբերությունների փխրուն հավասարակշռությունը և Անտանտի կազմում Ռուսաստանի հետ Եռյակ դաշինքի դեմ համագործակցությունը՝ զիջումների գնաց իրանական հարցում: Արդյունքում, Ռուսաստանը կարողացավ ապահովել Իրան ռազմական երկրորդ ներխուժման նկատմամբ բրիտանական վարչակազմի լուռ համաձայնությունը և 1911 թ. դեկտեմբերին վերջնական ռազմակայման ենթարկեց Իրանի հյուսիսային շրջանները՝ ճնշելով նաև Սահմանադրական շարժումը:

Առաջին աշխարհամարտի տարիներին Եռյակ համաձայնության և Եռյակ դաշինքի երկրների համար Իրանի աշխարհաքաղաքական դերակատարումը և նախադրյալները հարուստ պաշարներով ընդերքը էլ

ավելի կարևորվեց, և, չնայած պատերազմում Իրանի կողմից հայտարարված չեզոքությանը, այդ երկրի տարածքը ռազմակալած ռուսական և բրիտանական զինված ուժերը պատերազմի ընթացքում դուրս չբերվեցին՝ խորացնելով Իրանի սոցիալ-տնտեսական և ներքաղաքական ճգնաժամը:

Ռուսական կայսրության իրավահաջորդ Խորհրդային Ռուսաստանի և արևմտյան տերությունների միջև Իրանի համար դիմակայությունը շարունակվեց նաև պատմության նորագույն շրջանում: Իրանի ռազմավարական նշանակության տարածքները վերահսկելու, այդ երկրի բնական պաշարները, արտահանման և հումքային շուկաները շահագործելու՝ զերտությունների նկրտումները պարբերաբար հանգեցրել են Իրանի շուրջ սուր հակամարտությունների ձևավորմանը: 1917 թ. փետրվարյան հեղաշրջումից հետո Խորհրդային Ռուսաստանը 1918 թ. հունվարին թեև չեղյալ հայտարարեց Իրանի և ցարական կառավարության միջև կնքված բոլոր անիրավահավասար պայմանագրերը, նրա և արևմտյան տերությունների միջև մրցակցություն Իրանի համար շարունակվեց նոր ուժով, թե՛ երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ խորհրդային իշխանությունները Իրանի նկատմամբ ազդեցությունը չկորցնելու նպատակով՝ փորձեցին ստեղծել ոչ կենսունակ Մեծաբաղի քրդական և Իրանական Ադրբեջանի խորհրդային հանրապետությունները՝ բախվելով ԱՄՆ-ի դիմադրությանը, թե՛ «Սառը պատերազմի» ընթացքում, երբ ԽՍՀՄ-ի մերձավորարևելյան տարածաշրջան արաջխաղացմանը հակազդելու նպատակով՝ Իրանը ներգրավվեց արևմտյան ռազմաքաղաքական ճամբար՝ դառնալով ԽՍՀՄ-ին դիմակայության կարևորագույն գործոն:

## THE POLICY OF RUSSIAN EMPIRE ON IRAN (THE END OF THE 19<sup>th</sup> - THE BEGINNING OF THE 20<sup>th</sup> CENTURIES) EXECUTIVE SUMMARY

Given its considerable economic potential and notable strategic position, Iran was decidedly crucial in the course of the Russian Empire's Eastern policy. Russia's political and economic interests in Iran have quite deep origin. The Volga-Caspian road connecting the ancient Slavs with Iran has been known since the distant past. It was not only a dynamic trade transit, but also the most important *modus operandi* to establish international relations between the West and the East.

